



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20154

20155

891.99-192

U-67

217

108

✓

891. 9. 9 - 192

U-67

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

# ՄՈՒՍԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅՈՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՑԻՆ ԵՐԳԻՉՆԵՐԻ

Քանի կ'երգէ, Հայաստանին  
իմ Սոխակ,  
Արտիս խորքում վառ կ'ծողէ  
Նա միշտ սիրո՞յ, միշտ ազգային  
իշատակ:  
ԲՕՆ-ԱՎԻ:

2003

ԱՆԽԱՏՈՒԹԻՒՆ Է.

ՀԱՏՈՐ III.

ԲԱԳՈՒ.

ՀԱՅՈՑ ՄԱՐԳԱՍԻՐՈՒԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ.

1876.

Գրաչար Լիւնն Տէր Կոմիտասեանց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՈՄԻՏԵ

ԱՐՄԵԻՆ

ԿՈՄԻՏԵ

ԱՐՄԵՐԿՈՒՄ

ԿՈՄԻՏԵ

ԿՈՄԻՏԵ

ԿՈՄԻՏԵ

ԿՈՄԻՏԵ

Կոմիտեի Կենտրոնական Կառուցվածքը

1878

„ՍՈՒՍԿԻ“


I, II ԵՎ III ՀԱՏՈՐՆԵՐԻ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ԵՎ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆԵՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ



ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ:

## ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ.

Արդէն «Սոխակ Հայաստանի» առաջին հատորի յառաջաբանի մէջ խոստացել էի մեր ազգային երգիչների (աշուղների) խաղերից ժողովելու և տպագրութեան միջոցաւ դարձեալ Ազգին նուիրելու:

Այսօր գո՛հ եմ երկնքից, որ կարողացայ գէթ մասամբ կատարել իմ խոստումը, հրատարակելով պ. Յակովբ Փամպուխչեանցից հաւաքած ներկայ երկասիրութիւնքը, որոց մասին յայտնուամեմ յիշեալ պարոնին իմ սրտի խորին զգացմանց շնորհակալութիւնը. կեցցէ՛ ազնիւ գործ իր անմահ յիշատակներով:

Որովհետեւ «Սոխակ Հայաստանին» Ազգի անհատների քաջալերութեամբ և նոցա մասնակցութեամբն եմ սկսել հրատարակելու, ուրեմն և նորանցով պէտքէ դարձեալ շարունակեմ, որքան կարող եմ և որքան կ'ներէ ինձ ժամանակը:

Իմ խորին և յարգանաց շնորհակալութիւնն 'ի բոլոր սրտէ յայտնելով «Սոխակ Հայաստանի» առաջին, երկրորդ և երրորդ հատորների հեղի-



նակներին, աշխատակիցներին և բաժանորդագիրներին և ներկայ երկասիրութիւնքն ևս նուիրելով նոցա քաղցր և վառ յիշատակին, վստահանումեմ ստելու, քանի որ Ազգի անհատներն այսպէս կ'համակրեն ինձ իմ աշխատութեան մէջ և ուրախութեան թւեր կ'տան թռչելու դէպի յառաջ և յառաջ, - դէպի աշխատութեան սփերայի մէջ, այնուհետեւ ինձ երջանիկ համարած կ'լինեմ, որ կարողացայ Ազգի գրականութեան գանձանակի մէջ քանի մի լոմաներ ևս զցելու:

Աստի Գրէֆօրեանց:

1876 թ. 4 Մարտի  
Բաֆոն.

Մեր հաւաքած երգերը դեռ ևս մամուլի տակ մտած չ'լինելով, ահա՛ առաջին անգամ 'ի լոյս ենք հանում նոցա „ՍՈՒՍԿ ՀՍՅԱՍՏԵՆԻ“ խմբագիր պ. Ա. Գրիգորեանցի ձեռքով մեր սիրելի հասարակութեան առաջ, յուսալով, որ սորանով մի չնչին ծառայութիւն արած կ'լինէինք նորան: Թէև այս նիւթերը մի նշանաւոր տեղ չեն կարող բռնել մեր մանուկ գրականութեան մէջ, բայց և այնպէս սիրելի են նոքա, որովհետեւ ծնունդ են այն ժամանակի՛ երբ աշխարհաբառ լեզուն ստրկական կապանքի տակ դատապարտուած էր զբարաւական ամբօսից.

Մեր սիրելի հասարակութեանը նուիրելով իւր աղքատ սեփականութիւնք, մենք շատ մեծ շնորհապարտութիւն համարելու էինք մեզ, եթէ նա կ'ընդունէր առանց արհամարանքի:

Այս երգերից շատերը առաւել գործ են անվում Աստրախանում, իսկ մասամբ կովկասեան քաղաքներում:

Անհրաժեշտ պարտք ենք համարում մեզ հրապարակորէն շնորհակալութիւն մատուցանել մեծայարգ պ. Յովհաննէս Յամապահանցին, որ մեծ քանակութիւն երգերի հասցրեց մեզ այս գործը սկսելու: Նոյնպէս և պ. պ. Նազարէթ Ռոստովանեանցին և Ալէքսանդր Քուջուբէյեանցին:

Յակովբ Փամբուխեանց:

Աստրախան:

Ինչ ազգ որ աշուղներ չունի, (\*)  
Նա իւր սրտումն սէր չունի.  
Ինչ ազգ սրտումն սէր չունի,  
Նա Աստուծոյ պատկեր չունի.  
Ով Աստուծոյ պատկեր չունի,  
Նրան բարի գործեր չունի.  
Ինչ մարդ բարի գործեր չունի,  
Նրան աշխարհին խէյր չունի.  
Նորա կեանքն քամոյ պէս է,  
Ինքն չարեաց միաբանող:

Սէյէար:

(\*) Տես «Քնար Հայաստանի» վերնագրով Սէյեաղի երգերի Ա. տետրակում երես 4. 1837 թ. հրատարակումին Ոսկանայ Յովհաննէսեանց, Երեւանցոյ: Ա. Գրիգորեանց:

ԻՄ ՍՈՒԱԿԻՆ.

Սյդ ինչ ծաղկունք, ինչ փնջիկ  
Քո կտուցին դու բռնած,  
Սլանումես իմ տնիկ  
Ուրախ դիմօք զմայլած:

Ս'իս, քո ծայնին ես մատաղ,  
Իմ քաղցրախօս իմ Սոխակ,  
Մի՞թէ այդպէս դու վաղվաղ  
Պտոյտ եկար դաշտ, ծորակ:

Հայոց դաշտեր ու ձորեր  
Մի՞թէ քեզի հիւրեցին,  
Եւ զեղապանձ պսակներ  
Քեզ հիւսեցին, մատուցին:

Մի՞թէ այդպէս քո սիրով  
Վարդեայ Թփիկը բացուեցին,  
Եւ զեղաղէշ ժպիտով  
Քեզ այդ փնջիկ ձօնեցին:

Դէ՛հ, մօտեցիր, իմ Սոխակ,  
Շուտ դէպի ինձ, որ բռնեմ,  
Քո այդ սիրուն կտուցիկ,  
Ա'իս, համբուրե՛մ, համբուրե՛մ:

Ա. Գրիգորեանց:

Թուրինջի երգերը.

1.

Այրն Աստուած, որ ստեղծեց հայր Աղամին, մայր Եւային,  
Բենն բերաւ լուսեղէն զարդ հագցրուց հարսն ու փեսային.  
Գիմն զանչեց, նստացրուց լոյս զբախտում եղեմային,  
Դան զբախտն էր, շատ կար պտուղ, չարն ու բարին չխմանային  
Եչն եկաւ, նշանց տուաւ իւր զօրութեամբ Աստուածային:

Չան զրուց արաւ օձի հետ, մտաւ բերանն, սէրացան  
Էն էս կերպիւ խաբեց նրանց, Աստուած կ'զառնաք, չխմացան,  
Ըթն ըշտապեց Աստուածանալ, կերան պտուղն, մերկացան,  
Թոն թօթափեց լուսեղէն զարդն, փառք ու պատիւն վերացան,  
Ժէն ժանտ օձի զուր խօսալուն ճշմարտապէս հաւատային:

Ինին իմացաւ, ինչ իլաւ, կանչեց, Ագամ ազնուական,  
Լիւնն լոկ մերկ էր մարմնով, չունէր հազուստն սեփական,  
Խէն խաբեց ինձ, կե'ր էս պտուղն, խիստ համեղէ, ախորժական,  
Ման ծիծաղեց ասեց, մի՞ թէ չունինք կերակուր բաւական,  
Կէնի կամքն կատարեցիք, այժմ՝ զարձաք խաւարային:

Հոն հիւանդ էր, չ'տեսաւ նա, կուրացել էր հոգու ակն,  
Չան ձախ քցեց ամեն բանը, մթնեց պայծառ արեգակն,  
Ղառն զարապով ասեց թէ, ես կը բերեմ լոյս ճրագն,  
Ճէն ճար չունէր, քարին գրեց մուշտուլուղ զարմ ու զաւակն,  
Մենն մեզի տուաւ ծառայ հոգւով մարմնով սատանային:

Յին յերբ առաւ ձեռագիրը, տարաւ քցեց զեւ յորդանան, (1)  
Նուին նեղութիւն շատ տուեց էն նեռն նախանձ չար սատանան,

(1) Մի «ժողովածու» անունով հին գրքի վկայութեամբ մեր ժողովուրդի մէջ  
մի պատմական աւանդութիւն է մնացել, որ իբրև թէ երբ հայր Աղամը ար-

Շան շատ կրանեց սուրբ հողիք, ածեց դժոխքն լիանան,  
Ոն ոխացաւ, ուղեցաւ որ ազատի հողիքն ամենայն,  
Չան չկամեցաւ շուտով դալ, կամքն էր ստեղծող արքային:

Պէն պարզեն Աստուածային իջաւ յերկնից խոնարհական,  
Չէն ջահ վառված բնակեցաւ յարգանդ կուսին հաւանական,  
Ռան ռահիւ ծնաւ անսերմն՝ հողուով մարմնով անապական,  
Սէն սուրբ մարմնով չարչարվեցաւ, խաչվեցաւ կամաւորական,  
Վեւն վասն մարդկան մեռաւ և թաղեցաւ անդնդային:

Տիւն ճէրն մեր երեք օրէն յարեաւ փառօք դերեզմանէն,  
Բէն բամեալ ընդ երկնայնոց համբարձաւ յերկինս 'ի յերկրէն,  
Յոն ցաւակից սուրբ հողիքն ազատեցիր 'ի մահուանէն,  
Ինն լիւծեալ է խեղճ հողիս, որ կապեալ կայ 'ի չար ախտէն,  
Փիւր փրկիչ, փրկեա՛ զանձն իմ 'ի տանջանաց և 'ի բանտէն,  
Քէ Քրիստոս զքեզ օրհնեմ, զհայր և սուրբ հողիդ ամէն  
Յ օրն տո՛ւր արքայութեան մեղաւոր Թուրինջ բանտային:

Չ.

Աստուած ամենակալ, հօր թաղաւոր,  
Ստեղծութեանդ ինչ որ հրամանս ես արած՝  
Հաստատ է եղած.

Հաստատեցիր երկինք գետինք առանց հիմն,  
Քանզ էն գեղեցիկ՝ էլ ի՞նչ կայ շինուած  
Էնպէս յօրինված:

տարավեցաւ դրախտից, մինչև այն ժամանակ անձանթ լինելով գիշերվայ մթին, շատ տրտմեցաւ, կարծելով որ միշտ այնպէս էր մնալու: Սատանան կամենալով օգուլիլ այս յարմար միջոցից, խոստանումէ նրան լոյս բերել, ուստի այդ մասին իսկ Ադամից ձեռագիր ստանումէ մի քարի վերայ ('ի հարկէ այն ժամանակ թուրք հնարված չէր դեռ ևս) այն պայմանաւ, որ եթէ սատանան լոյս կը բերէ, նա (Ադամը) իւր ստորագրութեան (Ադամը կարդալ գրել էլ զիտէր) զօրութեամբ խոստանումէ, որ իւր սերունդը սատանային զերի կտայ (հոգուով մարմնով) մինչև այն ժամանակ, երբ „անձինն ծնանի, ան-

Էնպէս է յօրինված աշխարհ անման  
Պակասութիւն էլ չկայ մէկ բան էլ կուսան,  
Վեց օրումն ստեղծար մարդն քեզ նման,  
Չորս տարեքից՝ նորան ձեռօք ես կազմած,  
Կու ես ստեղծած:

Գու ստեղծար հողէն Ադամ ու Եւին,  
Մեղաց պատճառ իլան, խաբվեցան զեկն,  
Երբ լոյսն մերկացան, հազան տերեւին,  
Մնացին լալով խեղճ, վիղներն ծոած,  
Անձար մոլորված:

Մոլոր նստած էին 'ի մէջ խաւարի,  
Ոչ ով չկար՝ նրանց, որ մխիթարի.  
Սատանի ձեռումն վեց հազար տարի  
Մնացել էր աշխարհ ամենայն կալած,  
Չինջիլով կապած:

Չինջիլակապիցն մեզ հանեցիր դուս,  
Պարզեցիր պայծառ արքայութեան լուս,  
Վերջին օրն ահեղ դատաստան գալուս  
Մեղաւոր Թուրինջին քաղցր նայիր զթած,  
Ողորմած Աստուած:

մահն մեռանի.՝ մինչև որ այդ Ադամական ձեռագիրը վերջացել էր և սատանան տարել յորդանան գետի մէջ պահել էր նրան, լոյսը բացվել էր: 'ի հարկ է յետոյ հայր Ադամը լաւ հասկացած կ'լինէր, որ շատ զառն խաբվել էր, բայց էլ ինչ օգուտ, բանը բանից անցել էր: Երբ որ Քրիստոս մկրտվեցաւ յորդանան գետում, կանգնելով այն Ադամայագիր ստորագրութեան վերայ, հալեցրեց և ջնջեց նրան: Յանկալի էր իմանալ թէ հայր Ադամը ի՞նչ լեզուով էր գրել իւր ստորագրութիւնը, անշուշտ և մի և նոյն լեզուով խօսած կ'լինէր սատանայի հետ, այն ժամանակ կվճռվէր լեզուի անդրանկութեան հարցը: Ես կարծումեմ, որ մեր Հայկական սխալատիկները կ'սնդեն, որ անշուշտ հայերէն կ'լինէր այդ „ժողովածուական“ ծակ ստորագրութիւնը: Ե. Փ.

3.

+ Աշխարհումն շատ մարդ քեզ կարօտ կայ, կանայ կանայ,  
 Որ զառեւէլ ա ուրեան,  
 Է՛յ մարալ ու ջէյրան, (\*)  
 Ե՛կ դո՛ւս արի սէյրան,  
 Գառնամ քեզի հէյրան,  
 Իջնեմ քեզի զուրբան:

Պատկերով նման ես ճառագայթալոյս արեգական,  
 Փայլումես զանագան,  
 Լցուած լուսին ես բոլոր մաքուր տասնուհինգ օրվան,  
 Եղանակի աշնան.  
 Զիլջուն մազերդ չորս զումանդ թուխպ ամպի նման  
 Խիստ կապել ա դուման,  
 Զուխտ աչքերդ վառ նման է զանդլի չրաղվան  
 Շողքդ ա ուովան,  
 Թերթեւունքներդ սուր սուր խանջալ նաշտարի փէքեան,  
 Ունքերդ է քեաման.  
 Խիստ լարվել ա, հոլորվել ա, պինդ շարվել ա վրան,  
 զուս ա եկել մէյրան:  
 Ա՛խ, սիրտս էրէցիր, խորովար, արեցիր բիրեան,  
 Կեանքս արար վէրան:  
 Սուր ես հրեղէն երկնքից կախ անդանաղ, անթել,  
 Ի՞նչ վարպետ ա սարքել,

(\*) Ինչպէս երևում է, Աբրահամ Մարտիրոսեանը (Զարկար մականունանալ ազգային երգիչը) այս երգը լսած կամ կարդացած պէտքէ վնի, պատճառ նա իր երգերի մէկը վերնագիրը դրել է այսպէս. «ըստ եղանակի Մարալ ու ջէյրան Մուխամմադին Թուրքիցի» Տես «ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Բ. հատորի 265 երեսում:

Զարկեարի երգերից ես շատ ունիմ և պէտքէ տպագրեմ «ՍՈՒԱԿԻ» Գ-րդ հատորից սկսած:

Ա. Գրիգորեանց:

Աղամ ա տեսել, մինչև էս օր՝ էլ մարդ չի տեսել,  
 Տեսնի, կու թնայ պէլ,  
 Ոչ ով միամիտ չի կարանալ քեզ ձեռք ձգել,  
 Պինդ պահել ու զափտել,  
 Շուտով զուխք ջալլաթի պէս զաստ կանես կտրել,  
 Ոչխարի պէս մորթել:  
 Էս թարիֆլամադ գրվաւ սրտիս անշափ առաւել,  
 Լեղումով չի լինիլ պատմել:  
 Ա՛խ, ես ո՛ւր դնամ, արդ ու հալս ո՛ւմ արդ անեմ էլ,  
 Նահախ մի՛ սպանել.  
 Էս աշխարհումն մէկ դու ես գեօղալների սուլթան,  
 Քշիր դամ ու դովրան:  
 Քաշվել ա բոյրդ թուրի-սաշար սարաստ խաղանկի  
 Գալար ծառ ես խնկի,  
 Պտուղներ ունիս հոտով անոյշ քաղցր բաղրանգի,  
 Խիստ զինն է թանգի.  
 Հրնդ ու խորասան քու թարիֆն չի գալ Ֆուրսանկի  
 Համ չի ածել զանգի.  
 Ոչ ենկի դիւնեայ կայ քեզ նման սուրաթ Ֆրանկի,  
 Քու թահրի քու հանգի.  
 Քեզ պտրոզն պէտք ա հազնի փուստ ու փալանգի,  
 Բէլքի քեզի ճանգի:  
 Էդ քու թարիֆն պէտք ա քցել փող ու սրնգի,  
 Որ աշխարհ զրնգի.  
 Էլ ի՞նչպէս գովեմ, ինքդ ինձի արա՛ հրաման,  
 Հուրի, փարի դման.  
 Վ՛րդ շուշայ ա քիւնկի նման, սինաղ ա ՖարՖուռ,  
 Քալադ զուրու մախմուր,  
 Անտես խաղնիցդ եփ ա զալիս, բղխումայ խորխուր  
 Մէկ անմահական ջուր:

Սոխակ Հայաստանի III հատոր Ա. Գ. 27

Էդ հողեղէն զոհար բերանդ շինել ես աղբիւր,  
 Մին թաս լցուր ինձ տո՛ւր,  
 Եշխիդ կրակը իմ սրտումս վառվումայ զուրգուր,  
 Նման կայծակ հուր,  
 Ինչպէս վառել ես, ե՛կ ուհամ արա՛ էլ ինքդ հանգցուր  
 Քեարամ դադի դասուր (\*)  
 Էշխիդ հաւասէն մարդ կը դառնայ սարխօշ ու մախմուր,  
 Միշտ ամեն աւուր,  
 Էդ նշանով դու շատ քաղցր ես, քօլին սիրական,  
 Գովելի ես արժան:  
 Էշխիդ թալաքը ման ա դալիս բերի օվանդի,  
 Որ քցի Ֆրսանդի,  
 Բեշարա թուրինջին մի՛ քցիր զաֆտ ու քամանդի,  
 Անձար հնազանդի,  
 Օր ըստ օրէ խօ մարդու իլաժ կեանքը կը քանդի,  
 Շատ կ'տայ նօղսանդի,  
 Քաշեց ինձ սէրդ, տարաւ ինչպէս քար աղամանդի,  
 Կալեց կապեց բանդի,  
 Խափսով լաւ քաշեցիր դու ինձի ուսուլ ու Ֆանդի,  
 Չիլնես դու շարմանդի.  
 Թէ որ թարիֆդ ողջը ասեմ, մարդ կու զարգանդի,  
 Հոգին կու աւանդի.  
 Բէ դայրի քեզանից չունիմ ինձ էլ ումուդ ու կիւման,  
 Ե՛կ էս ցաւէս ինձ հա՛ն:

4.

Արի՛ զնա՛ եարի մօտ, քու ցաւ ու տեղ ու ճարի մօտ,  
 Ի՞նչ իլաւ, էլ չես գնում էն շուխ ու բաֆադարի մօտ,  
 Շատ մարդ կուղի դուլ դառնայ էնպէս զիւլ ու զիւլզարի մօտ,

(\*) Քեարամի հառաչանքի նման:

Թէ բիւբիւլին խաթր անես, հարկիս մի՛ զնա խարի մօտ  
 Եթէ դու նրան սիրես, նա չի զնալ հաղարի մօտ:

Տեսար որ զալմաղալը հասաւ քեզ անգուժաններից,  
 Շուտ արա ակր մին գուման էս դաւ ու դարաբաներից  
 Օղորդ ա շատ համով են, կուշտանալ չիլնիլ ջաններից,  
 Եթէ ինձի կու լսես, հեռացիր էդպէս բաներից,  
 Ձեռդ քաշիր, թա՛փ տուր եախադ, երբէք մի՛ զնա չարիմօտ:

Վախտ կիլնի չի խնայիլ, եթէ ուզես հողին կ'տայ,  
 Քարվանի պէս պտոյտ կը դայ՝ դիտովդ մին, ողջը սո՛ւտ ա,  
 Օրը հաղար մատաղ կասի, չում էս զորժին նա հմուտ ա,  
 Տեսնողն ո՞նց մուշտաղ չիլնիլ, մանաւանդ ինքն էլ անփոյթ ա,  
 Իրա լուսին կը թողնի, կը զնայ էն խաւարի մօտ:

Էնքան բան խաբար կ'տան, ականջներդ խուլ կը լինի,  
 Ձեռիցդ էլ բան վեր չի գալ, զլիտիդ մօխիր քուլ կ'լինի,  
 Մին կողմից էլ էն բէլեարը քու մօտին մախբուլ կ'լինի,  
 Կիսամորթած ոչխարի պէս քու դրանը դուլ կը լինի,  
 Մալքամուղի պէս կուուարար, երբէք չի ասել արի՛ մօտ

Գիտես թուրինջի խօսքերը ամենայն տեղ ընդունումեն,  
 Ես քեզ շահ բան եմ ասում, չիլնի սրտումդ պահես քէն,  
 Քանի աչքումդ լոյս կայ, հաստատ ձեռաձեռ կուխլեն  
 Ջանից կիլնիես, կը բէզարես, անչափ կու ինիես դէս ու դէն,  
 Ել էնպէս ձեռ չես քցել, դահի կերթաս բէթարի մօտ:

5.

+ Աշխարհ դուս եկած դու նոր նշան ես,  
 Քեզ զովել չի լինիլ, շատ զանազան ես:

Շահգատայ ես դու, սուլթան ու խան ես,  
 Նստած թախտումդ աղիլ դիվան ես,  
 Մէկ զօռքա զարիթ հուքմ ու հրաման եո:

Ջահմով խօսելով մարդ կու սպանես,  
 Ամեն բանումն էլ շատ փահիլիան ես,  
 Գեռ կատարեալ չես, դու նովջիլիան ես,  
 Էդ իմաստութեամբ ու՛մ կ'նմանես,  
 Քանս Սողովմօն ճարտարաբան ես,  
 Գեղեցկութիւնով իստութի քան ես,  
 Հրեշտակաց մէջին շատ գովական ես:

Սուբուլ մազերդ նման ա սաթի,  
 Ջառ եաղուխներով դաթ դաթ փաթաթի,  
 Հէնց ա գլուխդ սազաֆի դութի,  
 Սարքած նման ես ոսկի սահաթի՝  
 Քեզ պէտք ա պահած փառք ու ազաթի,  
 Շատ մարդ քու վրայ արիւն կու վաթի,  
 Կու պառի քեզի քաղցած, անօթի,  
 Քար ես պատուական զումբութ եաղութի,  
 Մին անդուման տեղ դու ես դաֆլաթի,  
 Անդին ջալահիր դու նոր մաղան ես:

Բօյդ չինար ա, սալբու ուեվանի,  
 Լիբասող նման կանաչ վրանի,  
 Ձեռներդ բարակ ճիւղ եասամանի,  
 Կռներդ կակուղ մում կ'նմանի,  
 Մասներդ շմալ նազիկ նազանի,  
 Ծոցդ մամուռ ա չայիր չիմանի,  
 Բաղչա ու բաղ ա ծաղիկ ուհանի,  
 Ջամբաղ նունուֆար վարդ բալասանի,  
 Հոտդ շատ մարդու խելքն կ'տանի,  
 Դու անթառամ ծաղկեալ բուրաստան ես:

Թոհվա գոված ես մաթահ Ֆռանկի,  
 Երանի՛ նորան, ո՛վ քեզ կը ճանկի,  
 Գեռ քու թարիֆը աշխարհ չի ընկի,  
 Զարդարված նման ես փարշեփանկի

Ոսկեփետուր ես ըռանդ ըռանդի,  
 Բարձրաթռիչ ես նման կռունկի,  
 Ինքդ սիրուն ես ձայնդ է զանգի,  
 Լսողը կըղառնայ խե ու բանկի,  
 Շախ շախ կու կարդաս ամենայն հանգի,  
 Դու քաղցրախօս բիւբիւլ հազարան ես:

Էյ դու ոսկէ կուռք Անահետայի,  
 Վախում, քեզ տանեն թաթախութայի,  
 Հնդիկ, Մոլթանի թէ քեզ պատահի,  
 Կը կարդի ջաւ՛մ ջաւ՛մ ստահի (\*)  
 Խեղճ Թուրինջը քեզ մաթ, մաթ կու նայի,  
 Մին թամաշա ես ուրիշ ջուռայի,  
 Կայնած նման ես կաթուղիկայի  
 Ինչպէս ակնակապ ոսկի ջղայի,  
 Արժես բիւր ու հազար խազինայի.  
 Էդ գովքի գեօրէ դու շատ էծան ես:

6.

Ասում Ձեզ, վեց դարում՝ ո՛վ եկաւ աշխարհ,  
 Մէկն Բէնն էր, մէկն այբը, մէկն նոյ,  
 Բանն մարմին առաւ, ծնաւ սուրբ կուսէն,  
 Մէկն Յիսուս, մէկն Քրիստոս մէ կնոյ:

Մէկն էլ չիլնիլ ընութիւնն մարդեկին,  
 Անասնաբար մեղանչեցին մարդեկին,  
 Մինչ ջրհեղեղ երեք արդար մարդ եկին,  
 Մէկն Աբէլ, մէկն Նոփ, մէկն նոյ:

Շատ քահանայք կարդացել են ովերէն,  
 Չեն իմացել, չեն ճանաչել, ո՛վ է ընն.

(\*) Տէ՛ր, տէ՛ր. ողորմիր:

Երկու անմեղ անձինք ծախվեց ովք՞ր են,  
Մէկն ուկոյ, մէկն արժաւոյ մէ գնոյ:

Ամեն ազգ էս խօսքը, զիտէք, որ ունեն,  
Թուրինջին ով չի հաւատար, որոնեն,  
Հայոց երեք զիր կայ աւել, որ ունեն  
Մէկն ա, մէկն ք ա, մէկն օ:

7.

Ով սիրելի եղբայր, ախանջ զիր, լի՛ր  
Մին քանի բան ասեմ պատուական, լև, լև (\*)  
Թէ որ չի հաւանես, թողութիւն արա,  
Չի համարես ինձի սարսարի, խև, խև:

Ծուռը նիաթ մարդուն դու մի՛ մօտենայ,  
Լեզուով քեզ կու խաբի, սրտով վա՛տ ա նա,  
Ասլըն սաղայէլ ա, ինքն սատանայ,  
Յատուկ բնակվելայ սրտումն դև, դև:

Բարեկամ կուդառնայ որ շատ հալածի,  
Անգուման տեղից քեզ՝ փորձանքի կածի.  
Երկիւղ ունեմ, յանկարծ շան պէս չի խածի  
Մաս մաս կու կտրատի, քեզ կանի ձև ձև:

Թուրինջ, հողու դուռնը մէկ ամուր բերդ ա,  
Մահը շուտ կը տանի, ով որ դուս երթայ,  
Ծուռ մարդը իւր մեղքը շալակին կերթայ  
Աստուծոյ դատաստան՝ երեսն սև, սև:

8.

Բիւլբիւլ եմ վարդից կարօտ, խարի ձեռից զանգատ ունեմ,  
Քցելայ ինձի ջուղայ, եարի ձեռից զանգատ ունեմ:

(\*) լաւ լաւ:

Թէ կուզէք ջոկ ջոկ ասեմ, հարի ձեռից զանգատ ունեմ,  
Վայումեմ լսող չկայ, զարի ձեռից զանգատ ունեմ,  
Խոցերս մղկտումա, եարի ձեռից զանգատ ունեմ,  
Ի՞նչ անեմ չի սաղանրմ, ճարի ձեռից զանգատ ունեմ,  
Լսումէք էսպէս դարդ ու սարի ձեռից զանգատ ունեմ:

Հարկիս ինձ ումուղ չունեմ, մինչև մահս ուրախանամ,  
Դարդերս միտք կը բերեմ, կը զարհուրեմ, կը զարմանամ,  
Չուճքի էլ չարայ չկայ, ճարըս էն ա, որ դիմանամ,  
Մնացել եմ մղորված, չեմ իմանում, թէ ո՞ր դնամ,  
Գիւանս խան չի անում, շարի ձեռից զանգատ ունեմ:

Ինձ համար վատացել են ժամանակիս տարիներն,  
Կարծեմ էլ մարդ չի քաշել իմ քաշած դարդ ու սարերն,  
Տալիս ա ինձ նեղութիւն, չարչարում ա մարդու նեռն,  
Չարերն մօտացել են, հեռացել են բարիներն,  
Չունեմ էլ յաջողութիւն, զարի ձեռից զանգատ ունեմ:

Չովստոս քարի նման էշխի քիւլունքով տաշել ա,  
Դառն և քաղցր խօսքերով սրտիս արիւնը քաշել ա,  
Ամա լերդ ու ջիգեարս վառվառ կրակով խաշել ա,  
Էս բարաթ մինչև օրս իմ ջիվան ումբս մաշել ա,  
Է՛յ զալում եաղի սիթամ քեարի ձեռից զանգատ ունեմ:

Թուրինջն եմ, զարդի արբար, չեմ իմանում ինչպէս տանեմ,  
Թէ ինչի Լողման հէքիմ, էլ շահ չունիմ զանգատ ունեմ.  
Չի կարելի սուր քաշեմ, ինքս ինձի տամ, սպանեմ,  
Չեմ էլ մեռնում, պրծնեմ, ցաւի ձեռին բանդիվան եմ,  
Նամուսը ինձ հեղդել ա, առի ձեռից զանգատ ունեմ:

9.

Գիշեր ցերեկ չունիմ զարար ինձի,  
Խօշ դիվանա ջուռուն արար ինձի,

Հանդէսը իման ի՞նչ զիպար ինձի,  
 Աստուած սիրես, մի՛ տալ զարար ինձի.  
 Կամ թէ աւելի դարդ ու սար ինձի,  
 Դարդեր ունեմ հազար հազար ինձի,  
 Արեւ են ջանիցս բէզար ինձի,  
 Քցար կրակ ինչո՞ւ համար ինձի,  
 Հաբասայ նահախ տեղ էրար ինձի,  
 Էդպէս ջազայ տուող էլար ինձի,  
 Դու ես լաւ ու վատ բարերար ինձի,  
 Պէտք ա քեզանից ինի ճար ինձի:

Մտքիդ բանը թէք ինձ այան արա՛,  
 Ինչ զազարի կամիս արժան արա՛,  
 Տա՛ր քու դրանդ բանդիվան արա՛,  
 Կրակումդ էրի՛ր, բիրեան արա՛,  
 Քանդի՛ր կեանքս, ումբոս վերան արա՛,  
 Ինչ կամենաս, թէ՛ք ինձ մին բան արա՛,  
 Սաստիկ ինձ վերայ հրաման արա՛,  
 Ինքդ քեզ ու քեզ մին դիվան արա՛,  
 Կամ սպանիր, կամ մին կուճան արա՛,  
 Մի՛ տալ դէս ու դէն քարէքար ինձի:

Հողիդ սիրես, ինձ մին քեարամ անես,  
 Ենորհք շաքաղաթըդ ո՛չ քեամ անես,  
 Արտիս եարաներին մահլամ անես,  
 Եուտով կաղատես, թէ՛ որ կամ անես,  
 Չ՛տես սաղուքներին սիթամ անես,  
 Արաներին դիւզուն դաղ ու դամ անես,  
 Հար մաթլաբդ էսպէս թամամ անես,  
 Նստած թախտումդ ուրախ դամ անես,  
 Ուրախութիւնիցդ ինձ սամ անես,  
 Տիրութիւնդ ա նամուս, ա՛ն ինձի:

Չեմ խաբար ախր, թէ ի՞նչ անեմ էշխէդ,  
 Խեղճ թուրինջն եմ, սարգեարդան եմ էշխէդ,  
 Կեահ վարվանայի նման եմ էշխէդ,  
 Էրված, քաբար ու բիրեան եմ էշխէդ,  
 Թէ իմանաս կեսաջան եմ էշխէդ  
 Ոչ մեռած եմ, ոչ կենդան եմ էշխէդ,  
 Ջար ու զուղայ նալայ կանեմ էշխէդ,  
 Հարդամ հարդամ կու սասանեմ էշխէդ,  
 Յատուկ մահից անդուման եմ էշխէդ,  
 Չի՛նի՞ էշխէդ զիպաւ ազար ինձի:

10.

Պիտեմ իմաստութեամբ քեզի թայ չունես,  
 Չո՞ւմ ես ինձ երեւեմ յիմարի նման,  
 Պատճառն ի՞նչ ա, որ ինձ տեսնելու  
 Ծանդր ես մտիկ տամ խումարի նման:

Էդ նազ ու զամգայով հողիս հանում ես,  
 Եարա՛ր իմ ցաւերը դու իմանո՞ւմ ես,  
 Եխշխայի զայով որ մօտանում ես,  
 Հոտ ես տալիս մուշկ ու ամբարի նման:

Ղուազի եմ, կեանքս քու ճամբիդ մաշեմ,  
 Սիրաս քցեմ էշխիդ կրակը՝ խաշեմ,  
 Ինչ վախտ որ ծարաւեմ, բերնէդ ջուր քաշեմ,  
 Ծծեմ էդ քու լեղուդ շաքարի նման:

Բարակ շխտակ բոյրդ մէկ սայբու ծիւղ ա,  
 Տեսնելիս հէնց զիտեմ զարդարված թուղ ա,  
 Անձդ անարտո ա, ու խիտ կակուղ ա,  
 Դեղեցիկ ա սիպտակ մարմարի նման:

Գիշեր ցերեկ էշխէդ կանչում հատայ,  
 Թուրինջն եմ բանդիվան՝ դրանդ ծառայ,

ինչ կամենաս, ինձի հրաման արա՛,
Ղուլուղդ կատարեմ նոքարի նման:

11.

+ Գեղեցիկ ես գեղեցիկ, շատ ղիամամ իս գեղեցիկ,
Չեմ իմանրմ պատճառը, դու ի՞նչ ջահաթ ես գեղեցիկ:

Անման ես գովական, բարբաթ բարբաթ ես գեղեցիկ,
Չորս կողմէ զառ վարազած, փոշտի քաղաթ ես գեղեցիկ,
Շափաղիդ մօհրա տուած թուղթ մագաղաթ ես գեղեցիկ,
Ջարմանայի փառահեղ քաշած սուրաթ ես գեղեցիկ,
Լեզուով քեզ գովել չիլնել, շատ ղիամամ ես գեղեցիկ:

Էդ քու թոհվայ բաներդ հարկիս չիլնում իմանալի,
Շինուածդ զուղրաթի ա, խիստ պատուական զարմանալի,
Քու թայը, բարեբարը, չկայ որ քեզ նման լիլ,
Մաշուր վարպետի ձեռօք յօրինված ես հիանալի,
Շահնիշիրով զարդարած քեօշք իմարաթ ես գեղեցիկ:

Էշխո սրտումս ծով ա, քու ծոցը դարիս օման ա,
Տեղբատեղ թարիթ անել հար աշուղ զժվար կիմանայ,
Չի կարանալ քեզ գովել, քու թարիթը զանազան ա,
Կարծեմ էս աշխարհումս քեզ պէսն հազիւ քթանայ,
Քանս Արայ առաւել դու փարիզաթ ես գեղեցիկ:

Ինչ վախտ ինձի տեսնում ես, աչքով ունքով նազ ես անում,
Անդանակ ես սպանում, հոգիս մարմնէս վազ ես անում,
Ջարդարված թաւուղի պէս խշշալով փարվազ ես անում,
Ման ես զամ ճք ճքի ճք, քաղցր ձէնով սազ ես անում,
Հազար վիհտով, չարխերով սարքած սահաթ ես գեղեցիկ:

Բաղիդ բազվան եմ դառել, մէկ նուռն ու նարինջի համար,
Ծաղիկ ես ըռանդ, ըռանդ՝ իմ պէս մեղրամանձի համար,
Համ մալ ես, համ խաղինայ, չեմ հոգալ զազանջի համար,

Ոսկետիպ գիր ես դառել խեղճ՝ պարապ Թուրինջի համար,
Չեռքս բռնած կարդում եմ նաղլու հէքաթ ես գեղեցիկ:

12.

Գովելի ես գովելի ջուրա ջուրա, բարաթ բարաթ,
Հիանալի, զարմանալի, էդ ի՞նչ օրինակ ես իլած:

Մաքուր բոլոր պատկերով հէնց այ, լուսնիակ ես իլած,
Ճառազայթվել ա լոյսը, պայծառ արեգակ ես իլած,
Ջարմանազան կերպովդ նման հրեշտակ ես իլած,
Ասողանիշ աչքերովդ հրատ երեակ ես իլած,
Շողվդ աշխարհ է էրում, երկնային կրակ ես իլած:

Ում նման տամ քեզ ախր, ասեմ, քեզի սու յարմար ա,
Թարիղումս խօ չկայ, էլ չի լինիլ անհնար ա,
Էդ ձևի կերպարանքդ զուղրաթի նախշուն նկար ա,
Առաւել ես գեղեցիկ քանս Յովսէփ, քանս Արայ,
Անարատ՝ Աբիտղովին դու նմանակ ես իլած:

Ամեն կերպ կատարեալ ես, բայց հասակով նորաբոյս ես,
Քօլ աշխարհի սիրեկան, թարիթլու ամենից դուս ես,
Ջարդարվել ես փառահեղ, փիւնիկ հա՞ւ ես, թէ թաւուղ ես
Երբ տեսայ փայլուն գոյնդ՝ կարծեցի զոհարի լուս ես,
Բազմամձիղք վառված լուսով, ոսկի աշտանակ ես իլած:

Դու զրախտ ես ծաղկաւէտ, զարմազան չկայ նմանդ,
Բացվել ա անուշ հոտով վարդ ու սուսան բախասանդ,
Չի կարող ոչ ով մանել անմահական բուրաստանդ,
Աջ ու ձախ կայնած են միշտ հրեշտակներ պահապանդ,
Աղամայ դրախտի պէս սերովբէափակ ես իլած:

Թուրինջն եմ, կը ղիմանամ քու թարհին ամեն ժամանակ,
Դրանդ հաւատարիմ ես ծառայ եմ քեզ միայնակ,

Հինդ տարի ինձ ամէն օր սպանել ես առանց դանակ,  
Եշխիցդ զարար չունեմ, յիմարի եմ ես նմանակ,  
Հալիցս խաբար չունես, բա՛ս դու անդիտակ ես իլած:

13.

Դիպուկ դէմքդ զառվարալ զափտար, նամակ չէ, ի՞նչ ա բաս:

Սիրելի քո կերպարանքը լուսնիակ չէ, ի՞նչ ա բաս,  
Շովղդ պայծառ արեգակի նմանակ չէ, ի՞նչ ա բաս,  
Քաղցրախօս էդ քու լեզուդ զուճի, թուժակ չէ, ի՞նչ ա բաս,  
Ղալամ բաշած ունքերդ կեռ կամարակ չէ, ի՞նչ ա բաս,  
Թերթեռնքներդ սրած նաշտար դանակ չէ, ի՞նչ ա բաս,  
Աչքերդ կանթեղի պէս վառ վառ ճրագ չէ, ի՞նչ ա բաս,  
Բերանդ, պռօշներդ մեղր ու կարագ չէ, ի՞նչ ա բաս:  
Քօղդ առար երեսէդ, տեսայ խալդ զարդարել ես,  
Քոլորված լուսնի նման նուռ ջամալդ զարդարել ես,  
Քցել ես դոշիդ վերայ սուրբ հեքեալդ զարդարել ես,  
Ջարմանալի գեղեցիկ սինայ դալդ զարդարել ես,  
Կապել ես բարակ մէջքիդ թիրմա շալդ զարդարել ես,  
Հագել ես սալբի բջիլդ զարուղալդ զարդարել ես,  
Սարսափ զարբար զիբագ գիւլ, նառ ըռանդ չէ, ի՞նչ ա բաս:

Ի՞չ չկայ աշխարհումս յատուկ քու բարերարի պէս,  
Սուճբուլ մազերիդ հոտը վարդ, ուհան սուսամբարի պէս,  
Քցել ես մէջքիդ վերայ երկու ծամդ շահմարի պէս,  
Եդ քու ալ պռուսկներդ նման մուշկ ու ամբարի պէս,  
Մոցդ բազայ ու բաղ ա, ջուխտ շամամներդ նառի պէս,  
Քոլորված անձնդ սալտակ նման ձիւն նոտած սարի պէս,  
Սինադ մարմար քարի պէս խտակ, ճերմակ չէ, ի՞նչ ա բաս:

Թուրինջն եմ զարդի արբար՝ զուսա ու Ֆիքր շատ կանեմ,  
Վախտ կլիի որ ինձի ես՝ կու մոռանամ, քեզ եադ կանեմ,  
Իմ ջահիլ ջիվան ումբս ես կու քանդեմ, բարբադ կանեմ,

Սուր կ'տամ ինքս ինձի, կու սպանեմ, աղատ կանեմ,  
Ասեցի՛ր թէ՛ սաբբ արա, յեա ու առաջ իմդատ կանեմ,  
Գժուար հիւանդ եմ ինկած, գիշեր ու ցերեկ դատ կանեմ,  
Էս ցաւ որ ինկել եմ, անձար կրակ չէ, ի՞նչ ա բաս:

14. (\*)

Երկնային Թագաւորն ստեղծողն Աստուած  
Ստեղծեց հայր Աղամին իրան նմանակ,  
Ճառանդ յիշատակ.  
Յիշատակ, ժառանգող զբախտում՝ նա էր,  
Զկարաց վայելել փոքր ժամանակ,  
Զրկուեց խտակ:

Խստակ զրկվեցան փառաւոր բաղդից,  
Անմահքն մահացան, վեր ինկան թախտից.  
Նրբ իրանց հանեցին, դուս արին զբախտից,  
Ստեղծուածք սուգ արեցին, բարձր աղաղակ,  
Բոլոր բովանդակ:

Բովանդակ ինքն Աղամ յոյժ աղտեղեցաւ,  
Սկզբնական մեղքին խիտ համեղացաւ.  
Քաշեց մին ժամանակ կինն յղացաւ,  
Մեղաց պատճառ իլան ծնեցին զաւակ  
Գող և աւազակ:

Գող և աւազակ կայէն չխոստովանեց,  
Չար խորհուրդ նախանձն սրտից չի հանեց,  
Անմեղ գառն եղբօրն տվեց, սղանեց,  
Ճակատին պօղ բուսաւ, իլաւ խայտառակ,  
Խիստ անօրինակ:

(\*) Այս երգը գրված է շրթայակապ կերպով կամ բառադարձարար, Թուրքերէն գլխաւորապէս: (Աշուղների առաջարկութեանց մեկերից մէկն է.) Յ. Բ.



Անօրինակ մարդոյ փորձանքն տեսէ՛ք,  
 Ամենայն յանցանքն լալով միշտ լսէ՛ք,  
 Օրէնք պատուիրանքին ընդդէմ՝ բան չ'ասէ՛ք,  
 Ով Աստուծոյ բանին կրնկնի հակառակ,  
 Կիկնի անդանակ:

Անդանակ արեցին քանի սուրբերի,  
 Ո՛րն սպանեցին, որն արան գերի,  
 Չարչարվեցան, մեռան Աստուծոյ սէրի,  
 Քանի՛ մարտիրոսներ, քանի՛ նահատակ  
 Առին թագ պսակ:

Պսակի արժան մարդ հրեշտակի պէս ա,  
 Աշխարհից հեռի ա, մարդուս անտես ա,  
 Մեղաւոր թուրինջն եմ, խնդիրքս էս ա,  
 Տէ՛ր Աստուած, դու կանգնես ամենին քոմակ,  
 Պահես յաջողակ:

15. (\*)

Եղբա՛րք, էս աշխարհիս ումուդ մի՛ կապէք,  
 Անցաւոր աշխարհ է, շուտ կանցնի, վռազ,  
 Ինչպէս մէկ երազ.

Երազը ի՞նչ է, որ ումուդ ես կապում՝,  
 Ե՛կ, դու էդ խիաղ սրտէդ արա՛ վազ,  
 Միշտ և հանապազ,

Հանապազ Աստուծոյ երկիրպագանի՛ր,  
 Քեզնից ողորմութիւն նա չի հատանիր.  
 Քո հալալ քիսիցն մէկ բաժին հանիր,  
 Տո՛ւր Աստուծոյ ճամփին մէկ ծաղիկ նիազ,  
 Աստուած կանի հազ:

(\*) Նայի՛ր յառաջընթաց երգի ծանօթութիւնը:

Հազ կանի Աստուած, յատուկ իմացի՛ր,  
 Երկու ձեռդ, սիրտդ լաւ առատ բացի՛ր,  
 Չափում, քար կշիռքում՝ ճշմարիտ կացի՛ր,  
 Մի՛ լինիր խաբեբայ, զայլ ու հէլէպազ,  
 Մի՛ անիր խարազ:

Խարազ անող մարդուն Աստուած կու ատէ,  
 Լսել ենք, տեսել ենք փոքր ՚ի շատէ.  
 Հողիդ միտքդ բե՛ր, որ՝ մահդ խիստ մօտ է,  
 Անցել են օրերդ, կեանքդ է նուազ,  
 Ինչպէս բարակ մազ:

Մազէ կարմունջ (\*) կասեն, մէկ ուրիշ ձեւի,  
 Քո՛ւրինջ, ՚իզուր անմեղ հողիդ մի՛ սևի,  
 Ով բարին մոռանայ, չարին հետևի,  
 Վեր կինկնի էն բարձրից ներքե կոր, նիազ,  
 Կ՛դառնայ անազ:

16.

Ե՛կ ազամայ որդի, դու լաւ Ֆիքր արա՛,  
 Փուչ աշխարհս ինչպէս հաւատալ պիտի,  
 Աստուած ամէն մարդու իւր մեղքին յարմար  
 Չարչարանք ու պատիժ, հաւատ, տալ պիտի:

Չեռդ բռնի՛ր առատ, միտքդ ցանկ արձակ,  
 Ո՛վ տեսնի քեզ կասի դու ես հանք արձակ,  
 Ապականեալ մարմնէդ հողիդ յանկարծակ  
 Ասեն որ կու թռչի հաւայ, տալ պիտի:

(\*) Այդպիսի մի կարծիք է եղել մեր հինների մէջ, որ արքայութեան ճանապարհի վերայ մի մազէ կամուրջ կայ, ով որ արգար է, անվտանգ կանցնի և կմտնի արքայութեան. իսկ ով որ մեղաւոր է, իսկոյ՛ն վեր կ՛ընկնի դժոխքի մէջ. զարմանալու բան է, որ դժոխքի կրակը չի խանձի այդ մազէ կամուրջին: Յ. Փ.

Ամեն ծնանելոյ մայր ու հայր ա պէտք,  
 Ով լուսաւորիչ, է նա հայրապետք,  
 Տասներկու առաքեալ, բազում հայրապետք,  
 Կապեցին սուրբ օրէնք, հաւատ ալ պիտի:

Մարդ կայ որ տարին բոլորն բան բաս է,  
 Կիրակի օր նա չի անիլ բան՝ պաս է,  
 Ամենի յեաքիցն խօսէ, բամբասէ  
 Կասէ թէ լաւութեանն հա՛ վատ ալ պիտի:

Թուրինջ, քու յանցանքն ասա՛ ամէն, որ,  
 Դու մեղաց մէջին ես, քանի ամէ՛ նոր,  
 Քեզ պէս մարդն՝ վերայ անձին ամէն օր  
 Լալով, արտասուքով հա՛ վա՛յ տալ պիտի:

17.

Երկու խան որ կռիւ ուղեն,  
 Չարխֆիլէքը մէյդան կուզան,  
 Չափ կուտան ձի խաղացնելով,  
 Խափսով մէկ մէկու եան կուզան:

Կու դրոբսովին թափուր թափուր,  
 Չեռներին կառնեն թվանք, թուր,  
 Մէկ մէկու մտիկ կտան ծուռ,  
 Ինչպէս զիժված աալան կուզան:

Մաջալ չիլնիլ որ յետ աշեն,  
 Գոռալով Ատուած կու յիշեն,  
 Սիրմաղլինձ՝ ձի կու քշեն  
 Փոթորիկի նման կուզան:

Գլուխն կառնի պատանից,  
 Մարդն դուս կուզայ մէյգանից,  
 Գող գող յետով էն կու մանից,  
 Մորթած լեշի վերան կուզան:

Որ սպանեցին սարգարին,  
 Շիքաստ կուտայ քօլ վարգարին,  
 Դու տե՛ս, Թուրինջ, դիտի լէշքարին  
 Ինչպէս թարաշ թալան կուզան:

18. (\*)

Է՛յ նոր սիրելի նազանի խանրմ,  
 Հատդ չի քթնվիլ քօլ Իրանրմ:

Դու հրեշտակի ես յատուկ նմանրմ,  
 Քեզ տեսնելիս խօ՛ մարդ է սասանրմ.  
 Շաֆաղիդ մտիկ տալ չի կարանրմ,  
 Քանդումես կեանքը, հողին ես հանրմ,  
 Ուշքը թափում ես, խելքն ես տանրմ,  
 Ինքդ քեզ ու քեզ ուսհմ չես անրմ,  
 Էսպէս ջազայով չո՛ւմ ես ըսպանրմ,  
 Է՛յ զուլումքեար, մուրվաթ չես անրմ,  
 Արարմունքէդ աշխարհ է հիանրմ,  
 Շատ Ֆիքր եմ անրմ, խելք չի հասանրմ:

Քու թարխիբը մէկ հրաշքի բան ա,  
 Քեզնից կու փախչի դե ու սատանայ,  
 Յատուկ մեռած մարդ թէ քեզ մօտենայ,  
 Շունչ կառնի յանկարծ, կու կենդանանայ,  
 Էդ էլ մէկ ուրիշ ջուռա նշան ա.  
 Չիլնի՞ երկնքէն եկար մանանայ.  
 Թաջի թոհմար ես Հաջի-թարխանայ,  
 Ով տեսնի քեզ՝ խելոյն կուրախանայ,  
 Չ՛կայ համեմատ քեզ երկու դանայ,  
 Չարկիւշա բոլոր Իրան Թուրանրմ:

(\*) Այս երգը նոյնութեամբ իւր ուսերէն Թարգմանութեան հետ տպուի է Ասորախանում շատ առաջ ճրատարակիող „Азіатскіиъ Музыкальнииъ Журналъ“-ում 1816-1818 թուերի, տետրակ առաջին № 2. երես 3. (իւր ծայնադրութեան հետ additio) Բ. Փ.

Կերպից նման ա շաւիլ ու զամարին,  
 Վառվել ա վարէից Զոհալ, Մուշթարին,  
 Քո՛ղ աչքերս մին նայի քու Չահրին,  
 Զարմանայ ու հիանայ քու թահրին,  
 Երբ աչքս ինկաւ քու լոյս զիղարին,  
 Խեղքս փաթաթվեց ունքից կամարին,  
 ձոնդերն ցցվեց սրտիս դամարին,  
 Ես զիշեր ցերեկ թափումեմ արին,  
 Ինչ ուստ եմ եկել էս զարդ ու սարին,  
 Զես հարցնում թէ ո՞նց ես դիմանում:

Սարմաստի նիզեար, Չղալու թովուզ  
 Էդ աչքերդ Հնդստանայ ջովուզ,  
 Բարաթ բարաթ զարդարվել ես եաղո՞ւզ,  
 Թափել ես սինայից վերայ եալուզ,  
 Թէ որ հատել է բահար ու նովուզ,  
 Շինեմքեզ համար զիւլաբի հովուզ,  
 Սոնայի պէս լո՛ղ տուր, արա՛ փարվուզ,  
 Թռի՛ր դուրս արի՛, թառթառի թամուզ,  
 Մա՛ն եկ ջողալով կեահ կեահի դուզ դուզ,  
 Բազլի զիւլանում հովզի էյվանում:

Մայիլ մնացի քու պէս մահբուբին,  
 Մահբուբ, փաքիզա, ջիվան ու խուբին,  
 Մէկ տեսզ աժէ քուլու չալարին,  
 Աշխարհ մաթ արիբ քու արութարին,  
 Լանկի բերիբ քու երկրի սհարին,  
 Իլլահի Հաշտարխանայ նայիբին,  
 Ե՛կ, ոահմ արա՛ Թուրինջ զարիբին,  
 Բարով հասանես դու քու մաթլարին  
 Խղճի՛ր, մի՛ քցիբ էշխից զիրդարին,  
 Լալով չի մնամ, Ֆարեադ եմ անում:

19.

Է՛յ նորահաս	Բռնի՛ր ինձ սաղ,
Ջիվան ու խաս,	Կլիխի՛ց սաղաղ,
Թէ իմանաս,	Մորթի՛ր մատաղ,
Դու ես եար ինձ.	Քեզ համար ինձ:
Քանի որ կաս,	Շէնի թվալի, 1)
Թարխ չի տաս,	Կարգի քալի 2)
Ուր որ կերթաս,	Մօտ չես դալի,
Վե՛ր առ, տա՛ր ինձ:	Մտիկ տալի,
Շահ ես թագայ	Սիրտս խէյլի
Քէֆդ սաղ ա,	Դարդով է լի,
Հումքդ վռազ ա,	Ով պիտ՛ իլի
Կանես զազայ	Դեղ ու ճար ինձ:
Կեանքս նուազ ա,	Թուրինջ, օմադ
Բարակ մազ ա,	Եար քեզ մին զազ,
Մի՛ տար Չաղայ,	Մի՛ թող նամրադ
Զարէչար ինձ:	Արա՛ ազատ,
Դուս արի՛ բաղ,	Հասի՛ր իմզաղ,
Առաւօտ վաղ,	Հայս է վատ,
Վարդ ու զամբաղ,	Մի՛ քցիբ շատ
Քաղի՛ր թաղ թաղ,	Քարէքար ինձ:

20.

Թէ կամենաս, մէկ սուր ա՛ռ, արեւո՛ւղ մատաղ,  
 Իմ գլուխս կտրի՛ր, տար, արեւո՛ւղ մատաղ:

Մին բան ասեմ, լսի՛ր, եա՛ր, արեւո՛ւղ մատաղ,  
 Բիւլբիւլի պէս կուլամ, խա՛ր, արեւո՛ւղ մատաղ,  
 Մին թո՛ղ խոնչէդ քաղեմ, բա՛ր, արեւո՛ւտ մատաղ,

1) Գու աչքերը, 2) Սիրուն աղջիկ:

Մի՛ ջոկիր ինձ վարդէդ, ծա՛ռ, արևո՛ւղ մատաղ,  
Մեր մէջումն կար իղրար, արևո՛ւղ մատաղ:

Ղուլ եմ դառել քեզի, մնացել եմ Ֆաղիբ,  
Քանի որ կենդան եմ, ուրա՛խ կացիր, հաղի՛ր,  
Իսկ երբ որ կու մեռնեմ, մազդ վճէս շաղի՛ր,  
Գի՛ր ինձի գերեզման, բու ձեռնովդ թաղի՛ր,  
Քցի՛ր վրէս նշան քար, արևո՛ւղ մատաղ:

Թուրլու թուրլու դարդեր սրտիս մէջ է լցված,  
Դաղել ա ջիզարս, մնացել ա խոցված,  
Հէնց զիտես թէ սուր, սուր խանջալներ ա ցցված,  
Լերդ ու թոքիս մէջին եարաներ ա բացված,  
Յաւս ինձ կ'սպանի, ճա՛ր, արևո՛ւղ մատաղ:

Կարօտ եմ պատկերիդ, փառք Աստուծոյ, տեսայ,  
Մին բան հարցմունք անեմ, Աստուած սիրես, ասա՛,  
Սերտ սիրով քո ինձ հետ եար իլնելդ է՞ս ա,  
Չես հարցնում հարկիս, թէ հալդ ի՞նչպէս ա,  
Սրտումս ըլթիմազ կար, արևո՛ւղ մատաղ:

Ա՛քքս մնաց ձեռիդ կարմիր վարդի փունջին,  
Մեղուի պէս տղալով կաշէիմ էն քունջին,  
Լեզու չունեմ խօսեմ, խղճի՛ր իմ պէս մունջին,  
Չես հարցնում ո՞ւր ա քո ծառայ թուրինջին,  
Ի՞նչ շուտով ինձ մոռացար, արևո՛ւղ մատաղ:

21. (\*)

Իմաստունք, մարգարէք, որ աշխարհ եկին,  
Սրանք ո՞ւր գնացին, ի՞նչ իլան եարար,  
Կերևա՞ն աջար:

(\*) Նայիր 14-րդ երգի ծանօթութիւնը:

Աջաբ դո՞րդ են ասել՝ էս սուտ աշխարհը  
Իբր թէ մէկ ծով ա, շատ ունի զիրդար,  
Որ չկայ հէսաբ:

Հէսաբից դուրս բան մի՛ բունիր բէքեամալ,  
Որ յետով չի ծնի կոխ զալմաղալ,  
Սուտ քաղցր աշխարհիս պարտ չէ հաւատալ,  
Մէկ Ֆանդով, ուսուլով մարդուս կ'տայ խար,  
Թէդ կանի խարաբ:

Խարաբ կանի կեանքդ, քեզ կ'տայ վնաս,  
Թէ ճարը իմանաս, շատ զինջ կը մնաս,  
Ուղիղ սրտով եթէ ողորմութիւն տաս,  
Խեղճ՝ քաղցած տկորին, թէ անես սուար,  
Լուս կը դառնաս հար:

Հաբ սրտիս բանն ասեմ, չի մնայ արդու,  
Լսել ես կայ սարքած միզան թարազու,  
Լաւ ճարտար խօսելու ունես մին լեզու,  
Երբ մեղքդ ջամ կանեն, քեզ վրայ արբար,  
Պիտի տաս ջուզար:

Չուզաբ կուզեն մեղքիդ մէկին երկուսով,  
Գիշեր ցերեկ աղօթք արա՛ սաղմասով,  
Թուրինջ, Աստուած յիշի՛ր հաւատով, յուսով,  
Ինչ ունես սրտումդ խնդիրք ու մաթլար,  
Դու արա՛ թալար:

22.

† Իմ սիրելի, մինչև ե՞րբ ես արտասվեմ,  
էս ի՞նչ Ֆիլքր ու դարդ ու ազար ա, դի՛լար,  
Քաղցրախօս լեզուիդ ինձ մխիթարի՛ր  
Մին դամ հետս խնդա՛, հա՛ղ արա, դի՛լար:

Գիրքն Աստուածային սուրբ՝ մինչ 'ի մի տառ,  
 Բու տված տանջանքն մէկ մէկ 'ի միտ ա՛ռ,  
 Լրաւ ժամանակը, քեզ հետ 'ի մի դար,  
 Լուսափայլ լէրաստղ հա՛, զառ ա, զիլբար:

Երեսդ բոլորված լուսնի հաւասար,  
 Սուրբ աւետարանին մի՛տ զիր, հաւաս ա՛ռ,  
 Թուրինջն եմ ողբալով դարդս հաւասար,  
 Օրս մէկ ա, լալս հազար ա, զիլբար:

23. (1)

† Ինչ վատութիւն արի, մատաղ մի՛ անիր,  
 Զանս քեզի զուրբան սաղաղ մի՛ անիր:

Մին փուչ բանով ինձ բէզամաղ մի՛ անիր,  
 Դօստ ու դուշմանիս դու օյաղ մի՛ անիր,  
 Խոցված սիրտս, սիրելի, դաղ մի՛ անիր,  
 Գլխիս վերայ դալմաղալ չաղ մի՛ անիր,  
 Արտասուքս վարար բուլաղ մի՛ անիր:

Ի՞նչ պէս անեմ, ո՞ւմ ասեմ դարդ ու սարս,  
 Շատանում ա օրբէ օր ահուզարս,  
 Եշ իդ սիրով ճգճգվել ա զուբարս,  
 Յեռ ա գալիս, մղկտում ա ջնգարս,  
 Աստուած սիրես մահլամ զի՛ր, աղ մի՛ անիր,

Չիվան ումբրս քու ճամփումն փուչ արի,  
 Կու ինդրեմ տայ Աստուած քեզի միշտ բարի,  
 Մուրվաթ արա՛, կայնիր շարթ ու իղբարի,  
 Ինչ որ ասեմ խօսքս լսիր, կատարի,  
 ,,Զէ՛" մի՛ ասա, ունքերդ թաղ մի՛ անիր:

(1) Այս երգը տպված է „Քնար Հայկական“ի մէջ պ. Մ. Միանսարեանցի՝ որ տպված է 1868 թուին Ս. Պետերբուրգում: Երգ 225, երես 447. Ե. Փ.

Եփրայադօր թագաւոր ես դու զօրեղ,  
 Նոր զարգարված թախտըմ՝ նստած փառահեղ,  
 Կայնացրել ես ջալաթիդ արիւնահեղ,  
 Մեղքս իմացի՛ր, դիւան արա՛ահեղ,  
 Թէ մեղք չունեմ, 'ի զուր նստաղ մի՛ անիր:

Լալով արտասուելս սէլի նման ա,  
 Սիրտս լեքը զարդերով հար զուման ա,  
 Թուրինջն պէս հար մարդ գժար զիմանայ,  
 Ով ինկել ա, ով քաշել ա՛ կիմանայ,  
 Նա քեզ կասի, էշլի հետ հաղ մի՛ անիր:

24.

Ինձ մի՛ հաշիր, մի՛ մաշիր, սիրտս բարակ մաղ մի՛ անիր:

Սիրելի, Աստուած սիրես, արի՛ դու շատ նաղ մի՛ անիր,  
 Թէ զրուստ ինձ եար ես՝ սէրդ սրտէդ վաղ մի՛ անիր,  
 Զախ ու ծուռն մտիկ մի՛ տար, հարասայ զարաղ մի՛ անիր,  
 'ի զուր տեղ մի՛ սպանիր, ինձի նամուրաղ մի՛ անիր,  
 Կեանքս մի՛ փչացնիր, օրերս նուաղ մի՛ անիր:

Թշնամին կուրախանայ, գիտեմ, կ'գայ բան կու խօսայ,  
 Նիաթը չունքի ծուռ ա՛ սատանի նման կու խօսայ,  
 Կեահի ցաւ ու չոռ կասի, կեահի սիրով ջան կու խօսայ,  
 Խիտ քաղցր զրուց կ'տայ, քեզի դուրական կու խօսայ,  
 Մի՛ հաւատար, օրը մի՛ տար, խօսքդ սաղուբաղ մի՛ անիր:

Լսել ես աշխարհումն շիրինի Ֆահրադ է (1) էլած,  
 Էն սիրելի ճամփումն կեանքը բարուբաթ է էլած,  
 Քանխոր սէր են ինկել, քանխաներն էլ եադ է էլած,  
 Էն ջհաթէն վախում եմ, մեր պէսներն շատ է էլած,  
 Խմացի՛ր, էլ ինձի դու մատարայ տնաղ մի՛ անիր:

(1) Ֆահրադը Պարսից երևելի բանաստեղծներից մէկն է, զա ունի իւր անցքը գրած (Թէ ինչպէս սիրահարված է եղել) սիրուհւոյ անունն է Շիրին: Ե. Փ.

Ղուսայով սիրաս էրված, Ֆիլքր ու խիալով մի' թողել,  
 Ազատի'ր Աստուած սիրես, ինձի էս հալով մի' թողել,  
 Քցել ես էշխիդ ծովը, թողխունը տալով մի' թողել,  
 Թուրինջն եմ, մէկ սահմ արա', ինձ կարօտ լալով մի' թողել,  
 Աչքիս սէլ արտասունքը էլ քու ու Արազ մի' անիր:

25.

Կարսիր, կանաչ բացված վարդի նման ես դու,  
 Հիլ ու մեխակ դարչին, հոտով ուհան ես դու:

Մարդ կու մայլի քեզնէն հրեշտականման ես դու,  
 կարօտ եմ պատկերիդ, շատ աննման ես դու,  
 Գեօղալների միջին խիտ գովական ես դու,  
 Աշխարհումն մին ես, թովա նշան ես դու,  
 Չի դուս գալ քու թայլդ, ի՞նչպէս ինսան ես դու:

Ինձ նման քու զաղրը լաւ իմացող չ'կայ,  
 Ուզում եմ քեզ առնեմ, ի՞նչ անեմ փող չ'կայ,  
 Գնիդ բարեբարի աշխարհում հող չ'կայ,  
 Դու մին ջավահիր ես, քեզ պտրող չ'կայ,  
 Թագաւորի խազնում քար անգուման ես դու:

Խիտ քաղցր է բերանդ, մեղր է լցված հալբաթ,  
 Պռօշներդ զանդ ա, լեղուդ շաքար նարաթ  
 Լցրո'ւր, տո'ւր ինձ, խմեմ մին փխալայ շարբաթ  
 Ինձ համար մաղա ես, ամեն բարաթ բարաթ,  
 Փռած կանաչ գետնում սուֆրա սեղան ես դու:

Ել ի՞նչ գովեմ քեզնէ, էդ կերպի որ դու կաս,  
 Լաւ հուրի զմանից դու չես իլնիր պակաս,  
 Ով որ տեսնի քեզնէ, նոր կու ինկնի հաւաս,  
 Սէյրանկեահ սէյրումն ես կանաչ զարունքահաս,  
 Ծլած, ծաղկած մամուռ, չայիր չիման ես դու:

Պէտք ա լեզուս լալի, բէլքի թէ զանց անեմ,  
 Գովասանքդ կասեմ, քանի որ կենդան եմ  
 Թուրինջն եմ սարգէշտան, ես մարդու մարդան եմ,  
 Թէ կուզ ինձ սպանես, չ'եմ պիտի Ֆիլքր անեմ,  
 Ինձպէս մեռածների շունչ, հողի, ջան ես դու:

26.

Ղօչաղ կովարարներ հուջումեն քաշած,  
 Խոտալով գալիս են պօզ Ֆիլի նման,  
 Ասրիկ ուղտի նման վրփրած գիծված  
 Իրար կտրատում են ինչ դէլի նման:

Որն որ յաղթում ա, հասցնում ա զօռը,  
 Տկորում ա թամամ կարող ու շորը.  
 Օձի լեզու խանջալ կոխումէ փորը,  
 Բղբղայնում է շուտ խեղճ ուլի նման:

Աչք ա տանում թուր ու թուանքի շողը  
 Մուխանաթի սիրտը ին'նում ա դողը.  
 Թափում են զխիցը արիւն ուղեղը,  
 Գնում ա Ֆշշալով թունդ սէլի նման:

Հայրմիշ անելով լաւ զօչաղ կէտին,  
 Զավաչափ սունում ա, քցում ա գետին,  
 Կարում ա զուխը հազցնում ջիլին,  
 Թոցնում ա ձին թունդ սամուլի նման:

Ե՛յ Թուրինջ, մարդ պիտի էնպամ հունարով,  
 Որ զլուխ դուս հանի իւր ձեռքի զօռով,  
 Զոր քալաներ խի չըրփաչըրի թուրով,  
 Կտորի վեր թափի ջանկալի նման:

27.

Նոր բահար ես գովելի, թաղա նուզբար ես գովելի:  
 Անման ես զեզեցիկ, նաղչ ու նկար ես գովելի,  
 Եղ սուբաթ շափաղովդ շամչ ու դամար ես գովելի,  
 Լուսաբեր աստղի նման պայծառ ու վառ ես գովելի,  
 Արևելեան կողմից լոյս կապած կամար ես գովելի,  
 Չի հասնիլ քեզ գովասանք, դու անյարմար ես գովելի:

Նազ իլնելով դու կը դաս նաղիչքար օթաղի մէջէն,  
 Թոփ կարմիր վարդի նման բացվել ես եամիրաղի մէջէն,  
 Քաղցրահամ շամամներդ բարձրացելա թաղի մէջէն,  
 Եուխ բօյբղ թահրայ արել արքայութեան բաղի մէջէն,  
 Միշտ կանաչա տերեզ, դու սայբու ծառ ես գովելի:

Լուսով ես պատկերովդ քանս արեգակի վերայ,  
 Վառվում ես ճրագի պէս, ոսկի աշտանակի վերայ,  
 Փայլում ես մաշայի պէս գունով ես կրակի վերայ,  
 Յօրինած ես կայսերաց, թաղաւորաց թաղի վերայ,  
 Թրաշած անդին ետղութ ջաւահիր քար ես գովելի:

Թայ չունես աշխարհումս, ետրա՛ք դու ի՞նչ օրինակ ես  
 Բիւլբիւլ ես գարնանային, ճարտարախօս ծիծեռնակ ես,  
 Բաց արա՛ անմահական բաղիւղ դուռնը, քանի՞ փակես,  
 Գիտեմ՝ անոյշ հոտ ունես, վարդ ու ուեհան մանուշակ ես  
 Կամ թաթայխութայի մուշկ ու ամբար ես գովելի:

Ո՞րտեղան որտեղ, Թուրինջ, ըռաստ եկար դու էս պահը,  
 Դէս ու դէն պտուտ գալով ա՛խր ինկար էշխի ջահը,  
 Պրծնելու ձար չ՛կայ, հողիդ կառնի դալում մահը,  
 Թէ հազար ցաւ ունենաս ի՞նչ կանի հիմիկի շահը  
 Ինձ համար անմահական դու դեղ ու ձար ես գովելի:

28.

Նշանց տուր պատկերդ, տեսնեմ աչքերդ,  
 Խոււմար, խոււմար մտիկ սալիդ եմ կարօտ,

Ասի՛ր, լսի՛ր, խօսի՛ր, հարդամ ծիծաղելի  
 Անուշ անուշ քո խնդալիդ եմ կարօտ:

Կերպովդ մարայ ես, դէմքովդ ջէյրան,  
 Ով որ քեզ կու տեսնի՛ կը դառնայ հէյրան.  
 Բաղ ու բաղչի սազ ես, դո՛ւս արի սէյրան,  
 Նաղով նաղով քու մանգալիդ եմ կարօտ:

Թէպէտ հողէդէն ես, շատ անման ես,  
 Անարատ փաքիսայ, դու նոր ջիվան ես,  
 Քաղցրահայն բիւլբիւլ ես կամ հաղարան ես,  
 Կարդի՛ր, կարդի՛ր, ճըլվալալիդ եմ կարօտ:

Արի՛ Ֆիլըր ու դուսան սրտներէս հանենք,  
 Տանք քամու առաջին՝ դէս ու դէն ցանենք,  
 Նստենք ՚ի միասին զօղ ու դամ անենք,  
 Քաղցր, քա՛ղցր քու խօսալիդ եմ կարօտ:

Եթէ կուզես ամեն դարդս իմանալ,  
 Առանց քեզ աշխարհիս ես չեմ դիմանալ  
 Խեղճ Թուրինջին մէնակ մի՛ թողնիլ գնալ,  
 Կացի՛ր, կացի՛ր, քո մնալիդ եմ կարօտ:

29. (1)

Ո՛վ իմ սիրելի, մէկ մօտս արի  
 Հարդամ քո դուռնը դալըս իմացիր,  
 Երկու աչքիցս արիւն ա կաթում,  
 Գլխիս վայ տալով լալս իմացիր:

Հերի՛ք ա, մուրվաթ արա՛  
 Եար, հերի՛ք ա, մուրվաթ արա՛,  
 Նահախ տեղէն մի՛ շարչարիր,  
 Ե՛կ ուսճճ արա՛, եա՛ր, քեզի դուրբան:

(1) Այս երգը տպւած է «Քնար Հայկականում» պ. Միանսարեանցի, երգ 245, երես 470:

Սրտիս դարդերը չո՞ւմ չես իմանում,  
 Ինձ նահախ տեղէն չու՞մ ես սպանում,  
 Աչքիդ տակովը մտիկ ես անում,  
 Իմ անմուռնչ բարով տալս իմացիր:

Մէկ խալված օթաղ, մէկ ես ու ես եմ  
 Արի՛ իմ մօտս, քեզ հետ մին խօսեմ,  
 Բացեմ դարդերս, ականջ դի՛ր ասեմ,  
 Իմ քոռ անբաղդ իղբալս իմացիր:

Ե՛կ մին բան արա, դառնամ քեզ ուղի  
 Ինձ նահախ տեղան ե՛կ մի տալ ջաղի,  
 Ինքդ Ֆիքր արա, հար, քեզ ու քեզի,  
 Սրտիս միջի խխալս իմացիր:

Էջիւիդ կրակը սրտումս վառ ա,  
 Լերդ ու ջիզարս դառել ա հարայ,  
 Աստուածդ սիրես, ինձ մին ու՛հմ արա,  
 Խեղճ Թուրինջն եմ ես, հալս իմացիր:

30.

Ո՛վ սիրելի, էս աշխարհի  
 Նարերիցը բէզարել եմ,  
 Բիւլբիւլի պէս զար եմ կանչում,  
 Խարերիցը բէզարել եմ:

Մտիկ տուէ՛ք դարդ ու սարիս,  
 Մէկ մահլամ չի քեծամ հարիս.  
 Էնքան քաշամ ահօ՛ւ դարիս,  
 Ճարերիցը բէզարել եմ:

Բարդաւարին մտիկ տալիս,  
 Աչքերիս արխն ա գալիս,  
 Ջուռունի պէս ման եմ գալիս,  
 Սարերիցը բէզարել եմ:

Խիստ իղբալս քօռացել ա,  
 Ազգս ինձի մոռացել ա,  
 Բարին ինձից հեռացել ա,  
 Չարերիցը բէզարել եմ:

Խեղճ Թուրինջն եմ, չունեմ քօռակ,  
 Արտասունքս իլաւ ծովակ.  
 Էսպէս նահանջ, անյաջողակ  
 Ճարերիցը բէզարել եմ:

31.

Ո՛վ սիրելի մէկ ուհմ արա,  
 Արի՛ սիրտդ քար մի՛ անիր,  
 Աստուած սիրես, ինձի թողած՝  
 Քեզ ուրիշն եար մի՛ անիր:

Եար, զու ինձի ումուդ տալով  
 Մի՛ թողնիր արտասունք լալով,  
 Ըռաղուբին հաւատալով,  
 Դու քեզի սըրդար մի՛ անիր:

Սըր մի՛ տար, խօսքդ մի՛ եաշիր,  
 Իմ ջիվան ումբրս մի՛ մաշիր,  
 Սրտիս դիւզիւն դաղ մի՛ քաշիր,  
 Աւել դարդ ու սար մի՛ անիր:

Դարդ ու սարս շատ շատացաւ,  
 Օրբէօր հալս վատացաւ,  
 Ազգ ընդանիքս ետդացաւ,  
 Նա՛ր, ինձ քեզ օտար մի՛ անիր:

Օտարն ինձ բերաւ ամանի,  
 Թուրինջն եմ, հասել եմ ջանի,  
 Էս ցաւը ինձ կու սպանի,  
 Նահախ տեղէն ճար մի՛ անիր:

32.

Ո՛վ եղբարք, սուտ օղորթ բաներ շատ կասեն,  
Կօղորթվի, երեք անձինք կասեն և,  
Երեք մարդ կերպիցն շուռ եկան, դարձան,  
Մէկն հապան, մէկն լարալ, մէկն և:

Մարդ պիտի աշխարհքն ունայն համարէ  
Նստի լալով մեղքն մէկ մէկ համարէ  
Երեք դիր կայ մեղաց պատժի համար է,  
Մէկն մէկն է, մէկն այլք, մէկն և:

Ո՛վ աշխարհիս գանձին աչք ունի փողին,  
Վիշապ օձ կու գառնայ պարտ կառնի փոխին,  
Երեք կերպ ձայն ունի Գարբիէլիան փողին  
Մէկն ալլալ, մէկն խալալ, մէկն և:

Թէ տուն շինես, հիմն աւազի որմ դնես,  
Նա չի մնալ տեղում հաստաս որ մանես,  
Երեք նեղ տեղ ջուր կայ գրախտին, ո՛ր մանես,  
Մէկն արալ, մէկն սարսալ, մէկն և:

Ետոհ, խմատու թխն, Թուրինջ, առն է լուս,  
Որպէս ճրագ մարմնոյ վերայ առնէ լուս.  
Երեք շունչ կայ հրեշտակն հոգի առնելուս,  
Մէկն ախ, մէկն լախ, մէկն և:

33.

Պարծանք ես երկնքի, լոյս ես աշխարհի,  
Փայլում ա պատկերդ ինչպէս մին արև,  
Քեզ տեսայ բարև.

Բարերար Աստուծոյ նախշ ու նկար ես,  
Քաշվել ա դալամով ունքերդ սև, սև  
Խիստ կամարածև:

Չևովդ հրեշտակ ես, քաղցր ալաղդ  
Սպանում ա ինձի շուխ շանգի նաղդ,  
Վախեմ, էշխիդ ծովէն ամալի ունդ մաղդ,  
Ջուր քաշի խուռալով ու տանի վերև,  
Թափի անձրև:

Անձրև ես մայիսվայ քաղցր ու շահական,  
Ծառ ու ծաղիկ բաղձանք, մարդոյ սիրական,  
Ամենայն կերպ զովելի ես բաւական,  
Անձովդ անարատ, հաստիաւ պարթև,  
Խիստ պատուական, լև:

Լև օրհնած պողաւէտ դրախտի ծառ ես,  
Քաղցրահամ, քաղցրահոտ, դեղիցիկ բար ես.  
Դառնաշունչ քամից դու ոչ խանդարես,  
Մնայ ծառդ դալար կանաչատերև,  
Յախտեան մնչև:

Մինչև հազար տարի կեանքդ երկարի,  
Հալդ, ըռուզգեարդ անցկենայ բարի,  
Խղձի՛ր քո Թուրինջին, էլ մի՛ չարչարի,  
Մի՛ ջոկէր քեզանից ինձ այսուհետև,  
Որ չի դառնամ խև:

34.

† Պատկերով խիստ աննման ես, սիրելի,  
Քեաջուրներին դին խման ես, սիրելի:

Մին շահ ու սուլթան ու խան ես, սիրելի,  
Լաւ խօշ աղալաթ դիւան ես, սիրելի,  
Մին արդ ունեմ անկաջ անես, սիրելի  
Ինձ սպանիր, չի հաւանես, սիրելի:

Ինձանից բան մի՛ թաքցուր ծիծաղելով,  
Սիրտս էրար անուշ խօսքով դաղելով:

Աչքով ունքով ուրախադէմ հաղելով  
Խեղք ու միտքս կուզե՞ս տանես, սիրելի՛:

Արարմունքով դու նման ես հոգեղեն,  
Կերպարանքով, զահմով զաբիթ հրեղէն  
Մին ձեռդ թուր, էն մին ձեռիդ սրեղէն,  
Ջարհուրելի հոգեհան ես, սիրելի՛:

Քանդար տունս, խարաբայ ա, տուն չունեմ,  
Բայդուշի պէս մոլորվել եմ, քուն չունեմ,  
Գիշեր ցերեկ քու էշխիցն քուն չունեմ,  
Հովացել եմ ամեն բանէս, սիրելի՛:

Լաւ հաւատար քեզ ծառայ եմ, ծառայիս,  
Ե՛կ ուսմ արա՛, մին հասի՛ր իմ հարայիս,  
Խեղձ թուրինջն եմ, ճար չես անում եարայիս,  
Ջահա եմ անում, հոգիս հանես, սիրելի՛:

**35.**

Պատկերդ գեղեցիկ զուգել ես, նազու,  
Աչքերդ վառ վառ շամչրաղ ես արել,  
Ջարդարվել ես ոսկուով, անգին քարերով,  
Խալերդ թամամ զառ, վարաղ ես արել՝

Իմաստունք չեն գիտել, քու հիմն ու բինէն,  
Չեն կարող իմանալ, ինչքան որ քննեն,  
Ջարդարված տաճարիդ լուսեղէն սիւնէն  
Աջ ու ձախ ունքերդ թաղ թաղ ես արել՝

Կարմիր բացված վարդի բաղչայ է ծոցդ,  
Մարդու խելք է տանում քու անուշ հոտդ,  
Քաղցրաձայն բիւլբիւններ Լցվել են մօտդ,  
Չորս կողմից գիւլաստան, չարգաղ ես արել՝

Ես մոլորված նաւ եմ, դու մին անտակ ծով,  
Վախեմ ինձ տակ առնես, զլխիս բերես լով,  
Անկուշտ, անհանգչելի էշխիդ կրակով  
Քանի՞ ինձպէսներին դաղդաղ ես արել՝

Ուսմ արա մահրումիդ լալ ու մրմունջին,  
Արիւն ա դեօլ կապել աչքերիս քունջին,  
Ախար ի՞նչ գունահ ունի դարիք թուրինջին  
Առանց կապ դրանդ դու թսաղ ես արել՝

**36. (\*)**

Պատուիրանից ոչ ելի, միտքս չարեօք ոչ է լի,  
Թուրինջ, ե՛կ մին բան ասա, մէջում ա, \* չելի՛:

Տեսի երեք հոօրք լերինք կից էին,  
Հէնց թուր թէ՛ երեքի հիւքն մէկնի, 1)  
Եւս տեսի կերպ կերպ դէմքեր կից էին,  
Եթէ գէտ ես, քիչ մի խօսքս ինձ մեկնի 2):

Վրէժինդիրն խիտ վեշտ և կիրք վեց կրէ, 3)  
Սիրան մանէ նեա հրեղէն վեց կրէ 4)  
Էն ի՞նչ թիւ է, ի՞նչ կը գրվէ վեց գրէ,  
Սկիզբն, վերջն ճ, մէկ ք, մէկն է 5):

Գիտէ՞ք, պէս պէս մեղօք մեք լի գէր 6) էինք,  
Սիրա վերցօղ իժ օձից գեր 7) էինք  
Բեհեղգեբղի ձեռին մեք գեր 8) էինք,  
Իսկ զրկիչն մեղի գնեց մէ գնի 9)

Քեզ ծնօղն երբ կը կրէ, երկն՝ 10) չէ,

(\*) Այս երգում ա և ո տառեր չկան: Մինչև այժմ ես կայ այդ սովորու-  
թիւնը որ աշուղները առաջարկում են միմեանց այսպիսի դժուարին հարցեր, ու՞  
որ չկարողանայ, իւր ձեռքի քնարը պարտադրեալ կտայ իւր հակառակոր-  
դին և՛ այդ մեծ նախատիքը է աշուղի համար: Յ. Փ.

Պիտի սիրան երկիւզ կրէ, երկնսէ.  
 Ի՞նչ մեղք լինի, նիւթն երևի յերկ 11) ընչէ  
 Վիշա ծնող է մէկ պիղծ սէրն մէ կնի 12)

Թրինջ, ճգնի՛ր, ճգնողները երեք են,  
 Ընկերիդ հետ սիրող միտքդ է՛ր է քէն,  
 Ստեղծիչ տէրն քեզ ստեղծեց երեքէն,  
 Վերջն պիտի մէկս մէկից մեկնի: 13)

**37.**

Չառ կու կանչեն առաւօտանց,  
 Որ հաւաքվեցան սան կուլի,  
 Սան որ տեսնեն կու հաղիրվեն,  
 Յետով կուռի հրաման կուլի:

Թէ վշեց յաջողակ քամին,  
 Կուռն կընկնի շուտ էն դամին,  
 Ով որ ճանկեց իւր թշնամին,  
 Տեսէք) թէ ինչպէս բան կուլի:

Կու փշեն բանդիւռ ու փողն,  
 Կու ջոկիլն արիւն խմողն,  
 Դու էնտեղ տես կուռի գողն,  
 Որ ի՞նչ բարթթ թժփան կուլի:

Կու խմեն մահուան դառն բանկ,  
 Դուշմանի հետն կանեն ջանի,  
 Էնքան կու քցեն թօփ, թուանկ,  
 Ծուխն բարձր դուման կուլի:

Ղոչ մարդ պիտի, սե զաթներ,  
 Հեծնեն մանեն զուլումթներ,  
 Թուրինջ, քեզ պէս մուխաննաթներ,  
 Որ տեսնի կէսաջան կուլի:

1) մէկ է 2) մեկնիր 3) կրել 4) կիրք 5) Մարիամ 6) պարարտ 7) գերագոյն  
 8) գերի 9) գնով 10) վախ, աճ 11) երկու 12) կնոջ 13) բաժանի:

**38.**

Սիրելի, կշտիցս եկար անց կացար,  
 Խէթ խէթ աչք ածեցիր, խալադ ի՞նչ ա,  
 Էլած խելքս զլխէս առեցիր, գնաց,  
 Էլի կրկին դալդ, գնալդ ի՞նչ ա:

Հանեցիր կէս ջանս, ինձանից տարիր,  
 Սրտիս դաղ քաշեցիր, խաթր չի արիր,  
 Խաթր անելի տեղ՝ քար ու քանդ արիր,  
 Գեահի գեահի շախշախ խնդալդ ի՞նչ ա:

Չանիս ջիդա նաշտար խանջալ ես ցցել,  
 Խտակ սիրոս լերդ լերդ արիւն ես լցրել,  
 Նահախ ինձի անձար կրակ ես քցել,  
 Չես հարցնիլ հարկիս թէ՛ հալդ ի՞նչ ա:

Հերիք էշխիս սիրով շիշին քաշես,  
 Գնես կրակ էրես, ջիգարս խաշես,  
 Թէ ինձի յետ առաջ սիրով սրդաշ ես,  
 Էլի նահախ քարէքար տալդ ի՞նչ ա:

Դալ զաթդին սաղ կըզայ, այլ նարինջին,  
 Հէյրան արար խելքիդ շաղ ու զարինջին,  
 Ասել ես ջալաթին հեղդի Թուրինջին  
 Էլի խնայելդ ինձ, խղճալդ ի՞նչ ա:

**39.**

Սիրելի, քեզ դովել չիլնիլ,  
 Պատկերով անման ես դու,  
 Քու պատկերով մարդ չեմ տեսած,  
 Եարաբ էդ ի՞նչ ինսան ես դու:

Ամեն ինսան մին չի դառնալ,  
 Քեզ պէս սալաթին չի դառնալ,

(\*) Այս երգը Թուրքերէն ասվում է: „ղողաղ դէկմէզ“ այսինքն շրժունքների միմեանց չկպչող. ուշադրութեամբ կարգացողը կ'նկատէ: (Աշուղների առաջարկութեանց ձևերից մէկն է): Յ. Փ.

Աշխարհս քեզ զին չի դառնալ,  
Զավահիրի մադան ես դու:

Մադան ես դու անկումանում,  
Ոչ ոյլ քեզի չի իմանում,  
Մարդի աչքից լոյս ես տանում,  
Գունովդ զանազան ես դու:

Զանազան ես լոյս արեզակ  
Ոչ մարդ ես դու, ոչ հրեշտակի  
Աշխարհումն մին ես մէնակի,  
Նոր դուրս եկած նշան ես դու:

Նշան ես դու, նոր նշան ես,  
Ուղում ես մարդ զազար անես,  
Վախեմ Թուրինջին սպանես,  
Հոգիս մարմնէս բաժանես դու:

40.

Սիրելի, ճշմարիտ շատ գեղեցիկ ես,  
Չեմ խաբար, դու մարդ ես, թէ հրեշտակ ես,  
Աշխարհս քեզանով լուսաւորվել ա,  
Չեմ խաբար, լուսին ես, թէ արեգակ ես:

Երկրային հողեղէնք քեզի չ'հաս են,  
Չիլնի՞ ջուղայ եկար հրեշտակաց դասէն,  
Ելած ա մէկ Յովսէփ գեղեցիկ կասեն,  
Չեմ խաբար, ի՞նքդ ես, թէ նմանակ ես:

Դու մին ճրագիւլ ես լաւ ոսկեջրած,  
Բարակ ճիւղներ ունես դէս ու դէն ծռած,  
Խտակ մուսեր վառած մէջլիսում դրած,  
Չեմ խաբար, դու ջա՞հ ես թէ աշտանակ ես:

Դու մին ջախհիր ես, քու զինդ թանգ ա,  
Քանի՞ սառա՞ք վրէժ մաթալ ու լանդ ա,  
Ետրութ թրաշ քարդ ըռանդ, ըռանդ պ  
Չեմ խաբար սուտակ ես, թէ զահանակ ես:

Ղալամքար արխալուղ, մէշքումդ քամար,  
Դու հոտով ծաղիկ ես Թուրինջի համար.  
Յողացող բացված ես ձմեռն ու ամառ,  
Չեմ խաբար, դու վարդ ես, թէ մանուշակ ես:

41. (\*)

Սիրելի, տեսդ ունդ, ունդ, ունդ,  
Զարդարվել ես խիստ լե, լե, լե,  
Զառ ու զառբա՞ք ա թանդ, թանդ, թանդ,  
Էն էլ մէկ ուրիշ ձե, ձե ձե:

Չեովդ լուս ես վառ, վառ, վառ,  
Երևում ես մարդու սար, սար, սար,  
Հրեշտակ ես հողեառ ա'ն ա'ն,  
Չունես պակասութիւն ե, ե, ե:

Եւրոպու երկրի զազ, զազ, զազ,  
Ջուրի շնորհք ու սազ, սազ սազ,  
Տեսնողն կանխ, հազ, հազ, հազ.  
Թէ փարվազ անես թե, թե, թե:

Թեւերդ է նախշուն վարդ, վարդ, վարդ,  
Թովուզի նման ես զարդ, զարդ, զարդ,  
Ոչ հրեշտակ ես, ոչ մարդ, մարդ, մարդ  
Քեզնէն կու փախչի դե, դե, դե:

(\*) Այս երգի մէջ հեղինակը բացի նոյնայանգութիւնից պահել է նաև շրժայակապումեան կանոնը (աշուղների առաջարկութեանց ձևերից մէկն է) Ե. Փ.

Դիւահար եմ, ու սար, սար, սար,  
 Ման եմ գամ սար, ու քար, քար, քար,  
 Թուրինջն եմ արա՛, ճար, ճար, ճար,  
 Էշխէդ դառել եմ խե, խե, խե:

42.

Սուլթան ես անուանի կայսերաց զաւակ,  
 Իշխող ես շատ երկրի սարդարի նման,  
 Թէ որ լինի հազար զօրեղ թագաւոր,  
 Յազթող ես Իսկէնդար Զուրդարի նման:

Զուրդար ես, քեզ հուքմով չի հասնիր ոչ ով,  
 Դու անչափ զիտուն ես քանս անտակ ծով,  
 Արդար դատաւոր ես խելքով ու խօսքով,  
 Սողոմոն խմաստուն ճարտարի նման:

Ճարտար ես լեզուովդ խիտ բարաթ, բարաթ  
 Մէկ ուրիշ ջուռա ես գեղեցիկ սուրաթ,  
 Ինչ մարդի պատահես, քեզ տեսնելու բաթ  
 Կու պապանձփի լեզուն Զաքարի նման:

Զաքարի նման եմ անխօս ու մունջիկ  
 Չեռք ու ոտքս կապած քաշվել եմ քունջիկ,  
 Գլխիդ մատաղ արա, ինչպէս մին թունջիկ  
 Քաշեր ինձի մորթիր ոչխարի նման:

Ուխար եմ մոլորված սիւրից աւարայ,  
 Շատ լալով սզալով աչքքս խուար ա,  
 Թուրինջն եմ կիսամեռ՝ ինձ մին ոահմ արա՛  
 Զայ չինեմ էշխիցդ անճարի նման:

43.

Ոսկիի պէս ճառ ես, կանթեղի պէս վառ ես,  
 Արքայութեան բաղում թագա՛ ծագկնալ ճառ ես  
 Ամեն բարաթ եմիշ քաղցր պտուղ բար ես,  
 Վարդեր ա չորս կողմի, հոտով սուսամբար ես,  
 Կարօտ եմ քո ձայնիդ, մէկ շայի շունդար ես,  
 Կամ հազարան բիւբիւլ, կանանչ կարմիր դար ես:

Հողեղինաց մէջում գովեալ հրեղէն ես,  
 Ծաղիկ ես բանովչայ, դու ալվուալվան ես,  
 Փունջ մանուշակ բացված նարկիզ գիւլխտան ես,  
 Կանանչ տափի վերան բիւբիւլի մաստան ես,  
 Քեզ նման չի ճարվել դու քուշանու սար ես:

Գեօղայների մէջում համ սուլթան ու խան ես  
 Փառահեղ նստած թախտիդ աղիլ զիվան ես,  
 Հարկիս Ֆիքր չեմ անել, թէ որ հողիս հանես  
 Եթէ սուր քաշես Թուրինջին սպանես,  
 Ի՞նչ կանեմ հաքիմն, դու ինձ համար ճար ես:

44.

Վարդ ես աղուոր, գարունքվան օր,  
 Բացուել ես նոր, ալ խօնչի պէս,  
 Ռանդդ է խուշ, ճիւղքերդ գուշ,  
 Հոտըդ անուշ, նարինջի պէս:

Ծով ես անտակ, չունես վտակ,  
 Բերանդ փակ, սաղաֆ խտակ,  
 Ատամներդ հակ, ու խիտ գերմակ  
 Փայլուն ճերմակ, զարինջի պէս:

Գլխիս տէր ես, դաստս հէ՞ր ես,  
 Մին համբերես, մէկ էլ ներես,  
 Թէ որ սէր ես, փռեմ երես,  
 Անց կաց վրէս, կարմունջի պէս:

Դու ես մէկ գալ, ունես ահվալ,  
 Դոհար ու լալ խազնա ու մալ,  
 Կուլեա պա՞հ տալ, ինքն հալալ  
 Չես քթանալ Թուրինջի պէս:

45.

Տասնուհինգ օր եկած բոլորված լուսին,  
Կապել ա ունքերդ կամարի վերայ,  
Դռնիցդ դուրս կը գաս զառով զարդարված  
Թամամ շողքդ կընկնի աշխարհի վերայ:

Ճակատդ կոյրակ թամամ բլուր է,  
Ունքերդ զառվարող ջոհվարդար թուր է,  
Աչքերդ վառվում ա, կայծակ ու հուր է  
Թերթեռնքներդ սուր նաշտարի վերայ:

Բերանդ աղբուր ա արու հայաթ ա  
Աջ ու ձախ քիւլունքդ շարբաթ ու կաթ ա  
Պառններդ զանդ ա, լեզուդ նարաթ ա  
Խօսուածքդ ա քաղցր շաքարի վերայ:

Թուրինջն եմ ման եմ դամ դարբիշն նման  
Էշխիցդ հարբել եմ սարխօշն նման.  
Աւարայ, մոլորված բայդուշն նման  
Նստել եմ վա՛յ տայով չոր քարի վերայ:

46.

Քրիստոս Աստուած ինքն օր եկաւ աշխարհ,  
Երեսներեք տարի ման եկաւ աղքատ,  
Շատ կրեց աշխատ.

Աշխատանք շատ արաւ աշխարհիս վերայ,  
Տասներկու սուրբ անձանց քարոզ տուաւ շատ,  
Պատուական խրատ:

Խրատն առին հոգւով սրբով լիացան,  
Մեռասան առաքեալք սիրով միացան,  
Երկիր աշխարհ նրանց վրայ հիացան,

Մին Յուդան դուրս եկաւ նրանց մէջում վաստ,  
Չարացեալ արմատ:

Արմատն չարացեալ Յուդա մատնիչն  
Չուճ որ մահի տուեց նա իւր Փրկիչն,  
Հողով մարմնով մնաց դժոխքի մէջն,  
Եւ ոչ ոյ վի հասաւ նրան հովիւ, դատ,  
Որ լինի ազատ:

Ազատեց մեզ Քրիստոս սատանի ձեռնից,  
Ազատիցինք, պրծանք նախանձ ու նեռնից,  
Մէջքներս զինջացաւ էն ծանր բեռնից,  
Պէտք ա զնալ մանել վանք ու անապատ,  
Կենալ անարատ:

Անարատ կենալն մէկ դժուար բան չէ,  
Ով մեղքն մտածէ, խկոյն կամանչէ.  
Թո՛ւրինջ, ուղիղ սրտով միշտ Աստուած կանչէ,  
Ինչ ունիս սրտումդ մաթլար ու մուրադ,  
Նա կըտայ հաստատ:

47.

Երեսդ շող շող է անում,  
Ռանգդ է կարմիր զիւլի պէս,  
Քաղցրաձայն շաղ շաղ ես անում,  
Շուխ հազարան բիւլբիւլի պէս:

Բիւլբիւլ ես քաղցր է աւազդ,  
Իլահի քու շուխ փարվազդ,  
Թափել ես ուսերիդ մազդ,  
Անուշահոտ սումբիւլի պէս:

Սումբիւլ մազերդ զոված եմ,  
Թո՛ղ ձեռս Ծխտովդ ածեմ,  
Ե՛ր քաղցրախօս լեզուդ ծծեմ,  
Քաղցր նարաթ նողուլի պէս:

Սուլ ես խտակ քանս ինձին,  
 Թէք աաստ դաս իմ պէս մունջին,  
 Սարսամ արար խեղճ Թուրինջին,  
 Մին զիւանայ փահլուլի պէս:

48. (\*)

Ախ եա՛ր ամա՛ն ամա՛ն, զիլբար ամա՛ն ամա՛ն.

Գեղեցկատիպ ես դու պայծառ, ամա՛ն ամա՛ն,  
 Կերպդ ա լոյս շամշի դամար, ամա՛ն, ամա՛ն,  
 Սև ունքերդ կապած կամար, ամա՛ն, ամա՛ն,  
 Ծով աչքերդ մում ա վառ վառ, ամա՛ն, ամա՛ն,  
 Փայլում ա ինչպէս լոյս դամբար, ամա՛ն, ամա՛ն:

Էդ քու սրած նաշտար սուր թերթեւունքներդ  
 Կտրատել ա սիրտս զուլում սրունգներդ,  
 Ինչ որ ասեմ, լի՛ր, լաւ բաց ունիներդ,  
 Ե՛կ հուպ մի՛ տար, ժա՛ծ տուր բարակ պռունկներդ,  
 Դու մին բերան խօսիր, զիլբար, ամա՛ն, ամա՛ն:

Ոնց հուրի ա բոյդ սալքու շինար ա խուբ,  
 Զիդ կուռներդ դալար շիմշաղի ծառ ա խուբ,  
 Կեռիքներդ շարած մարգարտաշար ա խուբ,  
 Էդ մատերդ ճերմակ մարմարի քար ա խուբ,  
 Եզունդներդ լալ ա զոհար, ամա՛ն, ամա՛ն:

Բանգովդ խիտ տեսուկ նովջիլան ես թաղայ  
 Գեղեցիկ ես նախշուն դու նման ես բաղայ,  
 Էդ քաղցրահամ լեզուդ տա՛ր ինձի մէկ մաղայ,  
 Մաշել ես իմ կեանքը, շտո եմ քաշել ջաղայ,  
 Ել մի՛ քցիր էշխիդ թաքբար, ամա՛ն, ամա՛ն:

(\*) Այս երգի համարագրուս տառերը կազմում են «Գէորգ» բառը, ար-  
 դեօք սա ինչ Գէորդ է, յայտնի չէ, երևումէ, որ զորս խնդրելով է գրիկ  
 Թուրինջն այս երգը: Յ. Փ.

Գնալով միշտ դալով քաղցր բարև տալով,  
 Եշխով քաղցր ջանս պէ՛ծ կրակով ալով,  
 Էրվում եմ, ինձ մի՛ թող, շտո մնամ էս հալով,  
 Ես Թուրինջն եմ, խեղճ ի՛ր, մի՛ թողնիր ինձ լալով,  
 Ուր որ դնաս՝ հետդ ինձ տար, ամա՛ն, ամա՛ն:

49.

Եա՛ր, քու շինար բոյիդ խիտ լաւ կու սաղե  
 Հագիր աթլազ կարմիր ու ալ նազանի,  
 Բարակ մէջքիդ ոսկի քամարը ի՞նչ ա,  
 Կապի՛ր դօտիկ զառ, թիրմա շալ, նազանի:

Երկու ձեռդ մինա արա՛ դառերով,  
 Քցիր զօլբաղ ողջ մարգարիդ շարերով,  
 Շարի՛ր մասնիդ ոսկի մատնիք քարերով,  
 Եաղութ, զուճբուճ ալմազ ու լալ, նազանի:

Քու երեսը կարմիր վարդա շողալի  
 Խեղճ բիւլբիւլը կուզի քեզ հետ խաղալի  
 Ունքերդ մինա, ծամերդ օղալի,  
 Թափի՛ր դօշիդ վերայ ծալ ծալ, նազանի:

Շատ մարդ կայ որ քեզ տեսնելու փափագ ա,  
 Սիրտը էրված լեզուն բերնում տապակ ա,  
 Բանդիւան ա, մին քու սիրուն կայ, փակ ա,  
 Ե՛կ, դուս արի ջէյրան, մարալ, նազանի:

Չում Թուրինջն եմ, լաճաղաթս քեամ կանես  
 Ումուդ կ'տանս, հարդամ խաթրջամ կանես,  
 Ինքդ նստած մէջ լիններում դամ կանես,  
 Ես էլ կուզեմ քեզ հետ ցնծալ, նազանի:

50. (1)

Այսին անգին մին ակն ա, Եւ եղո՛ւկ, աւա՛ղ եղէ,  
 Երեք վտակ մին ակն ա, Որպէս ՚ի ջուր՝ աղ եղէ,  
 Անմայր ծնաւ զորդին սուրբ Նետալից եղև հողիս,  
 Բղխեց զհոգին մինակ նա: Չար թշնամուոյն յաղեղէ:

Բենն բան Աստուած տես աներբ Չա զի. բնակիմք յայրի հեզ,  
 Բնեցին և տեսան երբ, Խղճուկ անանկ այրի, հեզ,  
 Անհայր ծնեալն կրկնակի, Թուրինջ, հուրն դժոխոց  
 Յոյժ զարմացան տեսան երբ: Կայեալ զհոգիդ այրի հեզ:

Գիւմ գովեմ քեզ ո՞ր երանգ, Է՛, էակդ խկղբաննէ,  
 Գովեցի որպէս էր անգ, Որդիդ սուրբ խկս բան է,  
 Ամեն լեզուէ օրհնեալ ես, Ձհոգին սուրբ որ այլայլէ,  
 Գովեալ ես երանգ երանգ: Ձհոգին իւր խկ սպանէ:

Դա զիւր տեղի խանդամանդ Ըթ ըմբոն է առակ մը,  
 Արժան արա խանդամ անդ, Ասեմ, լսէք առակ մը,  
 Քարշեա՛ սիրովդ զմիտս իմ Վախեմ հոգւով ու մարմնով  
 Որպէս քարն խանդամանդ: Լինիցիմ խայտառակ մը:

Թոյ թափ մտի կամայ մութ  
 Չ՛գիտեմ այսն կամ ամօթ,  
 Վա՛յ իմ աղտեղեալ հոգւոյս,  
 ՚ի մէջ մեղաց կամ ամ ութ: (2)

(1) Այս երգում երեք տողերի (իւրաքանչիւր համարի մէջ) վերջնագիրը համաձայնում է համարագրուի տառի հետ, Թուրինջը սորանով ուղում է եղել յայտնել Երրորդութեան երեք անձնաւորութիւնը և մի բնութիւնը (Աշուղների առաջարկութեանց ձևերից մէկն է): 2) Այս երգից այսքանը միայն հաստատու է մեր ձեռք, սորա մնացեալը յարմարցրել է Աղէքսանդր Քուչուրեյիանցը (աշուղի անուն Մեքիսեմ) թ տառիցն սկսեալ, տես նորա երգերում, համար 40: 8: Փ.

51.

Թիւ ճեռուն վրիչին միակ տառիւ,  
 Յայտ առնեմ այս տողամբ քառիւ,  
 Ձ տառն հեզեա՛, թիւ մի բա՛ց երթ,  
 Լնանի թերին նոյն խկ բառիւ:

Եօթն եւ երբարք, քանինն քորք,  
 Որք են ամուլ զերթ քարինք չորք,  
 Եթէ միսեանց հուպ մերձենան,  
 Ծնանին զաւակս անհամար զօրք:

Այս ազգ երբեմն է հնազանդ,  
 Երբ շղթայեալ ձգի ՚ի բանտ,  
 Քէ արձակի ՚ի կապանաց,  
 Աշխարհս առնէ աւեր ու քանդ:

Արքայ մի կայ աղահ ու գող,  
 Խաղնումն չունի մէկիկ վող,  
 Ոչ հողի է և ոչ մարմին,  
 Ոչ թէ ծնեալ է նա ՚ի հող:

Տեսի առիւծ մարմնովն թուլ,  
 Կրճտէր նա իբրև մէկ ուլ,  
 Չոր ինչ ծամէր արտաքս փչէր,  
 Ինքն մասն իւր ոչ առնէր կուլ:

52.

Հայր մեր՝ որ Աստուած կարաթտի Աղամ 1)  
 Երկինս ու երկիրս զուգախտի աջար 2)  
 Ձհաց մեր հանապաղ շաջաղար էթաի 3)  
 Չոր տուր մեզ այսօր օլ կարագան ուր 4):

1) Ստեղծեց Աղամին. 2) տնօրինեց զարմանալի. 3) մեզ խնամք արեց. 4) էն ստեղծող Տէրն:

Թողու՛մք մերոց բիզում կիւնահրմըղ չօխ 5)  
Մերոց պարտապանաց ջուղաբըմըղ եօխ 6)  
Ու մի՛ տանիր զվեզ շէյթան աթար օխ 7)  
՚ի փորձութիւն, մէնդէն հախ օլուր ջուղաբ 8):

Այլ փրկեա ՚ի չարէ եարազան զանի 9)  
Ձի քոյ է վէրմիշսան, ալուրսան ջանի, 10)  
Արքայութիւն բիզում զիւլն զիւլշանի, 11)  
Ամեն միլաթաղայ վէրսա նէ աջաբ 12):

Եւ փառք սէնէ սարդամ վէրան խալխ ալան 13)  
Յաւիտեան օլղուղն քի՛մ զիլեր եալան, 14)  
Յաւիտենից փաղիշահ ռաստ էլլեր զիւան, 15)  
Ամէն միլաթանդա հախ օլուր ջուղաբ 16):

Հայր մեր, հաւատամքն հար քիմ քի դիլեր, 17)  
Անմահական հացն բէլքի օ կիլեր, 18)  
Լուսեղէն զգեսան բէլքի օ կիլեր, 19)  
Փաղր Թուրինջ, դու էլ կեօրսա նա աջաբ 20):

53.

Սիրելի, քո պայծառ կերպդ տեսնելուս,  
Գեօկ ուզուն օխշիլեր սինայ ա դրուստ,  
Երկնային դէմքդ նման ա լուսնիակի,  
Երեսիդ զիւր շարքին ով որ տեսնելուս  
Օխուր դալու բէյ սինայ ա դրուստ,  
Կու կարդի դալ ր սին այ այ դրուստ,  
Թարգմանումը տաս պիտի, առնի որ իմանայ:

5) Մեղքերս շատ է. 6) պատասխան չունինք. 7) չաղն նետով կը խփի.  
8) Աստուած ինձանից պատասխան կպահանջէ. 9) ստեղծող Աստուածը. 10)  
տուեղես, յետ կառնես հողիս, 11) Մեր վարդն ու բուրաստան. 12) եմէ բո-  
լոր ազգաց էլ տաս, զարմանք չէ. 13) ամենայն բուստից տուողը. 14) վիճելի ով  
կասի սուտ է. 15) Թագաւորը ճշմարիտ կը դատէ. 16) ամենայն ազգից

Թո՛ղ քու սէրն սրտիս հետ կայ, հեռանամ  
Ղամալուվայ մուշտաղ սանա հէյրան ամ,  
Դէմքիդ կարօտ իսկ քեզ ապուշ եմ՝ դրուստ,  
Դժուար մինչի մահս քեզնից հեռանամ,  
Դօղրու եար օլղուղում սինայ ա դրուստ,  
Յշմարիտ սիրական իլիլս քեզ ճշմարիտ ա:

Սրտիս մէջն սրով ճղիւր դու արա՛,  
Դօստ ումբըրնա զլարամ դուարայ  
Բարեկամիս համար աղօթք կանեմ ես,  
Աստուած, վատի դատաստանը դու արա,  
Գեօրինակէ բօյնի սինայ ա դրուստ,  
Տեսնելուց քու բօյրդ կոտրված կիլ:

Չար թշնամին բռնես քցես սանդիլի,  
Ազ բաշընի օլղուր զօյնա սանդիլի,  
Քիչ կորիւր ոչխարի գլուխ դու տակից  
Ոսկեթել ծամերդ բացիւր սանդըրի,  
Սաղի սալդան չունքի սինայա դրուստ,  
Աջ ու ձախ դոշիդ հետ համեմատ կիլի:

Ես քու ճամբին շատ քաշեցի վախճանի,  
Սանա Փիրա սարում ինան վախճանի,  
Քեզ ընծայ դլուխս ու իմ ջանս դրուստ,  
Ինչ ժամանակ որ Թուրինջն վախճանի  
Վա՛յ դիլի բէն եափշուր սինայեա դրուստ,  
Վա՛յ ասելով յանձնիր ինձ գերեզմանի:

54.

Իմ հարս ի՞նչ էլաւ, սարդարս ի՞նչ էլաւ,  
Իմ նախուհն նոր ջիվան իղբալս ի՞նչ էլաւ,

Աստուած պատասխան կպահանջէ. 17) ով որ կասէ. 18) զուցէ նա կուտի  
19) գուցէ նա կը հարնի. 20) աղքատ Թուրինջ, զարմանք չէ որ դու էլ տես-  
նես:

Եւ ո՛ւր գնաց իմ զուլում քեարս ի՞նչ էլաւ,  
Ո՛ւր գնաց իմ սարբս ու զարարս ի՞նչ էլաւ,  
Սև նախշուն աչքերով խումարս ի՞նչ էլաւ:

Երանի՛ էն օրն խօշտար արեց, հողեց,  
Քաղցրիկ խօքերով սրախ մէջն զաղեց,  
Խել քս միտքս տարաւ թամամ կրակ մաղեց  
Հրեշտակապետիս պէս շունչ ու հողիս քաշեց,  
Եւ ո՛ւր գնաց իմ սիրահարս ի՞նչ էլաւ:

Եսա քաղցր էր վարքովը, ջուզարը սիրով,  
Սաղթաթի պօղկերով գնում էր կառքերով,  
Վեց ձի լծած կարեա ճորտ լակէյներով,  
Ինքը միջում նստած՝ կապուտ կաւալերով,  
Իմ գեներալ ազնիւ բօեարս ի՞նչ էլաւ:

Եւ էշխի մէջն ընկայ ցաւով տրորվեցայ,  
Քարակ խրեաթու պէս չարխում հոլորվեցայ,  
Կծիկ դարձայ, թուրինջ, ընկայ կոլորվեցայ,  
Մնացի մութը տեղ ճամբիս մոլորվեցայ,  
Հնդաստանու պատուական բահարս ի՞նչ էլաւ:

55.

Այս է տունն իմ յաւիտենից,  
Յոր սոսկ մարմինս բնակի,  
Եմ ես տեղեաւս Շամախեցի,  
Որդի Օհան ոսկերիչի,  
Իսկ իմ անուն թորոս կոչի,  
Եւ մահանուամբ թուրինջ ձայնի,  
Եմ Մարթաղեանց թուն Մատրի,  
Պապն իմ գիւղէն էր Քարբանջի,  
Շառաւիղէ սոցին բուսի  
Մահտարածամ ժամանակի:

Որպէս ծնայ, աշխարհ եկի,  
Հայր և զմայր ես ոչ տեսի,  
Սյլ և յազգաց զրկեալ մնացի,  
Տաւտպանօք յարբունս հասի,  
Մտի՛ ի մօտ վարժապետի,  
Առաքելեանց Տէր Պետրոսի՝  
Եւ հուսկ յետոյ յերկրէն ելի,  
՚ի տար աշխարհ կեանս անցուցի,  
Զի միշտ եղէ վտարանդի,  
Իմ ծովացեալ մեղաց սակի,  
Գժբաղդութիւն միշտ կրէի,  
Եւ հայթայթանս անթուելի,  
Եկեալ իմ աստ (1) զկայ առի,  
՚ի ծերութեան գոյ հասակի,  
Բայց այս դիտմամբ ՚ի հոգ մտի,  
Պատրաստութիւնն իմ ոչ թողի,  
Զի մինչ էի ՚ի կենդանի,  
Չեռամբ խնով զճաղրէի: (2)

Հրաման եհաս իմ Արարչի  
Գառնալ անդրէն ուստի առի,  
Եկեալ մահըն իմ սոսկալի,  
Կեանս վճարեաց վաղվազակի,  
Որ եմ այժմ ՚ի գեղանի,  
Հող և ի քարն զիս սրահպանի:  
Ահազնագոյ վոզն պիտի  
Չարթուցանէ մէջ գիշերի,  
Նիւթս ՚ի հանդարտ առաւօտի,

(1) Ասարախան. 2) Թուրինջը պարապում է եղի տապանագրեր փորելով և սորանով վատակում է եղի իր ապրուստը. միանգամ հարցնում են թուրինջին Սէ, այսքան անընդհատ աշխատումես, ում համար ես գանձում. պատասխանում է, ինչ գանձել, երբ քանուչորսիս դժուարութեամբ եմ հասցնում, այսինքն ուզում է ասել 24 ատամների հաղի եմ բաւականացնում ուտելու: Յ. Փ. Սոխակ Հայաստանի III հատոր. Ա. Գ.



### Չերքեզի երգերը.

#### 1.

Եարա՛ր, ես քեզ ի՞նչ եմ արել  
 Քէֆիդ խիստ կպել ա, զիլբար,  
 Չիլնի ինձանէն դուշմանս  
 Քեզի բամբասել ա, զիլբար:

Ոչ ո՛վ չէր խաբար իմ բանս,  
 Որ քեզ դուրբան կանեմ ջանս,  
 Նահախ ինձի ջազայ տալս,  
 Հողուդ շատ մեղք էլ ա, զիլբար:

Հագել ես դեղին ու ալն,  
 Ի՞նչ ա քու սրտիդ խալն,  
 Դալդա տեղէն մտիկ տալն,  
 Ել ի՞նչ համբերել ա, զիլբար:

Յաղթել ա նամուս ու առն,  
 Ո՛ւր ա մեր կապած իղբարն,  
 Իմ տեղան ձէն կ'տայ քարն,  
 Ել ի՞նչ շարձարել ա, զիլբար:

Ի՞նչ կիլնի դամ, սիրոս առնես,  
 Չուն որ ամեն ցախա ճար ես,  
 Չերքեզու բաժալու եարն ես,  
 Աստուած պարգևել ա, զիլբար:

#### 2.

Խօսքդ քաղցր խելքս տարար,  
 Քեզ նման շաքար չունեմ,  
 Որով դու էդ մեղքս մտար,  
 Ինձ ուրիշ պատճառ չունեմ:

Սովդա էշխիդ խառնվել եմ,  
 Ձիքը ու զուսայով լալով,  
 Թէք էս դարդէն մին ազատվեմ,  
 Ել ուրիշ զարար չունեմ:

Ռաստ եմ եկել, Ֆայտա չունի,  
 Քեզ նման կարմիր վարդի,  
 Ես մին բլբուլ ման եմ գալի,  
 Թառ ընկելու ծառ չունեմ:

Ո՞րտեղէն ո՞րտեղ պատահանք,  
 Էն ի՞նչ օր էր քեզ տեսամ,  
 Շարթ արեցիր, դօստովիշ էլար,  
 Բաս ասա՛ իղբար չունեմ:

Վատ օրով ինձ շատ մի՛ թողնիր,  
 Մին դուրս հանիր սէյրանդ,  
 Գու մին ծաղկած բահրով ծառ ես,  
 Չերքեզն եմ, նուկրար չունեմ:

#### 3.

Եսբան որ քաշմեմ քու ահուզարդ,  
 Եարար քեզանում էլ ահուզար կա՞յ մի,  
 Մին ամանի տայիր, կրարվէր ճարդ,  
 Ասէիր թէ, ամա՛ն, ինձի ճար կա՞յ մի:

Չիվան ումբուս էշխիդ սիրով տաշեցի,  
 Նահախ ճամիլիդ քաղցր ջանս մաշեցի,  
 Քո ջահթէն շատ նամուս ու առ քաշեցի,  
 Տեսնեմ քեզանում էլ ահուզար կա՞յ մի:

Էդ նազ ու զամգայով իմ հոգիս կանես,  
 Չես խօսալ, հէնց զխաես, ապառած քարն ես  
 Ո՞վ ա խաբար թէ դու էլ հումբ՞ եարն ես,  
 Աջա՛ր, ձեզանում էլ դրխտ եար կա՞յ մի:

Չերքեղն եմ, էշխիցդ վայումեմ լալով,  
Չում որ ինձի թողար էս դարդի հալով,  
Քցել ես դարբեզար, քարէքար տալով,  
Չես խղճում, քեզ նման սիրան քար կայ մի:

4.

† Ես դարիբ բիւթիւ եմ դառել, դու կապվել ես խարի, զիլբար,  
Մագամ էդպէս կիլնի շարթն, չես կայնում խորարի, զիլբար,  
էշխումդ բաւական երվամ, ե'կ, էլ մի' չարչարի, զիլբար,  
Նահախ տեղան ինձ մի' քցիր էդպէս ահուզարի, զիլբար,  
Փարիշան հիւանդ պառկած եմ, հալս տեսուկ արի', զիլբար:

Դուշմանին մի' ուրախացուր, հէնց բան բռնիր, չի ամանչես,  
Ինձնէն շափաղաթ մի' կարիր, չում որ բարեկամ ճանանչ ես,  
Ի'նչ կիլնի քու թայութուշին զօնաղ անես, ինձ էլ կանչես,  
Դու մին ծաղկած բահրով ծառ ես, ծխես ծաղկես ու կանանչես,  
Քո բաղիդ ջուխտ խոնչա նուռն տո'ւր ինձի նուկրարի, զիլբար:

Սիրոս շատ հալ ու մաշելով ինչպէս բարակ մազ ես անրմ,  
Կեահ թաքիբար ծիծաղում ես, կեահ կեահի դարաղ ես անրմ,  
Նստած համթայներուդ հետն՝ համ զող ու դամ սազ ես անրմ,  
Սարքած մէջլիսիդ մէջ ուրախ ման ես դամ, փարվազ ես անրմ,  
Հէչ չես հարցնում քո եարին, ախր ի'նչ պատճառի, զիլբար:

Թորայ իլնի, դարիբ Չերքեղ, եարի ճամփին կեանք չի մաշես,  
Չուն որ էդ էր սրանց բաֆան, էլ նահախ տեղ ջան չի տաշես,  
Հերիք չիլաւ ա'յ բխնուրվաթ, իմ ջիվան ումբու թրաշես,  
Եարբ, Աստուած, ի'նչ վախտ կիլնի, էս կրակէն դու էլ քաշես,  
Իմ քաշած դարդն իմանաս, մնայիր նաչարի, զիլբար:

5.

† Մին փախամ սովդայէդ քաղաք բէ քաղաք,  
Ղրկար էշխրդ յետնէս, ետ բերար ինձի,

Ինչ կամենաս, արա', եկամ քեզ աղաք,  
Աստուած սիրես, մի' տալ քարէքար ինձի:

Ասա' ինձի սրտիդ կամքըն իմանամ,  
Ես խոմ յես ու յառաջ ախր կիմանամ,  
էս դարդերին էլ մինչև ե'րբ զիմանամ,  
Չունեմ թաղաթ էլի բխտար ինձի:

Քեզնէն պակաս չի համարես իմ ցեղն,  
Իմ անբազուցութունն ա միայն իմ մեղն,  
Ճար չունեմ էլ գնամ, էս չէ իմ տեղն,  
Հարաս եկամ նահախ չարաչար ինձի:

Էս տարի խօ չիլաւ՝ եկող տարին կայ,  
Տեսնենք ինչ կիլնի վերջն բարին կայ,  
Ի'նչ ասեմ դուշմանին դարդ ու սարին դայ,  
Ախր թողաւ էդպէս դարբեզար ինձի:

Անունս կոչվելայ, Չերքէզ օղլանն եմ,  
Շատ երկար չիմանաս, քեզ հարեան եմ,  
Բուահմ արա ինձի, ես էլ մին ջան եմ,  
Մի' թող էշխէդ լալով անղաղար ինձի:

6.

† Ախ մի' քաշեր, ախ քաշելով դաղված եմ,  
Ի'նչ ես անրմ, պրծիր, արա' ճար ինձի,  
Քեզնէն ա, որ խելք ու մոքով շաղված եմ,  
Դու ես խաբար, չունեմ ուրիշ եար ինձի:

Թէ դրիստ ինձի եարս ես, հաստատն ասա',  
Թէ չէ՛ զօռի բան չէ՛, էս մին հաւաս ա,  
Երվումա ջիզարս, լցրուր շաքասայ,  
Քո ձեռնով տո'ւր կարմիր գինին, սար ինձի:

Երբ կրնէր, հովանար երված ջիզարս,  
Խեղդաւ ինձ քու ջահգէն նամուս ու առբս:

Ես էսպէս քնալով ի՞նչ կրնի ճարս,  
Ե՛կ մի՛ թող էս հալով շուխ նիզար ինձի՛:

Իմանում ես աջար, ես ի՞նչ եմ քաշում,  
Ձիվան ումբրս ա որ, ճամփիդ եմ մաշում,  
Ետղի էշխովդ ինձի չո՞ւմ ես թարաշում,  
Հայբաթ, պէտք ա անես ըստիբար ինձի՛:

Մուրվաթ արա ինձի, ես մին անձար եմ,  
Մինչև ե՞րբ համբերեմ, ես մակամ քա՞ր եմ,  
Ես Ձերքէզն եմ, միթէ՛ քեզի նօքա՞ր եմ,  
Հերիք ա չարչարար զուլումքար ինձի՛:

7.

Ի՞նչ սովդայ էր, դու իմ զլխիս բերեցիր,  
Գիշեր ցերեկ ինձ քուն չունեմ, ամա՛ն եար,  
Անուշ հոտով կսլար ինձի էրեցիր,  
Սուսամբար, բանովչայ, շուխ, եասաման, եար:

Էս ի՞նչպէս օրեր ա, թողար ես քաշեմ,  
Ո՞նց զիմանամ, քա՞ր եմ թէ ապառաժ եմ,  
Ձիվան ումբրս պէտք ա քու ճամփիդ մաշեմ,  
Դու ես խարար, դու ես ումուդ, դուման եար,

Էդ քաղցր սոհբաթով նստար դամ արար,  
Մակամ հէնց է՞ն հասաւ ինձ՝ որ սամ արար,  
Եթէ արժան տեսար ինձ քեզ կամարար,  
Յայանի՛ր ումբրդ, արա՛ ինձ հրաման եար:

Էս ի՞նչ ախ վայ տալ ա, ի՞նչ Ֆիլքր անել ա,  
Էս ի՞նչ առանց դանակ մարդ ըսպանել ա,  
Էս ի՞նչ ուշք ու միտք ու խելքն տանել ա,  
Աչքերս չովիլ ա պէլի նման, եար:

Ձերքէզն եմ քու դաղած սիրտս ա եարայ,  
Մին մեղքդ բեր, մակամ քու սիրտն քա՞ր ա)

Ի՞նչ ես անում, մին ճար անում ես, արա՛  
Մատա՛ղ, ես խօ մեռամ միանգամայն, եա՛ր,

8.

Էդ ի՞նչ արիր, իմ սիրելի եար ինձի,  
Հէ՞ր թողեցիր միշտ լալով անձար ինձի՛.  
Առաջ ի՞նչպէս բան էր, որ սիրար ինձի.  
Սա ի՞նչ ասեմ, որ շուտ մոռացար ինձի,  
Նահախ ՚ի դուր վրէս քցար շառ ինձի,  
Թէ ոչ էս մին մահանայ բունար ինձի  
Հաբաս տեղէն չում մօտաւորվար ինձի,  
Հայբաթ ուրիշ եար ճարար յարմար ինձի,

Ել ինքս ինձի խափեմ,  
Հէ՞ր լամ արտասունք թափեմ,  
Միտս գայ կու սարսափեմ

Քու արարմունքդ՝ ի՞նչ որ արար ինձի:

Քեզ բան ասեմ, թէ ընդունես մին ֆարթի  
Նամուս արա, կայնիւր իղրար ու շարթի,  
Ումիղվար թէ կանի մին մարդ մին մարդի,  
Ղայբութիւն չի անիլ նման կախարդի.

Ձի թողար քամ սիրտս որ մին զուարթի,  
Իմ քեզ ուզել՝ նման կարմիր վարդի,  
Հաղ կանչելս՝ ինչպէս մին բիւբիւլ կարդի,  
Ինչպէս քեզի մուշտալ եմ,  
Քանի կենդան եմ, սող եմ  
Քեզ հետ խօսեմ ծիճաղ եմ,

Թէ որ կապես, տաս շարթ ու իղրար ինձի:

Մի՛թէ՛ եարբ եարի հետ էդպէս կանի,  
Թահր ես անում դատարի անպիտան բանի.  
Դիցուք կը զիմանամ, քանի՞ մին քանի՞,

Համբերելով ինձ բերեցիր ամանի,  
 Չարչարանքդ քաշամ, եկեցի՞մ ջանի,  
 Լեզու չունէի շէնեցիր լեզուանի,  
 Էջպէս կանի՞ սիրեկան սիրեկանի,  
 Մին Ֆիքր արա, ամաչի՛ր,  
 Դոսա ու զուշման ճանանչիր,  
 Մին քանի օքմին կանչի՛ր  
 Ասա՛, տես քեզ ի՞նչ կասեն պատճառ ինձի:

Էջխիտ սէրէն ես հիւանդ եմ, հալ չունեմ,  
 Արտասուելով ցամաքել եմ, լալ չունեմ,  
 Ինչքան վախտ ա, քեզնէն մին ահավալ չունեմ,  
 Մէնակ եմ մնացել, զնայ գալ չունեմ,  
 Տխրութեան մէջ թողել ես, լանգալ չունեմ,  
 Չու՞մ որ ինձի եարկոյն իղբալ չունեմ,  
 Տէրն քու հետ, կուիւ զալմաղալ չունեմ,  
 Ինչ կամիս, էնպէս արա՛,  
 Միթէ՛ իմ սիրան քա՞ր ա,  
 Հայրաթ կիլնի մին չարա  
 Շատ էլ մի՛ կարծիր անգէտ, յիմար ինձի:

Ես անպարտ եմ, ինքդ քեզնէն իմանաս,  
 Լաւ մտածիր, Ֆիքր անելով կիմանաս,  
 Նահախ դարդ անելով ինձնէն չիմանաս,  
 Իմ քաշածն դու էլ քաշես, զիմանաս,  
 Էս էջխին մին դու էլ կը յանդիմանաս,  
 Չերքեզի պէս դու էլ կու հալիմանաս,  
 Ինչ ասել եմ - կու քաշես,  
 Չու՞մ որ ինձ զալք սրդաշ ես,  
 Կեանքդ նահախ կը մաշես,  
 Ել չես քթնիլ հարկիս բարեբար ինձի:

9.

Համասիրու ծաղիկ ես ծաղկած, բացվելիս պայծառ, բանովչայ  
 Քահրէ թահր ես զխոր սանչի,  
 Դալար բոյ ունես կատարեալ, ինչպէս ջովզի ծառ, բանովչայ,  
 Տեսուկ գատ ես ուրիշ հանգի,  
 Կանաչ տերեւերդ սազուկ շուխ կարմիր ա խառ, բանովչայ,  
 Խիտ անոյշ հոտ ունես ինկի,  
 Բահրդ վրէդ հասրէհաս ա, մին ջուխտ լաւ նուզբար բանովչայ  
 Նման ա դալի բաղրանկի,  
 Շատ աշուղ մենք դաղ ենք քաշել, մէկ մէկուց բէթար բանովչայ  
 Հագել եմ փուստ ու փալանգի, —  
 Ման եմ գամ՝ յետնիցդ լալով, քեզ ձարեմ դժուար, բանովչայ  
 Մին խղճիր ինձպէս անանկի,  
 Եարար ո՞ւմ նասիրն ես, ո՞վ կայ քեզ նման արդար, բանովչայ,  
 Երանի՛ ով քեզ կը ճանկի,  
 Ախար եարիս էջխիդ սովզէն,  
 Ես՛ խէյր, ու ես՛ զարար կանի,  
 Տեսնում եմ որ էս զարդերն  
 Ինձի ջանից բէզար կանի:

Աջար թայ ունես աշխարհիս կամ փոքր քեզ նապաստ իլնի,  
 Ասիր, ես էլ մին ջէյրան եմ,  
 Խելք չի հասնիլ մարալ կերպիդ, հրեղէն գայ՝ քեզ պաստ իլնի  
 Էնքան զիղարիդ դուբան եմ,  
 ձար չունեմ պատկերդ քաշեմ, թէ կայ քեզ նապաստ իլնի,  
 ձամփիդ մաշվելով հուրեան եմ,  
 Կամ թէ էնպէս օքմին իլնի, որ ինձ հաքիմ թապաստ իլնի,  
 Ինէնց էլ դարդի կիրեան եմ,  
 Աման, էրված խորված սիրտս մի՛ թող թաքբար քարար իլնի  
 Մակամ ես գառնի բիրեա՞ն եմ,  
 Եարար մին անկուման կողմէն, ո՞ւր ա, ինձ մին սարար իլնի,  
 Ես էլ քեզանով սէյր անեմ,

Ֆիբր անելով մոլորվել եմ չիլա ինձի մին ճար, բա՛նովչայ,  
 Պատճառն խարաբ փող ու զանգի:  
 Շատ քաշամ ահուզարերն,  
 Որ չէր դիմանալ քարերն,  
 Ինձ հսքան տալով սարերն,  
 Մէջուովն բարեբար կանի:

Մալա քաշամ Մէջուովի պէս, այնիդ չէկամ Վէյլն նման,  
 Մին մեղքդ չի բերար ինձի,  
 Քցար վառ քուրայիդ մէջն, էրծաթ զալ զնելի նման,  
 Ֆիդաբ եմ զէ՛ վե՛ր առ ինձի:  
 Չեմ կշտանում լոյս երեսէդ, մտիկ տալով պելի նման,  
 Ասա՛, մին բէզարա՛ր ինձի,  
 Գան դան էլաճ շուխ ծամերդ հոլոր ոսկէթելն նման,  
 Տո՛ւր հեղզըվելու լար ինձի,  
 Աժգահայ էշխիդ կրակով քաշար աղրահէլի նման,  
 Կլանեցիր, կերար ինձի,  
 Հողիս մարմնէս հանար հրեշտակապետ Գաբրիէլի նման,  
 Առանց կրակ էրար ինձի,  
 Անմեղ տեղ չարչարանք տալով ինձ ջուռուն արար, բանովչայ,  
 Մուշտաղ եմ թիրիաքի բանկի,  
 Աչքս արտասուներով լալով,  
 Բէզարամ ճամփիդ ման գալով,  
 Էս ջուրա չարչարանք տալով,  
 Ելել մին դարդ ու սար կանի:

Մոր սաղացած դաղ ջեզարս դու կրկին էլն մի՛ ջարդի,  
 Առանց էն դարդերով դաղ եմ,  
 Ես էս հալով դիմանալով սրը չեմ տալի ամեն մարդի,  
 Քանի որ կեանք ունեմ, սաղ եմ  
 Բռահմ չունես, է՛յ բէմուրվարթ, քամ սիրտս թո՛ղ մին գուարթի  
 Քեզ հետ մին խօսեմ ծիծաղեմ,  
 Ինչպէս բիւբիւն հասարթ ա՛ նոր բացվելուս կարմիր վարդի,

Ինչպէս ես քեզի մուշտաղ եմ,  
 Երված հաղ կանչելս նման ինչպէս մին թութի զուշ կարդի,  
 Առանց զաջաս քեզ դութսաղ եմ,  
 Մի՛ թող ինձ լալով սղալով մուրվաթ արա, կայնի՛ր շարթի,  
 Ի՞նչ կիլնի քեզ հետ՝ մին խաղեմ,  
 Աչքիս արտասուներն սէլ ա, զնում ա վարվար, բանովչայ,  
 Ել ինձ շատ մի՛ տալ վտանգի:  
 Նման ա թովի կարմիր վարդին,  
 Ի՞նչ Ֆայդա չի կայնիր շարթին  
 Ել ի՞նչ ասեմ ես էն մարդին,  
 Ով եարին ըխտիբար կանի:  
**Արի՛**, շաջաղաթդ ինձմէն մի՛ կարիր, ես էլ մին ջան եմ,  
 Ել ո՞նց հանդիպեմ քու նազին,  
 Հալամաշ արար ինձ, մեղք եմ, քու ձեռնէն ես ի՞նչպէս անեմ  
 Նուազ եմ նման քու մաղին,  
 Շատ բարուք ա, քու ձեռնովն սուր տաս ինքս ինձի սպանեմ  
 Քան թէ դիմանամ էս ջաղին,  
 Որ ոչ մեռած, ոչ թէ սաղ եմ, կարօտ փափաղ բանդիվան եմ  
 Եդ քու շուխ ջանկի փարվաղին,  
 Չեմ խարար թէ քու սովդայէն ես ինչպէս զլուխս հանեմ,  
 Կապար ինձ հաղի հետ սաղին,  
 Ման եմ դամ յետնիցդ լալով, միթա՛մ ես քեարամ դաղան եմ,  
 Գու ես խան ասլի չեբքեղին,  
 Հաստասան թէ ինձ եար ես՝ կապենք մին իղրար, բա՛նովչայ  
 Ե՛կ էս բանն մի՛ թող լանկի,  
 Աշուղի խօսքն անգին ա,  
 Ահա՛ Չերքեղն էլ զամին ա,  
 Ինչպէս եար հաղարէն մին ա,  
 Որ մին նամուս ու առ կանի:

10.

Դարդս շտտացաւ օրբէօր,  
 Վախեմ, թէ ջանիս քար կանի,

Մեղք եմ, էդպէս մի' թողնիլ, եար,  
Քեզնէն զայր ինձ ո՞վ ճար կանի:

Էրված սրտիս դաղ մի' քաշեր,  
Ե'կ ջիւան ումբոս մի' մաշեր,  
Ետդ օքմինի մի' սրգաշեր,  
Լեզուով քեզ ումիդվար կանի:

Մին ջաւահիր անգին քար ես,  
Ինձ համար մեծ դարդ ու սար ես,  
Եթէ յատուկ ինձի եար ես,  
Եարն զրիստ իզրար կանի:

Գեօզաներն բաղչայ բաղ են,  
Ղարիբ բիւլբիւլի եաթաղ են,  
Եարաբ քու ծաղկեալ բուղաղէն  
Ո՞վ կիլի որ նուկբար կանի:

Էսքան որ ես դարդ եմ անում,  
Չես ասում, ո՞նց ես զիմանում,  
Միթամ ինքդ չե՞ս իմանում,  
Չերքեզն ահուզար կանի:

11.

Էս օր մին գեօզալ տեսամ,  
Հագի կապան զառ էր, զիլբար,  
Կայնեցի վարավուրդ արամ,  
Աչքն անգին քար էր, զիլբար:

Աչքեր ունէր խիստ պատուական,  
Ինքն էր տանուհինդ տարեկան,  
Երես ունէր արեզական,  
Շողքը վրէն վառ էր, զիլբար:

Չերքեզ-Յողին ասաւ, լացաւ,  
Միտք անելով սիրտը խոցաւ,

Ասաւ, Աստուած ողորմած ա,  
Սիրտս ումիտվար ա, զիլբար:

12.

Դու մին մարալ ջէյրան ես, գովական ես յոյժ  
Ունքերդ կապել ա երկնային կամար, աչքերդ խուճար,  
Դու մին Մարիամայ ծաղիկ ես, հոտով ես անուշ,  
Գոյնդ սպիտակ ա, գեղեցիկ պայծառ,  
Թուշիդ չունի խար:

Մէջքըդ բարակ շուշա, բոյրդ սաքու ծառ,  
Բերանդ սաղաֆա, առամդ գոհար,  
Քանի՞ քեզ աղաչեմ, նազանի զիլբար,  
Ես իմ հեան խօսիր, ես չէ հոգիս ա՛ռ,  
Ինձ մի' թողուր նաչար:

Կաստա չիթ ա, եկած Հնգու շահարիցն,  
Ոչ ում չունի էդ քու կապի թահարիցն,  
Աչք չեմ կարում բացեմ դարդ ու զահարիցն,  
Դու իմ թապիպս ես, նազանի զիլբար,  
Արա՛ ինձ մին ճար:

Քու պատկերն քանս արեզակ պայծառ,  
Լոյս երեսիդ խալն եաղութ անգին քար,  
Քու ծոցի զիւլանը բացվել ա զիւլզար,  
Սինադ կնանի սպիտակ մարմառ,  
Չարմանք ես խապառ:

Դու ջիվան ես, երեքտասան տարուճն ես,  
Նորարոյս հանած ես թագա գարունն ես,  
Քո էշխի կրակն սրտիս վառում ես,  
Չարքեզ-Յողին ասաւ ջանիս արա՛ քար,  
Ես կը կանչեմ դար:

13.

Քեզ ու քեզ Ֆիքր արա՛ տես,  
Աշխահս չարխ ու Ֆարսի ա,  
Շատերն են եկել քեզ նման էսպէս:

Կարօտեալ սրտէս ուսմէ կտրել ես,  
Մե՞ղք ա, որ ասես լուս ջամալս տե՛ս,  
Աստճանէդ վախե՛ս, խաջալաթ քաշե՛ս,  
Միթամ խաբար չե՛ս, ե՛կ մին լալս տե՛ս:

Արդ անեմ քեզ, եա՛ր վիշտս չարաչար,  
Չգար ինձ օտար, պառկած եմ տկար,  
Նշանց տո՛ւր դիտար, յայտ չէ քեզ մաղար,  
Տանջվումեմ անճար, լալ ճըւալս տե՛ս:

Ինչպէ՞ս ինսան ես, ինձ մեղք չի անես,  
Սրտէդ քէն հանես, ինձ հրաման անես,  
Հէնց միշտ դաստ կանես, որ ինձ սպանես,  
Մեղքս ո՞ւր կտանես, ճա՛ր գոռալս տես:

Արի՛ խղճացիր, իղբարիկ կացիր,  
Մին վարձք ըստացիր, ինձ մի՛ մոռացիր,  
Սիրտդ լէն բացիր, ինչ որ ասացիր,  
Իղբարիկ կացիր, ե՛կ մին հալս տես:

Ներհակ ես մկրատ, չես առնիր խրատ  
Ասողդ է հրատ, մալում չէ նուրադ,  
Կշրոես ապրադ, ոչ ես մին զուատ,  
Չաղուն ա վրադ, զարմանալս տես:

Հէ՛ր մնամ տնանի, է՛յ անխղճմտանք,  
Հետս կանես ջանի, կերպ կերպ ունդբէռանդ,  
Եշխումդ էրվանք, քեզ ծախում ես թանդ,  
Ո՞ւր ա փող ու ժանդ, մէկ ահվալս տես:

Ե՛լ չի ամանչես, մէկ ամիսվան չես,  
Չօւբայ չե՛ս, խան չե՛ս, կամ թէ սուլթան չե՛ս,

Չում ինձ ճանանչես, ծաղիկս, կանանչես,  
Չերքեղիս կանչես, դամ, խնդալս տես:

14 (\*)

Մենք խօ զօղ ենք անում մեզ համար գամով,  
Քո՛ղ ուղուքն մնայ իւր դարդ ու գամով,  
Ախթար եմ բաց արէդ դու իմ նեղ սամով,  
Երբ համբուրամ բերնէդ, համ առայ, հոգի:

Մարիամայ ծաղիկ ես գոյնով սպիտակ,  
Երեսդ լուսնեակի, շողքդ արեգակի,  
Աչքերդ կ'վառի, փայլում ես լուսնեակի,  
Ունքերդ գեղեցիկ կամար ա, հոգի:

Չերքեղ ~Յղլին ասաց, նազանի հուրի,  
Խմ ջիվան աղբէրս մի՛ թող բիարի,  
Էս քո աստիկ սէրդ սիրտս կըվառի,  
Մի՛ վառի, կեանքս քեզ համար ա, հոգի:

Իվանի երգերը.

1. (1)

Տէ՛ր, թէ շրթունս իմ բանաս Բոյր արարածք հիանան,  
Օրհնութիւնդ կը բարբառի, Հիացած, պէլված կը մնան,  
Անհուն, անքննելի գործքդ, Բացում ես ձեռքդ, լիանան  
Հող լեզուս ի՞նչպէս կը ճառի: Համայն դազանքն անտառի:

Ստեղծար հոգից Իվանին,  
Որ հաւատայ անեղ բանին  
Անսկիզբն երբեակ մինին,  
Բնակեալն աննիւթ տամարի:

(\*) Այս տպում է, „Aziamckiiñ Myzikaalnoñ Jyppaal“ում 1846 թուին  
երես 13. № 4 իւր ճախարուճեան և Պարթևոնճեան հետ: Յ. Փ. (2)  
Պոխակ Հայաստանի III հատոր. Ա. Գ.

2. (2)

Ստեղծող տէրն մեր ըզգեցաւ մարմին,  
Առաւ կերպ ծառայի, մարդ եղև անհատ,  
Իսկ և անթերատ.

Անթերատ մարդկութիւնն առաւ ճշմարիտ,  
Շրջեցաւ աշխարհում, շատ կրեց նախատ,  
Եղև բռնադատ:

Բռնադատեալ տանջանք, չարչարանք քաշեց,  
Չեռագիրն Ադամայ իսկ ջնջեց մաշեց,  
Մեր բոլոր աշխարհքի մեղքերն բաշխեց,  
Իլանք արքայութեան ժառանգ պայազատ,  
Որդիք հարազատ:

Հարազատ միածինն իջաւ ՚ի վերուստ,  
Ինքն աղքատացաւ, մեզ արաւ հարուստ,  
Չուճ որ զերի էինք, զժոխքի կորուստ,  
Ազատեց, ըզգեցուց հանդերձ լուսապատ,  
Իսկ անհամեմատ:

Անհամեմատ հոգիներս պայծառ ա,  
Որդի եմք Աստուծոյ, այժմ չեմք ծառայ,  
Աշխարհս պարտեղ ա, մարդն մին ծառ ա,  
Բարի գործքով պէտք ա պտուղ տայ առատ,  
Միրով յոյս հաւատ:

Հաւատով կատարեալ գործք բարի անես,  
Մինչ կենդանի ես հոգւոյ մասն բաժանես,  
Իվան, էս աշխարհքից ինչ հետդ տանես,  
Ինչով պէտք ա քեզ տան փառք, պատիւ, աղաթ,  
Հազցնեն խալաթ:

3.

Որդի եմ Ադամայ, սերունդ թորգոմայ,  
Ծնունդ եմ քաջ Հայկայ, կասես թէ հայ ես,  
Իսկս ո՞վ կիմանայ, նիւթս չորս բան ա,  
Հետն հոգի, ջան ա, բէս բանական ես:

Ինն ամիս ճանապարհ եկամ բէխաբար,  
Ընկամ ես էս աշխարհ, տեսամ լոյս խաւար,  
Հասամ եօթն համար, խելքքս էր յիմար,  
Հարցրամ մին խաբար, ասան ինսան ես:

Տասնհինգէն յետն տեսամ անգէտն,  
Գտամ վարպետն, սուրբ կարապետն,  
Առաքելոց պետն, օրինաց գէտն,  
Յիսուս վարպետն, ասաւ չար չանես:

Երեսունին հասամ, չար բարին տեսամ,  
Բարին անարգամ, չարին շուտ լսամ,  
Հետն սէր հաստատամ, քշամ զովդ ու դամ,  
Խիստ անուշ քաղցրահամ դու խօշ դովբան ես:

Քառասունից յիսուն իլամ բանիբուն,  
Ֆարգ արամ չար բարոյն, շահն իմ գործոյն,  
Տեսամ շատ եմ մաղբուն, հսկեցիմ անքուն,  
Յոյսս կապամ Աստուծուն, Տէ՛ր, ինձ օգնական ես:

Եօթնից ութսուն դալով վայ դարդի հալով  
Անջախ զողբողալով, շրջամ սողալով,  
Մահիս մտիկ տալով, աղաչամ լալով  
Թէ Տէ՛ր, դատես հուրով, արդար զիվան ես:

Իննսուն հարիւրվան իլամ անսխտան,  
Շունչ էիմ անկենդան, հասամ օր մահուան,  
Մինչևի դատաստան ո՞վ խեղճիկ իվան,  
Գնա՛ հող գերեզման, ասա՛ զնդան ես:

(1) Իվանի երգերից 10 հատն ևս տպագրված է «Սոխակ Հայաստանի» երկրորդ հատորում, որոնց կրկին անգամ այստեղ արտատպելն աւելորդ համարեցի: (2) Այս երգը գրուած է շղթայակապ (Պուրբերէն դինջիլումայ): Հետեւեալ երգերում այսպէսն ևս կարելի է տեսնել: Ա. Գրիգորեանց:

4.

Տէ՛ր քու դատաստանդ լամ, Ո՞վ կիմանայ զողի գալն,  
 Առաւ սարսափ զողն ինձի, Կամ թէ իրա հոգու տալն,  
 Լալով կազաչեմ սարերէն, Անպ մառախուղ սուգի լալն,  
 Որ թագցնի հոյն ինձի: Քաշկայ տար կենցաղն ինձի:

Ամենայն հոգիք կը սարսնեն Ե՛կ Աստուած պաղատիր, Խնայ,  
 Ահեղ ատենի երեսէն, Քեզ տայ անանց կեանքի գովան  
 «Յկայք մեռեալքն» որ կասեն, Քանի մարմնովս եմ կենդան,  
 Չարթուցանի փողն ինձի: Արա՛, Տէ՛ր, եստաղն ինձի:

5.

Մին մարդ որ եկաւ էս աշխարհ, Ճշմարիտ կենալ պիտի,  
 Ֆիքր անի վերջն օրն, որ թաքրար գնալ պիտի,  
 Ամենայն դատարկ բաների պէտք ա, որ պատասխան տանք,  
 Չար ու բարին բաժանելի միտքով իմանալ պիտի:

Թէ որ լինի տէր աշխարհի, վերջն վախճան կունենայ,  
 Մերկանայ զովլաթ ու փառքն, զործքն հեան կը մնայ,  
 Վերջն ահեղ դատաստանին ի՞նչ երեսով կը գնայ,  
 Ամենայն չար արարմունքին յատուկ համար տալ պիտի:

Մարդ քանի որ կենդանի է, հոգու հոգսն թո՛ղ քաշի  
 Ինչ նասիբն ա, էն կստանայ ֆիքրով սիրան չի մաշի,  
 Դարձ զայ զործած մեղքերիցն, քէն չի սրահի, բարիչի,  
 Խնայի ասած խօսքերին յատուկ հաւատալ պիտի:

6.

Տէրն ասաւ քօլ աշխարհքն իմանայ,  
 Ինչպէս գնացել եմ, զայու եմ էնպէս,  
 Մարդ կասեմ, որ իմ հանդէպ զիմանայ,  
 Ամենին փոխարէն տալու եմ էնպէս:

Երկինքն շարժ կը տամ, տարերք խաւարեմ  
 Քօլ աշխարհքը կրակ կը տամ, կը վառեմ,  
 Երկու կողքիս վեց վեց աթոռք կը շարեմ,  
 Ինչպէս դատաք, ձեզ դատելու եմ էնպէս:

Իմաստունք, փիլիսոփայք ի՞նչ տեղ են,  
 Ճարտարախօսներն մոխիր են, հող են,  
 Չուղար կուղեմ, կը պապանձվեն, կը դողեն,  
 Ինձ էրել էք, ձեզ էրելու եմ էնպէս:

Իջան, մին օր սուգ ու աղմուկ պոկ կը գայ,  
 Որդն կը շարշարի, ցուրտն հուփ կը տայ,  
 Արդարներն ամպի վերայ թուփ կը տայ,  
 Ինչ արել էք, ձեզ անելու եմ էնպէս:

7.

Պուռն արքայութեան, երկնից բանայի,  
 Ի մէջ հրեշտակաց, լոյս Աստուածածին,  
 Հովանի ամպ ես, անշէջ մօրենի,  
 Հողեղէնքից ընտրած, կոյս Աստուածածին:

Նշոյլէ նախապէս տեսաւ մարգարէն,  
 Մեզ պատմել ըսկաւ Էմմանուէլէն,  
 Ճշմարիտ մեր Փրկիչն է ծնածը ՚ի քէն,  
 Երկնքի դրախտից, բոյս Աստուածածին:

Պու ընտրեալ աղանի, քաղցրախօս տատրակ  
 Ծագեցիր փրկութեան պայծառ արեգակ,  
 Որդուդ արեան զինն ենք մէք անառակ,  
 Մեզ եղի՛ր բարեխօս, յոյս, Աստուածածին:

Քերպանց գովելի, ո՞վ քեզ կը գովի,  
 Թազուհի հրեղինաց, Մայր Աստուած-բանի,  
 Ողորմի՛ և զթա՛ խեղճիկ Խնայի,  
 Խառնի՛ր աջակողմեան կոյս, Աստուածածին:

8.

Գովելի ես զովելի դու աննման ես տիրամար,  
Չորեքկերպեան աթոռոյ համանման ես տիրամայր:

Դու Հօրն երկնաւորի խորհրդարան ես, տիրամայր  
Միածին բանին կենաց բնակարան ես, տիրամայր,  
Եօթն շնորհօք սուրբ հոգւոյն սուրբ իջեան ես, տիրամայր,  
Ճշմարիտ Աստուածութեան ընդունարան ես, տիրամայր,  
Հարսնացեալ Հօրն փառաց, մեզ փրկարան ես, տիրամայր:

Սոսկալի երեք խորհուրդ ճշմարիտ ՚ի քեզ տեսանեն,  
Առաքեալք և մարգարէք խելութեանդ ոչ հասանեն,  
Վարդապետք ոչ կարացին միով կերպիւ մեկնարանեն,  
Հրեզնէքն հիացան, հողեղէնք երկիր պողանեն,  
Մարդոյ մտաց անքննելի, անձառ խորան ես, տիրամայր:

Նշոյդ քո նախապէս մարգարէք տեսան, պատմեցին,  
Իմաստունք միտք արան, հիացան պէլլած մնացին,  
Էս կերպով թարիֆ արան, սա է դուռն կենաց հացին,  
Լսեցին սանդարամեք զարհուրելով սարսափեցին,  
Իմացան որ աշխարհիս փրկութեան պայման ես, տիրամայր:

Պարտեզ ես դու ծաղկալից, ընտրեալ ես զու քաղցր տատրակ  
Ծագել ես մեզ առաւօտ, լուսաբեր, պայծառ արեգակ,  
Լուսովդ լուսաւորից բոլոր աշխարհս բովանդակ,  
Մեղաւորաց միջնորդ ես, արդարներին թագ ու պսակ,  
Երկնքից շատ զերազանց բացված վրան ես, տիրամայր:

Նունուֆար, նարդոս ծաղկեալ, հոտով ծաղիկ ես անթառամ,  
Ամպ թեթեւ, անշէջ մորենի, կնքեալ աղբիւր ես բարեհամ,  
Փրկիչն ազգի մարդկան ի քէն ծնաւ Կոյս Մարիամ,  
Կենարար արեամբ նորա մեռած Իվանս շունչ առամ,  
Երկոտասան ազգազանց կարգ ու սահման ես, տիրամայր:

9.

Մայր ողորմութեան, պարծանք աշխարհի,  
Ամենի խնդիրն տաս, Աստուածածին,  
Լոյս ես արևու ինձ պէս խաւարի,  
Անդադար բարեխօս կաս, Աստուածածին:

Լալով արտասունքով քեզ աղաչում եմ,  
Անունդ հաւատով, յուսով կանչում եմ,  
Ողորմի՛ր ինձ, խեղճի՛ր, իսպառ կորչում եմ,  
Ինձ պէս անտէրներին հա՛ս, Աստուածածին:

Խեղճ Իվանն ուրիշ տեղից յոյս չունի,  
Չորս կողմիցն խաւարվել ա լոյս չունի,  
Քօլ աշխարհքին քեզ պէս մաքուր կոյս չունի,  
Ողջի հետ կապել եմ բաս, Աստուածածին:

10.

Շատ փառ ու փուչ բաներ ասանք,  
Ընթիլաթով քաղցր խօսանք,  
Փառք Աստուծոյ, պատին հասանք:

Մեծ պսան եկաւ, մախուխ հեփի՛ր,  
Աղանձով ինքդ քեզ խաբիր,  
Կրօնունքներդ տա՛ր դէն թափիր,  
Ուրախ կաց, զատիկ ա դալիս,  
Պաս պահողի վարին ա տալիս:

Մեծ պսան եկաւ հեփի՛ր չլաւ,  
Մախուխն սիրտս արորաւ,  
Ղազի հետ դօշն ի՞նչ իլաւ:

Մեծ պսան եկաւ հեփի՛ր լօբի,  
Թութուներն իրա բաբի,  
Շատ մի՛ կեր, կոայ խարաբի:

Մեծ պսան եկաւ առննք բոխի,

էլի ինկնենք աղով տխի,  
Շատ մարդ կայ, պասից կը վախի:

Մեծ պանն եկաւ, առնենք զէյթուն,  
Նրանումն կայ զօրութիւն,  
Նրա հետ չի սազում թութուն:

Մեծ պանն եկաւ, զարօխ խաշի՛ր,  
Ուրա՛խ կաց, կեանքդ մի՛ մաշի՛ր,  
Ե՞ղ ապաշխարանք ա, քաշի՛ր:

Մեծ պանն եկաւ, կապար առնենք,  
Սոխն չքթենք, եղով խառնենք,  
Յոյս հաւատով պանն պահենք:

Հորէս հասանք ծաղկազարդին,  
Աւետիս տանք ամեն մարդին,  
Ո՛վ կանգնել ա պասի շարթին:

Չատիկ, զատիկ, ուրախ զատիկ,  
Դու իմ հոգի, հաւատ, զատիկ,  
Արժան արա՛ խեղճ Իվանին,  
Շնորհք բեր մեր տունը, զատիկ:

11.

Թագաւոր ես աշխարհի, ո՛վ բռնաւոր չար, մամոնայ,  
Իշխելով ման ես գալիս, ամեն ցաւի ճար, մամոնայ:

Այստեքաց ես սիրական, յաղթութեան հնար մամոնայ,  
Օգնական ես արքայից, իսկ զօրաց զումար մամոնայ,  
Պահպանութիւն քաղաքաց, թշնամու զէնհար, մամոնայ,  
Իշխանաց փառք ու պսակ, ցնծութեան քնար, մամոնայ,  
Թագաւորքն առանց քեզ մնում են տկար, մամոնայ:

Թէ հարուստ եւ թէ տնանկ ցանկանում են քե շատանան,  
Շողվել են խալիք ջանիդ չարչարանօք քեզ կը ջանան,  
Սիրովդ վաճառականք ծով ու ցամաքն անց կենան,

Չարչարում ես տնանկին, արծաթասէրք փարթամանան,  
Բորբոքիչ կրակի պէս մեր ջանին ինկար, մամոնայ:

Բաղ ու բաղչայ բուրաստան քեզանով ամբողջ ա մնում,  
Թէ հիւանդի մօտ զնաս, եարաները ողջ ա մնում,  
Ումնից որ պակասվում ես, մնորվում ա խեղճ ա մնում:  
Առաւել շատ սիրողդ մեռնում ա, անդեղջ ա մնում,  
Փառք ու պսակդ տալով Յուդային՝ խեղդար, մամոնայ:

Ատրել ես դիշեր ցերեկ ագահների դու զարարն,  
Անդադար աղօթքի տեղ խիսաք են անում զարարն,  
Հազարն պակաս մնաց, ի՞նչ կիլնի եարա՛ք մեր ճարն,  
Պաշտում են Աստուծոյ տեղ, դու ես նորանց կամարարն,  
Ո՛վ քեզի անարգում ա, թողնում ես անճար, մամոնայ:

Ո՛վ քեզի առնի կաշաւ եւ կամ թէ կ'տայ մուգաթի,  
Մարմնով փարթամ ա նա, հոգին քաղցած ա անօթի,  
Որքան որ բարձրացնես, վերջն կը թողնես ամօթի,  
Խնդրեմ, ինձ ո՛վ կը լսի փառք պատիւ չ'տայ արծաթի,  
Որ յատուկ թշնամի ա, զարշէլէն բէթար, մամոնայ:

Քարշէլի՛, չա՛ր, ա՛նպիտան, ո՛վ բռնաւոր ուստի՞ ծնար,  
Խառնակիչ ես աշխարհի, ոչ կայ յերկրի քան զքեզ չար,  
Կամակից բէլիարայ, կապեա աշխարհն յուռկան ու լար,  
Որսալով դու մարդերին հոգու աչքն առնես խաւար,  
Արդարեւ կը վկայի սուրբ գիրքն, վատթա՛ր մամոնայ:

Պատուիրան է Աստուծոյ, ոչ ծառայել մամոնայի,  
Պաշտողն երկու տէրանց ծառայ լինի սատանայի,  
Տնանին փափագում ա, ա՛խ մին ճարել կարանայի,  
Տէր, ողորմի՛ր աղքատին, յաջողիր զործք Իվանոյի,  
Խոստացել ա տնանկին թէ փոխարէնն ա՛ռ, մամոնայ:

12.

Ականջ դիր, թարխի անեմ հարուստ մեծատունի բանն,  
Լսողն սարսափելով թո՛ղ պատմի իրա տանն:

Աւրախ էր, առատապէս վայելէր սնտաի կեանն,  
 Հանապաղ զարդարվում էր, զառ ծիրանի պատմութեանն,  
 Սիրում էր իւր նմանն, ի՞նչ անէր անանկի տանն,  
 Բնակին ողորմութիւն չէր տամ աղքատի անուանն,  
 Խեղճ աղքատ Ղազարոսն ընկած էր իւր տան դռանն:

Էն հիւանդ Ղազարոսի կեանքն նման երազ էին,  
 Փառւմ էր կեզաի միջին, որդուքները կը վազէին,  
 Շունքն խնամք տանելով, ետրաներն կը լիզէին,  
 Մին կտոր հաց տալի տեղ աչքով տեսնելն չուզէին,  
 Յանկանալով փափագում էր տան սեղանի փշրանն:

Որ մեռաւ մեծատունն, փառք ու պատիւով թաղեցաւ,  
 Իսկ ննջեց Ղազարոսն, Աբրահամու գոգն հանգուցաւ,  
 Մեծատունն դժոխքից խկոյն հոգու աչքն բացաւ,  
 Ի հեռուստ Ղազարոսին նկատելով անդ նայեցաւ,  
 Սաղ վախտին քօռացել էր տեսնել նորա չարչարանն:

Աղաչում էր կանչելով, ասելով հայր Աբրահամին,  
 ,,Դժոխքի տաքութիւնից լեզուս, բերանս պապակին,  
 Ուղարկի՛ր Ղազարոսին, որ կարօտ եմ ջուրի կաթին,  
 Բերանս պապակելա, ջուր թաց անի ծաղի մատինս՝  
 Մին բարակ միտք անելով, լաւ խնացէք պատասխանն:

»Յիշեա՛, ասէ, որդեակ իմ, դու անդ բարիս վայելէիր,  
 Ղազարոսն քաղցած ծարաւ, ընդէ՛ր խնամք ոչ տանէիր,  
 Եթէ դու ողորմելով մին կտոր հաց սրան տայիր,  
 ,,Սրանիցն էլ փոխարէն մինին հազար ջուր կառնէիր՝  
 Պէտք ա այժմ դու պապակիս, իսկ Ղազարն մոնի սէյրան:

Արկին խնդրէր, ուղարկի՛ր, գէթ աղբերներս էլ խմանան,  
 Օրինակ էի նոցա, բէլքի իմ գործքից հեռանան,  
 — Ունին ասէ, մարգարէս, թո՛ղ լսելով ըզգաստանան,  
 Թէ մեռելոց որ գնայ լաւ դրխան կը հասկանան,  
 — ,,Ականջ զնեն Մովսէսին, լսեն Աստուծու պատուիրանն:՝

Հինդ եղբօր մինն ես եմ, որ սարսափում եմ լսելով,  
 Անդադար քարոզում էր մարգարէն Մովսէս խօսելով,  
 Մեռելոց տէրն եկաւ, դրխտն պատմեց ասելով,  
 Չարչարվումա աղբերդ, սրտից գութն պակասելով,  
 Ոչ ողորմիս աղքատին, տեսնես դժոխքի տանջանն:

Մի՛ կարծէք թէ առակ էր ասաւ ու պատմեց անցկացաւ,  
 Համօրէն յանցաւորաց ճշմարիտ օրինակ ցուցաւ,  
 Զաքէոսն լսելով ողորմութեան դուռն բացաւ,  
 Պատուիրեց մեծատունին, շատ դժուար նրան թուեցաւ  
 Արքայութիւն մտանել դժուար է մեծատանն:

Երկիւղն ինձ պատել ա, ահիցն հոգիս կը դողայ,  
 Միտք եմ անում, մարմինս յետ ու առաջ վերջը հողայ,  
 Թէ հարուստ ե թէ անանկ թէ ծառայ կամ թէ աղա,  
 Մահն, դժոխքի ահն մտքին պահի, քանի՛ սաղ ա,  
 Յատուկ Աստուծոյ սէրն ցանկայ պահպանել իվանն:

13.

Էս ա Աստուծու պատուիրանն, վաղվան համար դարւ մի՛ անիր,  
 Խելք ու միտքըդ խիալըդ մարմնու վերայ բանդ մի՛ անիր:

Փարթամութեան մի՛ ցանկար, հոգիդ քարուքանդ մի՛ անիր,  
 Թէ մեծութեան մօտանաս, միտքդ հնազանդ մի՛ անիր,  
 Հինդ օրվայ կեանքիդ համար սուտ ու օղորդ անդ մի՛ անիր,  
 Սէրդ Աստուծու հետ միացուր, չարի հեան բանդ մի՛ անիր,  
 Չափաւոր զովզըդ արա, ետրն քեզ Ֆրսանդ մի՛ անիր:

Փառք տո՛ւր Աստուծու պարգևածին, մի՛ ասիր, թէ էս էլ քիչ ա  
 Մի՛ նախանձիր այլոց վերայ, թէ ընկերդ մարդամէջ ա,  
 Թէ բոլոր աշխարհը շահես, խնացիր որ վերջն հէչ ա,  
 Տես Սողոմոն խնաստունին, նորա պէսն նէչա նէչա,  
 Որքան կարող ես, խոնարհ կաց, ինքդ քեզ հպարտ մի՛ անիր:

Արի՛ գնանք գերեզմանոց, մտիկ անենք այն տեղանն,  
 Ոչ թէ շատ, առ ժամանակ էդ ա մեր մարմնու զնդանն,  
 Երկնչում եմ ասելի ահեղ օրվայ վերջի բանն,  
 Աչքիդ զիմաց զրված ա Ստեղծողի պատուիրանն,  
 Ճշմարիտ բռնիր բանդ, զայդ զուլաբի Ֆանդ մի՛ անիր:

Չու՛մ բարի օրըդ քիչ ա պիտի որ միշտ զգաստ կենալ,  
 Ուրախ ես դու լաւ օրիդ, վատին էլ պէտք ա զիմանալ,  
 Քանի որ կենդանի ես, մահուան օրըդ մի՛ մոռանալ,  
 Աշխարհս անցաւոր է, յետ ու առաջ պէտք ա զնալ,  
 Մահիցն մի՛ վախացիր, ինքդ քեզ հիւանդ մի՛ անիր:

Գիտես, որ պատկերովդ դու է Աստուծոյ նման ես,  
 Գործքովդ մաքուր կացիր, ինչ որ ուզես, դու էլ կանես,  
 Տե՛ս, որքան հրաշք գործան սուրբքն համայն ճշմարտապէս,  
 Ե՛կ, սրանց միջնորդ քցիր, մին ճար կանեն քեզ Յովհաննէս,  
 Հեռացիր բամբասանքից, չար գործ մանաւանդ մի՛ անիր:

14.

Վ ա՛յ մեղաւորիս որ ասնին ատեան ինձ,  
 Ատենում չունեմ պատճառելու բան ինձ:

Իսկ տէրունական պատմութեանից առել եմ ուրեան,  
 Ուրանա իլած հոգիս մարմնով կալան ու կապան ինձ,  
 Կապած, թաղցրած եմ քանքարի հիսարն բերան ինձ,  
 Բերան ու տեսան, որ շահ չունեմ, բանտում արգելան ինձ,  
 Արգելան, տեղս մութն է ու խաւար, մին լոյս չի արան ինձ:

Լոյսն երկնից եկաւ գաւաւ մոլորված ոչխարիս,  
 Ոչխար եմ ես անառակ, պանդուխտ եմ աշխարհիս,  
 Աշխարհումս չար աւազակն խոցոտեց տկարիս,  
 Տկարքն տեսան, չօղնեցին անկեալ կիսամահիս,  
 Կիսամահ էի, Սամարացին տուաւ սպեղան ինձ:

Ինձ էն անպառու ծառի նման, Տէր, մի՛ քցիր հուրն,  
 Հուրից ազատի՛ր, տէ՛ր, յիմարիս բացիր կենաց դուռն,  
 Դռանդ մի՛ թող, որ անտես ես ամբաստանեն ծուռն,  
 Ծուռ մեղքերս իմ առանց բանտի ների՛ր, մի՛ տուր սուրն,  
 Սուր բարկութիւնիցն ազատի՛ր, հանի՛ր, տար սէյրան ինձ:

Սէյրան դրախտից կորած էի, եկար, զտար ինձի,  
 Ե՛կ, մի՛ թող, որ ինձ խեղդի փողն, չար սատանան հնձի,  
 Հնձել տուր ինձ, Տէր հրեշտակաց, մի՛ թող որ հուրն խանձի,  
 Խանձել եմ հոգիս, սէր եմ քցել մամոնայ պղնձի,  
 Պղնձի նման ժանգոտել ա, արել ա վէրան ինձ:

Վ էրանայ իլած իմ, քաղաքի դռնապանն ա յիմար,  
 Յիմար վախտումն, Տէ՛ր, մահ մի՛ տուր, յանկարձակի մի՛ տար,  
 Տանես, ինձանից մի՛ հարցուր, թէ ոչ կերակրար,  
 Կերակուր եմ ես անքուն որդանց, թէ որ դատես արդար,  
 Արդարոց յորժամ յեկայք՝ ասես, Տէ՛ր, կոչիւր և իվանն ինձ:

15.

Գիշեր ցերեկ այրի հոգիս խնդրում ա դատ,  
 Էդ իմ անիրաւ դատաւորին ո՞վ կ'տայ խրատ,  
 Որ չունի բնաւ խղճմտանքից մխալ ու դատ,  
 Քցել ա հոգիս մեղքի մէջն, զարդարում ա վատ,  
 Էլ չեմ իմանում, էս զարդն ի՞նչ անեմ, ո՞ւմ անեմ զանդատ:

Ոչ Աստուածանից ունի երկիւղ, ոչ մարդից ամօթ,  
 Յատուկ շինողն լաւ շինել ա պատուելի անօթ,  
 Ինքն իրանից գոյացել ա կրակ և կամ օդ,  
 Վառվել ա սիրով, աշխարհի հետ իլել ա ծանօթ,  
 Հէնց ա իմանում անցաւորիս հիւ՛քն ա հաստատ:

Մայլել ա իլել անցաւորիս սնտի կեանքին,  
 Վիզն ծռել ա, խնդրում ա էս խեղճուկ հոգին,  
 Հերիք ա, արի՛ մուրվաթ արա, լսիր օրէնքին,

Քանի՞ մին պէտք ա ականջ դնես էդ խղճմտանքին,  
Ախար սա մեզ խառնակվելով թողել ա բարբառ:

Ե՛կ մուրվաթ արա՛ էդ ոտխալն, դու հանի՛ր բանտից,  
Բէքի զղջալով դու պրծնես սատանի Ֆանդից,  
Քեզի մին մաքրիր, ինձ աղատիր զժոխքի դարդեց,  
Քանի չի եկել էն մանդաղն, չի հնձել արտից,  
Ե՛կ մին աղաչենք ստեղծողին զթած ու առատ:

Էսօր ու էգուց որտեղ իլի գայ հոգեհանն,  
Ինձ խօշ կը տանի, քեզ կը դնեն հողի տապանն,  
Վերջն զողալով պէտք ա զնաս ահեղ ատենն,  
Ամենայն հոգու թողութիւն տալ հայցէ խլանն,  
Տէր, դու ստեղծար, մի՛ կորուսաներ, ե՛կ արա՛ իմ դատ:

16.

Թարի՛ջ անեմ, լսեցէք, Աստու օրէնքն էս ա,  
Նախ պէտք ա Աստուած սիրենք, իսկ պատուիրանքն էս ա,  
Երկնչինք, ահ ունենանք, իսկ Աստու կամքն էս ա,  
Իսկ սիրենք ընկերներիս դիրքն ու կանոնքն էս ա,  
Եղբարքն սէր միարան, յատուկ հրամանքն էս ա:

Յատկապէս մեր դավաթն պէտքը չի մէնակ վայելենք  
Մեր արդար աշխատանքից իսկ Աստուծոյ մասն հանենք,  
Նոյն մասն ուրախ սրտով տնանկ աղքատի փայ անենք,  
Որբ ու կարօտ ընդանեաց հոգան քաշենք, միշտ պահպանենք,  
Արդար ու մաքուր մարդկանց յատուկ զովասանքն էս ա:

Ի՞նչ օգուտ աշխարհն շահի, իւր հոգու հոգսն չի քաշի,  
Կը դողի փողի վրէն, անցկանայ կեանքն վաշվաշի,  
Պահպանված զովլաթն անօղնական ա ուրիշի  
Վայրենի թռչունի պէս նա իսկ նման ա բայդուշի,  
Ագահ, նաքեազ մարդերի սրտի իսկ բաղձանքն էս ա:

Յատկապէս կը պատկանի մարդն զովլաթն պահպանի,  
Շուայլ ու նաքեազ չիլի իսկ չափաւոր քէֆն անի,  
Ի՞նչ իրա ձեռքով տուաւ, յատուկ էն հեան կու տանի,  
Հետքիցն ուղարկածն աւաղակն կու թալանի,  
Այն կեանքում լաւ ապրելու միմիակ հնարքն էս ա:

Ուղումեմ մէկ բան ասեմ, շատ մարդի խաթրն կը մնայ,  
Չասեմ էլ ճշմարիտն՝ ինքն էլ հաստատ իմանումա,  
Ի՞նչ օգուտ ննջեցելին շոր հագցրած զարդարում ա (\*),  
Մի՞թէ նա էն զարդարանքով ահեղ դատաստան դնում ա,  
Հողից կարօտ ա թողնում, իսկ նորա տանջանքն էս ա:

Մեր արարիչ փրկիչն կտաւով գերեզման դրան,  
Մի՞թէ այս մեղաւորն գերազանց է քան զնորան,  
Պարծանք ա ու զովասանք թարիփ անեն ու զարմանան,  
Բնաւ շահ չունի հողին, թէ դուզ հազար զովասանք տան,  
Յատկապէս հպարտութեան պարծանալոյ հիմքն է սա:

Արարիչ ստեղծողն իսկ որ յանձնեց հողը հողին,  
Բայց մեռել զարդարողքն պարծանում են իրանց փողին,  
Չում որ նա հարսնացել ա իւր արարիչ ստեղծողին,  
Վայելո՛ւչ է զարդարանքն, հարսն արժան ա իւր քօղին,  
Էս անցաւոր աշխարհքի վերջն զարդարանքն էս ա:

Հողին էն կեանք ա դնում, շոր զարդարանք չեն հարցնում,  
Եթէ արդար հողի ա, ճերմակ հանդերձ են հագցնում,  
Մտքներն փառք երգելով առ Աստուած են վերացնում,  
Անարատ մաքուր կուսանք անկեղոց տեղն են լքցնում,  
Չարդարանքն դի՛ր մի կողմ, իսկ որ նրանց փառքն էս ա:

(\*) Այդ սոցորուծիւնը բաւական երկար ժամանակից մինչև այժմ իսկ շա-  
րունակվում է Աստրախանում և ժողովուրդը չէ կամեցել հասկանալ դորա  
տխտը հեռականքները, որի վերաբերութեամբ կարելի է մի համառօտ տեղե-  
կութիւն ունենալ Նոր Արմէնի յօդուածից, «Մեղու Հայաստանի» լրագրում  
1874 թ. 8. փ.

Իվանն միտք ա անում, էս աշխարհս է ճանապարհս,  
Մարդ կայ, որ սուրբ օրէնքից գամ ա գնում ա բէխաբար,  
Երանի տամ էն մարդին գործքերն առաջ գնում ա վառ,  
"Յառայ բարի" ասելով ընդունի տէրն բարերար,  
Երջանկութիւն ճշմարիտ անմահութեան կեանքն էս ա:

17.

Միրելք, էս աշխարհէն շատ մարդ կայ, գանգատ ա անում  
Աշխարհն չէ մեղաւոր, ինքն գործքն վատ ա անում,  
Բարին արհամարում ա, իսկ չարն արմատ ա անում,  
Թէ մին լաւութիւն անի, էն էլ իսկ թերատ ա անում,  
Չունի բնաւ գործք բարի, հէնց դարտակ ումուտ ա անում:

Տէրն ինքնին ա կամենում, էս աշխարհքն մեք վայելենք,  
Չում որ մենք չենք անասուն, խելքով մտքով բանական ենք,  
Նման եմք հրեշտակաց, մի՞թէ մենք անբան հայվան ենք,  
Պէտք ա որ մեզ ճանանչենք, չափենք կշռենք ու զին անենք,  
Երկնաւոր հայրն մեզի որդի հարազատ ա անում:

Չում պատկեր ես Աստուծոյ, պիտի որ քեզ պահես մաքուր  
Ի՞նչ օգուտ ցնծայ մարմինդ, էդ խեղճ հոգիդ իլի տխուր,  
Աշխարհն վայելում ես, հոգիդ էլ մէկ բաժին տո՛ւր  
Դու ես նրան օգնական, չունի նա ազգ կամ մէր ու քուր,  
Քեզանից զիշեր ցերեկ աղաղակ ու դատ ա անում:

Չում ասում թո՛ղ դովաթդ, ե՛կ ձեռ վեր առ էս աշխարհէն  
Տուել ա քեզ բարութիւն անհատ, անհուն բարերար էն,  
Արժան ա, միշտ վայելի՛ր, գործի՛ր բարի, փախի՛ր չարէն,  
Չիցէ թէ ձեռքդ քաշես որբ ու տկար կարօտներէն,  
Էս բարի գործքն ա, որ քեզ ատեանն անպարտ ա անում:

Իսկապէս մեր գործքերն կամ արծաթ լինի կամ ոսկի,  
Տէրն իսկ հատուցանի էն ահեղ հրապարակի,  
Թէ խոտ ա, փէտ ու դամիշ, արժանի լինի կրակի,

Ազգ ընտանիք չեն օգնել, թէ դուղ հազար աղաղակի  
Գործքն ա իսկ օգնական, հոգիդ անարատ ա անում:

Երանի՛ տամ էն մարդին, ողորմած ա ու բարերար,  
Նորա գործքն ա բարի, իսկ սրտումն ճրագ ա վառ,  
Վա՛յ տվէք էնպէս մարդի աղահ նաքեազ գործքն ա չար,  
Երկմիտ ու թերահաւատ հպարտ նախանձ միտքն խաւար,  
Անողորմ մարդկանցը տէրն զատապարտ ա անում:

Աբրահամ հայր հաւատոյ Մելքիսէթին ետ տասանորդ,  
Ճշմարիտ Քրիստոսի մարմնոյ արեան իլաւ հազորդ,  
Եւ Յակովբ նորա թոռը նորանից յիտ իլաւ յաջորդ,  
Ուխտ դրեց Աստու հետ տասանորդ տալ հանապազորդ,  
Օրինակ ամենեցուն նահապետն ուխտ ա անում:

Մովսէսն օրէնք դրաւ տասանորդել իսկ եղբօրն  
Չի գտնվիլ ձեր միջին որբ ու կարօտ տկարներն,  
Տէրն ինքը հրամայել է հան գանձիցդ հին ու նորն,  
Նորիցն տասանորդ տո՛ւր, կառավարիլ չքաւորն,  
Իսկապէս կատարոյն գործքն մարգարիտ ա անում:

Իցէ թէ կը բամբասեն, թո՛ղ վատաբանեն իվանին,  
Չում որ ինքն քասիր ա, յորդորում ա մեծատունին,  
Ողորմութիւնն պարծանայ բարձր ձայնով դատաստանին,  
Ճշմարտութիւն գործօղն գայ համարձակ լոյս ատենին,  
"Նկայք օրհնեալք" աջ կողմին, ձախ կողմին ըռադ ա անում:

18. (\*)

Ականջ արէք, աղաներ, երկու աշուղ հիւր են եկել  
Փառք սրանց ստեղծողին, միտքներն սուր են եկել:

(\*) Մի բննի անձանց պատմութեան համաձայն՝ այս երկու աշուղները Եւրոպ-Օղլիքն են եղել: Յ. ֆ.  
Սոխակ Հայաստանի III հատոր. Ս. Գ. 7\*

Սուրբ Կարապետի վանքից ողջ և առողջ լուր են եկել  
Մաքուր սուրբ գերեզմանից անուշահոտ բուր են եկել  
Եօթն անուամբ շնորհօք անըսպառ այբբւր են եկել  
Քաղոր համայն սուրբերից անմահական ջուր են եկել  
Իսկապէս խորհուրդ արած ոսկի սափոր լի են եկել:

Փառք տալով մին միտք անենք էն անեղ բանն անհաստի,  
Տուել ա սուրբ շնորհքն սրանց քցել ա հաւաստի,  
Յատուկ պարգև ա տուած սուրբ Մկրտիչ Յովհաննէսի,  
Վառվել ա էշխի սիրով, բաղցր և անուշ կը խօսի  
Քորթքված կրակի պէս անհանգչելի հուր են եկել:

Եստ կարօտ փափագ էինք էսպէս անուշ ընթրիլաթի,  
Անխալ յարմարապէս մէյդան բոցան մարիֆաթի,  
Քաղցր համեղ խօսքերով ախորժ իլան ամեն մարդի,  
Լսողն մուշտաղ իլաւ ինչպէս բիւրբիւն կարմիր վարդի,  
Վարդ, ըռահան, սուսամբար ծաղիկ համասփիւռ են եկել:

Իսկ համեստ բնութիւնով ընթրիլաթ ու սաղ արեցին,  
Հաւասար արք և կանայք լսողներն հազ արեցին,  
Մէկ մէկու իմաց տալով հաւաքվան փարվաղ արեցին,  
Քոչոր հազ ասողներն մրթմրթալով տաղ արեցին,  
Տեսան խօսել չեն կարող, մտքներին շուռ են եկել:

Այսուհետև եաղ կանենք սրանց անուններն տալով,  
Քոչորքս ցանկանում ենք, որ Հաշտարխան մնան տարով  
Ի՞նչ անենք, կարօտել են օթեանն փափագելով  
Սաղ սալամաթ եկել են, ողջ ու առողջ գնան բարով,  
Ի վանն չի մաւանալ, չում որ սրտին զուր են եկել:

19.

† Պասն ուտիս միմեանց հուշաթ արեցին,  
Ուտիսն ասաւ մարդկանց դովրանն ես եմ,

Պասն ասաւ մարմնով ինձ հետ սէր չունեն,  
Հողիների յատուկ սէյրանն ես եմ:

Ուտիսն ասաւ սէյրանումը ծառ չունես,  
Երկու երեք ճրագ մին տեղ վառ չունես,  
Աշխարհքին գովելի լաւ բարբառ չունես,  
Զովղ ու սափայ քէֆի մաքանն ես եմ:

Պասն ասաւ, ինքս ինձի ծառ եմ ես,  
Քան գծրագ միշտ լուսաւոր վառ եմ ես,  
Երկնային եղանակ երգ բարբառ եմ ես,  
Ճշմարտութօս մարդկանց բերանն ես եմ:

Ուտիսն ասաւ, ինձնով սարքում են մէջիս,  
Սիրով և միարան մօտս են զալիս,  
Քէֆ եմ նշանաց տալիս ինչպէս հարսանիս,  
Քաղցրահամ բարելի սեղանն ես եմ:

Պասն ասաւ, մէջիսդ ինչի՞ նմանի,  
Մեղաց հետ բամբասանք ՚ի քէն ծնանի,  
Հակառակ կը խօսեն սուրբ պատուիրանի  
Անուշահոտ բուրմամբ խորանն ես եմ:

Ուտիսն ասաւ, ի՞նչ ա քու զօրութիւնդ,  
Լօրի, դարօխ, կապար, ոսպ ու զէյթունդ,  
Հէնց էդ ա, որ համեստ ա բնութիւնդ,  
Հարբու հուրբով խօսող սուլթանն ես եմ:

Պասն ասաւ, գովելի է համեստն,  
Տէրն անիծէ անհնազանդն և հետտն,  
Ես եմ ձգնաւորաց լուսոյ ըզգեստն,  
Նրանց բնակութեան կայանն ես եմ:

Ուտիսն ասաւ, զազ, մերի հաւ, զօլ ունեմ,  
Խաւեար, զուրգար, զօշ, խորոված բօլ ունեմ,  
Լաւ ձուկն որալու ջուրի գիօլ ունեմ,  
Երկնքի թռչունքի ուռ կանն ես եմ:

Պասն ասաւ, գրիտտ ասար, ուռկան ես,  
Ազահ մարդկանց խելքն միտքն պարտ կանես,  
Վերջն կը հաւաքես, դժօխք կը տանես,  
Երկնից արքայութեան զրանն ես եմ:

Ուտիսն ասաւ, ինձնով ա զովդ ու սաջան,  
Բացում են սեղանն, հեփում են դաջան,  
Բաղ չեն տանում բնաւ քեզպէս բէբաջան,  
Զայիր չիման ծաղկեալ զիւլանն ես եմ:

Պասն ասաւ, անցաւոր ա զիւլանդ,  
Արբեցութեան մեղաց պատճառ նշանդ,  
Հակառակ օրինաց քօլ արած բանդ,  
Հայրապետաց դիրք ու կանոնն ես եմ:

Ուտիսն ասաւ, դիրք ու կանոնն ի՞նչ ա,  
Պասն ուտողի համար յատուկ ոչինչ ա,  
Որքան ուտեն, էլի կասեն թէ քիչ ա,  
Նրանց համար իսկ պատուիրանն ես եմ:

Պասն ասաւ, ես եմ հիմքն օրէնքի,  
Ճշմարիտ հաւատքի սուրբ պատուիրանքի,  
Գու կապեցիր ծաղկեալ դուռն զրախտի,  
Կրկին խոստացեալ օթեանն ես եմ:

Ուտիսն ասաւ, ինձ սիրողն հարուստ ա,  
Գովասանքներն ինձի տված զրուստ ա,  
Քեզնից զանգատվում են, ասում են վատ ա,  
Նրանց սրտի խորհրդարանն ես եմ:

Պասն ասաւ, ես պարիսպ եմ լուսապատ,  
Թէպէտ ինձանիցն անում են զպնդատ,  
Իսկ իմ ժողովուրդս տնանկ ա աղքատ,  
Նրանց յոյս հաւատքի իսկ սիւնն ես եմ:

Ուտիսն ասաւ, իմն են իշխանք մեծատուն,  
Իմ մօտ են հաւաքվում իմաստունք զիտուն,

Նրիտասարդ անձինք քօլ իշխանագուն,  
Նրանց սրտի իսկ սիրականն ես եմ:

Պասն ասաւ, իշխանների որդիքն,  
Հաւատքի թուլ ու որկրամոլ մարդիկն,  
Պաս ուտում են շաղախվում ա հողիքն,  
Նրանց հոգու իսկ քաւարանն ես եմ:

Ուտիսն ասաւ, թէպէտ բարեաւ պարարտ չեմ  
Նրանց մեղքին ես չեմ պատճառ, անպարտ եմ,  
Պասի միտքն ասեմ, խօսքս աւարտեմ,  
Նրա մտքով շատ անպիտանն ես եմ:

Պասն ասաւ, ինքդ քեզի իմացիր,  
Հակառակ օրինաց ընդդէմ մի՛ կացիր,  
Ինչ քեզ հրաման ա, հաստատ մնացիր,  
Քեզնից աւել իսկ պարտականն ես եմ:

Թէ զիտուն ես, պաս ուտիսին վճիռ տո՛ւր,  
Պաս ուտողն ա ուրախ, չուտողն ա տխուր,  
Ուտողն ա շաղախված, չուտողն ա մաքուր,  
Մեղապարտ շարադրող Իվանն ես եմ:

20.

Ո՛վ արդար դատաստան, չունեմ ինձ պատասխան,  
Արժանի եմ կապման:

Ծանի՛ր հարսանիսն տէրունական, առաջն արքայութեան,  
Հրէայքն անդ հրաւիրեցան, գնալ ոչ կամեցան,  
Տէրն առաքելոց տայ հրաման, կոչեալք չէին արժան,  
Վայ ինձ, կոչել են, չունեմ պատմուճան, ոչ տալու պատասխան  
Արժանի եմ կապման:

Ես եմ Աստուծոյ ծառայ ու նոքար, որ ես ինձի քաներար,  
Որ միշտ գործքովս յինեմ շահարար, քթնեմ հոգուս մին ճար,

Ահեղ ատենին տունէ ինձ համար, թէ որքան շահեցար,  
 Ընդէ՞ր քանքարն երկրում թաղուցար, ո՛վ դու ծառայ չար,  
 Իսկոյն հրամայէ ծառայդ արժանի է անբուն ցրտան,  
 Հրոյն անվախճան:

Ալխարն Աղամն էր, որ փառքն կորոյս, մոլորվաւ անյոյս,  
 Որ բանն ծնաւ անարատն կոյս, եղև մեզ բարի յոյս,  
 Ի ինչի՞ր եկաւ կորած ոչխարացս զտաւ, բարձաւ իւր ուս,  
 Ո՛վ դուք բարեկամք իմ սիրեցելոյս, խնդացէ՛ք եկն լոյս,  
 Սա մեղաւոր էր, եկն ապաշխարան, երկնքում ցնծան,  
 Անչափ ուրախանան:

Աղամն էր, հօրէն որ բաժանվեցաւ, փառքից զրկվեցաւ,  
 Անառակի պէս ինչքով վատնեցաւ, այլոց ծառայեցաւ,  
 Սաստիկ սովիցը ինքնին զղջացաւ, առ հայրն ընթացաւ,  
 Լալով ողբալով մեղայ քեզ կոչաւ, հայրըն զթացաւ,  
 Եզն պարարակ միահատիկ զենաւ, բարեկամք խնդան,  
 Մեռեալն եղև կենդան:

Աղամն էր անկաւ ձեռս աւազակին, չար սատանային,  
 Որքան մարգարէք որ պատահեցին տեսին ու անցին,  
 Բայց երբ պատահեց այն Սամարացին, ձէթ պատեց խոցին,  
 Եւ տարաւ յանձնեց պանդոկսպետին, սուրբ վարդապետին,  
 Եւ տուեց նմա երկու գահեկան թէ տո՛ւր դմա զարման,  
 Մինչ իմ զալստեան:

Ծառ եմ Աստուծոյ պիտի պտուղ տամ, որ քաղեն ամէ ամ,  
 Ծաղկեմ հաւատով, լինեմ բարեհամ գործով ամենայն ժամ,  
 Յուսով Աստուծոյ կամքն իմանամ, սիրով միանամ,  
 Անկանիմ մեղքում, անպտուղանամ, անչէջ հուր զնամ,  
 Տայ այդեգործին տէրն հրաման, հա՛տ ծառդ ՚ի հուրն այն,  
 Երկիրդ առնէ խափան:

Ե՛կ ծանուցանեմ բանն կուսանաց, լսի՛ր ունկերդ բաց,  
 Օրինակ է ձեզ զգայարանաց, որ լինին նոքա միշտ սանձահարած:

Մինչ ՚ի զալ փեսային դու կացիր վառված, չի լինիս հանդած,  
 Լնչպէս յիմարքն մնացին քնած, վերջներն իլաւ լաց,  
 Մտին հարսանիս, դուռն փակեցաւ, յետոյ յիմարքն դան,  
 Մնան արտաքաման:

Միտքը մարմնի վերայ է անտես, կառավարիչ պէսպէս,  
 Չիցէ՛ թէ հոգւոյդ բարիքն վատնես, օրէնքն առնես անտես,  
 Արա՛ բարեկամ չար մամոնայէս, կընդունեն քեզի նես,  
 Իցէ թէ ոմանք մեղանչին առ քեզ, բաշխի՛ր կամ արա՛ կէս,  
 Եւ երբ քեզանից լինեն ամբաստան, տէրն տայ զովասան,  
 Գործոյդ իմաստութեան:

Կամիս պարտատէրս դու իմանաս, քննի՛ր մտօք հա՛ս,  
 Մեղօք Աստուծոյ միշտ պարտական կաս, պիտի որ համար տաս,  
 Իցէ թէ ոմանք առնեն քեզ վնաս, մի՛ արա բառ, բաս,  
 Հաշտրվիր հեան, խռով չի ֆիաս, որ մահն ա մօտահաս,  
 Չիցէ թէ տէրն կոչի քեզ ատեան, մտանես զընդան,  
 Մինչև ՚ի հատուցման:

Աղամն էր այն զրամն կորուսեալ աղբում շաղախեալ,  
 Աստուածութիւնն է իւր ճրագ՝ վառեալ, խաշն աւել ածեալ,  
 Երկնային զօրքերն զրացիս կոչեալ, լերո՛ւք ուրախացեալ,  
 Տեսէ՛ք զի գտի զրամն կորուսեալ, արեամբս լուացեալ,  
 Իսկոյն երկնայինքն ուրախացան, արարին խրախճան,  
 Կորուսան եղև գտման:

Թէ կամիս զիտել, սերմանայանն է Աստուծոյ բանն,  
 Են ոմանք լսեն զիրք ու կանոնքն կամ սուրբ պատուիրանն,  
 Անկանին հօգս ու վաստակ ու ջանն էդ ունայն դովբանն,  
 Եւ հեղձուցանեն հողի ու ջանն և անմահ կեանն,  
 Իսկ ոմանք բարի երկիրն անկան, ծաղկին պտուղ տան,  
 Մինչ թիւ հարիւրեան:

Ե՛կ սէր մի՛ քցիր մամոնայ ժանգի, չարին կ'տայ բանտի,  
 Աստուծոյ կապած սէրն կը քանդի, կը քցի քեզ լանդի,

Էստով սատանան քցում ա Ֆանդի, որ հոգին էլ ծանգի,  
 Կը ներկի մեղքով ըռանգ ըռանգի հազար բաբաթ հանգի,  
 Լսի՛ր, ինչ կասէ սուրբ Աւետարանն, որք սիրեն մամոնան,  
 Աստուծոց հեռանան:

Մարդ պիտի լինի ծառայ իմաստուն, ամենայն բանի բուն,  
 Դունապանի պէս միշտ մնայ արթուն, ոչ մտանի քուն,  
 Ոչ զիտէ մահն երբ կը գայ իւր տուն և թէ ո՛ր ժամուն,  
 Են, որք արբենան, չարեաւ զբաղնուն, վերջն լինի մաղբուն,  
 Գայ տէրն ծառային ոյժ տայ անարգան, չար Յուդայի նման,  
 Կորուստն է յաւիտեան:

Ե՛կ թարխն անեմ բան գատաստանի էն ահեղ ատենի,  
 Ո՛վ ոք բանդարեկալք ՚ի բանդից հանի կամ ջուր արբուցանի  
 Քաղցեալն լնու մերկ հագուցանի, էդ հետն կրտանի,  
 Էստուեցով կապի լեզուն խմանի, ինչ վախտ կը հարցանի,  
 Պերթայք յինէն՝ խտոյն վճիռ տան Պեկայք՝ ասէ տայ ձայն,  
 Որդոց արդարութեան:

21.

Աստուած Մովսէսի ձեռքով ուղարկաւ ձեզ համար պատգամ,  
 տիրական ձեռքով ա զրված,  
 Եւ ես մեղաւոր հոգիս կարգել եմ քանիցս անգամ, զրիտտ  
 մարգարիտ է շարված,  
 Յոյս հաւատով ընդունողին՝ ցնծալով աւետիս կը տամ, որ  
 զբախտի դուռն ա բացված,  
 Չեմ զաղարեւ ևս զովելից քանի որ կենդանի ես կամ,  
 արքայութիւնն զարդարված,  
 Թէպէտ ինքս լի եմ մեղօք, հոգւով մորմնով, կը հաւատամ  
 ամեն չարին բերդ ա շինված,  
 Գնծայ Աստուած սիրողն, որ տէրն ինքն էր զրողն, մաքուր և  
 սուրբ էր բերողն  
 Քցել էր երեսին քօղն,

Քոյր ազգն իսրայէլի երկիրպագեցին միակամ, երեսն էք  
 լուսով նկարված:

Մախ՝ տէր Աստուածդ ես եմ, չկայ այլ Աստուած ոչ ով,  
 որ հաւատան նախահարքն,  
 Երկուինջի խօսքն էս ա սիրել Աստուած բոլոր սրտով,  
 կատարվի Աստուծոյ կամքն,  
 Երեքինջին՝ երգում մի՛ կեր անուն սուտին, գնելով, մի՛ պաշտեր  
 արծաթի կուռքն,  
 Չորսինջին՝ որ է կիրակին պարապ կաց էլիր աղօթքով, կատարվեց  
 Աստուծոյ գործքն,  
 Հինգինջին՝ հնազանդ կացիր, ծնողացդ պատիւ տալով, որ  
 աւելանայ քու կեանքն,  
 Տէրն տուել ա հրաման, կապելայ մեր հետն պայման, պէտք ա  
 որ պահենք անխափան  
 Մինչև ՚ի դուռն գերեզման.

Եթէ որ կայնեցիր շարթի, ես էլ կրկին կը խոստանամ, ինես  
 անմահ սեղան նստած:

Վեցինջին՝ մի՛ սպանանիր, խոցոտելով դու ըզմարմին, առնես  
 անէծքն Կայէնի,  
 Օխտինջի խօսքն ա մի՛ շնար, խառնակելով անըզգամին, որ  
 չընկես հուրն գեհենի,  
 Ութինջին՝ մի՛ գողանար, զրկելով աղամայ զարմին, պատիժն  
 որդն ա կենդանի,  
 Իննինջին՝ սուտ մի՛ վկայիր հախ ու նահախ ամեն բանին, սուտն  
 որդի ա սատանայի,  
 Տասնինջին՝ մի՛ ցանկալ ընկերիդ կնոջն կամ թէ ինչ ունի,  
 իսկ քոնն էլ քեզանից ելանի,  
 Տէրն տուել ա մեզ խրատ, պէտք ա հինգն պահենք հաստատ,  
 հնգին հետեւին ա վատ,  
 էլ վերջն չի անես դանգատ,  
 Ինչպէս պատուիրեց աղամին, էնպէս էլ մեզ խրատ ա տամ  
 պէտք ա որ ճշմարիտ կացած:

Մախնի պատուէրն Աստուծոյ տէրն էլ հաստատեց կրկին,  
 հաւատով կամքդ կատարվի,  
 Տվաւ մեզ չորս զլուխ զիրքն ճշմարիտ խօսքերն ա անդին,  
 փրկութիւն էնտով կը ճարվի,  
 Քաղցր ախորժ առաջներով բոլորն գրել ա սարքին, լսողի  
 ախանջին հալվի,

Եթէ իստակ սիրտ ունենաս, միտքով ախանջ արա կարգին,  
 սէրդ էլ հեան կը վառվի  
 Սիրովն միշտ խրատելով, քարքար ա տալիս երեքին, վայ նորան  
 որ կը զարարվի,

Տէրն աե՛ս թէ որքան ա հեզ, արաստունքով մտաւ պարտեզ,  
 չարչարվելով գտել ա մեզ,  
 Պէտք ա մաքուր պահես զու քեզ,  
 Ախար վերջն քեզ կը կանչի, թէ ե՛կ, տեսնեմ ուրախանամ,  
 մախր գործքովդ հագնուած:

Եթէ ճշմարիտ խմանաս, հաւատքըն ա մահալի քար, տէրն  
 մեզ էնպէս ա փորձում,  
 Ինչպէս սուրբ զիրքն էլ վկայի, յոյսն էլ նրան ա ճոհվար,  
 լուս ա տամ շաքաղն ա բացում  
 Տէրն կրկին հաստատում ա, սիրով իլեցէք եղբայր, նոր օրէնքին  
 հիմ ա քցում,

Սողոսն էլ միշտ քարոզում ա, գործքով են էտուելք կենարար,  
 ահա՛ տալիս եմ իմացում,  
 Էն ահեղ վերջի առնին, մայր անարատ ծնօղ բանին, խղճիր  
 բոլոր բանդիվանին,  
 Եւ ողորմելի իվանին,

Եթէ դժօխքից սղատվեմ, ճշմարիտ քեզնից կիմանամ, գու  
 ես ինձ պսակ բոլորված:

22.

Ե Ինքնակալ, օգոստափառ իսկ զօրեղ կայսրը ես առատ,  
 Բարձր հզօր բաղկաւրդ յաղթող թագաւոր ես առատ:

Ճառագայթեալ արեղակ, պայծառ լուսաւոր ես առատ  
 Անպարտելի զօրութեամբ մեզ հովանաւոր ես առատ,  
 Քաղցրահայեաց զթու թեամբ, զթած, բարերար ես առատ  
 Հայրախնամ ախաշութեամբ, միշտ խնամարար ես առատ,  
 Հպատակ ազգ եւ ազանց իսկ երախտաւոր ես առատ,  
 Քո բոլոր ենթակայից արթուն ակնարար ես առատ,  
 Ի մէջ բոլոր կայսերաց անյաղթ հաշտարար ես առատ:

Սիկօլայ Պավլովիչդ Աստուած ընդ քեզ իսկ տեսնես,  
 Սերորէք ու քերորէք մինխտիրքն նշանակին,  
 Երկոտասան սէնատորք առաքելոց կը նմանեն,  
 Ճշմարիտ արդարապէս իսկ եւ ուղիղ զիվան կանեն,  
 Զօրքըդ իսկ նման դասուց պաշտեն գքեզ փառաբանեն,  
 Առ հասարակ ժողովուրդ կայսերիդ երկիրպազանեն,  
 Ողորմած կայսրը գոլով իսկ համայնից տէր ես առատ:

Սիկօլայ Պավլովիչդ պայծառացեալ իբրև արև,  
 Գերազանց քան դամենայն կայսերաց ես լոյս ակներև,  
 Անյաղթելի զօրութիւն ամպ հովանի արծուաթև,  
 Գեղեցիկ հիմնաւորեալ մահակով փայտաղբ բարեձև,  
 Երջի սուրբ հրամանդ առ ընդհանուր ազգս պարգև,  
 Զօրապետք եւ զանդք զօրաց գերազանցեալ անձինք պարթև  
 Փառաւորեալ զօրութիւն լուսափայլ զամբար ես առատ:

Սիկօլայ Պավլովիչդ, քաղցր, առատ, տէր, ողորմած,  
 Սարսափին միշտ զողալով չար թշնամիք, քօլ արարած,  
 Չեռամբդ տիրապետես ծով ու ցամաք լայնատարած,  
 Կալ մնալ միշտ անսասան հայցիք Ի տէր բաղկատարած  
 Ազգէ ազգ որդուց որդի հաստատ կացցես մինչ կատարած,  
 Անթառամ սուրբ պսակին արժանացո՛ սորան, Աստուած,  
 Ստեղծող տէրդ գոլով օգնութեան հնար ես առատ:

Պետերբուրգ կայսերանիտ անդ է զիվան ու դատաստան  
 Երկիրն յոյժ բարելի, աղբիւր, գետեր, ոսկու մադան,  
 Ընթանան անթիւ նաւեր Նեզիլդ, Շվէտ, Ֆրանգաստան,

Քուխարա և Օսմանցին Պարսից երկիրն Հնդաստան,  
Չինիմաչինի հետն ապրանք առնեն և ապրանք տան,  
Յանկայի քօլ աշխարհքիս գովեն Նիժնայի եարմարկան,  
Բոլոր վաճառականաց արձակ ճանապարհ ես առատ:

Արևելից արևմուտք, հիւսիսի կողմն և հարաւ  
Վերջացան քօլ թշնամիք ջնջելով առաւ, զարգարաւ  
Պատուական եպիսկոպոսք բաժանել ես թարաֆ, թարաֆ,  
Սարքել ես գուբերնեաներ, իշխող են գեներալ գրաֆ,  
Ապահով ակնարկութեամբ հովուել անսխալ, անխաֆ.  
Գեղեցիկ առուտուրով քօլ քաղաքումն կայ սառաֆ,  
Հովուապետ տէրդ գոլով, իսկ օրինատէր ես առատ:

Գեղեցիկ տէրութիւնդ յատկապէս դրախտի նման,  
Բոլորն աստիճանով կարգել ես ինչպէս նարդիվան,  
Հաւասար քօլ քաղաքում գերծալ բացած կանեն զիվան  
Ամեն տեղ մանկանց համար հաստատել ես ուսումնարան,  
Անտէր, անձար հիւանդին իսկ շինել ես բժշկարան,  
Ամենայն գեղ ու քաղաք կարգել ես անքուն պահապան,  
Պարիսպ ես անքակտելի, զթաճ, ազգասէր ես առատ:

Անյաղթելի զօրութեամբ տիրապետար լեհաստանն,  
Ահեղ հզօր բազկաւրդ յաղթար Օսմանցու Սուլթանն,  
Ոչ կարաց ընդդէմ կենալ, հարկ տվեց, կապեց պայմանն  
Իսկապէս տիրապետար բոլոր երկիր վրաստանն,  
Անպատմելի հնարիւ իսկօյն առար երևանն,  
Լսելով սարսափեցան իւր կողմերով քօլ Իրանն,  
Անպատմելի զօրութեամբ մշտապէս գէնհար ես առատ:

Իսկ հմուտ արուեստագէտք, ճարտար զխուռնք անհամար,  
Պիտանի ազգ և ազանց բոլոր աշխարհքն զարհուրար,  
Յաղթեցիր քօլ թշնամիդ, քաշար սուրն, առար աւար,  
Քանդար բերդ ու քարերն, բացար լէն, արձակ ճանապարհ,  
Եջմիածին տաճարիս Լուսաւորչի ազգի համար,

Մագեալ իբրն արեգակ ճառագայթ լուսոյ կամար,  
Իվանին ազգիս հայոց Փրկիչ կենարար ես առատ:

23.

Սերովբէք Քերովբէք դասք հրեշտակաց  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի,  
Ժողովքն արդարոց մաքուր կուսանաց,  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Եօթն անուն շնորհօք սուրբ կարապետն,  
Ցանկերիւ առաքեալք օրինադէտն,  
Յիսուս Սամարացի մեծ վարդապետն  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Սուրբ Ստեփաննոս մեծ սարկաւազն,  
Աբգարին ընծայված սուրբ դաստառակն,  
Բոլոր ուխտատեղեաց սուրբ պատարազն,  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Աստուածային գրած սուրբ պատուիրանն,  
Հայր Աբրահամու, օրհնեալ սեղանն,  
Քրիստոսի մաքուր լոյս գերեզմանն,  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Որ վասն մեր զենաւ Աստուծոյ գառն,  
Քրիստոսի կապված սուրբ օրհնեալ ծառն,  
Աստուածային օրհնութեան բարբառն,  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Ղրախտիցն բղխած էն չորս յառաջն  
Սուրբ Գրիգորի պատուական աջն  
Քրիստոսի արիւնաներկ սուրբ խաչն  
Ականջ դնողներին օգնական իլի, պահապան իլի:

Բոլոր ուխտատեղիք սուրբ Եջմիածին,

Փրկիչն աշխարհի Յիսուս միածին,  
Ի վանն խնդրում ա սուրբ Աստուածածին,  
Ականջ զնորներին օգնական լիլի, պահապան լիլի:

24. (\*)

Ընկալայ գովասանքդ անկեղծ սէրդ որդիական,  
Յարութիւն որդի կոչեմ, տամ օրհնութիւն քեզ հայրական  
Յնծարով զուարճացայ իսկ բանից գովասանական,  
Հաստատ սիրելութիւնն է ըստ հրամանի տէրունական  
Սէրն է իսկ գովելի որպէս լոյս արեգական:

Հայցեմ տէրն տացէ քեզ սուրբ շնորհն առատապէս,  
Լցուցէ իմաստութեամբ երկար կենօք բարեա պէսպէս,  
Կալ մնալ միշտ յաջողակ, հաստատ անշարժ իսկ մշտապէս,  
Առնես սրտից խորհուրդն հոգևով մարմնով ձշմարտապէս  
Աստուծոյ սուրբ կամօքն կեանք ապահով վայելչական:

Երկիւղած ես Աստուծոյ բանական զիտուն հանձարեղ,  
Լցեալ ես իսկ սուրբ հոգևով, զոր տէրն 'ի վերուստ եհեղ,  
Բղխեալ աղբիւր անուշակ, բարբառդ է քաղցր և համեղ,  
Լսողներն գովում են, թարիֆ են անում ամեն տեղ  
Ճշմարիտ և իսկապէս իսկ սէրդ բարեկամական:

Ժողովքն բոլոր սրբոց միշտ եղիցի քեզ պահապան,  
Առաքեալք և մարգարէք, զօրք հրեղէնք համանգաձայն  
Մարտիրոսք և ձգնաւորք, սուրբ հայրապետքն ամենայն  
Տիրամայր Աստուածածին, նորա աղօթքն մայրութեան  
Ղենի քեզ իբրև պարխալ կենարար խաչն փրկչական:

(\*) Այս երգը ասել է հանդուցեալ Իվանը իբրև պատուփան Յարութիւնի (աշուղի անունը Զահիլ Օղլան) գովասանական երգին, տես նորա երգերում համար 14: Պիտի նկատել որ մեր աշուղքը մի սր և իցէ անմին գովելիս, անցել են բան զպախազանցութիւնը: Աստուածամոր հայ ժողովուրդի մէջ երևում է այս (ե՞ծ է կարելի է այսպէս անուանել) ախտը ընդհանրապէս: Յ. Փ.

Օրհնութիւն Աստուածային, զոր ետ տէրն Աբրահամին,  
Իբրև աւաղ և աստեղք հաստատութիւն նրա զարմին,  
Տացէ քեզ բարի զուտի տէրն փառաց նման նմին,  
Սիրելիք և բարեկամք ինչ վախտ լեք, ասէք ամին,  
Խնդիրն խեղճ Իվանի լինի առ Տէր հաճոյական:

25.

Ո՛վ ստեղծող տէր բարերար, արեւ ես մեզի ումուղվար,  
Երկնքումն քաղաք շինար, արքայութիւն անուն զբար,  
Անգին քարով հիմքն քցար, ետղութ, զումբուրութ, լալ ու զոհար  
Մարութ ոսկեով պարխապն արար, պայծառ լուսով զառ վարազար  
Երկտասան դուռն բացար, մարգարիտ դուռներ կախար,  
Գիշեր ցերեկ լոյս ա լուսով, միջին լիքն ա մարութ կուսով,  
Իսկ մեք էլ խնդրում ենք յուսով արդարոց իլինք բարէբար:

Արի՛ զնանք արքայութիւն, չորս կողմն լիքն ա բարութիւն,  
Ինչ վախտ որ կիլնի յարութիւն, կործանվի ամեն շարութիւն,  
Տէր, ե՛կ մեզի տուր զօրութիւն, սուրբ և անարատ մարութիւն,  
Խնդրեմք 'ի քէն երրորդութիւն, արժան արա զանք տեսութիւն,  
Առանց քեզ տէր, ես ի՞նչ անեմ, մեզքի միջին բանդկական եմ,  
Թէ մեզքով հողիս կըսպանեմ, դու ես ինձի տէր կենարար:

Արքայութիւնն ինիլի ծառ ա, վարդ, ըռահան սուսամբար ա,  
Չորս կողմն մուշի ու ամպար ա, անուշահոտ նունուխար ա,  
Ծաղկունքներն հոգուս ձար ա, սիրտս սիրով սրահար ա,  
Միջին նստած արդար զառ ա, օխտը ձրագ կողքին վառ ա,  
Եկէ՛ք սրա լուսով զնանք, մի՛ կարծէք թէ ձամբին մնանք,  
Լալով թախինք դուռն բանանք, ներսը տար մեզ տէ՛ր ու բախարար:

Քօլ աշխարհիս բաղչա բաղն, զարգարված տունն օթալն,  
Արեգակի լուսին, աստեղն ոչ գոյ նրան նմանողն,  
Հայր և որդի լոյս ծագողն, սուրբ հոգին միսթարողն,  
Հրեղէնքն փառք երգողն, մարգարէք երկիրպագողն,

ժողովք սրբոց ու բախանան, ըմպեն ջուրն անմահական,  
Յնձութեամբ խնդան անվախճան, օրհնեն Աստուած միշտ անդադար՝

Հրեշտակաց ինն դասէն, փառք պատիւ երգելով կասեն,  
Մեղաւոր հոգիք կը սարսեն, արդարոց մէջից կը պախսեն,  
Խնդրենք Աստուածածին կուսէն, ամենայն սուրբք բարեխօսեն,  
Արդար հոգիքն կապասեն, արի՛ փեսայդ անմահ լսեն,  
Մենք էլ ասենք միաբերան արի՛ Աստուածորդի և բան,  
Լալով խնդրէ 'իքէն իվան, ինձ էլ ամպի վրէն զի՛ր, տա՛ր:

26. (\*)

Փառք և պատիւ նախ Աստուծոյ մատուցանեմք, աղա՛ Դանէլ,  
Բազմեալ աթոռ սերովքէից փառաբանեմք, աղա՛ Դանէլ,  
Զօրք հրեղէնք մէք ընդ նոսին օրհնաբանեմք, աղա՛ Դանէլ,  
Նա արարիչ, մէք հողեղէնք, հայր անուանեմք, աղա՛ Դանէլ,  
Սիրտ կայսերաց ձեռս նորին իսկ տեսանեմք, աղա՛ Դանէլ:

Թագաւոր Թագաւորաց և տէր տէրանց է համօրէն,  
Իսկ համայն արարածոց տուել ա պատուիրանք օրէն,  
Նիկոլայ Պալլովիչին հաստատել ա իւր փոխարէն,  
Կառավարեչ աշխարհի տէր և հովիւ առատօրէն,  
Նորին մեծ կայսերութեան միշտ խոնարհ եմք, աղա՛ Դանէլ:

Նիկոլայ Պալլովիչն հայր է զթած և բարերար,  
'ի վերայ ազգիս հայոց ծագեալ արև, լոյս և կամար,  
Տէր պահեսցէ հաստատուն որդւոց որդի միշտ վարդարար,  
'ի մէջ բոլոր կայսերաց հզօր բազկաւն փրկարար,  
Կալ մնալ միշտ անսասան առ տէր հայցեմք, աղա՛ Դանէլ:

(\*) Այս երգը ասել է հանդուցեալ Իվանը Աստրախանի հայ հասարակու-  
թեան առանձնաշնորհութիւն տոանալիս 1848 մայսի 30-ն: Դորա զխաւոր  
պատճառն է եղել աղա Գրիգոր Դանիէլեան Սարգսեանցը. այդ երգի մէջ մեր  
յիշումենք հին առածը „աղջիկ քեզ կասեմ, հարսիկ զուն լսիր“, երգը ուղ-  
ղած է աղա Դանիէլին, բայց զովութիւնը տուած է աղա Գրիգորին. սա էլ  
մի կենսօճայութեան եղանակն է եղել այդ ժամանակի: Գ. Փ.

Թագաւոր քաղցր առատ հայր խնամող համայն ազգին,  
Պահպանիչ շատ շատ ազինք ընդ հովանեալ դրօշակին,  
Պրիվիլեգիան հայրական նորազարդ ետ մեզ կրկին,  
Պաշտելի ողորմութիւն շնորհ բարի պարզև անգին,  
Նորին ողորմութիւնն այսօր տօնեմք, աղա՛ Դանէլ:

Միջնորդէր մեծն Մովսէս առ Աստուած Խրայէլին,  
Նոյն նման միջնորդ իշար վասն ազգիլ՝ ինքնակալին,  
Ընկալար ողորմութիւն շնորհ բարի ոյժ լիովին,  
Հարուստ տնանկ և ալքատ ուրախացան բոլորովին,  
Տացէ տէր սէր միաբան, միշտ վայելեմք, աղա՛ Դանէլ:

Հարազատ որդիլ քոյին աղա Գրիգոր Դանիէլիչ,  
Բարերար երախտաւոր իսկ եղև մեզ մխիթարիչ,  
Երկմիտ, տխուր սրտներս ցնձութեամբ փառաւորիչ,  
Տօ՛ւր սմա երկար կեանս, հայցեմք իքէն տէր մեր փրկիչ,  
Նորին իսկ պայծառ կենաց բարեխօսեմք, աղա՛ Դանէլ:

Փրկիչն ազգի համար ինչպէս կատարեց հօր կամբքն,  
Կամաւոր և հնազանդ յանձն առաւ չարչարանքն,  
Նոյն նման որդիլ քոյին կատարեց քո՛ հրամանքն,  
Կամաւոր հետեւելով բարձրացրուց ազգի փառքն,  
Նորա խոնարհութիւնն զովաբանեմք, աղա՛ Դանէլ:

Իսկ և ունի յիշատակ եկեղեցի լուսաւորչին \*)  
Նոյն նման այս երախտիք գերազանցէ քանս ողջին,  
Դանձ է յերկինս զրեալ 'ի դպրութեան կենաց միջին,

\*) Լուսաւորչի անունով եկեղեցին շինված է Ս. Պողոս և Պետրոս Առա-  
քեցոց եկեղեցոյ սրահում, և համարվում է իբրև ձմրան եկեղեցի, որովհետև  
առաջինը շատ մեծ է և առանց վառարանի (սեր եկեղեցիքը համարեա ամենը  
ունեն այս պակասութիւնը) Օծված է Գեկտմերիի 19-ն 1843 թուի Սերովոէ  
արք եպիսկոպոսի ձեռամբ: Ասում են որ միայն Սարգսեանցի արգիւնքով  
է շինվել այդ, այլ հանդուցեալ Լալայեանցից ևս մի զուար մնացած է եղել  
այդ նպատակի համար թէ որքան ճշմարիտ է, մենք չենք երաշխաւորվում,  
զրոււմենք այն ինչ որ հաւանական լուծենք Յ. Փ.

Հայցեմք տէրն հատուցէ 'ի գալստեան օրն վերջին,  
Ձեզ և մեզ սուրբ պատկին ակն ունեմք, աղա՛ Գանէլ:

Խնդրեմք 'ի տեառնէ, տացէ նմա բարօրութիւն,  
Բոլոր զարմ ու զաւակով սէր միաբան հաստատութիւն,  
Հաւասար ամենեցուն եղև փառաւորութիւն,  
Օգնութեամբն Աստուծոյ արաւ մեզ բարերարութիւն,  
Յիշատակ անջնջելի միշտ յիշող եմք, աղա՛ Գանէլ:

Վասն կենաց իշխանիդ Հայցեմք 'ի տէր միշտ անխաբան,  
Ազգէ ազգ, որդւոց որդի հաստատ պահեա՛ տէր անասան,  
Տէրն լինի վարձահատու աստ մարմնով լւր տեսութեան,  
Առ հասարակ ժողովուրդք ասէք ամէն միաբերան,  
Մէք չենք կարող փոխարէնն հատուցանեմք, աղա՛ Գանէլ:

Իսկ տէրն հրամայէ, մարդն երախտիք իմանայ,  
Յիշելով որդւոց որդի լաւութիւնն չի մոռանայ,  
Յիշատակն անջնջելի, շատ գովելի բարի բան ա,  
Գովասանքս ասողն ձեզ աղօթարար իվան ա,  
Պատուելի աղայութեանդ միշտ ծառայ եմք, աղա՛ Գանէլ:

28.

Սրտիս դարդերիցն դու խաբար չունես,  
Աշխարհիս մէջիցն ծնածն կորաւ,  
Թէ Սողոմոն իմաստունիցն հարցանես,  
Երանի՛ մեռնողին, ծնածն կորաւ:

Աշխարհս եկաւ ինկաւ Ֆիլքր ու դարդերին,  
Ըռաստ եկաւ չար սատանի Փանդերին,  
Վա՛յ պատեալա ինձ պէս խեղճ ու անտէրին,  
Օրէնք պատուիրանքով առածն կորաւ:

Պահապան հրեշտակն միշտ ա՛խ ա քաշում 1)  
Հողիս էս չարչարանքն նահախ ա քաշում,

1) Հենրն աւանդել են (և մինչև այժմ իսկ տեսուէ) որ խրաբանքիք

Մարմնս մահիցն միշտ վախ ա քաշում,  
Աւազանի միջից հագածն կորաւ:

Խեղճ՝ իվանի լեզուն վերջն կը լալվի,  
Չար գործերն հանդէպումն կը շարվի,  
Թէ ողորմես, փրկիչ, խկոյն կը հալվի,  
Էլ չեմ ասել կրկին մեռածն կորաւ:

Չահիլ-Օղլանի երգերը:

1.

Ե՛կ մուրվաթ արա, բէբաֆա զիլբար,  
Հերի՛ք չէ, ինձ էշխիդ դարդն չարչարի,  
Մահամ քեզ յայտնի չէ՞, ես ինչ եմ քաշում  
Ինչպէս որ բիւբիւլին վարդն չարչարի:

Մուրվաթ արա՛, մին տե՛ս իմ քաշած հալս,  
Գիշեր ցերեկ էշխիդ արիւն ողբալս,  
Ամեն սօնա բօյիդ իմ մտքին գալս,  
Մեր արած իղրարին շարթն չարչարի:

Գովասանքդ կանեմ, քանի կենդան եմ,  
Ե՛կ մուրվաթ արա, ես էլ մին ջան եմ,  
Ղուլ խօժ չէլամ, ես մին Չահիլ-Օղլան եմ,  
Քաղցր խօսքըդ սրտիս դառն չարչարի:

2.

Ամեն ժամ դարդ կանեմ, դարդս շատացաւ  
Բիւբիւլի պէս կէրվեմ խարի ձեռիցն,  
Օրս խափանվեցաւ, հալս վատացաւ,  
Ի՛նչպէս անեմ զուլումբարի ձեռիցն:

մարդ իւր բարի և չար հրեշտակներն ունի, առաջինը աջ ուսի, իսկ երկրորդը ձախի վերայ, եթէ նա որևիցէ լաւ բան գործու՞մէ, բարի հրեշտակն է ուրախանում, իսկ չարը տրտմում, իսկ եթէ վատ, ընդ հակառակն: Յ. Փ.

Կեանքս փուշի հանեց, օրրս վատ իլաւ,  
Սիրելի նազանիս ինձմէն ետդ իլաւ,  
Ռազուբին մօտացաւ չում որ ինձի ետդ իլաւ,  
Կէսաջան եմ դարդ ու սարի ձեռիցն:

Վախեմ էս դարդերն ինձի սպանի,  
Օր ըստ օրէ էշխէդ եկամ ամանի,  
Սիրելի՛ եար, էրվամ սէրդ նմանի,  
Գիշեր ցերեկ զազար դաւի ձեռիցն:

Ինձ քեզնէն ջոկողն՝ ջոկվի դրախտէն,  
Անդադար դատ կանեմ ես իմ քօռ բաղդէն,  
Էն Ջահիլ-Օղլանն եմ փստիկուց վախտէն  
Էրվամ մեր շարթ ու իղբարի ձեռիցն:

3.

Ոսկի արծաթ ես դու գիւլաբաթուն զարի պէս  
Փայլում ա պատկերդ շամշ ու դամարի պէս:

Քու չաղմա ունքերդ կապած կամարի պէս,  
Էդ նախշուն աչքերդ խումար խումարի պէս,  
Բերնիդ մօտի խալն դամղա ետդութ քարի պէս,  
Խելքով կատարեալ ես Խիկար իմաստունի պէս,  
Աշխարհումն չկայ քեզ բարէքարի պէս:

Մարդի սիրտն շահի՛ր, աշխարհի բարութիւն ա  
Ինչ որ ասեմ, լսի՛ր, քեզ խոնարհութիւն ա,  
Մին պաօշտի անենք զատիկ յարութիւն ա  
Զի տեսնելդ ինձ մեծ տկարութիւն ա,  
Գու մին մօտս արի, անմահական ճարի պէս:

Ամեն քու տեսնելդ ինձ համար դովլաթ ա,  
Քու խօշ ըխթիլաթն համ սաղ ու սովբաթ ա:

Պաօշներդ ծծեմ, ինձ համար շարբաթ ա,  
Փուռդա բաղամ մէկ նուշ նողուլ նաբաթ ա,  
Լեզուդ համեղ քաղցր դանդու շաքարի պէս:

Քաղցրախօսիկ ես դու աղունակի նման,  
Կուզես հոգիս առնես հրեշտակի նման,  
Հարդամ սիրտս էրվեց պէճ կրակի նման,  
Գլուխս քեզ դուրբան էն Սահակի նման,  
Գրիստ խօսք եմ ասում շարթ ու իղբարի պէս:

Ջահիլ-Օղլան կասեն, եար, քեզի դուտաղ ա,  
Էդ քու ծոցի մէջն գիւլ գիւլան բաղ ա,  
Ծաղկեալ կանաչ տերե բիւլբուլի ետիրաղ ա,  
Նարինջ թուրինջներդ դարչին քաղված ջաղ ա,  
Գու մին սալբու ծառ ես, բոյդ չինարի պէս:

4.

Մօրից իլայ ես բաղդաւոր, Անցեալ օրս չեմ մոռանում,  
Այժմ բաղդն քօռացել ա, Արտասունքս չի չորանում,  
Նմանակ տամ կանաչ ծառին, Ղամն ինձնէն չի հեռանում,  
Տերեւներս չորացել ա: Յաւն ինձ հետ սէրացել ա:

Գիտեմ, կրգայ մին հոգեհան,  
Չեմ քթանալ ճարի գուման,  
Թէպէտ կասեն Ջահիլ-Օղլան,  
Ապա հիմիկ ծերացել ա:

5.

Եարար ես քեզ ինչ տեղ տեսայ Մրտիս մէջն կրակ վառար  
Որ դու ինձ պատահար, գիլբար Գիշեր ցերեկ չունեմ զարար,  
Խելքս տարար, քաղցր լեզուով, Մինչև էս օր ալգալ արար,  
Մայիլ իլամ խալիդ, դիլբար: Քաղցրահամ շամամով, գիլբար:

Վարդը բիւրբիւլի համար ա, Չահիլ-Օղլան կանեմ նարա  
 Քեզ պէս շուխ եար մեզ համար ա Արի՛ դու ինձ մուրվաթ արա,  
 Սուսան, սուսուլ, նուսուֆար ա Տա՛ր դրանդ շինիր ծառայ  
 Էդ քու ծոցիդ մէջն, դիւբար: Մինչև մահս իլնեմ, դիւբար:

6.

Տղէն ասաւ աշխարհումս Աղջկն ասաւ միտքդ բարի,  
 Իմ սիրական եարն դու ես, Քաղցր ես նման շաքարի,  
 Անուշ հոտով խելքս տարար Քեզ դուլ իլնեմ օխտը տարի,  
 Արդար խնկի ծառն դու ես: Չու՛մ իմ սիթամքարն դու ես:

Աղջկն ասաւ ծուռ մի՛ խօսիլ Տղէն ասաւ աշքերդ վառ,  
 Յատուկ իմ դիւբարն դու ես, Բոյով բացվել ես նունի ծառ,  
 Քարեղէնի մէջն ջոկած, Ուր որ գնաս ինձ քեզ հետ տա՛ր,  
 Անգին եաղութ քարն դու ես: Աբրահամայ զառն դու ես:

Տղէն ասաւ շատ անուշ ես, Աղջկն ասաւ զուլուղդ անեմ,  
 Լեզուովդ մին թութի դուշ ես, Եշխէդ ինքս ինձ կրսպանեմ,  
 Շաքար նարաթ քաղցր նուշ ես, Գլուխս քեզ դուրբան կանեմ,  
 Սրտիս բարէբարն դու ես: Սրտիս բարեբարն դու ես:

Աղջկն ասաւ մօտ չես դալի, Քեզ դուլ ա Չահիլ-Օղլանն,  
 Մի՛ մնացիր ծուռ խիալի, Դու ես գեօղաների խանն,  
 Չո՛ւմ չես ուզում բարով տալի, Էդ քու մաքուր արդար ջանն,  
 Իմ քաղցր շաքարն դու ես: Անմահական ճարն դու ես:

Տղէն ասաւ շաքար նարաթ Ոսկի քամարս չեմ կապել,  
 Գեղեցիկ ես ամեն բաբաթ, Արիւն արտասունք եմ թափել,  
 Պաօշներդ քաղցր նարաթ, Մինչև էս օր քեզ չեմ խափել,  
 Գլխիս ըխտիարն դու ես: Մինչ մահս իմ եարն դու ես:

7:

Բարովդ ինձնից կտրել ես, Աշխարհումս քեզնից աւել  
 Բարիշելու ճար չունեմ, Ըխտիբարլու եար չունեմ:

Նոր գիւլտանումդ բացուած Կարդում ես թութի դուշի պէս,  
 Վարդ մանուշակ սուսան ես, Քաղցր ձայնով աննման,  
 Ինչո՞վ աղիս խաթրդ շահեմ, Էդպէս գեղեցիկ որ դու ես,  
 Սօտիդ ըխտիբար չունեմ: Քեզի բարէբար չունեմ:

Նահախ տեղէն չո՞ւմ ես լայում Կամում ես Չահիլ-Օղլանին  
 Սիրտդ տխուր մի՛ անիր, Քո ձեռնովդ սպանել,  
 Լսեցի քո արարմունքն, Թէք մին բերան ինձ հետ խօսի՛ր,  
 Մեռամ, ըխտիբար չունեմ: Ուրիշ ահուգար չունեմ:

8.

Վերայ աշխարհումս գեօղալ նազանի,  
 Ամենայն օր վայ եմ կանչում, հալս տե՛ս,  
 Սարսարի եմ դառել էշխիդ սէրիցն,  
 Գիշեր ցերեկ արտասովում եմ, լայս տե՛ս:

Ինձնէն մի՛ հեռանալ, կը սիրես Տէրն,  
 Առանց էն սպանում ա ինձի քո սէրն,  
 Աւարայի եկան շատ իմ պէսներն,  
 Թախիթ մինն էլ ես եմ, եա՛ր խիալս տե՛ս:

Ո՛ւր ա քեզ հետ կապած շարթ ու իղբարն  
 Հողն էլաւ ինձ ջոկվաւ, իմ քաղցր եարն,  
 Շաղախվել եմ մաքով, չե՛մ քթնում ճարն,  
 Իրաւ դու ես ճարս, եա՛ր, ահվալս տե՛ս:

Նորից էլի կամենո՞ւմ ես ինձ զագես,  
 Նահախ տեղ ինձի կենդանի թաղես,  
 Երբ տեսայ գիւլանդ, մէկ ծաղիլեալ բաղ ես  
 Սիրոյդ հոտից մեռամ, արդու հալս տես:

Մակամ մեր իղբարն է՞դ էր՝ հեռանաս,  
 Ինձի մոռացած եալին սէրանաս,

Անճար Չահիլ-Օղլանից վերանաս,  
Նոր զուսամարկ իլամ, քու իղբալս տե'ս:

9.

Իմ սիրելի դիւրար, հերիք ինձ առեա,  
Մոլորվել եմ, զլիսիս եկել ա ազար,  
Էշխոք սրտիս ա վառ:

Վառ ա սրտիս էշխոք հուր կրակի պէս,  
Էլի ինքդ հանդուր, արա' ինձ մին ճար,  
Է՛յ նովջիվան եար:

Եար ես եթէ ինձ էս նասաղն չո՞ւմ ա,  
Բարով քաշես զխոնաս ի՞նչպէս զուլում ա,  
Քար չե՞մ խօ ինսան եմ, ինձ էլ թվում ա,  
Ոչ մեռած, ոչ կենդան, կիսամեռ թողար,  
Ինչպէս մին օտար:

Օտարի պէս մտիկ տալդ խիտ վա՛տ ա,  
Գիտես խօ քո ջահրէն կեանքս բարբաթ ա,  
Քո հաւատար զուլն եմ, Աստուծոյ հաւատա՛մ  
Նահախ մէջլումի պէս մի՛ տար քարէքար,  
Անմեղ, անպատճառ:

Անպատճառ ինձնից մի՛ երկարացիր,  
Խղճ'իր ինձ զարիբ եմ, հետս սէր կացիր,  
Սրդ անեմ դարդերս, ողջ տեղեկացիր,  
Գիտացիր որ ես եմ քեզ զուլ հաւատար,  
Մի՛ թողնիլ անճար:

Անճար մի՛ թող ինձի, մէկ ըռահմ արա՛,  
Չահիլ-Օղլանն եմ քեզ մինչև մահ ծառայ,  
Քու սէրի ճամբումն ինձ մատաղ արա՛,

Քու ձեռնովն մորթի՛ր ինձ ինչպէս ոչխար,  
Շատ չի անեմ զար:

10.

Ձէյրան ես, ման կրգաս բազերի մէջին,  
Չեմ տեսնիլ պատկերդ, էդ ի՞նչ զատ ես դու,  
Մօտդ գալ չեմ կարում, խելքս տանում ես,  
Էշխոցդ ջուռուն եմ, ի՞նչ զրատ ես դու:

Խելքով կատարեալ ես Սողամնիցն,  
Թափուզի պէս դուս ես զալի տունիցն,  
Աստուած սիրես, ինձ մի՛ ջոկիլ քեզնիցն,  
Էդ գեղեցիկութեամբդ հրեղէն ես դու:

Քեզ մին զուլ եմ դառել ես օխտը տարի,  
Սիրելի օրերդ անցկենայ բարի,  
Քեզ նման գեղեցիկ վերայ աշխարհի  
Չիլնիլ բարեբաղդ, ի՞նչ ինսան ես դու:

Գեղեցիկներումն չի լինում թայրդ,  
Արքայութեան մէջին պատրաստ ա փայլդ,  
Պատրաստած սեղանդ զաջայ ու չայրդ,  
Կամում ես ինձ դուռնիդ գութաղ անես դու:

Չահիլ-Օղլանն քեզ դառել ա ծառայ,  
Մին բերան չես խօսում, քու սիրտդ քա՞ր ա,  
Շովղդ շամ չըողի նման պայծառ ա,  
Էդ ջազաներովդ ինձ կուսպանես դու:

11.

Էրված սրտիս մէջ դու մեծ ահուզար ես, բանովչայ  
Իմ քօլ ցաւերիս հէքիմ ու գեղ ճար ես, բանովչայ,  
Հիրիբ ա, էդպէս նահախ ինձ չարչարես, բանովչայ,  
Էշխոք կրակով էրված սիրտս վառես, բանովչայ,

Հէնց գիտում եմ դու ինձ բարերար ես, բանովչայ:

Կայնաճ զարար ես մարդու, էշխէդ խելքս շողախ ա,  
Դիվանայ արիր մէջուովի պէս մաքանս դաղ ա,  
Ե՛կ մուրվաթ արա, մին խօսիր իմ հետս, մին խաղա՛,  
Ծոցդ զիւրի զիւրան ա, բիւրբիւնների ետթաղ ա,  
Մէկ հոտ առնեմ, դրախտի բարէբար ես, բանովչայ:

Միշտ պայծառ իլնես, Ստեղծողէն կեանքդ երկար,  
Թարխֆդ կինկնի աշխարհ օրբէօր, տարբէ տարի,  
Էլած ա մէկ Յովսէփի գեղեցիկ վերայ աշխարհի,  
Բալքայ նա կիլնէր գեղեցկութեամբ քեզ բարէբարի,  
Բայց այժմուս չ՛կայ թայլդ, անյարմար ես, բանովչայ:

Թոյվայ նիկար ես փուչ անցաւոր աշխարհիս վերայ,  
Ֆիքր ու զուսայէն նամուս առէն կենդանի մեռայ,  
Ել զարար չունեմ գիշեր ցերեկ, էդ ի՞նչպէս սէր ա,  
Ճամփիդ մանդալով յատուկ քաղցր ջանէս բէզարայ,  
Մուրվաթ չես անում, մահամ սրտով քա՛ր ես, բանովչայ:

Էշխիք ազարն գիշեր ցերեկ սրտումս վառ ա,  
Ա՛խ, վա՛յ քաշելէս զիբուն սիրտս դառել ա եարայ,  
Սարգարդան մնացի դռանդ մին խեղճ բէչարայ,  
Ջահիլ - Օղլանն եմ հաւատարիմ քեզ զուլ ու ծառայ,  
Դոնմիշ չեմ իլնիր իմ արած իղրարէս, բանովչայ:

12.

Թէ հաստատ ես եար ինձի,

Արա՛ ումուղվար ինձի:

Հէ՞ր սիրտս քու սիրուն խրիդտար իլնի,

Որ շուտ մոռացար ինձի,

Արիւն արտասուքս միշտ վարար իլնի,

Անմեղ չարչարար ինձի:

Կասես թո՛ղ Քեարամին <sup>1)</sup> բարէբար իլնի,  
Ասլի խան <sup>2)</sup> դառար ինձի,

Բաղմացեալ դարդերս անհամար իլնի,  
Խօփ ջունուն արար ինձի,

Սար ու ձոր տուար ինձ ճանսպարհ իլնի,  
Էդ արժան արար ինձի:

Արել ես ինձ աւարայ,

Ե՛կ, ինձ մին բռահմ արա՛,

Սէրդ սրտումս վառ ա,

Էրաւ զուրգուր վառ ինձի:

Եար եմ ասել քեզի, քանի կենդան եմ  
Ես ՚ի վերայ աշխարհի,

Մին հառայիս հասիր հալ փարիչան եմ,  
Միննաթ եմ ինկել ճարի,

Ճամփիդ մտիկ տալով ես կիսաջանեմ,

Աչքս ջուր դառաւ, արի՛,

Մլածաղի ճոցիցդ թո՛ղ մին հոտ անեմ,  
Վարդ ուհան սուսամբարի,

Թէ արժան կանես ինձ՝ իցէ ճար լինի,

Հերիք ա էբար ինձի:

Շատ աշուղք սիրտ կու դաղեն,

Լոյս պատկերիդ մուշտաղ են,

Քու անմահական բաղէն

Ե՛կ նուռն տո՛ւր, նուկբար ինձի:

Ռաստեկամ, հանդիպար, խելքս շողախար,  
Մալուր մուշկուլ թողար ինձի,

1) Քեարամին արևելեան առասպելներից մեկի մէջ պատմումէ իբրև առաջին հերոսը այդ առասպելի, որ շատ հայաբնակ տեղերում յայտնի է մանաւանդ Տաճկաստանի մէջ, ուր սրճանոցներում պատմումն աշուղները, միևնոյն ժամանակ երգելով որոյս մէջ բովանդակուած երգերը ասիական-սրտաշարժ եղանակով: 2) Քարամիի սիրուհին էր Ասիխանը: Յ. փ.

Սիրտս էրված էր, դու էլ կրկին դադար,  
 Տուար մեծ ահուգար ինձ.  
 Մուշտաղ եմ քեզ, կուլամ ես միշտանդադար  
 Ե՛կ նշանց սո՛ւր զիգար ինձ,  
 Մակամ ուսմ հունե՛ս, է՛յ բէմուրվաթ եար,  
 Չո՛ւմ էս հայով թողար ինձ,  
 Ես քեզ չի տեսնիլս երեք դար իլնի,  
 Կասեն, համբերար, ինձի:  
 Քեզ պէս լալին սառաֆ եմ,  
 Չի կարծես այլոց խափվեմ,  
 Չես խօսում, խօսքիդ կասվեմ,  
 Մէկ քաղցրաբարբառ ինձի:  
 Ինչպէս որ մեր սիրտքն միմեանց սէր են,  
 Աստուած մեզ խնդադ իլնի,  
 Միանգամայն խնդրեմ երկնային տէրէն,  
 Չարն մեզնէն ուղ իլնի,  
 Ել ո՛ւմ զանգատ անեմ ուղիբի ձեռէն,  
 Կործանվի բարբադ իլնի,  
 Իմ սէրս աւել ա Քեարամի վռէն,  
 Կամ շիրին Ֆահրադ իլնի,  
 Կամ թէ այլք ասեն տաղք թէ հաղար իլնի,  
 Ել չեն գալ յարմար ինձի,  
 Բակամ ինձանում էլ հալ կա՛յ,  
 Քեզնումն ինչ խիալ կայ,  
 Բէլքի թէ լեզուս լալ կայ,  
 Որ իլնի դարար ինձի:  
 Քանի՞ մին ջազայ տաս ինձ էս բանումը,  
 Մորթի՛ր, քեզ մատաղ արա՛,  
 Ինձ կոչիր քեզ ծառայ, դու իմ խանումը,  
 Ինչ կամիս, նասաղ արա՛  
 Մի՛ թող արդու մնայ էլ իմ ջանումը,

Մին դամ ինձ հետ խաղ արա՛,  
 Մին բիւթիւլ եմ քու բաղն գիւլջանումը,  
 Վարդ զամբաղէն քաղ արա՛,  
 Կամ հոտով բալասան նունուֆար իլնի,  
 Կապ սո՛ւր թահրէ թահր ինձի:  
 Անուշ, անուշ հոտ անեմ,  
 Խղճի՛ր, ես էլ մին ջան եմ,  
 Քեզ եար ջահիլ-Օղլան եմ,  
 Կասես, Արթիւն, ա՛ռ ինձի:

13.

Գիշեր ցերեկ ա՛խ եմ քաշում մէկ բէյբաֆա եարի ձեռից,  
 Երվում եմ, վիթոթվում եմ, չեմ պրծնում դարդ ու սարից,  
 Մին բանով ոտն քաշաւ, Փանդով հեռացաւ ինձանից,  
 Ա՛խ քաշելով, արտասուելով սարսարումեմ դամ զուսայից,  
 Ե՛կ բէմուրվաթ մի՛ անիւր, մի փոքր մօտիս կայնիր,  
 Մին անգամ հոգիս հանի՛ր, շուտ ազատի՛ր դու էս բանից:  
 Հինգ օրվայ փուշ աշխարհում ի՛նչ պէտք ա մենք խաբար  
 տանենք,  
 Շատ էլ ոտնատակ մի՛ անիլ, Աստուծու ստեղծած ինսան ենք,  
 Քու հրամանովդ ժած զանք, ինչպէս կամենաս մենք էլ անենք,  
 Բէյղարի ստեղծողին սրներս իմաց չի անենք,  
 Թաք մինմին Ֆիքրդ քցիր, սրտիս նաշտար զամղա ցցիր,  
 Մին դալամ ջուրն քցիր, ջազա քաշեմ ես իմ եարից:  
 Խիստ կամար ունքեր ունես ինչպէս զալամով քաշած,  
 Ահռէկս ճերմակ զարինջ զումաութ ալմադ թրաշ արած,  
 Խօսելուց մարդ ես էրում ինչպէս սրտին կրակ վառած,  
 Երեսիդ մտիկ տալուց մոլորվում եմ տարակուսած,  
 Խեղքս գլխիցս տարար, քցար չօն սարսար արար,  
 Ախար ինձի ճար չի արար, խաբար չունես դու ինձանից:

Բէզարայ վիզս ծուած, աչքս մի՛ թող խախի վերայ,  
 Մին զալամ հետս խօսիր, մին քիչ ինձի ֆարագաթ արա՛,  
 Մէկ սուր հանի՛ր, վերաս արի՛, թէ գուզ արա փարայ փարայ,  
 Էլ խղճալ չունն՞ս մնգամ, էդ քու սիրտն ասպառած քա՛ր ա,  
 Որ էլ չի հասնիլ սրբութիւնն, ինի մեղացս թողութիւն,  
 Աշխարհին լսողութիւն հրաման իլ տէր Աստծանից:

Վայ իմ քօռ իղբալին, ես աշխարհում ի՞նչ պիտի անեմ,  
 Ե՛կ, սիրելի, մուրվաթ արա՛, քանի առողջ ու կենդան եմ,  
 Թո՛ղ էս սրտիդ վատ խիալն, Աստճու ստեղծած ինսան եմ,  
 Թէ գիտես ինձ իմանալ, Չահիլ-Օղլան Սրտեմկան եմ,  
 Ես եարի մեռած եմ, էշխիցն թակված եմ,  
 Թո՛ղ սինադ բացեմ, հրամայի՛ր, քաղեմ ծոցիդ բարից:

14. (\*)

Քօլ Հաշտարխան գովում են ուստա Իվաննա բանական  
 Ի վերուստէն տուեալ է քեզ շնորհն արուեստական,  
 Երբորդութեան նշանն լինի քեզ վերայ օգնական,  
 Գին չի հասնիլ խօսքերիդ, գովում են հաւասարական  
 Հտողն կամ տեսնողն կամ ահիլ մինչև օրական,  
 Քաղցրախօս բարեհոգի ամենի մօտ ես գուրական:

Թէ եղնադ կամ թէ մէջին բոլորքիս հալբաթ ես անում  
 Բարեկամ ընտանիքով կամ սրտով սովբաթ ես անում  
 Խօսումես Աստուած արան ջոկում ես բաբաթ ես անում  
 Մաքուրբարբառ սրտիցդ սէր ու յոյս հաւատ ես հանում  
 Չի իլիլ քեզնից կշտանալ Աստուածատուր ես սիրական:

Աշխարհում թամահ չունես, ամեն բանից լիացել ես  
 Մարմնիդ տանջանք ես տալիս, չար կամքիցն հեռացել ես

(\*) Այս երգը ասել է Յարութիւնը (Չահիլ-Օղլան) իբրև գովասանութիւն ուստա Իվանին, սորա պատասխանը տես այս վերջինի երգերում համար 24.

Յոյս կապել ես Աստուծոյ, լոյս հաւատին հիացել ես,  
 Սրտիդ խորհուրդն առնես, չում որ էսքան սէրացել ես,  
 Ու մուղբդ մի՛ փոխարկիր, նա է քեզի տէր տիրական:

Պարզերես ջերմ եռանդով մտի՛ր Աստուծոյ առաջն,  
 Բարեխօս Աստուածածին սուրբ Յովհաննէս Մկրտիչն,  
 Պահապան լինի քեզ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն,  
 Նշանն լինի հեարդ, Քրիստոսի կենաց խաչն,  
 Յուսովդ փաթաթվել ես, նա՛ է քեզն միշտ օգնական:

Դու ես էս քաղաքումն բոլոր հայոց ազգի մէջին,  
 Պիտի քեզն պահպանենք քարեղէն կամ ոսկիի միջին, \*)  
 Թէ ճարվի քանի սխալ, ների՛ր ինձ էս խօսքի միջին,  
 Մեղաւոր Յարութիւնին մի՛ թող նրան մեղքի միջին,  
 Կը վկայեն էս բանին շատ գիտուն անձինք պատուական:

15.

Բացվել ա չինար բօյըդ  
 Վրէն հասած բար ա իլած,  
 Քեզ տեսնողն զարմացել ա,  
 Կասի, դա ի՞նչ ծառ ա իլած:

Ալվան պռօշներդ բարակ,  
 Լեզուիդ խօսքն ա մեղր ու կարագ,  
 Աչքերրդ ա վառ վառ ճրադ,  
 Ունքրդ վրէն թառ ա իլած:

Խտղճ՝ Յարութիւնն եմ քեզն զուլ,  
 Նոր ա բացվել դրմզի գիւլ,  
 Դու ես մէկ շէյդայի բիւբիւլ,  
 Մեր մէջումն թառ ա իլած:

(\*) Թողնենք քարեղէններն ու ոսկիքը, ուստա Իվանը գերեզմանաբար էլ չունի այսպէս է աշխարհի կարգը: Յ, Փ.

16.

Վա՛յ իմ պէս քօռ իղբալին, բէբա՛ֆային եար եմ դառել,  
 Քիշեր ցերեկ արտասուելով, մահմուղի պէս զառ եմ դառել,  
 Անդադար արտասուելով, աչքերով խաւար եմ դառել,  
 Դարդ ու զամիդ դիմանալով, հաստատ սրտով քար եմ դառել  
 Յալալի դարդ ու զամին յօժար խրիդար եմ դառել:

Աղանու պէս ուրախ սիրտս չե կարում աչք բացի եսսէն,  
 Քաշկայ դարդս իմանան, էն դեօրա ինձի բամբասն,  
 Շատունք չունեն խաբարութիւն յիմար, անգէտ, անբան կասն,  
 Ոմանք էլ անարգանք տալով, ամենայն ժամ կու բամբասն,  
 Մի՞թէ էնքան յիմարել եմ, աննամուս անառ եմ դառել:

Իմ նախնի գովասանքս հռչակվեց բոլոր չարկուշէն,  
 Յիքը դամի էշխի օխը կոտրել ա իմ սրախ շուշէն,  
 Իմը ինձ դուշման ա դառել, էլ ի՞նչ պահանջեմ ուրիշէն,  
 Ըռուզդեարը ետղի դառաւ, յետ ընկայ իմ թայութուշէն,  
 Էդ իմ բարձր անունովս գետնի հաւասար եմ դառել:

Չահիլ-Օղլան, արթուն կացի՛ր, քեզ բարեկամ դուշմաններէն,  
 Թէպէտ քեզ հետ սէր ման կուգան, ողջով էլ թշնամիներ են,  
 Ուղումեն ինկնես ոտնատակ, որ միշտ անց կենան քու վրէն,  
 Աղաղակիր Ստեղծողին, յուսով խնդրիր մարդասէրէն,  
 Ուղիդ սրտով յիշի՛ր Աստուած, տէ՛ր, քեզ ումիդվար եմ դառել:

17.

Սիրելի՛ էշխիդ սէրէն էրվաւ ջանս, քեզ արզ անեմ,  
 Առաջինը կու յայտնեմ, ամեն բանս քեզ արզ անեմ,  
 Ո՛վ ունեմ դայրի քեզ ումիդ կուճանս, քեզ արզ անեմ,  
 Օր ըստ օր բազմանում ա իմ դուշմանս, քեզ արզ անեմ,  
 Միմիայն դու ես իմ դարդ ու դարմանս, քեզ արզ անեմ,

Ո՛ւմ ասեմ, որ հաւատեն,  
 Ողջը ինձի աղգից կատեն,  
 Աւելի կիլի Ֆահրադէն,  
 Իմ տանջանքս քեզ արզ անեմ:

Ինչքան որ ես ախ բաշեմ, շահ չկայ էս բաղդի տէրն եմ,  
 Էսքան իմ արտասովես, դիտես, պատճառ որ քո սէրն եմ,  
 Քանի մին դարդ ու զամիդ հաւաքեմ ինձ վերայ բեռնեմ,  
 Կու խնդրեմ ստեղծողէն քաշկայ ինձի մահ տայ, մեռնեմ,  
 Էլ մինչե՛ ե՞րբ գոռալով աղաչանքս քեզ արզ անեմ:

Մին խօսիր հետս համով,  
 Ինձի եար շինիր քու կամով,  
 Հերիք մինչե՛ այսօր դամով  
 Անցաւ կեանս, քեզ արզ անեմ,

Քու ձեռովդ ինձ մորթիր, ճղի՛ր սիրտս, տե՛ս աշկարայ,  
 Թէ ասեմ, չես հաւատիր պատճառը որ ծածկաբար ա,  
 Էրբ կը մեռնեմ, կը յիշես, կասես իմ հաւատար ծառայ,  
 Ինձնէն յետ ինչպէս կամիս, քու կամքըդ է, էնպէս արա,  
 Քու ձեռով մին կտոր քար դիր նշանս, քեզ արզ անեմ,

Ա՛խ քաշես, դարդով լցվես,  
 Էրվես, մղկտես, կծկծվես,  
 Կարծեմ միտդ կու քցես  
 Գերիզմանս՝ քեզ արզ անեմ:

Ա՛խ քաշես, դարդով լցվես, ամեն ժամ դու տաս անունս  
 Մին ինկնես ու դիմանաս, էդքան էր սիրտ ջանումս,  
 Գաս ինձ վերայ գոռալով, արտասուես գերեզմանումս,  
 Էլ ինձ պիտոյ չես իլիլ, գեղեցիկ նազու խանումս,  
 Աստուած անի իմ ու քու դատաստանը, քեզ արզ անեմ,

Սպանար իմ պէս շատի,  
 Վա՛յ նրան, ո՛վ քեզ հաւատի,  
 Յոյս ունեմ տէրն դատի  
 Երկոքեանիս, քեզ արզ անեմ:

Չահիլ-Օղլան, Արտեմկան եմ, մինչե՛ ե՞րբ մնամ էս հարով  
 Էաւ քցար էշխիդ ծովը, քաղցր լեզուվդ Ֆանդ տալով,  
 Չեմ խաբար, ո՛ր կը տանի, ինձի էդքան շափար տալով,  
 Սոխակ Հայաստանի Մ. Կարոյ. Ա. Գ.

Հանիւր, քեզմէն եմ ինդրում լալ դոռալով, մղկտալով,  
 Միմիայն դու ես թողնող իմ յանցանքս, քեզ արդ անեմ:  
 Աստուած տայ մեզ սէրութիւն,  
 Մինչև խորին ծերութիւն,  
 Հռչակովի ամեն տէրութիւն  
 Գովասանքս, քեզ արդ անեմ:

18.

Իմ բաժալու զիլբարս տեսէք ինձ ինչ արաւ զնաց,  
 էշխի սէրով խելքս ու միտքս զլիկցս առաւ զնաց,  
 Զիմացամ ի՞նչ էր մեղքս, բարկութեամբ բարբառաւ զնաց,  
 Սրտումս զիզուն գաղը զաթար զաթար շարաւ զնաց,  
 Հոգիս մարմնէս մէկըմէկու մէջքէն կէս արաւ զնաց:  
 Աեղացս բարկացաւ տէրն,  
 Բազմացան իմ դուշմաններն,  
 Մին կողմից եարի սէրն,  
 Սրտիս միջին վառաւ զնաց:

Ինչ որ դարդ ու բալա կտր աշխարհում, քօյը ինձ զիպաւ,  
 Ումին որ մին բան ասամ, վատ երեվեց, սրտին կպաւ,  
 Թունդ վարար սէլի նման միշտ արտասունքս շփշփաւ,  
 Յալակը եաղն դառաւ դարդի օխը սրտիս կպաւ,  
 Մինչ էս օր ինձ էս հալի ուղղեարը չարչարաւ զնաց:

Չում որ էս բաղդի տէրն եմ,  
 Օրըստօր պէտքէ մեղք բեռնեմ,  
 Քաշկայ Աստուած մահ տայ մեռնեմ:  
 Խիստ հալըս դժվարաւ զնաց:

Սկզբից ջան ասելով քաղցր խօսքով քցաւ համի,  
 Ամեն կերպ հաւատացրեց ինձի արեց խաթրջամի,  
 Խելքովս հաւատացի, վերջը բան ինկաւ խամի,  
 Դառէցիմ Մէջում զիվան կորցրամ իմ Աէյլիս կամի,  
 Երվեցիմ բէբաճայէն, ջահիլ սիրտս պառվաւ զնաց:

Ով անզգամին եար անի,  
 Զի կարող նամուս, առ անի,  
 Յոյս կապի Աստուած ճար անի,  
 Թէ ոչ՝ կորաւ զլուխը զնաց:

Իմաստունք չի կարացան քննել անզգամի բանը,  
 Եւ այժմուս էլ կը խաբեն չեն տեսնում սուլթանն ու խանը,  
 Շատերին ծառայ շինան, չարն ա նրանց օգնականը,  
 Մինին թէ ծուռ մտիկ տան, կու քցեն չօլ բիաբանը,  
 Յեաքիցը ծալր անելով կասեն թէ՛ ցանցառվաւ զնաց:

Ինչ վախտ տեսնեն հազ կանեն,  
 Մէկամէկու հետ բաս կանեն,  
 Հար եթանին տնազ կանեն,  
 Անխելքը խօ կորաւ, զնաց:

Յոյս ունեմ էս դարդերից ինձ ազատի ստեղծող տէրն,  
 Այսուհետ էլ չքաշեմ անզգամի էշխի սէրն,  
 Չում որ շատ են փչացել սրանց ուղուրի իմ պէսներն,  
 Փառք Աստուծոյ ճանանչեցի ես իմ դօստ ու դուշմաններն,  
 Կարծում եմ, որ այսուհետ չարերը երկարաւ, զնաց:

Նահախ փչացաւ իմ կեանքը,  
 Շատ քաշամ դարդ ու տանջանքը,  
 Զահիլ - ճղա սրտիդ կամքը,  
 Փառք տիրոջ, կատարաւ, զնաց:

Բարսեղի երգերը.

1.

Ողորմած, մարդասէր ստեղծող Աստուած  
 Ստեղծար Աղամին, տվեցիր բարին,  
 Բարիքն դառնացաւ, քաղցրացաւ չարն,  
 Հոգւով մարմնով տանջվեց մինչ՝ ի վեց դարին:

Վեցերորդդ դարումն որ եկար աշխարհ,  
 Կորած հողիներին զու էլար նշխար)  
 Ազատար իսկ մեզի տանջանքով զժուար)  
 Աւերեցիր ձեռքն, զբուածն քարի:

Միածինդ գտաւ էն քարի տեղն,  
 Դժոխքից ազատեց կուզնեց Բարսեղն,  
 Չի տեսաւ աշխարհիս իւր որդւոց ցեղն,  
 Ինձ համար ա եկել ազարոտ տարին:

2.

Աղամորդի, ո՞վ պարզեաւ էդ ժանգն,  
 Աշխարհ եկար առանց հանդերձի մերկն զու,  
 Փայլդ վե՛ր առ, մնացեալն տէրն տո՛ւր,  
 Մէկն հո՛ւր ա, մէկն ջո՛ւր ա, մէկն դո՛ւ:

Քանի սաղ ես, քու գործքերդ ջա՛մարա  
 Մինն անյիդ մինն հոգո՛ւր փայ արա,  
 Չի սխալվես, ձախիդ կողմն այար ա,  
 Մինն հող ա, մինն հոգ՛ ա էակն դո՛ւ:

Դու կայսրը ես էս կենացն կարճառօտ,  
 Գլուխ տարիբ չար սատանին արա՛ քոս,  
 Կուզնեց Բարսեղ որդիներիցն կարօտ,  
 Մէկ Յովհաննէս, մէկ Սիլբաէլ զուրկն դո՛ւ:

3.

Է՛յ ազաներ, ականջ արէք, լսեցէք,  
 Գիշեր ցերեկ ես անքում եմ անդադար,  
 Բազմացել ա մեղքս, պատիժս տեսէք,  
 Միշտ էրվում եմ քեարամի պէս անդարար:

Պարտում եմ, չեմ գտանում թայ ինձի  
 Ուրախ կիլնեմ արժան իլի մահ ինձի,

Խնդրազոր՞ եմ Աստուածանիցն՝ տայ ինձի,  
 Մտիկ եմ տամ ճանապարհիս միշտ և յար:

Իմ թշնամիս արժան չիլնի էս տեղին,  
 Արարիչն հաստատ սրահէ իւր ցեղին,  
 Աստուած սիրողն ողորմի տայ Բարսեղին,  
 Տարին բոլոր ուրախ մնայ սարասար:

4.

Անսկիզբն Աստուած, քեզ եմ յուսացել,  
 Մեղաւոր անձար եմ, զու ինձի յոյս տո՛ւր:  
 Բազմացել ա մեղքս, միտքս շաղախ ա,  
 Հնար իցէ՛ ողորմութիւնդ հոգւոյս տո՛ւր:

Երես անկեալ հայցեմ մեր տէր Յիսուսէն  
 Աղաչանօք ինդրեմ Վարիամ կուսէն,  
 Միջնորդու թեամբ դերեզմանի սուրբ լուսէն,  
 Փոխանակ սե օրիս զու ինձի լոյս տո՛ւր:

Տրիւ ա եկել մեղքս, ամեն մի տեղ ա,  
 Տէր, քո սուրբ խնամքն իմ ցախս դեղ ա,  
 Ստեղծողէդ մահ խնդրողն Բարսեղ ա,  
 Համբերութիւն, տէր իմ, հաստատ ինձ յոյս տո՛ւր:

5.

Ո՞վ Աստուածասէր դուք Գրիստոնեայք,  
 Լաւ միտք ածէք, տեսէ՛ք ո՞վ ա անարժան)  
 Մի՞ թէ փոքր ա ողորմութիւնն Աստուծոյ,  
 Ես չնմացամ մեղքս ծով ա անարժան:

Չորանար սահաթն, որ ես ծնեցի,  
 Վա՛յ դայ իմ սե օրին, որ ես տեսեցի,  
 Ընկղմէր էն նաւն, որ ես եկեցի,  
 Յատուկ էդ նաւն էր անարդ, արժան:

Եկաւ իմ վաթսուն ամս եւ լքուաւ,  
ձիւղք ու եափրազներս շուտ թառամեցաւ,  
Քամին խփաւ, թարշամեցաւ, թափեցաւ,  
Ո՛վ ձախորդ ժամանակ, միջոց անարժան:

Տեսէ՛ք, թէ ի՞նչ արաւ իմ տէրն անեղ,  
Նահախ չի չարչարիլ ոչովին անմեղ,  
Քու բաղդից իմացիր, ո՛վ կուզնեց բարսեղ,  
Անտանելի կսկիծ, ցաւ ա անարժան:

### Եաղուբ-Օղլու երգերը.

#### 1.

Ինչ մարդ մարդի բարի կուզի  
Աստուած կտայ բարի, եղբայր,  
Բարի ուզողն բարի կառնի,  
Չի հանդիպիլ չարի, եղբայր:

Մարդ պէտք ա իրան ճանաչի,  
Հէնց բան բռնի, չի ամաչի,  
Ստեղծողն ստիով կանչի,  
Նա չի դպչիլ քարի, եղբայր:

Ի՞նչ ասեցի, ի՞նչ իմացար,  
Բարեկամ, ինձնէն հեռացար,  
Դու որ ինձի վատ կամեցար,  
Ես քեզի ի՞նչ արի, եղբայր:

Էս աշխարհս ո՛ւմ է մնալու,  
Էս օր կանք, վաղն ենք դնալու,  
Եաղուբ-Օղլուն մոռանալու  
Լաւ բարեկամ ճարի, եղբայր:

#### 2.

Ամենայն ժամ արթուն կացէք, լսէք աւետարանին,

Մեղայ ասէք, խոստովանէք, ստեցէք չար սատանին,  
Մէջ գիշերի հաւախօսի մեղի յանկարծ մահ ունենք,  
Տէր բարերար Աստուած, փրկի՛ր ամենայն Քրիստոնէին:

Աղաչելով ինդրենք Աստուած, տեղն արդարոց կեանք ա մեզ,  
Մեղաց բանին մի՛ ցանկանաք, խիտո զժուար տանջանք ա մեզ,  
Հայրապետաց դիրքն ենք խախտում, էդ ի՞նչպէս վտանդ ա մեզ,  
Խսկ ճշմարիտ չենք հաւատում օրէնք ու պատուիրանին:

Աղամ խարվեց, գերի ինկաւ, մնում էր պայծառ լուսին,  
Տէրն առաքեց մեզ փրկութիւն անեղ որդի Յիսուսին,  
Չարչարվեցաւ, խաչվեց, թաղվեց մեր անթիւ մեղաց մասին,  
Մարմինն մեզ հաց ճաշակենք, արիւնն բաժակ գինին:

Պարգևեա՛ առաքինութիւն, յոյս ու հաւատ սէր ինձի,  
Ազատի՛ր մեղաց տանջանքից արիւնդ խաթեր ինձի,  
Երես անկեալ աղաչեմ՝ քեզ, ո՛վ կենարար տէր, ինձի,  
Եաղուբ-Օղլու բաղում մեղքն չի ուզես դատաստանին:

#### 3.

Հիմքն սուրբ կարապետի լուսածե ա բողոքն,  
Սկսեց լուսաւորիչ հայրն սուրբ Գրիգորն  
Մինչ իրիկուն կաշխատէր, միշտ քանդվում էր զլշերն  
Լուսարացին տեսնում էր չկայ տեղն մի քարն,  
Հրամայեց ծառային քանդեց քառասուն կազ հորն,  
Բռնեց ածեց բանտի մէջ էն անիծած դեւերն,  
Նոր կրկին ձեռնադրեց, որ շինեց լոյս տաճարն:

Բարձեցին ջորու վրէն, իմանան էութիւնն,  
Ով չի տեսել ի՞նչ գիտէ, անչափ է զօրութիւնն,  
Ում վրայ որ քաղցրանայ, շատ կտայ գիտութիւնն,  
Կլինի ինչպէս անտակ ծով, շատ ա ողորմութիւնն,  
Մարդ մին անդամ տեսնելով չի առնիլ հովութիւնն,  
Խեղքի դարար տաճար ա, ինչպէս ա շինութիւնն,

Տրդատ ուսովն ա բերել մարմար սխների քարն:

Արևելից արևմուտ իսկի չիկայ նմանն,  
Կաղ դեն ծառայ դրվեց, որ լինի փոշեհանն,  
Երևելի քրանում ա լուսաբուղիս գերեզմանն,  
Չունի երեսպաշտութիւն, ուղիղ է դատաստանն,  
Յոյս հաւատով խնդրողին կտայ մուրազ իւր տանն,  
Ամեն խորհուրդ կատարող նա է Մշու Սուլթանն 1)

Սրբոց մէջ երևելի, որ չիկայ բարէբարն:

Հայոց ազգին պարծանք ա, չիկայ թայրն երկրում,  
Հաւանել ա, նստել ա Քիւրդստան պաղվայ սարում,  
Մանանայն երկնքիցն վերայ գալիս ծառերում, 2)  
Աշխարհքն լիանում ա, փափագով շատ են գնում,  
Լիսիրտ գնացողներ շուտով մուրազն են ճարում 3)  
Աշխարհքի չորս կողմիցն նրա մատաղն են բերում,  
Զկայ հէսաբ մատաղին աւուր վարդափառն:

Մօր փորում մարգարէացաւ, ճանաչեց Աստու փառքն,  
Ծնեց մօր արդանդիցն, հրեշտակ արաւ բոլորքն,  
Պահպանեցին լեւուսն, Աստու էր հրամանքն,  
Հաւատ բերեց քարոզով կոպտացած հրէայքն,  
Քրիստոսին կնքահայր, շատ է նրա հնարքն,  
Էն ժամանակից մնաց մկրտութեան շնորհքն,  
Յոյց տուաւ Նաղուբ-Օղլուն իւր շնորհքի աղբիւրն:

1) Յովնանէս Մկրտչի անունը Մշու Սուլթան են կոչում շրջակայ բնակիչներն  
այն է «Տարնի թագաւոր» 2) Ռամկորէն կազպին են ասում այդ անուշ հիւժն  
որերն հաւարում են ծառերի վերայից սեծ քանակութեամբ: Այդ ուխտատեղից  
եկողները իւրեանց բարեկամներին բաժանում են զազպին, ձուժն (ծամիլու)  
և այլ քաղցրեղէնք, այդ նուէրը կուչվում է «արմաղան», դոցանից ի բաց իւր-  
եանց ամենամօտ բարեկամներին ընծայում են կաւեայ գեղեցիկ ջրաման որ  
կուչվում է «բըխրքի» լցնելիս և զարտակելիս աղպիսի ձայն հանելու համար:  
3) Աշուղներն ու լարիւտացիները պարտաւորեալ դնում են ուխտի, և համարու-  
մեն իւրեանց մուրազն ստացած: Յ. Փ.

4.

Ներսէս կաթուղիկոսն մեզ հոգևոր տէր եկաւ,  
Իսկ երրորդ լուսաւորիչ կրկին աշխարհ նոր եկաւ,  
Ազգի պայծառացնող մեր Հայոց խաթեր եկաւ,  
Երկայնամիտ, տեղեակ արդար դատաւոր եկաւ,  
Ուղիղ ամենայն բանից քննեց բոլոր եկաւ:

Հազար հարիւր քսանութից մինչև էս օր խօսում էինք,  
Մեր շնորհալի Ներսէսը ա'խ ի'նչ իլաւ ասումէինք,  
Փոքր մեզ հովութիւն էր քեզնով համբաւն լսում էինք,  
Միշտ հանապաղ տիւ, զիշեր ճանապարհն սպասում էինք,  
Աստուած ինքն կամեցաւ, արժան տեսաւ որ եկաւ:

Շատ փափագով մնում էինք, մենք քո տեսին էինք կարօտ  
Համբուրումենք սուրբ աջն քո էն մասին իսկ էինք կարօտ,  
Ուսումով լուսաւորես որ էն լուսին էինք կարօտ,  
Ժողովեցին ընտրեցին քեզի պէսին էինք կարօտ,  
Ուրախացէ՛ք ազգք հայոց, հիմիկ Հայրն մեր եկաւ:

Փառք բարերար Աստուծոյ խնդիրքն մեր ընդունեց,  
Ինչպէս խոր վերապից Ղուսաւորչին որ հանեց,  
Նոյնն նման Ներսէսին Հայոց համար պահպանեց,  
Ուսումով լուսաւորաւ Քիշնև ուսումի կողմանից,  
Ապա թէ մերս կողմն կամեցաւ, շնորհ եկաւ:

Ղուսաւորչի ժամանակից վարք ա մեր հայոց համար,  
Մէկ էսպէս կաթուղիկոս փառք ա մեր հայոց համար,  
Շատ էսպէսն չի լինիլ, կարգ ա մեր հայոց համար, (\*)

(\*) Այո, ասես թէ կարգ է եղել մեզ հայերիս որ արժանաւոր հոգևորականք  
երևում են մեր մէջ շատ հազիւ: Աստուած տայ, որ ներկայ Հայոց Հայրապե-  
տը արդարացնէ լիովին ժողովուրդի գեղեցիկ յոյսը, և յուսալի է նայելով նո-  
րա մի քանի երևելի գործունէութեանցը Յ. Փ.

Պաշտելի և տօնելի հնարք ա մեր հայոց համար,  
Ուսուցիչ, բարեխրատիչ, բարեպաշտ բարերար եկաւ:

Վաղարշապատ քաղաքին տեղին Յիսուսի իջման,  
Նորան ընտրելու համար բոլոր անդ ժողովեցան,  
Համաձայն խորհուրդ կապեցին, ո՛վ որ կան ամենեքեան,  
Հայրապետութեան փառք՝ ներսէսին յօժար կամօք կամեցան  
Հողուոյն սրբոյ շնորհօք հիմայ հայրն մեր եկաւ:

Միկօլայ Պալլօլիչն ինքնակալ թագաւորն,  
Խիտ քաղցրութեամբ ընկալաւ, ՚ի հարկէ ունէր սէրն,  
Եւրոպայ, Պարսից կողմն կամ Օսմանցու խօնթարն,  
Ոչ որ ընդդէմ չի էլաւ աշխարհն, տիեզերն,  
Շարադրանքդ, Եպուբ-Օղլի, գեղեցիկ յարմար եկաւ:

### Թուրինջի Աշակերտի երգերը.

#### 1.

Անցաւոր աշխարհիցն քաղցած ու ծարաւ կը մնաք,  
Չեր դատած, վատակած մուլքից դարտակ ու տկոր կը մնաք,  
Չեր դարմ ու գաւակիցը անոք, անգաւակ կը մնաք,  
Բազում ոսկի արծաթից անպաշար աղքատ կը մնաք,  
Չի իլնիր ձեզի օգուտ, անդեղ ու անճար կը մնաք:

Հարուստ աղքատ ճանապարհը ցածր ու բարձր նարդիլան ա  
Հարստութիւն սիրողը մեղքի ցաւի բանդիւան ա,  
Թէ էն մուլքից չի գանձում հողու համար, նա անբան ա,  
Ո՛վ կ'մոռանայ էն կեանքը, էս կեանքին կը գերխանայ,  
Թշուառ կիլի լսեցէ՛ք, վերջնն փոշիման կու մնաք:

Մորից նոր վարք մնաց մեզ, չիլնիր ասելի թէ լա՛ւ ա,  
Ամեն օր մարդկանց միջում ժանգի հաշիւ, փողի դաւ ա,  
Հարուստը չիմացաւ թէ ոսկի ու արծաթը բաւ ա,

Թաղեց նրան գեանի տակ, ասեց, սա իմ կեանքին բա՛ւ ա,  
Է՛հ, հարուստներ, կուռք պաշտողներ, խաւարին մահուան կը մնաք:

Էդքան հարստութիւնից կը պահանջվի սիրտ առատ,  
Սրաները պարզ, դուռերը բաց, աղքատներին ղթառատ,  
Մտածեցէ՛ք էն մեծատունն, չ'կար դռնում մին աղքատ,  
Յետոյ կարօտ ու տապակած աղաչում էր ջուրի կաթ,  
Խեղքներդ հաւաքեցէ՛ք, նրա հալին կը մնաք:

Թուրինջի Աշակերտ եմ, լսեցէք ճշմարիտ խօսքիս,  
Լսէք իմ խորհուրդներն, ողորմի տուէք վարպետիս,  
Էս կեանքը անցաւոր ա, մի՛ խաբուէք ունայն փառքերիս,  
Օր կը դայ վերջը կտայ էս տուն ու տեղիս, սարքերիս,  
Գանձեցէք երկնքումը, խեղճ՝ անպատասխան կը մնաք:

#### 2. (\*)

Մեր նախնի ազգի միջում ընտիր պատուական էս, Թուրինջ  
Չավահիր աշխատանքդ վերացաւ աշխարհից, Թուրինջ,  
Ոչ եկել ա, ոչ կը դայ էլ քեզի նմանը, Թուրինջ,  
Էդ քու ծաղկունքաշարդ յիշատակ է քեզ համար, Թուրինջ,  
Էդ քու ճարտար խօսքերդ մեզից լսեցաւ, Թուրինջ:

Ոմանք կան, հասկանում են, թէ էսպէս էլ մարդ կայ իլած,  
Մեր ազգում քիչ կը ճարվի, էն էլ Աստուծու տուրք ա իլած,  
՚ի վերուստէն էր շնորհքդ, խեղքով մտքով բաց ա իլած,  
Բու խօսքն ու հաղերը շար մարդարիտներ ա իլած,  
Երանի՛ մեր նախնիքին, քեզ պէս մին մարդ անասն, Թուրինջ:

(\*) Այս երգը յիշեցրեց մեզ մի փոքրիկ անցք Թուրինջի կեանքից, այն է, երբ  
որ Թուրինջի անունը հուշակված է եղել Պարսկաստանում, այնտեղից մի քանի ա-  
շուղներ այդ իսկ նպատակով եկել են Աստրախան տեսնելու և փորձելու Թուրինջի  
արժանաորումընը այնքան դովասանումեան, անցանալով Աստրախանի կա-  
մուրջներից մինի վերայով պատահում են մի ըստ երեւոյթին հասարակ մարդի  
և հարցնում են թէ արդեօր ցանաչում էր Թուրինջին. նա պատասխանում է  
Քանի ման ամ, գետը, ման ամ, բ'իլ, ման ամ. խղճովքը չ'կարողանալով հաս-

Աշտարխան եկար զօնախ քաղաք Շամախու Շիրվանից,  
Ամեն տեղից խօսեցիր, Արարի ու Հնդկաստանից,  
Թարխիթը լսան, եկան Իրան ու Թէյրան Գիլանից,  
Խօսար, տվար պատասխան չք սխալվար ոչ մին բանից,  
Աղբիւրի պէս բղխում էր խելօք պատասխանդ, Թուրինջ:

Աշխարհիս չորս կողմունմն չորս թարաֆ ա, չորս նշան ա,  
Հիւսիս, հարաւ, արեւմուտք, արեւելքն էլ չորս նշան ա,  
Պատասխաններդ իմաստուն Աստու շնորհքին նշան ա,  
Կապար շատին անխօսիլ քու գիտութեանը նշան ա,  
Խօսքերդ հասկացողին գանձ ու գանձարան ես, Թուրինջ:

Թուրինջ, քու Աշակերտն եմ, ողորմատեղդ եմ անարժան,  
Հաւատ, յուսով ու սիրով պահել եմ խրատդ պատուական,  
Թո՛ղ քաշեմ աշխարհումն ցաւ ու դարդերը հոգս նեղութեան,  
Յիշատակդ չի մոռացվիլ, լոյս դառնայ քու գերեզման,  
Քու ջափահիր քարերիցդ այս քեզ ընծայ բերի, Թուրինջ:

3.

Տեսեցիմ, զարհուրեցիմ, մոլորված տարված մնացիմ,  
Ի՞նչ տեղան ինձ հանդիպեց, անխօսք, անլեզու մնացիմ,  
Շողքըդ ընկաւ իմ վրէն, անձրազ անլոյս մնացիմ,  
Անցաւոր աշխարհքումն քեզանից կարօտ մնացիմ,  
Էլ ի՞նչ տեղ քեզ կը տեսնեմ, գլխիս վա՛յ տալով մնացիմ:

Ձեմ կարում թարխիֆ անեմ, ինչ տեսակ դու ես գեղեցիկ  
Ո՛վ կուզի թարխիֆ անի, առաւել Օսէփ գեղեցիկ,  
Գուրդուրալի վառվում ես, ինչպէս շամշուր գեղեցիկ,  
Գին չունես քեզի, յարմար ջափահիր քար ես գեղեցիկ,  
Չիլաւ քեզի տեսնելի, կարօտ ու հասարթ մնացիմ:

կանալ յետ դարձել են և յետոյ այդ խօսքերի վրայ մտածելով հասկացել են որ խօսած են եղել նոյն իսկ Թուրինջի հետ և խիստ զարմացել են այդպիսի պատասխանի վերայ: Յ. Փ.

Երազիս տեսամ, ճանաչամ, խօսամ քեզի հետ սերութիւն  
Մինչի գալու ժամանակ Աստուած տայ մեզ համբերութիւն,  
Կը լըվի ժամանակըն, մեզ էլ կիլնի ուրախութիւն,  
Ի՞նչ քաշում եմ, ես քաշեմ, դու ոչ տեսնես տխուրութիւն  
Կիշեր ցերեկ քու ճամբին սպասամ, անքուն մնացիմ:

Անց կենայով արի՛ մօտս, քեզի տեսնեմ ուրախանամ,  
Կը գա՞ս մի օր ինձի մօտ, դարդերըս ասեմ, մոռանամ,  
Երգվում եմ հաւատ յուսով, որ կեանքումս չի մոռանամ,  
Մեր դրած սիրոյ շարթից ոչ մին բոպէ չի հեռանամ,  
Էսպէս իմ տարի օրերս անդեղ ու անձար մնացիմ:

Թուրինջի Աշակերտ եմ, էլ չունիմ ոչ հոգու դարդ ինձի,  
Քու սերիցն ես խօսում եմ, ոչ փող ունեմ, ոչ պարտ ինձի,  
Ճակատումս զրկած ա, քու ցաւդ էլ բաժին ա ինձի,  
Էս խօսքերիս համար էլ չք լինի՞ նեղանաս ինձի,  
Քու <sup>ք</sup>սիրուն մինչ էս օրս կարօտ հալումաշ մնացիմ:

Դիւրկարի երգերը.

1.

Տեսամ մէկ բաղչի միջում մին գեղեցիկ ինչպէս լուսին,  
Չորս կողմում գիւլ, սուսամբար, մազերն թափել էր ուսին  
Աչքերը բորբոքվել էր որպէս ճաճանչները լուսին,  
Մոլորված տարված մնացիմ, կեանքս գնաց էդ նոր կուսին,  
Գլուխս դուրբան կանեմ հսպէս նոր ջիվանի մասին:

Քու պատկերահանդ պիտի զրիչն ալմազ ունենայ,  
Աչքիդ ձեռիդ գրողը զրիչն քանց մազ ունենայ,  
Պէլված մօրի տայ երեսիդ, ձեռքին էլ սազ ունենայ,  
Երգի քեզ գովական բան, որ լսողը հազ ունենայ,  
Քեզ տեսողքն մոլորվեն, հալվեն էլ խիցը նուազին:

Լսեցին քու թարխիֆը, եկան մեր հին Հայաստանից,

Գեղեցիկները թաք կացան, ամաչեցին քո երեսից,  
Պատկերահանդ եկաւ Եւրոպա Ֆռանգստանից,  
Ջարմնացաւ, պէլված մնաց քու երկու աստղով աչերից,  
Դուրկեարն եմ, ես էլ մայիլ մնացի քու խալիդ լուսին:

2.

Իմ կեանքը հալվեց, մաշվեց քեզանից կարօտ մնացիմ  
Ձի վայելամ լոյս աշխարհը, արուն արտասուօք մնացիմ,  
Ո՛վ ինձ համար հողս անէր, դարիւր ու եթիմ մնացիմ,  
Յառաջ տարող չունեցայ, ճանապարհէս յետ մնացիմ,  
Աշխարհիս զովիլ ու սաֆից ես կարօտ ու գուրկ մնացիմ:

Երեսիդ լոյս պատկերից անտես անպաշար մնացիմ,  
Իմ քօռացած բաղդիցը միշտ անարժան ես մնացիմ,  
Ոչ ով չունեմ գայ մօտս, անմխիթարանք մնացիմ,  
Ազգ ու բարեկամիցը հեռու ու ցրված մնացիմ,  
Չունիմ կեանքիս մին ուրախ օր, էսպէս թառամած մնացիմ:

Գրված էր ճակատումս էդ Ֆիքր ու զուսան ես քաշեմ,  
Տանջվեմ էս ցաւերով, էշխովդ սիրտս կը խաշեմ,  
Սրանից բէթար ի՞նչ կայ էշխի քուլունքով կը տաշեմ,  
Պէտք ա որ մինչև ՚ի մահս ա՛խ քաշեմ, ախտ՝ս քաշեմ,  
Էս ցաւերը ինձ տուեց Աստուած, ես բաղի մնացիմ:

Մեր միջում խօսք անողը անօգուտ իլաւ մեզ համար,  
Խառնեց թողեց մեր սէրն, Յուզա խառնակող մեզ համար,  
Էս հողսի մէջ մնացիմ, էս մեծ ցաւ իլաւ ինձ համար,  
Քեզ հեռու դու քաշեցիր, տանջանքը իլաւ ինձ համար,  
Դուրկեարիս դեղ ու ճար չիլաւ, անդեղ անդարման մնացիմ:

Եթիմ-Օղլանի երգերը.

1.

Գեղեցիկութիւնիդ վրէն ես մայիլ իլամ,  
Համեմատդ չիլիր աշխարհիս վրէն,

Ես աշուղ իլամ քու սիրոյդ վրէն,  
Էշխրդ խելքս թռած համար ես իլամ:

Կանաչած բաղ ես անուշ հոտերով,  
Ինչպէս դիմանամ քեզի գովելով,  
Մի՛ թող ավարա դու ինձի լալով,  
Խօսքերս կասեմ հարիւր հազարով:

Ի՞նչ արեցիմ ես քեզ, թողար էդ հալովի՛  
Էլի չեմ դիմանալ նամուս անելով,  
Եթիմ-Օղլին կասի Ֆիքր անելով,  
Բէէքի մին ճար իլնի, արա՛ դթալով:

2.

Ինկամ սար ու ձոր Գարբանտ զնալի՛  
Չես տեսնիլ ինձի մինչև մին տարի,  
Կ'ասես մի՛ գնայ, վեր կայ յետ արի՛  
Մնաս դու բարով, եար իմ սիրելի:

Քու հետ կապած շարթը երեք տարի ա,  
Ոչ ով էլ չէ իմացել Աստուան յայանի ա,  
Գիտեմ՝ վերջներս շատ բարի ա,  
Մնաս դու բարով, եար իմ սիրելի:

Չեմ մոռանալ քիզի ես քանի սաղ եմ,  
Գիշեր ու ցերեկ քեզի դուտտաղ եմ,  
Ես եթիմ-Օղլանն եմ կեանքս կու մաշեմ,  
Մնաս դու բարով, եար իմ սիրելի:

3.

Իմ սիրելի, յատուկ քեզ հետ շարթ ունեմ,  
Կայնի՛ր էն իղըարին, ըլթիմաղ կանեմ,  
Թէ որ լսեմ քու համբաւդ ուրախ ես,  
Ես էլ ուրախ կիլնեմ սիրտով հազ կանեմ:

Պատկերովդ գեղեցիկ թուխ ունքեր ունես,  
Աստուած պահի, այսուհետև տէր ունես,  
Թէք իմանամ ինձ առաւել սէր ունես,  
Գլուխս քու ճամբին փիանդազ կանեմ :

Մէջքումդ կապել ես ոսկեթել դօտիկ,  
Դու մարիամաճաղիկ, մայիլ եմ հոտիդ,  
Ես եթիմ-Օղլանն եմ, միշտ պահիր մօտիդ,  
Դու խօսես, ես լսեմ, ուրախ տաղ կանեմ :

### Քէշիշ-Նավասի եզերը.

#### 1.

Հրեշտակն ողջոյն երես, սուրբ Աստուածածնին ասեց  
Քեզնից որդի կուլի խնական սիրուն,  
Մարիամ արամեցաւ, ինձ որդի ուստից  
Անարատ տաճարին լոյս եկաւ սիրուն :

Մարիամայ մօր քոյր էր Եղիսաբեթն,  
Արդանդէն բարովեց սուրբ Կարապետն,  
Երկնուց հրեշտակ խնդրեց սուրբ հայրապետն,  
Հաւատով սէր արքն, յոյս եկաւ սիրուն :

Մելքում, Գասբար, Բաղդասար կարօտ քո աջին  
Հնդստանայ եկան աստղն առաջին,  
Ամենայն քրիստոնեայ ծառայ քո խաչին,  
Լոյս ջամալիդ կարօտ տես եկաւ սիրուն :

Քրիստոս երկնից իջաւ, կապեցիր ճուղքն,  
Ադամայ քուն երես, հանեց մէ կողքն,  
Յարութիւն որ առաւ, քանդեց դժոխքն,  
Առաւ ժողովուրդն դուս եկաւ սիրուն :

Ես Քէշիշ-Նավասն եմ, հոգւով կորած եմ,  
Ոնց ունեմ բարի գործ, ոնց վարձք արած եմ,

Չունեմ ձեռացատուր, ես ի՛նչ արած եմ ;  
Ո՞վ կասէ թէ հոգուդ լուս եկաւ սիրուն :

#### 2.

Մատաղ էրթամ քու ջափահիր արևուդ ;  
Մէյման անեմ, հայրաթ գե՛մ այլե՞ ու սէ,  
Թէպէտ խեղճ եմ, լայազ արա, նազանի,  
Մեր սուրբուսն խմիր մին Ըօ այլ ու սէ :

Արևս խաւարի, ասողս թօթափի, (\*)  
Քար ու թօփը յետ դայ սարեր սարսափի,  
Կենդան թաղի՛, վրէս պատան չի չափի,  
Թէք դուն չանես ինձ հետ պէ ու այլ ու սէ :

Մազար դու ինսա՞ն ես, սիրտդ քար ունես,  
Ինձնից ջոկ էլի շատ քեզի եար ունես,  
Ասա՛, դու իմ աղան չես, դու իմ պարոն չես,  
Բարովն Ասածու է, պէան ու այլ ու սէ :

Իմ ու քու դիվանը մեր Ստեղծողն անի,  
Ասի՛ր քու ջալլաթիդ ինձ թաք չսպանի,  
Ուսմամբ քրիստոնեայ եմ, անհաղորդ չանի,  
Խոստովանեմ, առնեմ մէն ու այլ ու սէ :

Չունե՞դ հարայ կանչեմ սուլթան ու խանի  
Խղձմտանք արա՛ իմ խեղճ քամբաղդ ջանի,  
Քէշիշ-Նավասն երբ որ բարով վախճանի,  
Գաս վրէն կսկծիս լիւն ու այլ ու սէ :

(\*) Մինչև այժմ ևս շատերը կարծում են որ իւրաքանչիւր մտրդ իւր հա-  
մար աստղ ունի երկնքի վերայ, և ճէնց որ աստղը կընկնի, աստղատէրն էլ  
կը մեռնի: Յ. ֆ.

### Սայեադ-Օղլանի երգը. (\*)

#### 1.

Ո՛վ աշխարհ, ետաբ քեզնէն շնորհակալ մարդ կը լինի՞,  
 Չեմ կարծում, որովհետեւ, ամենումն էլ դարդ կլինի  
 Եթէ մարդ փոքր միջոց մտօքն հանդարդ կը լինի,  
 Սրտովն կուրախանայ, մարմնովն զուարթ կը լինի,  
 Շուտ կուղարկես հոգսերն, կը գայ հետն շարթ կը լինի,  
 Խեղճ մարդուն ուրախ սիրան մին թառամած վարդ կը լինի,  
 Ամենեցուն պատճառն չարութեան հնարդ կը լինի:

Թէ մէկ մարդու ավել ես յաջողութիւն մամոնայի,  
 Խղճմանքն բարձել ա, ընկերոջն ոչ խնայի,  
 Սատանի մշակ դառած, զգուշութեամբ կը ծառայի,  
 Մահն միտքն չի քցիր, հոգւոյն չի տար երկու շահի,  
 Մարմնաւոր փորձութիւնն միտք կանի հազար ջուռայի,  
 Հանգստութիւն էլ չունի գիշեր ցերեկ ախ ու վայի,  
 Տեսնողն հէնց կիմանայ հարուստն անդարդ կը լինի:

Մէկէն թէպէտ ունի իրան ապրուստն բաւական,  
 Անհանգիստ է անցկացնում իւր ժամանակն պատուական,  
 Թամահն աշխարհումն բազմացել ա անթուական,  
 Թէ հարուստ կամ թէ տնանկ կամ թէ իշխան ազնուական,  
 Թէ համայն արհեստաւորք կամ բոլոր վաճառական,  
 Ծառայումն աշխարհին իրանց կամօք յօժարական,  
 Ամենեցուն կը տիրէ, բայց ինքն անպարտ կը լինի:

(\*) Երբ ներկայ երկասիրութիւնն արդէն պատրաստած էի հետեւեալ օրը  
 Տփլիսի Յենդուրայի Կօմիտեան ուղարկելու ի բնութիւն (տպագրելու համար)  
 Ասորականից ստացայ 1-20 հատ գրուածք Սայեադ-Օղլանի երգերից, որոնք  
 տպագրուելու են «Սոխակ Հայաստանի» հետեւեալ հատորներում:

Ա. Գրիգորեանց:

Մարդ կայ որ իրա խելքով բոլոր աշխարհն չափել ա,  
 Ոչ դժոխքի տանջանքից և ոչ մահից սարսափել ա,  
 Էս անցաւոր բաներին իւր բոլոր յոյն կապել ա,  
 Չի իմանում որ աշխարհն ունայնութիւնով խաբել ա,  
 Հողու աչքն ա քօռացրել, գիշեր ցերեկ խարխաբել ա,  
 Սատանան էլ որտումն իւր չարութիւնն թափել ա,  
 Կամօքն մոլորվել ա, միտքն էլ հպարտ կլինի:

Ո՛վ եղբարք, գիտեմ այժմ, դուք ինձի դատաստան կանէք  
 Կասէք թէ ո՛վ է արդեօք երջանիկն, կը հարցանէք,  
 Փառք կըտաք միշտ Աստուծոյ, թէ փոքր բաւական էք,  
 Աշխարհից չէք դանդատիլ, ընկերներիդ օգնական էք,  
 Մարմնաւոր անդութիւնն համբերութեամբն կը տանէք,  
 Աստուած իմ, Սայեադ-Օղլուն թէ յանցանքն չի հարցանէք  
 Հայրիւրից մինն պակաս մոլորեալ ոչխարդ կը լինի:

### Մեւքիսէթի երգերը.

#### 1.

Միտք ունեմ մին գիշեր քեզ զօնաղ իլիմ,  
 Վախում եմ, որ ասես, չէ, չեմ ուզում,  
 Ուրախ կը հրաւիրեմ ես քեզ իմ տունը,  
 Տունս ցուրտ ա, կասես տաք փէճ եմ ուզում:

Փէճ չունեմ կը տեսնես, որ տեղս ցուրտ ա,  
 Գիշերը չես մնալ, իմ բանը բուրդ ա,  
 Զոկ տեղ կը պահենք թէլ, օղորդ ա,  
 Էն ավերին կիլի, ես մէջ եմ ուզում:

Մէջում մնացողներ գիտեմ չունեն հալ,  
 Մի՞թէ առաւել են քանս Բօտոմ ու Զալ,  
 Բեզնից չեմ պահանջում խաղինայ ու մալ,  
 Հէնց ասես էնքան կին եւ եմ ուզում:

Մեղքիսէթի սիրտը քցել ես վառօգ,  
Երվելով քեզանից կու մնայ կարօտ,  
Ինձ նամակ գրելիս գրի՛ր համառօտ,  
Կարձ ու զօրեղ իլի, կէս էջ եմ ուզում:

2.

Փչի՛ր, նասիմ, փչի՛ր հարաւի կողմից,  
Հիւսիսային հողմից սոխակը սառաւ,  
Մին դալդալուղ ունէր վարդի տակումը,  
Վարդին էլ խորշակը արմատից տարաւ:

Խեղճ բիւլբիւլին երբէք տէր, քօմակ չունի,  
Սիրահար վարդիցը մին նամակ չունի,  
Մի՛թէ նրա վերայ նա ամակ չունի,  
Որ նա նորա սրտում դուգուն, դաղ շարաւ:

Տարվա մէջ ինն ամիս չի խօսում, լալ ա,  
Թե՛լ թե՛լ իլաճ սիրտը փուշից բէհալ ա,  
Ապրիլ, մայիս, յունիս շատ խօշ իղբալ ա,  
Բայց մնացեալ իննը էրաւ չարչարաւ:

Այս գիշեր սոխակն բաղը թռել ա,  
Բայց թալկացած զանաղներն փռել ա,  
Յանդիման իւր վարդին վիզը ծռել ա,  
Կարօտ ա բացվելուն, չի քթնում չարա:

Անմխիթար գոլով, գլխին վայ ա տամ,  
Բերեան սրտով մինչի լուս զուգայ ա տամ,  
Խոցին մահլամ չի կայ, հէնց հառայ ա տամ,  
Արի՛, հասի՛ր, դու Մեղքիսէթ բէչարա:

3.

Մեղայ յերկինս և առաջի քո, արարիչ Աստուած,  
Ի՞նչ է իմ այն՝ որ ոչ է քո, բոլորն դու տաս, Աստուած:

Ի՞նչ պատասխան ունեմ տալու ահեղ դատելից օրը,  
Թէ էս բանը ես չիմացայ, ո՞ր չիլես ինձ, Աստուած:

Գիտեմ երկու ծանապարհ են, մինը չոր ա, մինը թաց  
Թէ չոր ման գամ, յայտնի ա ինձ, որ ամեն վախտ ունեմ հայ  
Հակառակ թէ թացը դնամ, կախեալ է էն իմ կամաց,  
Սատանին ըստեղ մեղք չունի, ինքս եմ ինձի դաստուած:

Գիտեմ էն երկու մարդիցը ով քեզանից մաս ունի  
Մէկը տառապեալ աղքատն ա, որ աղօթք ու պաս ունի  
Թէէ էն գօռող իշխանին աթլաս ունի, խաս ունի,  
Նրան էլ սեպհական բաժին ճերմակ ա հինգ դազ տուած:

Ինքս եմ ինձ խաւարացնում, լոյս աչքերս հանում եմ,  
'ի մէջ անուշահոտ ծաղկանց՝ չար որոմնս ցանում եմ,  
Ահեղագոչ «երթայք յինէն» ձայնիլը իմանում եմ,  
Տալ ինձի սատանի ձեռը մասխարա անաղ տուած:

Անտառի պէս խիտ բազմաթիւ մոլորութեանցը բանդիվան  
Մնացել ես դու, Մեղքիսէթ, ի՞նչպէս կու գնաս դիւան,  
Արդարութեամբդ թէ դատես, մարդ չի գալ քեզ յանդիման,  
Թէ զթութեամբդ քաւիչ իլես, ողջով կու գանք վազ տուած:

4.

«Ա՛ւ է անուն բարի քան թէ զանձ աշխարհի», են ասըմ  
Տեսնենք՝ ո՞ր բարի անուամբ աղքատն է իշխանաց դասըմ,  
Թէ տառապեալ աղքատ ա, կասեն խելք չիկայ նաքեազըմ,  
Շատ տգէտ ա, հարուստ ա, ամենեկն չեն բամբասըմ,  
Դարձաւ բարի անունն էլ խարաբ գանձին է ըսպարըմ:

Էս իրաւ ա, իլաճ ա, բայց հիմի չէ, սաղը ասեմ  
Էս տառապեալ աղքատի սրտի դուգուն դաղը ասեմ,  
Ասում ա «փառք քեզ, Աստուած, ինձ տուած նասա՞ղը ասեմ,  
Թէ էն անգէտ իշխանի սոհրաթ ու եղնաղը ասեմ,  
Ի՞նչ օգուտ խելք տուածդ, որ ա՛խ վայրս չի պակասըմ:»

Մա որ անդէտ հարուստն ա, դովը ու սափաննա ա անրմ,  
Որ մին զուատ խելք չունի, ասա՛ մին ա՛խ, վա՛յ ա անրմ,  
Սուտը օղորդ ա շինում, դաւ ու դարաբայ ա անրմ,  
Թէ մին տայ, հինգ ա առնում, վերջումը հաշայ ա անրմ,  
Տե՛ս, ո՛րքան համբերութիւն կայ մեր ըստեղծող անհասրմ:

Էս խարաբ բազըը որ կայ, եթէ լուսաւոր կը լինէր,  
էն գոռող իշխան մարդը էն ժամանակ քօռ կը լինէր,  
Տառապեալ բանականին աչքալուսանք նոր կը լինէր,  
Եւ չարուղի փող չէր տալ, էն վախտ ձիաւոր կը լինէր,  
Էս կեղտ չուլը կը հանէր, ման կը դար աթլաս ու խասրմ:

Բայց միայն բանը գիտէ, ուղղեարի հետ վախտն ա խօսում  
Ոչ յիմարին մեղք ունի, ոչ խելօքին բազդն ա խօսում,  
Ո՛վ շատ ունի սանդուղում գունդ սրմիզարնաղղն ա խօսում,  
Ես էս տեսակ եմ կարծում, եթէ իմ շնախան ա խօսում,  
Կարծում եմ սուտ բան չի կայ էդ բանումը իմ նափասրմ:

Մեղայ Տէր, ես մեղանչամ, Մելքիսէթն եմ, քեզ ծառայ եմ,  
Քեզ որ էսպէս ա հաճոյ, ես ո՛վ եմ, ի՞նչ նաքարայ եմ,  
Քա՛ջ գիտեմ, էս խօսածս ունայն է, չում բէչարայ եմ,  
Մունջ էլ կայնեմ, չիում. խոցերով հազար փարայ եմ,  
Ազոաններն են թառ իլել զօշխուն թութիի դափասրմ:

5.

Աշխարհումս շատ սիրուններ կան, ու ջոկ բաբաթ ա,  
Մամուռ ծոցի հոտով եմիշը դաբաթ, դաբաթ ա,  
Կշտում չիլիլ պռօշներիցն, հնգու նաբաթ ա,  
Վաղա դրածիցն անցկացաւ քանի շարաթ ա,  
Տարին մօտեցաւ, մեղք եմ իլնում, սա ի՞նչ զազալաթ ա:

Ինձ կարող էիր առաջ ասել, թէ՛ չկայ հնար,  
Կը տեսնէի որ չիլնում բանը, մեր մէջ կը մնար,  
Ի՛ զուր աւելորդ էսքան տնաղ մասխարայ շինար,

էն օրը կամ էն սահաթը դու որ մօրից ծնար,  
Մինչի էս կէսս ինձ խաբումես քանի նորաթ ա:

Բոլոր աշխարհիս յայտնի ա, որ իլել ես սնտես,  
Պէտք ա հաւասար ամենի հետ վայելես, խնդես,  
Ոչինչ բան ուզամ, ոչէ՛ս ասեցիր, արեցիր անտես,  
Ես չեմ պահանջիլ թէ իմանամ դժար հիւանդ ես,  
Բայց այլոց հետը առուտուրդ շատ ըուաւաթ ա:

Իմ պէս մին ջան ես, քեզանումը ջոկ նշան չիկայ,  
Եզքան աղաչամ, մի՞թէ քեզնում հոգի ջան չիկայ,  
Թէպէտ իրաւ ա, մեր շաշտարխան քեզ նման չիկայ,  
Բայց քու ձեռին ա, եթէ ուզես, ծանդր բան չիկայ,  
Խաթրըս կը շահես, աշխարհումս էստուր աղաթ ա:

Էս հին բաները ողջը թողնենք, խօսենք նորերը,  
Քեզ պտըրողը պէտք ա ինինի սար ու ձորերը,  
Յետ քթնելիցը ինչ գին անի էնպէս օրերը,  
Լօղման ես դառել, գամ են քու մօտ կաղ ու քօռերը,  
Շողքդ քցում ես, բժշկում ես, մեծ ալամաթ ա:

Քեզ զուրբան իլնեմ, լոյս երեսիդ քողը քցիր միշտ,  
Որ քեզ յանդիման եկող մարդը չի դառնայ բէհիշտ,  
Առանց էն էլ սերդ սրտումս դառել ա մեծ վիշտ,  
Թէպէտ քու ձեռին մարդ սպանել հասանդ ա ու հեշտ,  
Ինքդ դատաւոր իլի՛ր, դատի՛ր ի՞նչ ազալաթ ա:

Էդ երկու աչքդդ, մէկը սուտակ, մէկը շափիւղ ա,  
Ծոցիդ մէջը լի ամեն տեսակ ապրանքով գիւղ ա,  
Բաւական կիլնի, էն կիլնի ինձ՝ տարվա աղուղ ա,  
Ինքան ապրանքից ինձ պիտանի երկու պտուղ ա,  
Կիմանամ քեզնից ստացածս շատ մեծ աղաթ ա:

Էդ երկու ունքրդ դահճապետի թուրի նման ա,  
Վառ վառ աչքերդ կանա սարի հուրի նման ա,

Թերթեւունքներդ ջանի ցցվող սուրի նման ա,  
կարմիր թուշերդ փափուկ ալ մախմուրի նման ա,  
Խեղճ Մելքիսէթին ամեն սահաթ թազա սողվաթ ա:

6,

Ողորմած, զթած, լուր ինձ, նախ քեզ ճանաչել տո՛ւր ինձ,  
Իմ պէս խաւարվածին լուսաւորիր, մի՛ թողնիլ կուր ինձ,  
Իմ պէս սգալուն ուրախացուր, մի՛ թողնիլ ականուր ինձ,  
Իմ պէս ծարաւածին զովցուր, ցոյց տուր մին աղբիւր ինձ,  
Պատկեր տիրական ըստեղծար ինձ, ՚ի զուր մի՛ կորցրուր ինձ:

Գիտեմ մեղսառիթ ծառայ եմ քու մօտ բիւրիցս անգամ,  
Ըստ նարեկացւոյն բանի ասեմ, յեթէ հարկանես լամ,<sup>4</sup>  
«Եթէ ոտնահար արկանես ինձ, կողկողալով սրգամ,<sup>4</sup>  
Միայն մտացս է որ ասար յեթէ ինդրէք, կըտամ,<sup>4</sup>  
Ապա խնդրեմ, ովկիանոսիցդ տաս մին կաթ ջուր ինձ:

Դու ինքդ ասար յես չեմ ուզում մեղաւորի մահը<sup>4</sup>  
Սինչ դառնալը չար ճանապարհից, էն կիլի իմ շահը,<sup>4</sup>  
Տո՛ւր ինձ էն յոյսը, որ ես գըջամ, տո՛ւր սրտիս էն ահը  
Որ հալածեմ դե ին, կործանվի էն զազիր ազահը,  
Նորա բիւրաւոր զօրքը քիչ ա, թէ տաս դու մին թուր ինձ,

Դու ինքդ ասար յես եկել եմ բժշկեմ հլանդի<sup>4</sup>  
Մեղօք տկար եմ գիշեր, ցերեկ հոգիս կու զարզանդի  
Հառաչմամբ խնդրեմ, ե՛կ) բժշկիր, ինձ մի՛ տուր նողսանդի,  
Պատճառ բանսարկուն մտել ա բերդս, ուզում ա քանդի,  
Եւ շատ հետեւում ա, որ տանի քցի անշէջ հուր՝ ինձ:

Դու ինքդ ասար, յՁա՛քէ, յՁա՛քէ (\*) է՛ջ այտի, յիս մատիր<sup>4</sup>  
Իսկոյն ցած եկաւ ծառիցը, քեզ տուն ընկալաւ, մտիր,

(\*) Չաքէ, որի սկիզբն է Չաքէոս, Գրիստոսի ժամանակակից հարուստ և մարտապետ (կէօմրիքճի զխաւոր) մարդ էր: Սա մեծ սէր և հաւատ ունէր դէպի Գրիստոս: Երբ լսեց, որ նա խուռն բազմութեամբ գնումէ, ինքն իրա հա-

ինչ որ խօսել ես սորա տանը, յոյս ունեմ, չես ստիր,  
էն ասած հարիւր ոչխարիւ մէկն եմ, կորել եմ, քթիբ,  
Իննսունը թո՛ղ, արի, ՚իզուր մի՛ կորցրուր ինձ:

Դու ինքդ ասար աւազակին յընդիս լե՛ր դրախտին,<sup>4</sup>  
Աւազակ զոլով՝ արժան արար արքայութեան թախտին,  
Նման աւազակին խնահիր իմ պէս տարաբաղդին,  
էն սոսկալի դատաստանիդ օրը՝ դատելիդ վախտին  
Ի՞նչ կիլի որ ասես Մելքիսէթին, յդու մնացի՛ր հլուր ինձ<sup>4</sup>:

7.

Մին նազանի սոնա սպանել ա ինձի,  
Թէյղաղ մտիկ տալով կլանել ա ինձի,  
Լոյս պատկերով խելքից զխփ հանել ա ինձի,  
Լոկ մարմինս ա թողել, թալանել ա ինձի:

Առանց նորա կեանքս աշխարհումը փուչ ա,  
Անուշ տալ չինիլ, զլխագիրն եչ ա,  
Ինձի շինել ա էչ, էզուր սաքի քիչ ա,  
Վրէս էլ նստել ա) փալանել ա ինձի:

Լոյս օրս շուռ տուեց խաւար գիշերի,  
Քցել ա ինձ բիրեան աղուռ իժերի,  
Առանց մաշկել ինձի քաշել ա շիշերի,  
Հալա որ կենդան եմ, մեծ բան էլ ա ինձի:

Բաղդաւոր էն մարդն ա, ով չի իմանում սէրը,  
Ում ընկել ա զլխին, բարկացել ա տէրը,  
Մեղքն. երկու դառաւ շատ զարսելով բեռը,  
Սրան էլ յօժար եմ, թէք տա՛ն էլ ա ինձի:

Տեսնել բանին հէյրան իլամ ալ ոանգին,  
Բանիցս գործիցս ինձի թողաւ լանգին,  
Մի՛ ասա, էդ սէրը բանդ էք խարաբ ժանգին,  
Ես կարծում էիմ թէ՛ հաւանել ա ինձի:

Օակի կարծ լինելու պատճառաւ, բարձրացաւ մի Թղեւոյ վրայ, որ այնտեղից զոնէ կարողանայ տեսնել իրա կարօտած մարդուն: Ա. Գրիգորեանց:

Ես իլեւ եմ ծառայ, նա ինձ համար խանրմ՝,  
Քցել ա քամակից, տեսնենք, ո՞ւր ա տանրմ՝,  
Թէպէտ Մեղքիսեթէկ ինձ կոչել են անուն,  
Նա էլ մին այլ տեսակ անուանել ա ինձի:

**Տ.**

Աստուած սիրես թէ ինձ հետ սէր ես, մի՛ խրթիր վրէս ունքերդ  
Սիրտս դաղել ա, կարաս աղել ա, ինձ շողախել ա քու սէրդ,  
Խեղքս տանրմ ա, հոգիս հանրմ ա, ինձ սպանում ա աչքերդ,  
Մարդ զիժվացնող, սարսարի շինող, ոչ բերէր ծնող քու մէրդ,  
Ես փափագ քեզ եմ, ճշմարիտ ասեմ, յետ, առաջ ես եմ քու տէրդ:

Քամբաղդ մնայի, քեզ ուստ չի գայի, ոչ բարով տայի ես քեզի  
Հետս չի խաղար, մին չի ծիծաղար, կենդանի թաղար իմ պէսի,  
Քեզ միշտ ջեղրված, ունքերդ խրթած, մին աչք ունքդ բաց չի տեսի  
Հարցուր իմ հայր, տե՛ս իմ ահվայր, էս ա իղբայր իմ պէսի,  
Քու ինձ մօտ դալը, ամանաթ տալը, լսաւ ահվայր քու հէրդ:

Խոստացար կուգամ, ինչ ուղես կուտամ, ես քուն չի  
մտամ էս գիշեր,  
Պառկամ, վերկացամ, անքուն դիմացամ, միտքդ չիմացամ,  
ուրիշ էր,  
Աշկարվաւ էս օր, դօստ ես քթել նոր, մին մարդ չ'կար,  
որ ինձ յիշէր,  
Շատ լաւ եմ խաբար, կարծար ինձ յիմար, ասար ինձ համար  
թէ էշ էր,  
Եշ չեմ, թէ կամիս, քցեմ ըռամբս, չինկնի թշնամիս քու ձեռդ:

Գործիդ հմուտ ես, ինքդ անփոյթ ես, իղբարիդ սուտ ես,  
ի՞նչ անեմ,  
Քեզ ջունուն դառամ, առ նամուս չի արամ, բէկամ ես  
քեարամ դադա՞ն եմ,  
Մեղք եմ, ինձի ծուռ ե՛կ մօտիկ մի՛ տուր, մի՛ կորցուր 'իզուր  
մին ջան եմ,

Ընդդէմ չեմ կամքիդ, մուշտաղ եմ դէմքիդ, կարծիր թէ շէմքիդ  
ծառան եմ,  
Կեանքս հէ՞ր մաշեմ, սիրտս հէ՞ր խաշեմ, քանի՞ մի քաշեմ  
քու բեռդ:

Ով ձեզ հաւատի, ինկնի Ֆարեաղի, Աստուած ազատի թէ ջոշ ա,  
Թէպէտ զխտուն ա, և բանիբուն ա, կասէք ջունուն ա, սարխօշ ա,  
Կասէք խաղ արա՛, կանէք մասխարայ, կտաք շողղարա՛ թէ զիժ ա,  
Թէ չի տայ ժանգը, չի բաղխիլ թանգը, չի գալ ձեր հանդը համեշա,  
Մեղքիսեթ, արի՛ էս ըռուզգեարի տես ո՞րն է բարի անելի:

**Զ.**

Այրն Աստուած որ ստեղծաւ նախահայր Ադամին հողից,  
Բնն բերաւ դրախտի մէջ, ասեց մի՛ կեր այս պտուղից,  
Գիմն զուցէ չի հարցրաւ այս պատճառն ստեղծողից,  
Դան դրախտումը ողջ կար, փափագ էր Ադամ մին զողից,  
Ե՛ն եկաւ, տեսաւ թմբած, իսկոյն կնկան ստեղծ կողից:

Ձան զաղիր էն պիղծ աստանան, տես թէ ինչպէս հնար քթաւ  
Են էն օձին դաս տուաւ, նա թալալը սարք դրախտ մտաւ,  
Ըթն ըստոյզ ըստեղծողի բոլոր ասածներն լսաւ,  
Թօն թունաւոր օձին խօսքը հաւանեց, մատին փաթաթաւ,  
Ժէն ժամ մի աւել չի քաշեց, զրկուեց իւր կեանք տուողեց:

Ինին իմացաւ, ձայն տուեց, ո՞ւր ես, Ադամ, զի՞ ես լալով,  
Լիւնն լսաւ տեղի զղջման պատճառ բերեց ջուղար տալով,  
Խէն խորամանկ ստեղծած կինը խաբեց ինձ կողկողալով,  
Ծան ծնունդներդ մահ փոխվի, օձին էլ ասեց սողալով  
Կեն կեանքդ բոլոր՝ հող ուտես և իլես ծուռ ման եկողից:

Հոն հաստատ տեսաւ որ խափեց ա՛լս քաշեց առ, նամուս արաւ  
Ձան ձեռին հրեղէն սուրը եկաւ դրախտէն դուս արաւ,  
Ղաղը զամոգ լեզուովը եկաւ լոյս տալի աչքալոյս արաւ,  
ձէն ճշմարիտ ձեռազրով զուրեաթը բաշխեց սուս արաւ,

Մենք մինչ անմահի մահը տանջուեց դաւածանողից:

Յին յայնժամ չար բէլիարի վերայ թափեց բարկութիւնը,  
նոյն նման մարդկային դէմքով եկաւ Սբրահամայ տունը,  
Շան շուտ ասեց որդի կը տամ քեզի, Սահակ զիր անունը,  
Ոն որ նորա ցեղից պիտի ծագի էն ճառագայթ սիւնը,  
Չան յիշիլ<sup>ս</sup> ասեց, ծիծաղեց<sup>ս</sup> իմ պէս ամուլ, պառաւողից<sup>ս</sup>

Պէն պայծառ երկինք որ նորա ահեղ փառացն են զարգանդում  
Ջէն ջերմեռանդ սիրով իջաւ բնակվեց կուսի արգանդում,  
Ռան ուամիկ որպէս մենք, մարդ չարչարվեց և մնաց բանտում,  
Սէն սիրով առանց տրանջման հողին խաչումն էր արանդում,  
Վեհն վաարն մեր թաղվեց, որ փրկի չար բեհեղզբուղից:

Տիւնն տէրն մեր եմուտ դժոխք, աւերեաց ահեղ բարբառօք,  
Բէն բամեալ հողիքն այն աղատեաց հզօր հնարօք,  
Յօն ցասմամբ ու ահեղակերպ գերեզմանէն յարեաւ փառօք,  
Իիւն լիւրով հզօր զօրութեամբ համբարձաւ յերկինս կառօք,  
Փիւրն փրկի՛չ, Մեկքիսէթն եմ, քու կամքն է դու զիտես բարուք  
Քէն քաջ զիտեմ, լի՛ եմ մեղօք քանս զող, մարդ ըսպանողից:

10. (\*)

Ժէ ժանտ ախտով լի եմ ես, Անջախ դառը բերանիս,  
Դու մաջնուն՝ թէյ լի եմ ես, Մին փոքր ինչ համբերիր:  
Էս օր խօսենք համառօտ, Խէ խօսի՛ր կամաց կամաց,  
Ըստ որում մէյ լի եմ ես: Դարտակիր կամաց կամաց,  
Իմ խնդիրս կախեալ է  
Ինի իմաց տո՛ւր արի, Ողջը ձեր կամաց կամաց:  
Ընթացքով ինձ տո՛ւր արի, Ծա ծառ ունեմ թուղի պէս,  
Քանս թէ աւարայ ես Էս ո՞րտեղ ես թուղի ես,  
Սրի՛, ինկի՛ր տուրարի: Տէրութիւնը ինչ անի որ,  
Լիւն լսի՛ր ինձ համբերիր, Դանշար եկամ թուղի ես:  
Համբարեցիր, համբերիր,

(\*) Յորա սկիզբը այսինքն Ա ից մինչև Ժ տես թուրինցի երգերում համար 34.

Ան կամք ունեմ նազ լի ես, Ով կուղի թող ինձ պատժի,  
Ինձ ասում ա նազ լի ես, Պատժողը ինձ հասլ անի:  
Ասում ես թէ՛ հարբած եմ, Շան շուտ լսիր խօսքերս,  
Ինձանից դու նազ լի ես: Կայ սեւացնող խօսք՝ երես,  
Հոն, հաւատ, յոյս սէր ունեմ, Արիւնախում է դառել  
Եւ իմ կորած սէրուն եմ, Դու անտառի խողկեր ես:  
Թէ հրաւիրես զաջայի, Ոն ոչխար եմ մատաղ եմ,  
Ձեզի լայաղ սէր ունեմ: Մորթելից մին մատ աղ եմ,  
Չան ձայնիւս աղաչեմ, Քու շահմար օձ մաղերդ,  
Ձեզ ծառայ եմ աղա չեմ, Դուբբան սաղաղ մատաղ եմ:  
Յետ շուռ եկամ կնկայ պէս, Չա չունեմ մին մատանի,  
Տեսար, ասար, աղաչեմ: Կամ մի ախ լաւ մատանի,  
Դադ դեկալար հմուտ ես, Որ մատումն տեսնողի  
Այս գործումդ համ ու տես, Խեղքը տանի, մաթ անի:  
Աստուծոյ պատուիրանքն ա, Պէ պարամ ամեն տեղ,  
Համ աշխատես, համ ուտես: Ման եկամ սաղ ամ էն տեղ,  
Ճէ ճանապարհ տո՛ւր ինձի, Յետոյ որ տկարացամ,  
Վարքով արի՛ տուր ինձի, Ես խմեցի ամեն դեղ:  
Գիշատող զայլի մի՛ տուր, Չէն Չան քեզ ասեմ լսի՛ր,  
Փոյթ չէ, տամե՞ս, տո՛ւր ինձի: Որ նոր հաւաս եմ լսիր,  
Մէն մնացիմ մէնակ ես, Հօրդ խայտառակ արաւ  
Հանքից հանամ մինաք ես Եղբայրդ, ասեմ, լսի՛ր:  
Թշնամուս երկու ազգի Ռան ուամիկ դու մարդ ես,  
Խաթրի հանամ մին ախ ես: Ամեն բանով դու մարթ ես,  
Յի յորժամ դու փայլանկես: Մին լաւ օրով մի խաբիր,  
Ինչ պիտոյ է փայլան կես, ձանաչում եմ դու մարդ ես:  
Շատ ծանդր ես մանդալի, Սէ սէր ունես հարբելի,  
Մի՛ գուցէ դու փայլանկես: Խօսք մի՛ ասիր հար բէլի  
Նոյ նման ես ասլանի, Պարզ մօք ձեր տուն եկամ,  
Կամքդ տէրն հասլանի, Ձեր տունիցը հարբ ելի:

Վե՛լ վասն է՛ր բարկացար, Յո ցաւ ունեմ սարի պէս,  
 Չու՛մ որ ինձ հետ բարկացար, Իլե՛լ եմ ասարի պէս,  
 Ի՞նչ օգուտ ինձ քո ընծան, Անչափ գոռողացել ես,  
 Որ էլի յետ բարկ ածար: Մասիս սարի սարի պէս:

Տիւն տա՛ր ինձի դաշտի մէջ, Իւն լիւծեալ կամ բանտի մէջ,  
 Եղծել ա աղաշտ իմ մէջ, Խարաբայ Գարբանտի մէջ,  
 Աշխատանք ունես վրէս, Եարաբ էս տեսակ պատիժ  
 Շատ ես գրել տաշտի մէջ: Ելի կիլի՛բ բանտի մէջ:

Քէ բարուն հանձար ես, Փիւր փափագ եմ քեզ պէսի,  
 Ի՞նչ քարսազ որ հանձար ես, Ընտրել էք ինձ քեզ փեսի,  
 Իմ անդամանդի համար Ա՛խ մի՛ քաշիր էս մասին,  
 Փոքր ինչ ածան ճարես: Առաջ ես էլ քեզ տեսի:

Քէ քարեղէն անդին ես,  
 Հայի՛՛՛՛ չես դու անդին ես,  
 Ձիդ խօսար դու, Մեղքիսէ՛՛՛թ,  
 Վախեմ ասեն անդին ես:

11.

Բիւլբիւլ.

Խեղճ՝ բիւլբիւլն փարվանի պէս եաղի մէջ  
 Մղկտալով՝ ասաց դնամ բաղի մէջ,  
 Յոյս ունեմ որ իմ նասիբից հանդիպի  
 Կարմիր վարդս ծաղկափթիթ թաղի մէջ,  
 Եկաւ ինկաւ պարտիզպանի ոտը նա,  
 Աղաչումէր թողնի վարդի մօտը նա:

Պարտիզպան.

Պարտիզպանն ասեց, յբաղի տէր եմ ես,  
 Ձեզ ծանօթ չեմ, բայց վարդի հետ սէր եմ ես,  
 Եթէ էքքան փափագ ունէք վարդի հետ,  
 Դարդիմանդ եմ, էս բանին կու ներեմ ես,

Վկայ Աստուած, որ ես քեզ հետ բան չունեմ,  
 Եւ թէ՛ ձեզ հետ զիւան դատաստան չունեմ:՝

Վարդ.

Վարդը լսաւ որ բիւլբիւլը գալու ա,  
 Խնացաւ որ դարդը իմանալու ա,  
 Ասաւ յսրտիս խոցերը ես կը բացեմ,  
 Չու՛մ որ նա էլ իմ պէս մին եարալու ա,  
 Միայն թէ թշնամի փուշը իմանայ,  
 Մին չարութիւն կանի նա չի դիմանայ:՝

Պոռ.

Անողորմ փուշը էդ բանը լսաւ,  
 Տեսաւ կարմիր վարդը բացվել ըսկսաւ:  
 Ասեց թէ յ՛չ կարծես թէ բիւլբիւլիդ տեսնես,<sup>ս</sup>  
 Սկսեց հակառակ վարդի հետ խօսաւ,  
 Վարդին ասեց յքանի սաղ եմ, քու մօտ եմ,  
 Բիւլբիւլիդ չեմ թողնիլ մօտ՝ կու խոցոտեմ<sup>ս</sup>

Բիւլբիւլ.

Բիւլբիւլը սար ու ձոր ընկնելով, գալով,  
 Հասաւ նպատակին շախ շախ կարգալով,  
 Տեսաւ պարտեզպանը ըզբաղմանց մէջ ա,  
 Հարցրեց յպատճառը ինչ ա՞, գոռալով,  
 Չոքել էր խնդրումէր նա պարտիզպանից,  
 Չիլի՞ չար խաբար ես լսել մեր բանից:

Պարտիզպան.

Պարտիզպանն ասեց յիմ պէս մարդիցը,  
 Կը պահանջես եթէ դուս դայ շարթիցը,  
 Խօսքս խօսք ան, միայն մին չար թշնամի  
 Միտք ունի քեզ կարօտ թողնել վարդիցը:  
 Ի՞նչ անեմ, տես որքան քամեղբալի եմ,  
 Որ քու մօտին էս օր ամօթալի եմ:՝

Վարդը.

Վարդը ինչպէս լաւ բիւլբիւլի գալը,  
Կեսամեռ իլաւ նա, շուռ եկաւ հալը,  
Ձայն տուեց բիւլբիւլին, ասեց յ սիրահար,  
Աստուած չի կամենում մեզ համբոյր տալը,  
Ձգոյշ կաց էս բազում, մին չար թշնամի  
Քեզ հետ նա իղձ ունի, խոցոտել կամի:՝

Փոռ.

Մայիսանձով լի փուշը լիովին պատրաստ  
Ասումէր յբիւլբիւլը ինձ երբ կըզայ ուստ,՝  
Պատուէր տուեց արիւնարբու զօրացը,  
՛Բիւլբիւլը մօտացաւ, իլեցէ՛ք ըզգաստ,  
Ինչպէս տեսաք նորա զայն վարդի մօտ,  
Չորս կողմից խոցոտէք որ չի կարդի մօտ:՝

Բէւլբիւլ.

Բիւլբիւլը էս միջոց բաղը թռել էր,  
Շատ դիլի թանգ զանաղները փռել էր,  
Արիւնալեց աչքով չոր տափի վերայ  
Յանդիման իւր վարդին վիզը ծռել էր,  
Անմխիթար գոլով գլխին վայ էր տամ,  
Գեահ հարայ էր քաշում, զեահ զուգա էր տամ:՝

Պարտիզպան.

Պարտիզպանն ասեց յթէ ի՞նչ անեմ ես,  
Որբ բիւլբիւլի մեղքը ո՛ւր գտանեմ ես,  
Եթէ վարդին տեղից ցիրուցան անեմ,  
Խեղձ բիւլբիւլին կենդան կու սպանեմ ես,՝  
Բէհուշ վեր ինկել արտասուօք լալով,  
Ման էր գամ մինչի լուս զառն սզալով:՝

Վարդը.

Վարդը պարտիզպանին խիտ յանդիմանեց,  
Մին զարհուրելի ձայն սրտիցը հանեց,

՛Աւերակ դառնայ քու բաղըդ, պտուղդ,  
Քեզ ասեմ, պարտիզպան, այս է իմ անէծ,  
Քաղցրախօս բիւլբիւլիս թէև խոստացար  
Իմ մօտ գալի, միայն խօսքիդ չի կացար:՝

Փոռ.

Փոռը վարդին ասեց յքեզ խնայելով,  
Ամեն փորձանքից քեզ ազատ պահելով,  
Բոլոր տարի քեզի ես իմ ծոցումս  
Պահում եմ ես պահպանելով, նայելով,  
Տուել եմ պայծառ գոյն, տուել եմ քեզ հոտ,  
Այժմ ՚ի տեղի իմ բիւլբիւլը գա՛յ մօտ:՝

Բէւլբիւլ.

Բիւլբիւլը նասիմին զրեց մին նամակ,  
՛Կարմիր վարդիս խաթրի դրել եմ ամակ,  
Պարտիզպանի խօսքով մտել եմ այդի,  
Բայց փուշից խոցուած եմ, հասիր ինձ քօմակ,  
Անմխիթար ծառայ, յետին պաշտօնեայ,  
Յաւալի սոխակին մին հնար գոնեայ:՝

Նասիմ.

Մասիմը բիւլբիւլի զիրն կարդելով,  
Առակաւոր բանիւ պատասխան տալով,  
՛Ձգոյշ ձեռն ոչ է պարաւանդեալ,  
Առնել զայն, զոր լեզուն տայ խոստանալով,  
Անխալ կանոն է այն խրախճանը,  
Չոր խոստանայ լեզուն, դա՛ռն է վախճանը:՝

Կարձ ու զօրեղ նամակ նասիմն զբաւ,  
Նամակի զօրութեամբ բիւլբիւլին ծռաւ,  
Ամեն մարդու խօսքին պարտ չէ հաւատալ,  
Մին պարտիզպան քեզի որքան չարչարաւ,  
Ե՛կ Մեղքիսէթ, հիմիկ դատաստան մտիր,  
Թէ ունես նասիմին պատասխան, զտիր:՝

12.

Յայտնի ա որ վազն ինձ մօտ ես գալու  
Մութնով արի՛ ոտիդ մատերի վերայ,  
Հիսիկվայ մարդիքը չորս անկաջ ունեն,  
Հաղարով էլ կախ են պատերի վերայ:

Բամբասելով ջանի աջար կու շինեն,  
Լեզուները օձի փաջար կու շինեն,  
Թէ մին բան էլ անենք, հաղար կու շինեն,  
Խօսումեն մեզնից լաւ շատերի վերայ:

Ինչպէս եկար մօտս, կասենք, կու լսենք,  
Ու ամեն բան իրա կարգով կսկսենք,  
Մեր խորհելու բանը չաա չի վսկսենք,  
Պատճառ, շատ ենք խօսել վատերի վերայ:

Քեզնից ի՞նչ ա պակասում, թէ լաւ Ֆիլքր անես  
էս մին լաւութիւնը հետդ կը տանես,  
Թշնամու աչքն էսպէս բանով կը հանես,  
Թո՛ղ բարեկամք խնդեն ետդերի վերայ:

Էջքան ասելով գլուխս դանկ իլաւ,  
Եշխիցդ հալս սարխօշ ու բանկ իլաւ,  
Հ տաւով քու անունդ չորս վանկ իլաւ,  
Մեղքիսէթը զբաւ քու ջադերի վերայ:

13.

Երեխի ունքը գովում, աչքը գովում թուշի հետը,  
Իլլահի թէ բուխաղը սամարկամ պաօշի հետը,  
Մանաւանդ երկու դանայ հասած նուռն դօշի հետը,  
Չեմ փոխիլ սաղ Օսմանցու տէրութեան զուռուշի հետը,  
Քանս թէ արքայութիւն անպիտան ուրիշի հետը:

Հասած հայվայի նման ծառիցը կախ ա մնացել,

Մինչի կէտս անխաթայ, մաքուր ու շուխ ա մնացել,  
Ո՛վ տեսել ա սրտումը մեծ ախուվախ ա մնացել,  
Շատերի էլ խորհուրդն սրաներում լախ ա մնացել,  
Չեն կարացել վայելել էս փառքի սար դոշի հետը:

Երեխի ջահակիցն արտասունքըս սէլ ա իլէլ,  
Ջամալին մտիկ տալով, երկու աչքս պէլ ա իլէլ,  
Ջիգարս քրքրվել ա, սրտումս թելթել ա իլէլ,  
Ինձ համար մին հօդի ա, հրեշտակ Գաբրիէլ ա իլէլ,  
Ղարշու գուշման ա շինել ինձ իմ թայը թուշի հետը:

Բաղար ունի, քաղաք ունի, գեղ ունի դոշի վերայ,  
Կաթն ունի, մեղր ունի, եղ ունի դոշի վերայ,  
Լեռան ունի, բլուր ունի, գուզ տեղ ունի դոշի վերայ,  
Ձէթ ունի, փիլթայ ունի, կանթեղ ունի դոշի վերայ,  
Գեղեցիկ բուրաստան է սպիտակ բուխաղը դոշի հետը:

Լաւ բիւլբիւլ ա, ի՞նչ անեմ, իրան լայեաղ բաղումը չէ,  
Լուսնիակ ա, ի՞նչ անեմ, արշի մահալաղումը չէ,  
Սալբի ծառ ա, ի՞նչ անեմ, որ ջուրի դրաղումը չէ,  
Կարմիր վարդ ա, ի՞նչ օգուտ որ կանաչ ետիրաղումը չէ,  
Հէնց ՚իզուր վըթաթվել ա մին Ֆայրաղի փուշի հետը:

Վ առվում ա ճրագի պէս ոսկի աշտանակ ջաղումը,  
Քուլ են դառել շատերը սրա վառած օջաղումը,  
Կորուստս պտրտումեմ սրա քունջ ու բուջաղումը,  
Ախ թէ կամք տար, գլուխս մին ժամ դնեմ զուջաղումը,  
Չօռ էլ ասի, ջան կասեմ, կանեմ քուշի քուշի հետը:

Դոշը բացեմ պրունիս երկու պտուղ խունկին դնեմ,  
Եթէ ես ծարաւանամ, պռունիս պռունկին դնեմ,  
Թավալ գամ գեանի վըայ, գլուխս ծնկանը դնեմ,  
Իմ բոլոր ջանը, կեանքը նրա սէրին զբաւ դնեմ,  
Եթէ հաստատ խօսք կը տայ ինձ նման զավրուշի հետը:

Ալամիս լուս ա տայիս կիօնվար թրաշ ունգոմը,

Եարայու եմ ես սրա էշխի օխի կրակովն  
 Վարդապետին շուռ կտայ բոլոր իրա վանքերովն  
 Մեղքիսէթին ձեռք չի տալ, պար կուգայ իւր հանկերովն,  
 Մին լաւ դաճասա պիտի էսպէս լաւ դուշի հետը:

14.

Ծաւծաւախօս ծիծեռնակ թռչուն աղջիկ,  
 Թռչնք ծառին, շինենք մինտեղ բուն, աղջիկ,  
 Զօրով չփով ծեփենք շինենք տուն, աղջիկ,  
 Ոչ գէլ անննք, ոչ աղուէս, ոչ շուն, աղջիկ,  
 Զալ ազուաւը հէ՞ր տանի մեր ձուն, աղջիկ,  
 Էն ձուկը կիլի մին սիրուն աղջիկ  
 Քու պէս փափուկ, քու պէս ճերմակ ձիւն, աղջիկ,  
 Նրան տեսած՝ փառք կ'տանք Աքոծուն, աղջիկ:

Քու հետ եթէ ես նստում եմ սեղանում,  
 Ոճ էլ ուտեմ, մարսում եմ, չեմ նեղանում,  
 Քու հետ եթէ ձեռնահաղ եմ խաղանում,  
 Կիսակենդան տեղիցըս եմ սաղանում,  
 Թէ տանեն ինձ կախ տալի կախաղանում,  
 Դու կողքումս, մահիցս չեմ վախանում,  
 Քու հետ եթէ բազնիսումս եմ լողանում,  
 Թաբաղիցդ խոշկաբար եմ գողանում,  
 Քու հոբբովդ ես եմ փրվում, չաղանում,  
 Շատ ապրես, դու իմ խանում խաթուն աղջիկ:

Քու հետ թէ եսիր գնամ Դաղըստանում,  
 Անհաւատ Չէչանն ա հետս դօստանում,  
 Ոչ չարչարանք, ոչ պատիժ չեմ ստանում,  
 Ազատ էյլիէր (\*) հնար ա խոստանում,  
 Թէ դու կողքիս կանգնած, ես դատաստանում:

(\*) Ազատել, արձակել:

Դատաւորին ճոխ ճոխ եմ պատասխանում,  
 Շահամայում սարէյի զիւլստանում,  
 Հուսակովել ես Շիրազ, Մարաղստանում,  
 Փուչ դամաղիցդ լոյս Ռուսաստանում,  
 Խաթր շահել չես կարում, նախշուն աղջիկ:

Էսքան զովամ քեզի ինկած հաւասի,  
 Տեսնեմ, դու ի՞նչ կանես ինձի դուասի,  
 Արի՛ ապրենք մէկտեղ մէջ մի դաճասի,  
 Ուրախ լինենք, մեռնենք նաճաս նաճասի,  
 Արի՛, մարդա մին մին թափմաջա ասի,  
 Ո՛վ լաւ ասի, նա հասնի իւր մուրազի,  
 Վաղը էլի աղբէր ու քոյր նա ասի,  
 Եղբօր քրոջ ո՞վ գէմ կարի տնազի,  
 Էդ պայմանին թէ կուգաս սազ ու բազի,  
 Բանը մեր մէջ կու մնայ թագուն, աղջիկ:

Մին բան էլ կայ, պէտք ա վազ չի ընկնես,  
 Սէր ասած բան բնաւ, բալաս, չի ընկնես,  
 Քեզ տանի Արազ կը քցի, չի ընկնես,  
 Ծովը աչքիդ չոր կը ցոյց տայ, չի ընկնես,  
 Տե՛ս դու, որ ջուկ տեղեր միրաս չի ընկնես,  
 Ես Աշտարխան եմ, դու Շիրազ չի ընկնես,  
 Աղանձ չիլես, ձեռքի չարազ չի ընկնես,  
 Այլոց միննաթ, ինձնէն ղայրազ չի ընկնես,  
 Մեղքիսէթի հետ էլ բառաստ չի ընկնես,  
 Սաղն եմ ասում, կումնաս մաջմուն, աղջիկ:

15.

Իրա՛ւ ա, ես քեզի շատ շատ սիրում եմ, Մաշա խանրմ,  
 Էդ ա փիս, որ ահօշիկդ փարդաները քաշ ա, խանրմ,  
 Երկու աչքով տեսածս դու մի՛ արա հաշա, խանրմ,  
 Դու քօռացար չի տեսար, ես արամ թամաշա, խանրմ,

Սինարանդրդ բացողը իմ հետը աղաշ ա, խանրմ:

Թէպէտ էդ միջոցներումը քու պէսները շատ չիկայ,  
Ի՞նչ օգուտ որ քու պէսի համար բարեկամ, կադ չի կայ,  
Սյուսհետ թէ սուրբ դառնաս, զրատ քեզի հաւատ չիկայ,  
. . . . .

Իմ յիմար խելքով քեզնից շատ ինձ հատար չունէի,  
Իմ կարծիքով քեզնից շատ ինձի բաժազար չունէի,  
Իմ բերանում քեզնիցը շատ ինձի պատառ չունէի,  
Քու խաթրի զիշերը քուն՝ ցերեկը դադար չունէի,  
Հաղիդ խուճարի չիթ էր, բայց հիմայ դումաշ ա, խանրմ:

Պաշտար ու մադրաթ շինամ քու օյնները Ֆանդերը,  
Հառամ իլի քու կերած փուտայ նուզուլ ու դանդերը,  
Թէ չեմ մեռնիլ, կու բայեմ ես էլ մին մին քու բանդերը,  
Քիչ բան չէ էս ուղիների իմ պէս մարդի տուն քանդիլը  
Տունումդ սէ հաց չիկար, բայց հիմայ լաւաշ ա, խանրմ:

Սուրուկ դառար կպար ինձ, արինարամ արար քիչ ա,  
Լէզիկն քեզնից ուսհմով ա, ջառ կու դնամ օխտը քու ջա,  
Էդ ի՞նչ ա թախտի խալի, էդ ի՞նչ ա ձմեռւայ քէլա,  
Իմ խալարը ձիդ ես տամ, բայց քունը միշտ օրամէջ ա,  
Տախումդ հասիլ չկար, բայց քունը հիմա մաթի աշ ա խանրմ:

Եարայում սատիում էիր, կողքի շուռ տվող չունէիր,  
Սիրարդ նուկբար էր ուզում, մին ապուր տվող չունէիր,  
Շապիկ չիկար հազիդ, մին թօփ նաշուր տվող չունէիր,  
Լեզուդ դամաղիլ կպած՝ մին կաթ ջուր տվող չունէիր,  
Բայց հիմայ դանշարումդ դուլ ու դարաւաշ ա, խանրմ:

Քօշի ու սարայ տուներդ տենտողը կասի սարքին ա,  
Ու մէջի հանդամանքը ամենայն բանը կարգին ա,  
Ասածդ ստեղծվում ա, հրամայումես էքքին ա,

Փէտրդ պետերիկով ա դարսած՝ սպայի ջարկին ա,  
Հայաթըդ շողջողում էր, չունէիր թալաշայ խանրմ:

Հիմայ լաւ վիճակումն ես, վերջիդ աստիճանը փիւ ա,  
Որ մտար եօթանասուն, ձեռիդ վեր կառնես մին քիստ,  
Կու կանգնես ժամի դռնում, կասես տեսնեմ մարդ գալի՞ս ա,  
Որ ձեռը ծխտի քիսիս, տեսնի զատ կա՞յ, թէ խալիս ա,  
Սելքիսէթը քու պէսներին տեսել ա համեշա, խանրմ:

16. (\*)

Յովհաննէս սրբազանը որպէս որ եկաւ,  
Կայնան ասան թէ՛ բուրդաբերան ա,  
Դրիստ լաբլաբու ասիլ չի կարում,  
Ե՞րբ կիլն քաղաքից դա հեռանայ:

Ասան թէ դասար Մարդիս բխաւը,  
Ընկեր ա հետը, ծուռն ա խխարը,  
Բերէ՛ժանովն ա քօլ ըխախարը,  
Սրբազանի հետ կաթն ու մեռոն ա:

(\*) Կամենայով մի համառօտ աեղեկութիւն տալ մեր սիրելի կարդացողներին՝ Աստրախանի Հայոց վիճակաւոր Առաջնորդների մասին, մենք մի պատուելի անձից խնդրեցինք և ստացանք նոցա անունները, բայց ցառումենք, որ նոցանից շատերի համար ոչինչ չենք կարող հաղորդել, թէ և մենք մտադիր էինք մի աշխատութիւն կազմել Աստրախանցոց գաղթականութեան օրից հետէ մինչև այժմ, և արդէն բաւական նոր նիւթեր ունէլնք այդ նպատակի համար, բայց զժքաղաքար է՛ յաջողվեցաւ մեզ, որովհետև հարկաւոր էր զվել այնպիսի անձանց օգնութեանը, որք ամենեւին այլ հայեացք ունին այդպիսի բաների վերայ: Չ՛հեռանանք մեր նպատակից, անձ վիճակային առաջնորդների անուանքը:  
Սանփաննոս Արքեպիսկոպոս,  
Մարդիս Արքեպիսկոպոս,  
Էնրսէս Արքեպիսկոպոս որ դեռ ևս Աստրախան չհասած վախճանել է Ղըլարում:

Ասան մին հնար սրան կործանենք,  
Ազգի ամօթը քանի՞ մին տանենք,  
Կաթուղիկոսին թէ բողոք անենք,  
Բանը կու ձգվի, կու երկարանայ:

Ի՞նչ սրբազան ա, կանգնած աթոռում  
Սահաթ մինուտ հէնց քամակն ա քորում,  
Ջանումը քոս կայ, ճուճու կայ փորում,  
Ծունը գնելու վախում ա կեռանայ:

Նա էլ վախճանաւ, երբ լրվաւ թիւը  
Մարդը կորցրաւ ազգի պատիւը,  
Կարձեմ, գումար տամ, ձիգ ա հաշիւը,  
Անցկացած բան ա, գնայ, հեռանայ:

Էս Յովհաննէսի կտոր թարիֆը  
Ինքը հասկանայ խելօք հարիֆը  
Հիմայ ի՞նչ անենք, սրբազան չունենք,  
Ասան, Սերովբէն թէ գայ, կընդունենք:

Մաղաքիա Արքեպիսկոպոս-  
Կարապետ Արքեպիսկոպոս,  
Գրիգոր Արքեպիսկոպոս,

Բարսեղ Արքեպիսկոպոս Փառակեցի, որ նշանակվել էր Էջազար Կաթուղիկոսից սա մի դժնէարարոյ անձն է եղել, և այնքան զզուացրել է ժողովուրդին, որ նորա ապստամբվել են Էջմիածնի իշխանութիւնից և զիմելով Ռուսաց տէրութեանը, խնդրել են որ նշանակվէր իւրեանց առաջնորդ Ստեփաննոս Արքեպիսկոպոսը Գանձասարու վիճակից. այս ապստամբութիւնը եղել է յիշեալ Ղազար Կաթուղիկոսի օրերով Հայոց 1198 թուին և. տեւել է քսան տարի մինչ առաջնորդութիւն վարել է Ստեփաննոսը, որ մեւել է Քրիստոսի 1768 թուին Յունվարի 15. մարմինը թաղուած է տեղակօն Հայոց աւազ եկեղեցւոյ մէջ: Այս քսանամեայ ապստամբութեան ընթացքում կաթուղիկոսութիւն կատարել են Էջմիածնում Ղազար, Մինաս, Աղէքսանդր եւ Յակոբ կաթուղիկոսները մինչև ի Յիսէօնը: Այս վերջինս տեսնելով աւրդի պառակտումը անարժան սևազուխների շնորհիւ, զիմել է Ռուսաց Եկատարինէ Կայսերուհւոյն

Յետ նորա եկաւ զիտուն Սերովբէն  
Ասան խելօք ա, բայց հերձուածող ա,  
Սրբոյն Ղազարու վանքից փախած ա,  
Մեծ պրօտեստանտ ա, բաներ բացող ա:

Ասեցին, սրբան մի համգամ ունի,  
Ըստ որում ջերում միշտ բաղամ ունի,  
Գիշերն էլ կողքում մին մաղամ ունի,  
Բաց պրօֆերանս թուեղ խաղացող ա:

պատուական ընծաներով եւ խնդրել է որ Աստրախանի վիճակը հնազանդի և հպատակի Էջմիածնական իշխանութեանն. Ողորմած Կայսերուհին եւս իւր կողմանից ընծաներ է ուղարկել Սիմէօն Կաթուղիկոսին 1768 թուին և Կաթուղիկոսից առաջարկված Մինաս Արքեպիսկոպոսին նշանակել է միւսնոյն թուին նուիրակ և Առաջնորդ (օգոստոսի 15-ն):

Յովսէփ Արքեպիսկոպոս երկայնաբազուկ Արղուծեանց, նշանակվել է 4 Յուլիսի 1774 թուին. սա 1800 թուի Ապրիլ ամսում ընտրվեցաւ Հայոց Կաթուղիկոս և Էջմիածնի վերադառնալու ժամանակ վախճանել է թիֆլիզում 9 Մարտի 1801 թուին, մարմինը տարված է Էջմիածնի և ամփոփված է այնտեղ: Յովսէփ սրբազանը զեղեցիկ և անձնայ մարդ է եղել, և շատ երեւելի գործեր է կատարել Ռուսաստանում. իւր Առաջնորդութեան ժամանակ նորա շատ մանրամասն կեանքը դեռ ևս բոլորովին ՚ի լոյս ընծայուած չէ: Նա Աստրախանում բացել է 1796 թուին Հայոց տպարան (այն ժամանակ երեւելի) Խաղարեանց տոնմի արդիւնքով, տպարանը շարունակվել է երեսուն տարի, ունի տպագրած գրքեր, բայց յառաջանալու փոխանակ նա օրէջօր յետ դնալով, վերջապէս բոլորովին փակվել է, և այսօր գուցէ մի քանի չնչին փշրանքներ մնացած լինին նորանից և այն՝ տէրը զիտէ, թէ ո՞ր անյայտ անկիւնների մէջ: Այս և այսպիսի ազգօգուտ գործեր շատ է հիմնել Սրբազան Յովսէփը ամեն տեղ, ուր հովուել է, բայց նոցանից հազիւ թէ մի երկուքը պահել են և շարունակել են իւրեանց գոյութիւնը արժանաւոր հիմնադրողի և ջերմ աշխատատրի նպատակի համաձայն: Յովսէփ Սրբազանի օրերով բացվել է Աստրախանու հողերը թեմական ատեանը 25 Հոկտեմբերի 1782 թ. Այս երեւելի հողերականի պատկերը մի ժամանակ շատ ընդհանրացած է եղել Աստրախանում, բայց այժմ միայն Կրիւշչայի (ուր ըստ մեծի մասին հայեր են բնակվում) աղքատ տներում կ'հանդիպիր, իսկ հարուստ տների յարկերի վերայ (челобитие) գուցէ դասնէք կուպտացած թօղերի տակ:

Պանդատ գանդատի քամակից գրան,  
Մին ճշմարիտին քսան սուտ գրան,  
Իսպառ էս մարդին զրպարտան ճռան,  
Ասան, սէյրանգեա՛հ շատ գնացող ա :

Էնքան արաք որ սրան էլ թաղաք,  
Էն լի պարտէզից մին վարդ չքաղաք,  
Քօռանն'ս բարով, տարաբա'ղդ քաղաք,  
Աստուած վրէժխնդիր ու բարկացող ա :

Եփրեմ Արքեպիսկոպոս նշանակվել է 17 օգոստոսի 1799 թուի, Կոթու-  
ղիկոս ընտրվելով, գնացել է Աստրախանից 3 Ապրիլի 1810 թուի, սա վեր-  
ջին ժամանակներում „վշտայի Եփրեմ“ էր ստորագրվում:

Յովհաննէս Արքեպիսկոպոս նշանակվել է 26 Հոկտեմբերի 1811 թուի,  
վախճանվել է Աստրախանում 13 Դեկտեմբերի 1828 թուի. մարմինը թաղած  
է աւազ եկեղեցւոյ մէջ:

Սերովբէ Արքեպիսկոպոս նշանակվել է 1 մարտի 1852 թուի, և վախճա-  
նել է 20 Յուլիսի 1847 թուի, մարմինը թաղուած է աւազ եկեղեցւոյ մէջ:  
Ինչպէս որ պատմում են, Սերովբէ Սրբազանը վերադարձած է եղել Վենետի-  
կից, ունեցել է լաւ ուսումն, սորա աշխատութեամբ հիմնուել է Պմենարիան  
Աստրախանի՝ որ իւր գոյութեան օրից սկսեալ շատ փոփոխութիւնների ենթարկ-  
վելով՝ վերջապէս փակվել է Մատթէոս սրբազանի և նորա օգնական Յովա-  
կիմ վարդապետի (այժմ եպիսկոպոս) օրերով 1863 թ. եւ այնուհետև „հոգւոյն  
հանգուցելոցը“ խիստ պինդ է եղել, չ'գիտենք յարութիւն կուննի այս  
հանգուցեալը թէ ոչ, և ե'րբ (Սմենարիայի համար կարդա „Մեղու Հայաս-  
տանի“ համար 13, 1872 թուի յօդուածը Անցորդ ստորագրութեամբ): Սերով-  
բէի օրերով մի այլ արժանաւոր բան չէ պատահել, միայն նորա մահից յետոյ  
60.000 ռուբլի մնաց, որ թէև զործածվեցաւ Էջմիածնի նոր Ակադեմիայի  
շինութեան համար, բայց բաղդաւոր աղղեցութիւն չունեցաւ այդ շինութեան  
վերայ, երևումէ որ այդ գումարը աւազ էր, և մի խորհուրդական տուն չ'ը  
կարող այնքան երկար մնալ այդ անհաստատ հիման վերայ:

Սերովբէ Սրբազանի օրերով բարձրագոյն հաստատվեցաւ Հայոց եկեղեցւոյ  
հոգւոյն զործոց կառավարութեան կանոնադրութիւնը 11 մարտի 1856 թուի:

Բարսեղ եպիսկոպոս որ Սերովբէի մահից յետոյ նշանակվել էր իբրև ժա-  
մանակաւոր կառավարիչ վիճակաւորի պարտականութեան, Էջմիածին վերա-  
դառնալուց յետոյ վախճանել է այնտեղ:

Նա ախտայ հաւին խօրօզ չէր ասում,  
Դօմբի աղային հերոս չէր ասում,  
Դրբոյ համար քարոզ չէր ասում,  
Քննի, իմանայ, ով հասկացող ա :

Էս Սերովբէի կտոր թարիժը  
Ինքը հասկանայ խելօք հարիժը.  
Հիմա ի՞նչ անենք, սրբազան չունենք,  
Ասան, Մատթէոս թէ գայ, կընդունենք:

Դէ', բարի' սհաթի, աչքներդ լուսի,  
Մատթէոս եկաւ թաղայ սրբազան,  
Ամիս չի քաշաւ մին կոթ կպցրան,  
Արթուն հովիւ չէ, քնա'ծ ա, ասան:

Թէպէտ մունջ գառն ա, բաները ձիգ ա,  
Մեծ փողի տէր ա, դիմ թագայ սլքք ա,

Մատթէոս Արքեպիսկոպոս (մի ժամանակ Նախիջևանի) նշանակված էր  
Ապրիլ ամսին 1838 թուի. ներկայ Վեհափառի ընտրութեան ժամանակ գնաց  
Էջմիածին 29 Օգոստոսի 1866 թուի և այնտեղից վերադառնալիս վախճանե-  
ցաւ Ղզարում 6 Դեկտեմբերի միևնոյն թուի, մարմինը թաղուեցաւ այնտեղի  
Լուսաւորչի անունով եկեղեցւոյ սրահում:

Գէորդ Արքեպիսկոպոս Վեհապետեան (մի ժամանակ Ատրպատականի) նշա-  
նակված է 3 Նոյեմբերի 1867 թուի և այժմ ևս վարումէ իւր պաշտօնը:  
Սորա ժամանակ և սորա աշխատութեամբ մի քանի յառաջաւորների հետ,  
բարձրագոյն հաստատվեցաւ Աստրախանու Հայ աղքատաց համար հոգաբար-  
ձութիւնը (200000 ռուբ. արծ. աւելի գումար ունի հոգաբարձութիւնը) որ շատ  
վէճերի և խնորհիւների պատճառ եղաւ, 'ի հարկէ ոչ մի գործ յառաջ  
չի կարող գնալ (մասնաւանդ մեր հայերիս մէջ) առանց զոցա, գոնէ հասարա-  
կութիւնը պաշտեց իւր իրաւունքը և ընտրեց արժանաւոր անձինք այդ գոր-  
ծը յառաջ տանելու, տեսնենք թէ որքան կը պակսի նորա լի յոյսը: Աստրա-  
խանում շատ նիւթեր, շատ գործեր կան կատարելու, միայն չերմեռանդ ձեռ-  
քեր և զուխներ են պէտք. երանի' թէ այս երկուսիցն էլ պակասութիւն չ'ու-  
նենային Աստրախանցիք . . . . . 8. Փ.

Եւանձնը տէրտէր, տիրացու չկայ,  
Աստուէլ չի կարում, չունի գաւազան:

Տեսէ՛ք, մին ազգում որ չի կայ ուսում,  
Տուտուց մարդը կերք ինչե՞ր են խօսում,  
Ասան թէ մեծ փող տոկոսով դուրսում  
Ունի դուրս տուած, ջամին չի հասան:

Էս Հաշտարխանից առանց տնազի,  
Աղատվող մարդը հարկ չէ վաւզի, (\*)  
Կաղ էշերին քօռ նալբանդ կը սազի,  
Ամիսն էլ լինի ցելս ըռամազան:

Մատթէոսին էլ դարբէղար քցան,  
Լերդ ու թողի մէջ սուր փշեր ցցան,  
Կարիճի նման քամակից կծան,  
Խեցգետինի պէս էլի յետ վազան:

Էս Մատթէոսի կտոր թարիճը,  
Ինքը հասկանայ խելօք հարիճը,  
Հիմա ի՞նչ անենք, սրբազան չունենք,  
Ասան Գէորգին ուրախ կընդունենք:

Վերջ բանին եկաւ վեհեան Գէորգը,  
Է՛հ, է՛հ, է՛հ, ա՛յ մարդ, սաստիկ հաւանան,  
Ասան դա եթէ Հաշտարխան մնայ,  
Հոգևորականք շատ կու լաւանան:

Մին փոքր միջոց ոչինչ բան չիկար,  
Տեսան էս մարդում վատ նշան չիկար,  
Ասան, էլ էսպէս սրբազան չիկար,  
Թօմայի նման Աստուած դաւանան:

(\*) Կարծեօք թէ մեր բարեկամը շատ չի սխալվում իւր այս կարծեաց մէջ՝  
Աստրախանի ժողովուրդի բնութեան մէջ մի դիժ նշմարվումէ: Ե. Փ.

Բայց որ բանը եկաւ հասաւ փողի,  
Սիրտները ինկաւ մեծ ահուզողի,  
Չայնը հասաւ մին յուրա մասնիչի  
Բնակվաւ սրտում չար ու սատանան:

Ասաւ թէ ի՞նչ փող սրբազան մարդի  
Ծոմ պահի, ժամ գայ, աղօթքը կարդի,  
Դա եկել ա որ մեր կաշին խարթի՞,  
Մին խօսքով շատին խելքիցը հանան:

Ասան, լսե՛լ էք, էս մեր աբեղան  
Ժամում սարքել ա կուռքերի սեղան,  
Մեծն ներսէսին էս մասին դեղան,  
Ումին յայտնի չէ, ահա՛ իմանան:

Ասան, ժամի մէջ զանդ ա խփել տամ,  
Շուրի, Շահնազի հանդ ա խփել տամ,  
Դա մեր ահանջին թանդ ա խփել տամ,  
Դրա հիլէքը էլ կու շատանան:

Կասկել էր սրանց, չէր թողնում չարը,  
Գնան հարցնեն բանի պատճառը,  
Որ նա տար սրանց կողպի աշառը,  
Կամքն Աստուծոյ էր, թո՛ղ յիմարանան:

Չայնէ մարգարէն, թէ ոչ շինէ տէր,  
Նանիր վաստակին շինողաց ձեռեր,  
Ո՛ւր հաւատ, ո՛ւր յոյս, ուր հաստատուն սէր,  
Թէ լաւ նկատենք, վատ է նշանան:

Օրէնք, պատուիրանք թէ մեզ տուած կայ,  
Հա՛րկ ա իմանանք որ վերն Աստուած կայ,  
Հէնց պէտք ա ինքը երկնքից ցած գայ,  
Փէշից կախ ինկնեն, տեսնեն, հասկանան:

Փշաւ նասիմը, հալաւ ձիւները,

Ողորդաւ, տարաւ անհիմն տուները,  
Վիշատող թռչունք փախան բուները,  
Ջաֆայ քաշեցին, թո՛ղ հանգստանան:

Վերջ մտածելով ես ինքս ինձի,  
Ո՛վ ինչ ցանել ա, էն էլ կու հնձի,  
Դրիստ խօսողին մին դամէն, մին ձի,  
Թո՛ղ Մեղքիսէթի վերայ բարկանան:

17.

Վանաչ վաղիդ դուրբան, խաղող, ես քու ստեղծողին մեռնեմ,  
Անուշ զինին քեզնից կիլի, ես նորա խնդրին մեռնեմ,  
Վո՞ր զանցեմէն ես բահամ դամ, քու պողաբեր խողին մեռնեմ,  
Երբորդու թեան նմանակ ես, քու տուած պտուղին մեռնեմ,  
Եարաբ ի՞նչ թավուր զխանամ, ես սրա քամողին մեռնեմ:

Դուն սիրում ես էնպէս մարդու, ո՛վ բարի է քու մօտ դալի  
Թէ համեշա քեզմէն խմէ, էլ առաւել խելք ես տալի,  
Բայց էն մարդն որ ագահ է խնում քեզմէն փրա խիսալի,  
Ղլխավէր ես նրան շուռ տամ, շինում ես դու ամօթալի,  
Շատերին էլ միտքն ես բացում, շինումես դու շնորհալի,  
Որքան որ մունջեկ մարդ խմի, էլ չես թողնում իրա հալի,  
Էսքան հուքմը ու զօրութիւն քեզի պարզեողին մեռնեմ:

Առանց քեզի ո՞նց դող կանեն խանի բէկի մարաքումը,  
Թէ դուն չիլես, մաթալ կիլի քահանան պատարազումը,  
Իլահի թէ ձեռս մեկնեմ քեզ նշանց տամ ճրագումը,  
Եաղութի պէս ջովհար կ'տաս փէյալայի պարակումը,  
Դուս գանք սէյրի մէկ քանի մարդ, զոգ անենք վաղիդ տակումը,  
Շուշեդ լեքը դրած լինի, խորովածն էլ կրակումը,  
Թունդիդ թէ հինգ ոսկի ասեն, հալա՛լ, քու ծախողին մեռնեմ:

Վլլոցիդ դուրբան, զինի, աջաբ լազաթ ես տամ շքին,  
Գամ պառկեմ վաղիդ տակումը, յօժար տամ ինքս իմ հոգին,

Ինչ վաջիք է մէջլխումը հար եթանին սաղի ջուկին,  
Ղադրդ քաղքցին լաւ գիտէ, էս բանով նրանք խելօք ին,  
Տուն չկած տեղ՝ մէջլխումը չեն կարող մին թառ քօքին,  
Բայց դուն ինչպէս մէյդան եկար, հին բաներ կը նորոգին,  
Եւ չ'զիտեմ, ո՞նց դովեմ քեզ, ես քու սահմանողին մեռնեմ:

Իլլահի որ մէկ քանի մարդ հաւաքված զնում են չօլը,  
Մէկ զանցեմէն քաբաբն է դամ, էն մէկէլ զանցեմէն զօլը,  
Մէկ էլ անսիր հառայ տուին ալլավէրդի, եախշի, օլը (1)  
Որքան որ Ֆլքրոտ մարդ իլի, զիփուն ցրիւ կտաս քօլը,  
Բայց երանի՛ էն մարդին, որ գիտէ քու չափան ու եօլը,  
Մեղքիսէթն եմ, շատ եմ լամել մէկ ժամանակ սրա բօլը,  
Չում որ այժմ թօբաքար եմ, ինձ սաբու տուողին մեռնեմ:

18 (2)

Սկզբից պէտք ա խօսեմ, չում որ բանը սկսել եմ,  
Պատուարժան երեցփոխի հաշիւ տալն ես լսել եմ:

Ինչպէս որ էս պատուելին երեցփոխութեան ցանկացաւ,  
Սուրբ Գէորգայ մատաղ արաւ ՚ի տեառնէ զոհունակ կացաւ,  
Ծանօթ էր աղբիւրներին, էս գործին շատ հաւան կացաւ,  
Ճամին էլ չուան էր պէտք, էս միջոց նա էլ թանգացաւ,  
Ասաւ, ձար չիկայ կառնեմ, բաւական ես սպասել եմ:

Երեցփոխ մարդ, դալբութիւն, չի ճերմակի՛ քու սախկալը  
Նամաղուլ կանի քու մօտ էն հաւ դողացող չախկալը,  
Ձեռիցդ դազ գնացին սովդաքարը ու բախկալը,  
Սունկ արար գարեանակէյին ոչ մաղ թողար, ոչ խախալը,  
Էս մասին երգում կուտեմ, դու չի կարծես բամբասել եմ:

(1) Այս խօսքերը շատ վաղուց և այժմս եւ գործածվում են հայոց մէջ համարեա թէ ամեն տեղ: Նշանակում են Աստուած տուեց, բարի եղիր, կամ բարի մանապարհ: (2) Յաւում ենք, որ չկարողացանք իմանալ այս պատուելի երեցփոխանի անունը, լաւ գործունէութիւն չէ՞ ազգի և եկեղեցւոյ օգտի հա-

Քեզ նման աննամուս մարդ մինը չեղել հազարիցը,  
 փոխոխական ցաւի տէր ես, երկիւզ կայ քու ազարիցը,  
 Օբբաչէքիդ քամակից փոշտ ա մանգամ բազարիցը,  
 Ամենայն բանից կուշտ ես բացի շեւի գազարիցը  
 Քքածս յետ չեմ լղիլ, ինչ որ ասել եմ, ասել եմ:

Ինքդ գոյով երեցփոխ, թավուզի պէս ուռում էիր,  
 Բայց ոտերդ տեսնելից, պոչդ ձախուծուռում էիր  
 Սահաթ մինուտ սրբազանի աջը համբուրում էիր,  
 Նորա թշնամիներին ողջին թուքումուրում էիր,  
 Էս բանումը զուր չեկայ, ամենայն տեղ ես խօսել եմ:

Ինչ իլաւ ձեր մէջին, որ էլ չես առնում նորա աջը,  
 Պատարազիչ օրումը չես համբուրում ձեռի խաչը,  
 Խիարը ծուռ դուս եկաւ, շուռ եկաւ քու թախտ ու թաջը,  
 Հոգիդ տուար սատանին, կամաչի քու պէս պալաչը,  
 Էս կեանքն էլ, էն կեանքն էլ, կասեմ, ինչ որ ասել եմ:

Քեզի սուր դանակ չունես, քու մորթածը քու թերով ա,  
 Հալալ աշխատանք չունես, դալըղուլաբի սուտերով ա,  
 Ճշմարիտ բան չես խօսիլ, սուտ երդումդ փութերով ա,  
 Ստորագրութիւնդ տեսամ, սկօբներով, պուտերով ա,  
 Դաստըխաթըդ էլ դայբ ա, էս բանի քօքին հասել եմ:

Մինը չկայ որ իմանայ, սրտիս միջի երկու խոցը,  
 Մինը էն ա, որ գտնէիմ, էս պարոնի օրօրոցը,  
 Մէկ էլ գտնէիմ ծծմօրը, արդեօք կենդան է էն քօծը,  
 Որ բէշիգում տար վճիռը, կորէր սրա խրխուցը,  
 Էս երկու հոգսի մասին կեանքիցս ես նուազել եմ:

Մին տարի ընտրել էին քեզ, կարծեմ դեպուտատ էիր,  
 Կտորըդ չէր գտնվում Հաշտարխանում մին հատ էիր,

մար (ի հարկէ, եթէ բոլորովին ճշմարիտ է այս երգի բովանդակութիւնը) ուրախացիր, հասարակութիւն . . . . . Յ. Փ.

Ջրկեցին քեզ էն գործից, թէ չէ շատ փող կու դատէիր,  
 Աղքատ ղզբաշներին հինգ սխտորով կազատէիր,  
 Էզբան բան եմ ասում քեզ, հալա իմ մէջին պաս էլ եմ:

Ձիանքեար մուկնի նման, ծակ չի թողար, որ մտեցիր,  
 Քարվանսարայում խարարներ, հակ չի թողար, որ մտեցիր,  
 Գողի նման մօստերի տակ չի թողար որ մտեցիր,  
 Տրակտիրներ, խարչեմէք շաք չի թողար, որ մտեցիր,  
 Թէ մարդ ես, նամուս արա՛, գերեզմանդ ես փոսել եմ:

Էլի փառք տո՛ւր Աստրծու, հինգ տարվայ ազուղա ունես,  
 Սև ալուր, դարի ունես, մօլոսօլ բէլուղա ունես,  
 Խոտ ունես, ըզբբույ ունես, ձիադ համար դուղայ ունես,  
 Ղասաբներից թախանած քեզ նման մին բուղա ունես,  
 Մխաբս լաւ կու հասկանաս, ես փոքր ինչ վազել եմ:

Հազարով դափաղ ա պէտք քու նոր բացած ուշիկներին  
 երկիրպագութիւն ես տալիս գանձանակի եաշիկներին,  
 Գիւլբաթունը պոկար հողաթափի, մաշիկներին,  
 Էս գովելի արարք չէ քեզ նման շատ ուշիտներին,  
 Ղերջը դժուծ ողորմելի՛ դուսում մնացած, տեսել եմ:

Ամենայն տեղ պատիւը շատ ա քու պէս խնամիլի,  
 Ժամի կարմիր մահուղը բաժանար կարմիր քամիլի,  
 Թէ ջահիլուց կու ընկնէիր ձեռը բանաստեղծ ջամիլի,  
 Նա կուգար օՖտայիցը քու պէս գուլում հառամիլի,  
 Արաբքըդ ինձ այան ա, համ չափելեմ, համ կաղել եմ:

Ձեռիս սերմը չըթում ես, ասում ես ինձ կախալ ունեմ,  
 Խորովի ձուն ուտում ես, թէ տանը բնակալ ունեմ,  
 Ձեռիս թասը խլում ես, թէ տանը ինձ բակալ ունեմ,  
 Է՛ջիմէրդիս գողացար, ասար ինձ գրքակալ ունեմ,  
 Ո՛վ եմ, ո՛վ չեմ, ես դիտեմ, սուտ բան չէ, ինչ որ ասել եմ:

19.

Չայն եկաւ Մակարիայից ականջիս քաղցր զանգի պէս, Ղզլարցիք երկար են խփում լաւ շտուծեր թփանքի պէս, երիշները փոխվիլ ա, էլի չեն մանգալ լանկի պէս, Գոյները տեղն ա եկել, փայլում են շուրի շանկի պէս, Թռնելով են ման գալի ութը կանգուն փայանկի պէս:

Թէ սուտ էր, թէ ճշմարիտ, սրանց վրայ շատ բան ասան, Իրանք էլ լսում էին, բայց համբերութեամբ սպասան, Մաղթանօք ու աղօթիւք առաքելոց երկոտասան, Բոլորը փուչ դուրս եկաւ, իրանց նպատակին հասան, Փոքր 'ի շատէ զըխտված' էլ չեն մանգալ տնանկի պէս:

Այսուհետեւ Մակարիայ չէ, Ղզլարցոց համար նովուզա, Գինի առնողների հետ տեսնես թէ ինչ նազունուզ ա, Ուզի, առնի, ուզի չէ, հարի ձեռին մին թօփուզ ա, Լաւ ու վատ էս ա զինին, թէ ոչ եկած ճամբար դուզ ա, էրում են, դազդդում են ցրիւ ընկած Ֆշանկի պէս:

Աստուած տայ, իմն մասին ո'վ չի ուզիլ, դուս գայ ալը, էլ ոչ տեսնեն վատ օրեր սրանց մնացորդ զաւակը, Բօմակ իլի բաղերին սուրբ Ստեփաննոս սարկաւազը, Միշտ բանսարկու թշնամին ինկնի սրանց ոտի տակը, Սև երես մնայ բարով կուպրու կարաս ռանդի պէս:

Անտաշ մարդիկ միշտ կասեն հարուստի դեօրայ բան չիկայ, Հարուստն էլ աղքատ կիլ թէ կողքի պառկի, ման չիկայ, Բարե՛ք է հսպէս ասել, խորաբ ժանգումը ջան չի կայ, Մէկ էլ որ մին ազգումը թէ սուրբ սիրոյ նշան չիկայ, էն ազգը միշտ կու անքի կողքը ճաքած հաւանքի պէս:

Խեղճ քասիբ քուսուբները բաղերի համար ջան դրան, Ամեն տարի մին թօփուզ կպաւ, խեղճերը քանդվան, Բաղները ձեռաց զնաց, իրանք մնացին բանդիվան,

Թալարքեարին տեսնելից քուչում կողքինա եան տվան, Լախուչախ ժաժ էին դամ շուտ փուլ եկող խարաքի պէս:

Կամք ունես, ա'ո, չէ', խօհէչ, լաւ ու վատ ա, էսա զինին, Առաջ ո'վ կը համարձակէր էստուր ասէր Ջաղիկինին, Ասում ա պրօբ տեսնեմ, կասեն թէ մեր վաղի զինին եթէ լիւրրի սովաւ բօջկում կու նրւաղն զինին, Ամեն գործում սարհէսաբ կիլեն խելօք Ֆոանկի պէս:

Վաթսուն ու ութը թիւը շատ մեծ ոսկեզօծ տառ իլաւ, Ղզլարցիքի խոցերին մահլամ ու դեղ ու ճար իլաւ, Ընտանի թշնամիքին մանաւոր նամուս, առ, իլաւ, չին կպած ֆնասները էս տարի բարէբար իլաւ, Մին հինգ տարի էլ տեսնեն էս տարվայ աշխատանքի պէս:

Այսուհետեւ Ղզլարցիքի ջովհարները միշտ բաց կիլի, Գլխրների գտակները ծուռ կողքինա դրած կիլի, Բելբօվի անդ մէջքներում զառ քիրման շալ կապած կիլի, Ոսկեզօծ դաշնակները քեամարբանդում ցցած կիլի, Հար ջուռայ էն վախտ պար զան իրանց դուրեկան հանդի պէս:

Չազրանիցայ էք ինկել, էդ խողից դուս ոտ չի հանէք, Եդ ձեւ էլ մի' փոխէք, ձեղանից նոր մօզ չի հանէք, Ֆիթատ արծաթ էք տարել, քամակից ջոկ հոտ չի հանէք, Մեղքիսէթէկի համար մին է էթաղայ նօտ չի հանէք, Մի' դուցէ նոր բաղեա բունի սիրուն թիթամ դաշանկի պէս:

20.

Կեղծաւոր, խաբեբայ ստասաց աշխարհ, Ո'վ որ քեղի ծանօթ չէ, նորա Ղուամանն հս, Կեղտոտ բաղդաւորի քեալաֆը ձեռիդ Առանց պատրուսելի խտակ կու մանես:

Նա որ քեղի ծանօթ չէ, շատ Ֆքանումա,

Թէև Չարէսն է, բայց ձիգանում ա,  
Բնական մէջքի կուզը դիքանում ա,  
Քեզ ճաճանչ ա կարծում, բայց դու դուման ես:

Նա սայմիշ չի անում Հոռմայ Պապին,  
Խաբար չէ որ վերջը տալու ես տալին,  
Քու տուած գովլաթը շուներ կու լալին,  
Եարայիդ ճար չունի, դու էն չուման ես:

Որքան մարդ եմ տեսել ես իմ կենացը,  
Բարձր ապարաններ նրանց շինածը,  
Մինուառմն ես կտրել ողջի հիմնածը,  
Մաղրաբազ, հիլաբազ, դու ո՞ւմ նման ես:

Մէկին խոստացար դու բարձր իմարաթ,  
Մէկին հազարներով փող տուար բարաթ,  
Վերջը էդ խեցիբ, չիլար զթառատ,  
Միշտ փառք տո՛ւր, Մեկքիսէթ, դու անկուման ես:

21.

Ինչպէս որ հաստ չուանը ասեղի ծակից չի գնալ,  
Ինչպէս էլ քու նախը իմ սրտի տախտակից չի գնալ,  
Երեսուն տարւայ դարիբը իւր վաթանը գնալից  
Որտեղ որ քեզ հանդիպի, էլ քու փափագից չի գնալ:

Չովհարդար թուր ունքերդ, քու նաշտար թերթուունքներդ  
Տեսնողը ի՞նչ մարդ կլի, որ քու քամակից չի գնալ,  
Թէ ասեն Հնդկաստանի խաղնան բաշխում են մին մարդի,  
Քեզ թողած թամահ չի անիլ, քու քաղաքից չի գնալ:

Լոյս երեսդ վառվումէ սաղ տարի էանա սարի պէս,  
Երանի՛ էն մարդին, որ նա էս կրակից չի գնալ,  
Քանի մարդ խորհուրդ ունեն քու գովասանքը հնչելու  
Հոգւով սրբով ա գրված, նա էն թանաքից չի գնալ:

Թէ կայսերից էլչի դայ մօտ միջոցով քեզ տեսութիւն,  
Բանդ կու ինկնի թօռումդ, իւր ժամանակին չի գնալ,  
Ինձ ասում են երեսիդ խալի համար սիրտ ա էրում,  
Նա էլ մին դուլում սե ա, բնաւ ճերմակից չի գնալ:

Էդ բօյը, էդ պատկերը, էդ քու տնաքանդ աչքերը  
Մեկքիսէթի մաքիցը էդ թուականից չի գնալ:

22.

Հարիւր անգամ թօբայ եմ արել էսպէս բան չի անեմ,  
Էլի չի իլում, անում եմ, շատ ու քիչ որքան չի անեմ,  
Ո՛վ ինձ հետ կոշտ ա խօսում, նորա վերայ բարկանում եմ,  
Թո՛ղ ես էլ ինձնից մեծին կոպիտ պատասխան չի անեմ:

Քուչում թէ հարբած մարդ եմ տեսնում, նորան ծաղը եմ անում  
Թէ էսքան հասկացող եմ, թո՛ղ նրան նմանն չի անեմ,  
Ասում եմ, նա ո՞ւմ կլիննա, որ խաս ու աթլաս ա հաղնում,  
Թո՛ղ իմ կնկայ օղերն էլ ալմաղ ու մարջան չի անեմ:

Ասում եմ նա ի՞նչ մարդ ա, որ իմարաթներ ա շինում,  
Պէտք ա ես էլ իմ տունը թախտի Սուլէյման չի անեմ,  
Շուայլ խրախճանները տեսնելից ինձ շատ թվում ա,  
Դէ՛ թո՛ղ որդուս պսակին դուռնա, բալաբան չի անեմ:

Եթէ եկեղեցիում ինձի երկիւղած եմ ցոյց տամ,  
Թո՛ղ դուսի աւաղակին ինձի միաբան չի անեմ,  
Թէ մշակի վարձը կտրելը վրէժխընդիր մեղք ա,  
Թո՛ղ եթիմի իլածը ես ալան թալան չի անեմ:

Թէ միամօր որդիս թաղմանը ես սուղ չեմ անում  
Թո՛ղ զօնչիլիս մահին էլ կեղծաւոր չլուան չի անեմ,  
Թէ իմ քաշած պատկերին խարաք ասողին պատժում եմ,  
Թո՛ղ ես էլ տիպ Աստուծոյ պատկերին քրշան չի անեմ:

Արտուաիկի բարձրաձայն կարգելն թէ ինձ թվում ա,  
Մեղքիսէթն եմ, հարկ ա ինձի հազար դաստան չի անեմ:

23.

Անցեալը մին տեղ գնացի առաւօտեան իմ բանին,  
էն տանը մին ջէյրան տեսամ, մատաղ ես նորա ջանին:

Ինքս ինձի չի հաւատայ, կարծեցի թէ տեսիլք ա,  
Խելքս միտքս ուշքս տարաւ, խառնվամ, ինկամ քիւքայ,  
Մի՞թէ եղպէս ցաւերը միշտ մարդկանց տուած զիբք ա,  
Գանդատաւոր եմ էս մասին ես արգա կրամ խանին:

Յանդիման կանգնած հայլիում սաթ մաղերը հուսում էր,  
Ինձի էնպէս էր թվում, որ ինքը իրան խօսում էր,  
Միայն մին բառը ջոկեցի, որ կեանքը ափսոսում էր,  
Յանկարծ տեսնեմ յուսահատված մատից հանեց մատանին:

Մատանին ձեռին շուռ տալով որ զարմացած կու նայէր,  
Միրոյ յիշատակ էր տուած, իրա մօտին ընծայ էր  
Խորհուրդաւոր երկու զիր կար քանդած մին է մին ա էր,  
Շատ չի քաշիլ էդ մատանին կու զնի իւր նշանին:

Մաղերը որ սանդղաւ, բացվաւ ճակատը, կէս լուսին էր,  
Միայն իմ երկու աչքերս նրա շարմաղ ուսին էր,  
Հառաչում էր, ա՛խ էր քաշում, նա խաբված ամուսին էր,  
Բանը բանից անց էր կացել, խաբել էր չար պատանին:

Ես ինձի տեսնել էք կարում, չում կանգնած էր մէջքովը,  
Բայց ես նրա քօլ արաքքը տեսցի իմ աչքովը,  
Եդ զպեհատոյին եթէ լաւ նկատենք իւր ասչիովը,  
Մե՞ծ նշանակութիւն ունի, եթէ պարզ մեկնաբանեն:

Միամիտ գոյով որպէս որ հայլիից շուռ եկաւ,  
Ինձ որ տեսաւ քամակումը, երկու աչքից ջուր եկաւ,  
Ի՞նչ օղուա ինձ նորա լացը, որ կէս կեանքս փուլ եկաւ,  
Կարանայիմ, օձ դառնայիմ, փաթաթվիմ դարանին:

Ողջ էլ զիտէք, որ Հաշտարխան բացվաւ երեք տեսարան,  
Մութ խաւարում սընլած աղջկունք էդ խաղերը դաս առան,  
Պարկեշտները դամով երեք չի քաշեցին փաս արան,  
Տեսան շուռ են ջուր տամ այստեղ գնացողի բօստանին:

Խայտառակիլ էն տղամարդը զլիսի գգակովը,  
Որ ինքը չաղիւր կու քցի, կիննիւի կնկայ տակովը,  
Էրմիտաժին չէր հաւանում, էս էլ քեզ Պերմեակօվը (1)  
Քսան մանէթով գրաւան շէյրանի պահպանին:

Աւերակ դառնայ քու բաղդ, բուրաստանդ, Գաւիթով (2)  
Կոյս ջէյրանին քու բաղումդ հարբեցրին լաֆիտով, (3)  
Վերջը դտան Պերմեակովից կօյցայի ալֆաֆիտով,  
Մին դարդիմանդ շատ ծանօթ ա ելումնւտը էս բանի:

24.

Էս աղաթ ա, կասն զինին կաթում ա,  
Քանս կաթում ա, մենք էլ խմենք, դատում ա,  
Մին փոքր ինչ տակում թողնենք թաթիմա,  
Սաբայի մարդու գլուխը ճաքում ա,  
Թէ չես խմում, սիրտ փորդ կտրատում ա,  
Որկրամոլին արգարութեամբ դատում ա,  
Չափաւորին ուղիղ գնահատում ա,  
Իմաստասէրը էս բանը հաստատում ա:

Շատ մի՛ գովիլ, մի՛ ասիր թէ գինի ա,  
Չեռիդ բակալին կասես թէ չինի ա,

(1) Էրմիտաժը մի ժամանակ ամենալաւ այգին էր Ասորիսանի, այնտեղ էր ամռան կլուրը և ծառերնը, այժմ այս դատարկացած ծառերնում երբեմն երբեմն կրկնվում են հայ դերասանների արտասուելի ներկայացումները: Պերմեակովի այգին շատ լաւ դրուժեան մէջ է, նա կոչվում է «վաճառականական այգի» ևս: (2) Այժմ «գալիթովսիկի» է ասվում այդ այգին, այստեղ է կլուրը և ամռան ծառերնը: (3) Լաֆիտը արտասահմանի ըմպելիք է, գինիից շինված, ազգերս յառաջադիմութեան մեջ է, զալոց մայրերս լաֆիտ են կոնծում . . . 8. ♣.

Թարաղ տեսնես, կասես թէ ի՞նչ լաւ սինի ա,  
 Քե՛ջովացար, ի՛նչն կասես ինչ ա,  
 Մօլեօկ կուտես, կու գովես սարդինա ա,  
 Եռշա ալմազ էն վախտը մին գինի ա,  
 Դարա թափա քեզ համար դուզ լինիա,  
 Չորս կողմդ քու մառախուղը պատում ա:

Շատ մի՛ գովիր թէ գինիս պարզ ու թունդ ա,  
 Թափածդ տե՛ս, ինչ կերել ես, գունդ գունդ ա,  
 Չաթվարի հետ հուջաթ կանես թէ Ֆունդ ա,  
 Տէրտէր տեսնես, կասես, ի՞նչ լաւ ախունդ ա,  
 Եթէ չափից շատ անցկացար, մեծ բունթ ա,  
 Դամի վրայ կու քաշես թէ լեկունթ ա,  
 Չես ստանալ մարատ սեկունդ սեկունդ ա,  
 Լաւ ճանաչա՞ր թէ գինին ի՞նչ սերունդ ա,  
 Գիժ խմողը միշտ էլ թերահաւատում ա:

Սայաղ իլի պէտք ա գինի խմողը,  
 Չի ասի՛ թէ, ես խմում եմ իմ փողը,  
 Խմելին կասի օրհնվի քու հողը,  
 Փոքրից յետոյ սահմանողի ծնողը,  
 Քու՛ջրում ա թէ՛ տունս մտել ա գողը,  
 Ո՞ւր ա իլել էս տան միջի քնողը,  
 Զհանդամում, իւր գլուխը սե հողը,  
 Առաւօտուն ջանը ինկել ա գողը,  
 Պէտք ա խմի, շորերը մկրատում ա:

Հողկաբաղ ես, Ֆանդեր ունես, ա՛յ գինի,  
 Մին խմողդ գլխին տամ ա վա՛յ, գինի,  
 Մին խմողդ ասում ա օխա՛յ, գինի,  
 Մինին խորնից հասար քցար սայ, գինի,  
 Մինին սայից քցար Արփաչայ (\*) գինի,

Արփաչայը մի գետ է Հայաստանի Շիրակ գաւառում (այժմ Ալեքսանդրա՝

Շատ էր խմում մին աւանակ հայ՝ գինի,  
 Գաւաթ գաւաթ հէնց կասէր давай գինի,  
 Սաղխատար դու, խեղճ՛ին արար պայ, գինի,  
 Թափանիցը նորերումս գանգատվում ա:

Շատ մի՛ գովիր, լալ ունդ տուր, լալ ունդ,  
 Չի խմողդ ես քաջիր ա, ես Ֆուանդ,  
 Քեզնից առաջ էդ խօսքերը մենք գուանք,  
 Ոչ թէ բշտօ՛ջ, բօջկաներից էլ թուանք,  
 Վէդրէն հարկնք էփէիջայ բոբոանք,  
 Տվանք ուզիդ կշիռի լուծը ծուանք,  
 Քօփակացանք, կեանքներրս էլ տէրուանք,  
 Մեկքիսթի տեսած բաներն են սրանք,  
 Չափս ունենայ, ո՛վ ինձի հաւատում ա:

25.

Չիկար իմ թայութուշում յառաջնթաց վաղ ինձանից,  
 Հիմա շատ յետ մնացիմ, ոչ ով չկայ կաղ ինձանից,  
 Պատառ չաքմա տուածով ուզաւ բաշմաղ ինձանից,  
 Հիմա կանք էս ըռուզգեարին, էլ ո՞վ կայ ախմախ ինձանից  
 Նեքսեիցս չի պակասում Ֆիլքր ու ախ ու վախ ինձանից,  
 Բայց մէջլխաներում նստած ոչ ով չիկայ շախ ինձանից:

Եղմասաղայ կուրուղար, տաճիկին մի մասալ ունի,  
 Ճշմարտ ա, ո՞վ սրտում Ֆիլքր ու գուսայ ազար ունի,  
 Հարկ ա իրան էնպէս ցոյց տայ՝ որ ասնն հազար ունի,  
 Պատճառ որ նրան անթիւ թշնամի բաղնազար ունի,  
 Էս տեսակի մարդին ես միշտ կասեմ դօչաղ ինձանից:

Կօլից 2 վերստ) սա բաժանում է Առաստանի և Տաճկաստանի սահմանները, անցնելով գեղեցիկ ափերից, խառնվում է Կարսայ գետի հետ և այդ միառուտեան մէջ կրում է անունը «Ախուրեան» սր յայտնի է մեր պատմութեանց մէջ, սա խառնվում է Արաքսին: Յ. Փ.

**Տեղ** ունեմ, կանգնեմ բազդիս յանդիման երկիրպազանեմ,  
 Խոստացածը կատարաւ, նրանից ես բաւական եմ,  
 Բայց յանկարծ քացի տուաւ էս մասին ես դաւայ կանեմ,  
 Թէ կանգնեմ դարդս սրան նրան ամեն նուազ անեմ,  
 Խալխի զահլան կտանեմ, կիլին բէղամաղ ինձանից:

**Տեսնում եմ ու լսում եմ** որքան բերան բաց կայ վրէս,  
 Թէ տեղի թէ անտեղի որքան լաքա թաց կայ վրէս,  
 Խարարներով, հակերով որ տքան պարտքը, հաց կայ վրէս,  
 Բայց յուսով հաստատուն եմ, եթէ որ Աստուած կայ վրէս,  
 Յետ ու առաջ կիմանայ ախր մին սօրաղ ինձանից:

**Կար** ժամանակ երկարից խալխը ինձ ճանաչում էին,  
 Պատուելի, ա՛յ պատուելի, երկարից ինձ կանչում էին,  
 Համարձակ բան խօսելու իմ մօտին ամաչում էին,  
 Ո՞րտեղ ես, կարօտել ենք, ինձանից պահանջում էին,  
 Վիզիցս փաթաթվելով ջոկնուան անջախ ինձանից:

**Էս** յերկարից տեսնողը այժմ մօտից քօռացել ա,  
 Շատ փոքր բան եմ խնդրել, երևումէ, մոռացել ա,  
 Սնիճեալ թղենիի պէս քօքիցը չորացել ա,  
 Հետը բան խօսել չիլում, մթղուկը հզօրացել ա,  
 Ել բարով էլ չի տալի իլած քամ շափաղ ինձանից:

**Կար** ժամանակ երկարից ձայնում էիմ, է՛յ Ֆլանի,  
 Լսում էր, շուռ էր դալի, կանգնում էր մին ջոկ պլանի,  
 Գոյնը իսկոյն փոխվում էր, չիլի՞ թէ դա ինձ կլանի,  
 Կասէի թէ մի՛ վախէր, մարդ չկայ որ քեզ թալանի,  
 Երկիւղի տեղ չունես դու, մի՛ տուր մաալլաղ ինձանից:

**Էս** յերկարից լսողը էդ մօտ տեղից քառացել ա,  
 Զրպարտելով համբաւս, բոլոր աշխարհ տարածել ա,  
 Զ՛ղիտեմ, ի՞նչ ա մեղքս, որ դա էսքան չարացել ա,  
 Ասել ա սրան նրան բարեկամս յիմարացել ա,  
 Որ փութերով ա կերել տանս աղուհաց ինձանից:

**Երեսայական խաղ ա, մարդ մարդի պատճառ բերելը,**  
 Իմ մեղքիցն եմ բորոտվել, ինքս էլ պարտ եմ քերելը,  
 Ո՞վ ա ինձի պարտական որ դայ թաղի իմ մեռելը,  
 Հիմա մայայ պէտքը չի բացի լուռ մունջ համբերելը,  
 Էնքան ա որ ՚ի տեսանէ չի պախի եաթաղ ինձանից:

**Ներէ՛ք ինձ բէղար արամ, խօսքերս թամամ եմ տալի,**  
 Միտք բանիս կամաց կամաց պատուելեացդ ջամ եմ տալի,  
 Էս աշխարհիս բերմունքն ա, ամեն մարդի սամ եմ տալի,  
 Ահա՛ գուժարը էս ա, Մեղքիսէթն եմ ջան եմ տալի,  
 Ինքս եմ ինձ փաստաբան, կախեալ է դա սաղ ինձանից:

### Խարաղ-Օղլանի երգը.

1.

Արտիս կրակն վառվառ ա Գնանք ձեր բաղի թաղերը,  
 Կրակվես դու բարով, զիլբար, Բացենք սինայիդ բաղերը,  
 Մալուր մուշկուլ թողար ինձի, Բու էշխէդ ասած հաղերը,  
 Մոլորվես դու սարով զիլբար: Քեզ տեսնեմ չորանաս, զիլբար:

Քանդըվի ձեր տունի թաղը, Էշխիցդ նարա քաշեցիր,  
 Ձեռքով քաշար սրտիս դաղը, Ձեռքիցդ եկածն արեցիր,  
 Հորէս ասեմ խօսքի սաղը, Արդար եղի պէս դաղեցիր,  
 Ոչ սաղանաս տարով, զիլբար: Տապակվես եզովդ զիլբար:

### Խարաղ-Օղլանն եմ թափաղը

Ընդունեմ Հայոց հաւատը,  
 Սաղի երեսի սափաղը,  
 Սաղի պէս չորանաս, զիլբար:

### Գիւրջի-Նաւէի երգը.

1.

Ճամ էր դնում այսօր տեսայ մէկ ջիվան,  
 Ես փարի էր, ես հուրի էր, ես զլման,

Ունքեր ունէր դալամ քաշած աննման,  
Մտաւ ժամը իմ սիրաբը բռնեց դոււնան,  
Գութսաղի պէս դռանն իլա բանդիւան:

Գութսաղ դառայ, մինչ դուս եկաւ ժամիցը,  
Կամ էր տուել յետ չի դառաւ կամիցը,  
Յանկարծ տեսայ դուս դալիս համամիցը,  
Հոտ քաշեցի էն ջուխտակ շամամիցը,  
Նա ինձ սիրեց, ես էլ սիրեցի նրան:

Մտիկ տուի որ նա ինձ հետ սէր ունի,  
Ասի, Աստուած, եարաբ սրան տէր ունի,  
Ղուդրաթ դալամով քաշած ունքեր ունի,  
Հարցրեցի, մէկ հոտաւէտ մէր ունի,  
Միտք արեցի, եարաբ սրան ինձ կտա՞ն:

Մինա բոյը, երբ որ տեսայ հազ արի,  
Մարսաղի պէս ընկայ յետնէն վազ արի,  
Ուշունց տուեց ու անիծեց տազ արի,  
Բիւլբիւլ էի վարդ տեսայ փարվազ արի,  
Հէնց որ տեսայ հալս իլաւ փարիշան:

Գլխին քցած Ալքիբանու շալ ունէր,  
Սիպտակ բոխաղ վրէն զօշայ խալ ունէր,  
Մասնանքուժը եաղութ ալմաս լալ ունէր,  
Գիւրջի-Նաւուն համ էլ ողորմալ ունէր,  
Հողու տէր ես, կարի՛ր դու ուղիղ զիվան:

### Լալայի երգերը.

1.

Աստուած վայելումը տայ  
Մեր եղբայր նորախնին,  
Վայելումենք խնդումենք

Այսօր նորա հանդէսին,  
Ուրախացէ՛ք, ազգ բարեկամք,  
Նա կատարաւ Աստուծոյ կամք՝

Մենք էլ խմենք կռամբամբուլի, Խորին ծերութիւն հասակին,  
Կրամբիմբամբուլի Ամէ՛ն, ասացէք միասին,  
Կրամբիմբամբուլի: Լինի կենաց հարս ու փեսին,  
Յիէք խփենք միմեանց թասին,  
Կռամբամբուլի  
Կռամբիմբամբուլի:

Կայել ես դու կաւալերդ  
Դօշումը կանաչ կարմիր, (\*)  
Վայելիր ամուսնութիւնդ,  
Աշխարհումն երկար ապրիր,  
Ես ուրախ քեզ երգեմ կանչում  
Ընկերնե՛ր, ի՞նչ էք ամանչում,  
Յիէ՛ք խմենք կռամբամբուլի,  
Կռամբիմբամբուլի  
Կռամբիմբամբուլի:

Վայելիր դու աշխարհումն,  
Ձախ ժամ չտեսնես կանքումն,  
Բարի գործեր որքան կարես  
Բարի Աստծուն մտացել ես,  
Իմ խօսքերն են ուրախութիւն,  
Թէ սխալ է ներողութիւն,  
Լալային տուէք թողութիւն,  
Որ խմի կռամբամբուլին  
Կռամբիմբամբուլին:

Նա զնաց սուրբ եկեղեցին,  
Պատուիրան ստացաւ կրկին,  
Բարով վայելեն միասին,  
Վայելիր դու աշխարհումն ինչպէս մին բիւլբիւլ բաղն մէջ,  
Հէնց որ ամուսնայաւ, ընկնումէ հոգս ու դարդու մէջ,  
Թէ լաւին ըռաստ եկաւ, քօլ ցաւերն անումա հէչ,  
Թէ բնութիւնըն վատ է, խայտառակումէ ազդի մէջ,  
Նամուսու խեղդըվումէ, խնդրումէ ե՛րբ կիլնի լա՛ վերջ:

2.

Աղջկերբ միտք են անում, մենք խօ կսպէս չենք մնալու,  
Ժամանակն որ կրգայ, մենք էլ մարդի ենք զնալու,  
Ինչ որ մեր մայրերն են անում, մենք էլ ընտունք ենք անելու,  
Կարծում են իւրեանց մտքով երջանկութիւն են զնալու,  
Չեն խորար որ չար միտքով կորնելու են մեղքերի մէջ:

(\*) Մեղանում սովորութիւն կայ որ նորապսակներին Պազաւոր եւ Պաղունի են կոչում քանի որ պսակը, այսինքն նարօտը վեր առած չէ, այդ կոչմանը յարմար այստեղ մինչև ցայժմ իսկ առաւելապէս միջակ կարգում գործածու- մեն կանաչ ու կարմիր ժապաւէններ կուրծքերի վերայ, զորս զարդարված են

Թէ զբեմ կանանց բաներն, կը լքցուի քանի երես,  
 Շարադրանք կասեն քեզի պիտի լսես, ու համբերես,  
 Էդ շարադրանքը բազարից յետ զայլիս տուն պիտի բերես,  
 Թէ չ'բերես, տես ի՞նչ աչկունք կ'հանդիպես և ի՞նչ երես,  
 Տէ՛ր, դու ինձի ուստ չի բերես էսպէսին, չ'ընկնիմ զարդի մէջ՝

### Դուրկարեանցի երգը.

#### 1.

Ոչ մի մարդ թո՛ղ չի ասի թէ ունեմ ինձի բարեկամք  
 Նրանց վրայ յոյս չի կապի, չի կարծի հաստատ բարեկամք,  
 Ասածներին չի խաբվի, միայն լեղով են բարեկամք,  
 Ժամանակն մի՛ անցկացուր, որոնի՛ր քեզի բարեկամք,  
 Գժուար ա զտանելը, ունենալ անկեղծ բարեկամք:

Սպիտակը քանի շատ ա, նրանց մէջում պատիւ ունես,  
 Եթէ մին տեղ հանդէս կայ, անպատճառ բարձր տեղ ունես,  
 Բարեկամութիւն ցոյց կտան, կը կարծես թէ անթիւն ունես,  
 Կեղծաւորված կմերձենան կասն վաղն հանդէս ունես,  
 Խեղճ դու պատրաստիր ընթրիք, շարել ևս քեզի բարեկամք:

Յուսացած բարեկամքիդ եթէ կասես ինձ օգնեցէ՛ք,  
 Տարաբաղդութեան մէջ եմ, խնդրումեմ, ինձ հասնեցէ՛ք  
 Գլխիս եկածն եմ ասում, մի ըստ միոջէ լսեցէ՛ք,  
 Անմեղ ցաւի մէջ եմ ընկած, ձեր եղբօրը խնայեցէ՛ք,  
 Տես ի՞նչ նախատինք կ'լսես, մի՞թէ միայն ենք բարեկամք:

Թէ գործդ անյաջող ա, ըսկսումես դու թուլանալ,  
 Ինչ որ քեզնում պակաս ա, բարեկամներից յուսանալ,  
 Վա՛յ քեզ, հէնց տեսնում են որ խառն ես, կսկսեն հեռանալ,  
 Քեզ փոխ տալից կը փախչեն, կամենում են քեզ մոռանալ,

Իննում մարդարիտներով և այլ քարերով զորանից իսկ մնացել է մեզանում  
 որ մի ամուրի օրհնելիս ասում են «բարով կամաչ կարմիրը տեսնեմ»: Յ. Փ.

Անունդ յիշել չեն ուզում, արդեօք ունե՞ս քեզ բարեկամք:

Ամբիթար մնում ես, այժմս քեզի չեն չանաչում  
 Ըստ որում բարեկամ չեն, խօսք ասելի չեն ամաչում,  
 Ի՛ դուր ես մեղ յուսացել, խղճմտանքները չիտանջում,  
 Մեզանից ի՞նչ լաւութիւն, քեզի էլ յիմար են կանչում,  
 Վերջապէս քեզ ատումեն, մեզ մի՛ ճանաչիր բարեկամք:

Թափառելով մնում ես անտէրունչ մոլոր շուարած,  
 Մարդկերանց զատում ես դու, քեզ համար խեղճ վիզդ ծռած  
 Յանձրն ա՛ռ խոնարհութիւն, քեզի կարծիր ամենից ցած,  
 Կը գանես քեզ բարեկամ որ լինի անկեղծ ու անդարձ,  
 Էն ժամանակ կիմանաս թէ ո՛վք են քեզի բարեկամք:

Գլխիդ եկել ա, Դուրկարեանց, այս բոլորը դու տեսել ես,  
 Էս տեսակ բարեկամքին, զիտեմ, շատ անգամ փորձել ես,  
 Բոլոր ասած խօսքերս զուցէ դու էլ իմացել ես,  
 Օգնութիւն չես ստացել, անմխիթար մնացել ես,  
 Գոհացիր Աստուածանից, թէ ունես մի հատ բարեկամ:

### Բլբուլկի երգերը.

#### 1.

Երանի՛ կը տամ էն երեկոյին,  
 Որ իմ դէմ ու դէմ նստած էիր դու,  
 Մտիկ կը տայի քո սև աչքերին,  
 Կարծում էի թէ՛ լուսնիակ ես դու,  
 Նոր հրաշք ես դու:

Անմեղութիւնը ճակատիդ վրան  
 Փայլում էր որպէս ժպիտը շրթունքիդ,  
 Մազերիդ հիւսերն քնքուշ ու երկայն,  
 Կար խեղդելու ինձ՝ թէ կատես դու,  
 Ո՛հ, սիրե՞ս ինձ դու:

Սախտակ ատամներդ, վարդ պռօշներդ,  
Կէս լուսին ճակատդ հոգի են հանում,  
Բայց անուշ ձայնդ, գրաւիչ հայեացքդ,  
Սիրտ է կազդուրում, թէ հրեշտակ ես դու,  
Իսկ իմ կեանքն ես դու:

Մոռացայ հանդիստ, մոռացայ և քուն,  
Դառն է իմ կերածն, ըմպածն ամեն օր,  
Առանց քեզ ի՞նչ կեանք, ի՞նչ հանգստութիւն,  
Կեանքիս միմիակ բազդ ու դարդն ես դու,  
Յաւ ու դարդն ես դու:

Ա՛ս, սիրուհիս, մի՛ ծածկիր ինձնից,  
Ծանօթ են քեզն վարդն ու սոխակը,  
Հանաք մի՛ անիր, խոցս է արնայից,  
Բե՛ր Բլբուլիկիդ ցաւին մի ճար դու,  
Ո՛հ հոգեառ դու:

2.

Թիժեռն եմ դարձել սիրոյդ այգիում,  
Երգում եմ սէրդ ու անունդ, հայ աղջիկ,  
Վախում եմ կեանքիս ձմեռը գայ շուտ,  
Կարօտ, կէս խորհուրդ մնամ, հայ աղջիկ:

Ա՛խ, ինձ ի՞նչ օգուտ աշխարհիս փառքեր,  
Իմ փառքն ու կեանքը միմիայն դու ես,  
Ի՞նչ անեմ սպառտ գանձեր ու կառքեր,  
Առանց քեզ աղքատ է սիրտս, հայ աղջիկ:

Ղեկն ես իմ կեանքի, կուզե՛ս, տա՛ր յանդունդ,  
Թէ ոչ ազատիր սիրոյդ այլիքից,  
Մեռած գիակիս կեանք կտայ անունդ,  
Ձայնդ զօրութիւն աշխոյժ, հայ աղջիկ:

Իմ աղաղակը բուրի արձագանդ,

Որ միշտ ձայնումէ չոր անապատում,  
Սիրոյն լծակից պէտք է, ի՞նչ վտանգ,  
Այնժամ կարէ մեզ ջակել, հայ աղջիկ:

Կանցանեն օրեր, կը թռչեն տարիք,  
Բայց կմնայ սրտումս քո սէրը միայն,  
Եւ այն կը տանեմ ինձ հետ զերեզման,  
Իբրև քո աւանդ վերջին, հայ աղջիկ:

3.

Էնքան չարչարանքիցս յետոյ դնում եմ, մի հարցրո՛ւր թէ ո՞ւր,  
Եւ այսուհետեւ յոյս կարեցի, մի՛ չարչարիր դուր,  
Իու այլոց համար դեղ դարման էիր, իսկ ինձ համար թուր,  
Մի՛ ամաչիր քո արարմունքիցը, վերջին անգամ լուր,  
Արտասուքներս եփրատ արեցիր, իսկ աչերս կուր,  
Քեզ ո՞վ է ասում, որ իմ սրտումը վառես սիրոյդ հուր,  
Առաջ սէր ցոյց տաս, յետոյ յետ քաշվիս, երեսիդ գայ մուր,  
Գնամ, ազատվեմ, դնամ, բայց ոտքումս է քո պինդ անուր,  
Կուզեմ ազատվել, բայց որ կողմ փախչեմ, աստ հուր է անդ ջուր,  
Սպանի՛ր դու ինձ, ազատի՛ր, ինքս կը տամ քեզ իմ սուր,  
Դէս դէն ընկնելու, զուր չարչարվելու տեղ մահս ինձ տուր,  
Թէ ոչ ողորմիր, արժանի արա՛ երջանիկ աւուր,  
Եւ մի՛ այս կեանքի վայելչութիւնից թողուր ինձ թափուր,  
Բո՛ւ Բլբուլիկն եմ, կամ կեանքս ա՛ռ բնաւ կամ նորից կեանք սո՛ւր:

Սօսի երգերը.

1.

Քուչումը ման ես դալի,  
Տեսնողին էշխ ես տալի,  
Սիրտդ սրտիս կպցնելով,  
Աչք ու ունքով կամ ես տալի:

Թուխ աչքերիդ ազամանդը  
 կտրել է սրտիս բանդը,  
 Թերթուռնքդ իրար տալիս,  
 Իմ կամացը տեղ ես տալի:

Պուռը կանգնած նայում ես միշտ,  
 Ուրախ սրտիս ընում ես վիշտ,  
 Մի քիչ ակրած ժամանակդ էլ  
 Երեխայի պէս եմ լալի:

Վախա նազ կանես, հէջ չես դուս գալ,  
 Զահէլ ջանիս խնդում չես տալ,  
 Վախտ երկուսով պողոտէկիով,  
 Խուռջիկ կը դաս, իմ նազելի:

Ի՞նչ էլաւ քեզ էս շաբթուան,  
 Որ կտրեցիր անուշ քունս,  
 Խեղճ քո Սօսի սրտին էղբան  
 Բնչի՞ սիրովդ սուր ես տալի:

2.

Մի հուրի եմ ընտրել այսօր գովական,  
 Դէմքը սիրուն, ինքն աղնիւ պատուական,  
 Նշան տվուց որ դառնայ ինձ սիրեկան,  
 Մէկս մէկու էլանք իսկոյն դուրեկան,  
 Սակայն շուտ ինձ էլ յետ թողուց լալական:

Իմ սիրելին թողուց ինձի վերացաւ,  
 Հրեշտակ էր, որ էսպէս շուտ ծածկեցաւ,  
 Զանս քունն է, ձէն տվուց ու հեռացաւ,  
 Էլ չեմ տեսել ահա՛ բոլոր ամն անցաւ,  
 Խեղճ չէ գալի թէ՛ տանջվեցի բաւական:

Թէ միտք չունէր, ո՞ւր էր ինձի կամ գալի,  
 Թէ անջան էր, ջանն ընչի՞ էր ինձ տալի,

Թէ խօսք տուած էր՝ ուրիշ եար ըլի,  
 Բաս խիղճ չունէ՞ր, անցաւս արեց ցաւալի,  
 Եար կանչելով կուղէր ըլեմ անկենդան:

Պուք չ'կարծէք, թէ սուտ է իմ արածս,  
 Զէլաւ մին օր հայալ ըյնէր կերածս,  
 Հէնց որ յանկարծ միտքս է դալիս սիրածս,  
 Խեղքս թռչում, զործս ընկնումէ ձեռացս,  
 Եար թողալուց չ'կայ ոչինչ դժար բան:

Ո՞վ եար չունի, եարի ցաւը զգալ չի,  
 Կրակ ընկած էրաւ ջանս, խղճալ չի,  
 Սէրն ի՞նչ բան է, իր օրումը խաբար չի,  
 Թէ հինգ ջիվան օրը մեռնի, նա լալ չի,  
 Էսպէս անձին էլ ո՞վ կասի բանական:

Խեղճ Սօսն եմ ես, վիճակուել եմ էս ցաւին  
 Ուր եարս ըլի, ցանկամ բարի համբաւին,  
 Արդեօք քանի՞ ամ կը քաշէ մեր դաւին,  
 Որ ձեռս տամ փափուկ բոխաղի խաւին  
 Ասեմ, քաշած դարդերս էլան բաւական:

3.

Սիրով վառված իմ սիրտը՝ սիրոյ վէրքը զգում է,  
 Սէր է կանչում ամեն վախտ դէպի մատուռն զնում է,  
 Հազար տեսակ տեսարան էշխը վառող տեսնում է,  
 Կանաչ խոտեր, բաղմուժիւն և ազատ օդ դանում է:

Աղջիկ տղայ խումբէ խումբէստեղ էնտեղ նստոտած  
 Սէր են անում իրար հետ, իրար նայում սրտաբաց,  
 Յոյց են տալի միմեանց զարդ ու շորեր պաճուճած,  
 Սիրան են քաշում աղայոց աղջիկերքը զարդարված:

Բնութիւնը էստեղում պատրաստել է լաւ սեղան,  
 Անուշահոտ ծաղիկներից կանաչազգեստ գարնան,

Որք տալիս են տեսնողին սիրտ և հոգի խնդութեան,  
Բայց ինձ միայն այրումէ մի սիրուհի անման:

Նա կանգնելով անկու պէս մեծ մատուռի առաջին,  
Մէկ դառնում է ինձ նայում, մէկ էլ գետնի կանաչին,  
Ձեռքը շուտ շուտ դնելով սիպտակ շարմաղ իր լանջին,  
Ասում է, արժանի՛ ես իմ ջուխտ թշերի պաշին:

Բայց երբ մայրը խոժոռած նկատում է դէպի նա,  
Շուտ շարխի պէս շուռ գալով՝ ուրիշ կողմեր նայում ա,  
Սէքը ինձ է, թէ կուզի ողջ քաղաքն էլ մտիկ տայ,  
Բացի ինձնից ուրիշն էս աշխարհումս չունի նա:

Աղջիկ, դու ի՞նչ գիտեիր, որ մատուռը եմ գնում,  
Միանգամ մտիկ տալով, ինձ սիրեցիր ի՞նչ բանում,  
Ես քու անունդ չ'գիտեմ, ինձի Սոս են այլք կանչում,  
Արի՛ խօսք տանք իրարու, չ'լինի մեր մէջ բաժանում:

4.

Դու պատիկ աղջիկ սպիտակ բոլոր,  
Երեսուրդ լուսին, ունքերդ ոլոր,  
Էդ ի՞նչ աչքեր է, ինձ արեց մուրր,  
Խելքիցս հանեց քցեց քօլէ քօլ:

Քու մագնիսական հայեցումածքովդ,  
Սչքով ունքով նշան տալովդ,  
Շուարկեցայ ես, ընկայ քու բովդ,  
Կրակդ ինձ էրեց, ա՛խ, փչի՛ր հովդ:

Փափուկ ձեռներդ, քնքուշ մատներդ,  
Լայազար թշերդ, բարակ պաօշներդ,  
Պատիկ բերանդ, կոկամ ծծերդ,  
Ինձ պատճառ եղան քաշել քո սէրդ:

Ազնիւ արիւն ես, ափսօս օտար ցեղ,  
Ի՞նչ անեմ Հայ չես, ճանապարհդ է նեղ

Ում ձեռքն բնկնես մօտ կամ հեռու տեղ,  
Յիշի՛ր դու Սօսին բաբուցայ շքեղ:

5.

Քանի՛ քանի՛ էդպէս անես, հերիք է, հոգիս ելաւ,  
Ել չես ասում վարմունքովդ ցաւ ես տալիս ինձի անբաւ,  
Աման աղջիկ, Աստուած սիրես, քու շարժմունքդ խելքս տարաւ,  
Կամ սպանիր, կամ մի ճար տես, թէ չէ կենացս ճրագն անցաւ:

Ընչե՞մ էդպէս մօտ ես դալիս, թուշդ երեսիս մօտ ես բերում,  
Փափուկ ձեռքդ ուսիս դրած՝ կրակ դառնում, ինձի էրում,  
Կամ գլուխդ կոնատակովս բերում բերնիս մօտեցնում,  
Ակամայից լոյս ճակատդ պաշել տալիս ու յետ տանում:

Պատկերները պատճառ բռնած՝ էլ մօտիցս չես հեռանում,  
Ոչ որ չէլած ժամանակը սխտում հետս սէր անում,  
Ծիծաղում ես, կախարդում ես կամ թէ խուճիկ մոնջիկ անում,  
Ել չես ասում, մե՛ղք է խեղճը, անտուր ի՞նչ եմ մատաղ անում:

Լաւ չես անում, սիրուն աղջիկ, մեզ իրար մօտ դալ չե լինիլ,  
Ես Հայ աղգաւ, դու Վրացի, երբեք քեզ ինձ տալ չե լինիլ,  
Ազգութիւնը շատ մեծ բան է, նրանից հեռանալ չե լինիլ,  
Իմ Հայազարմ սերունդներին հէջ Վրացանալ չի լինիլ:

Էս մէկ հնարքն մնում է քեզ, քո խեղճ Սօսին սրտով սիրել,  
Ամուսնութիւն մտքիցդ հանել քոյր և եղբայր սիրով լինել,  
Սէր հոգևոր, իմ բաբուցայ, եթէ կամիս չ'մոռացուել,  
Գնա՛, տէրը քեզ հետ լինի, Աստուած այսպէս էր կամեցել:

6.

Քաղղիս դուռը պինդ փակվել է, դու բաց անող ես, Հայկանոյշ,  
Կենացս թեղ կտրվում է, կրկին կապողն ես, Հայկանոյշ,  
Տրտմութիւնը ինձ պատել է, դու փարատողն ես, Հայկանոյշ,  
Միայն յոյս է ինձ պահպանում, իմ յոյս սուռողն ես, Հայկանոյշ:

Քեզնից հեռու ամիսներով, ախ ու վախն է իմ պաշարը,  
Տուն չեմ տեսնում զիշեր ցերեկի, կացարանս է ձոր ու սարը,  
Մոռացել եմ բոլոր դարգերս, փուչ է թուում էս աշխարհը,  
Միայն անուշ է իմ կեանքը, ինձ կեանք տուողն ես, Հայկանոյշ:

Քեզնիցն շատ եմ տեսել, քեզ պէս ոչ ոք պատկեր չունի,  
Սիրուն հասակի, վեղը երկար, համբուրելու աչքեր չունի,  
Պայծառ ճակատ, կամար ունքեր սև սաթի պէս մազեր չունի,  
Միայն սրանով սիրովում եմ, իմ մխիթարողն ես, Հայկանոյշ:

Ողջ կախէթը անց եմ կացել, միտքս եղել է բոլոր տեսնել,  
Վրաց բոլոր աղջիկներին, աննմանիդ հետ բաղդատել.

Դու անհատ ես աշխարհիս մէջ, հողածին չի հաւատարկել,  
Միայն էս է ուրախութիւնս, իմ ուրախացնողն ես, Հայկանոյշ:

Ստեղծողիդ փառքին մեռնեմ, որ քեզ էդքան խելք է տուել,  
Ինչ որ մարդին վայելում է, ոչինչ քեզնից չի խնայել,  
Պարկեշտ վարքն էլ փառքն աղջկանց աւազանիցդ է պարգևել,  
Քու անունովդ մարդ իմ դարձել, ինձ մարդ շինողն ես, Հայկանոյշ:

Քեզ սիրածս օրից դէսը էլ մի սահաթ հանգիստ չունիմ,  
Կարմիր թշիցդ առած պաշտ սրտիս մէջը պահած ունիմ,  
Վերջին տուած բարեկից հետ քու երկու տող գրածն ունիմ  
Սրանցով հոգիս դեռ վրէս է, հոգւոյս պահողն ես, Հայկանոյշ:

Էդուց էլօր քեզ մօտ կրգամ, կնպէս արա՛ առողջ մնամ,  
Հալալ սերդ, անուշ համբոյրդ մի՛ խնայել, թո՛ղ ստանամ,  
Թէ բաղդաւոր եմ լինելու, ես քեզանով կըլնիմ արժան,  
Սօսի կեանքը քու ձեռիդ է, կենացս վճռողն ես, Հայկանոյշ:



Թէ սրտիս հուրը կուզես հանդցնել,  
Լցրո՛ւ զովարար ջուր դու ինձ վերայ.

Թէ անհուր կամիս դու ինձ կրակել,  
Նայի՛ր խոժոռած դէմքով ինձ վերայ:

Թէ մահուս պատճառ ուզում ես դառնալ,  
Շուտ յայտնի՛ր միտքդ, լաւ ժամանակն է,  
Թէ կենդանութեան յոյս կամիս ինձ տալ,  
Էլ մի՛ սպասիր, էդ իմ փափագն է:

Թէ միտքդ էն է, ինձ էլ չ'սիրես,  
Լաւ է հիմիկուց հոգիս դաս առնես,  
Թէ տուած խօսքդ պէտք է պինդ պահես,  
Էդպէս չ'պէտք է ինձ հետ դու վարուես:

Գիտե՞ս դու հոգիս, կեանքս քաղեցիր,  
Կուկիւմը երբ ինձ պատահեցիր,  
Մի՞թէ խիղճ չունես, որ անգթի պէս  
Մէկ քաղցր ժպտող ինձնից խնայեցիր:

Սիրոյդ հարուածովն երբ ինձ շանթեցիր,  
Կայծակի նման սիրտս ծակեցիր,  
Երբ խելքս դնաց ու այլք օգնեցին,  
Արդեօք փոքր ինչ ցաւ դու էլ զգացիր:

Կամ չհանդիպէիր, կամ սիրող զգար,  
Որ խեղճիս էսպէս խիստ ցաւը չ'զար,  
Ի՞նչ էր իմ մեղքը որ փողոցի մէջ  
Անմեղ որսի պէս արիր նետահար:

Յիշե՛ր, սիրական, սիրոյ խոստումդ,  
Երբ որ տեղ տուիր սիրոյս սրտումդ,  
՝Անբաժան եմ ես քեզնից մինչ ի մահ,“  
Էս չէ՛ր կրկնում միշտ խօսելումդ:

Ինն տարեկան ես քեզ սիրեցի,  
Սրտիս առարկան քեզ համարեցի,  
Սշխարհքն ինձ համար դարձաւ խաւար բանտ,  
Լոյսը քեզանում միայն կարծեցի:

Դու էլ փոխարէնն ինձ սէրդ տուիր,  
Ինձ հետ հաւատար անարգանք կրեցիր,  
Թէ սիրոյդ հաստատ չպէտք է մնայիր,  
Էլ ինչի՞ ինձ այս վշտի մէջ քցեցիր:

Թէ ջահէլ էիր, չէիր հասկանում,  
Մեծ վախօղ ինչի՞ նոյնն էիր անում,  
Էն աչքով ունքով արած փաղաքշանքդ  
Կարծում էիր թէ՛ ինձ քեար չե՞ն անում:

Գիտեմ, որ դու չես, մէրդ է արգելող,  
Նա է մեր սիրոյն միայն դէմ կեցող,  
Ա՛խ թէ ճշմարիտ և սուրբ է սէրդ,  
Նա էլ էս սէրը խախտել չէ կարող:

Նա էլ խիղճ ունի, նա էլ մարդկութիւն,  
Նա էլ կլի տեսած սիրոյ դորու թիւն,  
Ա՛խ թէ չլնէին փողդ ու բաժինքդ,  
Նա էլ չէր ուզել մեր անբաղդութիւն:

Տէր տա՛յր, Հայկանոյշ, սիրոյ կրակը,  
Քո սիրան էլ ձգէր այս իմ տաղնապը,  
Ինչ ես քաշում եմ, դու էլ քաշէիր,  
Էն օրը կը լցուէր սրտիս փափազը:

Էլ չէիր հարցնիլ մէր ու ազգական,  
Ոչինչ չէր կարող սիրոյդ դալ խափան,  
Այդ զիւսաց բաժին փող ու բաժինքդ էլ  
Քեզ կերէէին անարգ, անպիտան:

Ա՛խ, ե՞րբ կը լինէր, որ Աստուած գլթար,  
Իմ ջերմ խնդիրքը չ'թողնէր անկատար,  
Սուրբ ամուսնութեան արժանի անէր,  
Սօս և Հայկանոյշ երկու սիրահար:

Տ.

Դուան տակին կանգնած է, մէկ նայում է մէկ փախչում,  
Գլուխը ծակից հանում է, աչք ունք անելով կանչում,  
Սէր է ուզում ստանայ, թեթեւ տղայ է կարծում,  
Կարմիր փէշն է ցոյց տալի, դեռ նա ինձ չի ճանաչում:

Աչքերդ սև սև աղջիկ, ո՞ւմ ես ուզում դու խաբել,  
Չե՞ս իմանում զիմացդ խելօք տղայ է նստել,  
Ես քեզ երբէք սիրող չեմ, որքան կամիս փաղաքշել,  
Ինձ ունեմ ուրիշ լաւը, որ միշտ ինձի է յիշում:

Արդեօք, քանի՞ տղայի այդ աչքովը նայել ես,  
Որի սիրաը սատարիկ դող՝ որին էլ յոյս քցել ես,  
Բայց թուումէ, անբաղդ ես, մինչև հիմա մնացել ես,  
Ինձ էլ 'ի դուր մի՛ նայիլ, քեզ երբէք չեմ հաւանում:

Երկու բնկերներիցս ոչ մէկս քեզ յայտնի չենք,  
Անունդ, ազգդ էլ իմանալ, հաւատացիր, ուզում չենք,  
Գնա՛ խաբէ ուրիշին, քեզնից մենք խաբուիլ չենք,  
Էս է քեզ խրատ տալի Սօսը իւր խօսքի վերջում:

Ծ.

Հայոց աշխարհիկ, քաղցր հայրենիք,  
Սիրովդ եմ էրուած ես տարաշջիկ,  
Քո հոտով ծաղկունք, քո օրհնեալ տեղիք,  
Ես միշտ յիշելով չ'ողբամ՝ ես հերիք:

Հայո՛ց աշխարհիկ, քո անթիւ քաղաքը,  
Քո գեղ ու շէներ, քո դաշտ ազարակ,  
Հէնց որ յիշեմ թէ եղին աւերակ,  
Կը վառուի սրտիս բոցալի կրակ:

Հայոց աշխարհիկ, օտար տեղ ծնած,  
Բորբոքի իմ մէջ սիրոյդ անմար կայծ,

Ե՞րբ պիտի լինի, խեղճս տարակաց,  
Քո սուրբ վայրերդ տեսնեմ աչօք բաց:

Հայոց աշխարհիկ, դու տուն Աստուծոյ,  
Երբեմն փառաց՝ այժմ տուն սգոյ,  
Անտէր, անհոյժե ցրուած որդիք քո,  
Քո սիրովդ առնուն ցաւ նոր 'ի նորոյ:

Հայոց աշխարհիկ, օտարաց շէնքեր,  
Փառաւոր աներ, մեծ մեծ պաշտաներ,  
Ոչինչ թուին ինձ զինչ հաւուց բներ,  
Սիրեմ քո խրճիթ ամենիցն աւել:

Հայոց աշխարհիկ, մինչև ե՞րբ գոչեմ,  
Ոտքս կապուած է, կախքով ազատ չեմ,  
Ախ մինչ ե՞րբ պիտի գոչեմ, հաւաչեմ,  
Սի՞թէ քո սուրբ հող լիզել կարող չեմ:

Հայոց աշխարհիկ, ծովերից ծովեր,  
Անցնել ցանկանամ, վայելել քո սէր,  
Քո սուրբ հաւատը, քո անխախտ ծէսեր,  
Պահեն օտար տեղս զանուած հայեր:

Հայոց աշխարհիկ, գայլք մեզ պատառն,  
Ճանկքներ սրած ծուտով կուզեն,  
Սյս անօրէններն այնքան շատ վատ են,  
Որ քան զամեն ազգ հայերին կատեն:

10. (\*)

Սար ու ձոր ընկած օտար հողն մէջ,  
Հեռի սիրելեաց կրակովմ անշէջ,  
Իմ հայրենիքէն 'լվաղուց զատուած,  
Հիտի զընկերներս թողի և զսէչ:

(\*) Հայր Դևոնդ Արշանեանցի կամ ծեր նահապետի ոճով:

Ո՞ւմ հետ պըտըտեմ, ո՞ւմ հետ զըուցեմ,  
Լեզու չեն զիտեր, 'ի զուր կը խօսեմ,  
Ամենք օտար ազգ կամ օտարացած,  
Հայերէն լեզուով ես ինձ հետ խօսեմ:

Վրացու լեզուն ամեն տեղ տիրեր,  
Նրան սովորոյթք հայ աներ բռներ,  
Չես կրնար մէկու խօսք հասկըցնել,  
Հայերէն խօսիս, լսես խնդումներ:

Ի՞նչ անեմ, Աստուած, որո՞ւ բան ասեմ,  
Անունով հայ շատ, գործով չտեսնեմ,  
Շատ էլ զլիուս տամ, շատ էլ լաց լինեմ,  
Տեսած մարդերուս ի՞նչ կրնամ պատմել:

Տօ աղբէր, կըսեմ, ի՞մ ազգ սիրական,  
Ասենք ձեր պապերն մէջ վրաց կիցան,  
Վրաստան հիմակ հայով է լցուած,  
Ի՞նչու չէք սորվիր լեզնուդ պասպական:

— Նրանք էլ ազգ են, ամենքս մէկ ցեղ ենք,  
Քրիստոնեայ ենք, ինչե՞ կը զատուենք,  
Ազգն ի՞նչ բան է, մէկ մէկու սիրենք,  
Թէ հայ և թէ վիրք, մենք մէկ ընդունենք:

Հաւանիմ խօսքերդ, կասեմ, սիրելիք,  
Սիրէ՛ք նախ ձեր ազգ, ապա դրացնիդ,  
Դուք աշխատեցէք սորվել ձեր լեզուն,  
Օտրի մէջ ցանկել ձեր զազախարնիդ:

Ա՛խ, ո՞ւմ հետ խօսեմ, երթամ առ տէրտէրն,  
Տեսնենք հասկանայ, թէ ի՞նչ են հայերն,  
Նրա ողջոյնն է ձեզ՝ զամարջօբայ 1)  
Եւ թէ զվնծոն 2) լցէք քեղաններն:

(1) Ողջոյն ձեզ: (2) զվնծ:

Մազերն հիւսած, քամակին ձգած,  
Առանց ֆարաձի փէշերն բացած,  
Մի' հարցնէր իրեն թէ ինչ ազգ ես դու,  
Հետը զնա ժամ, տեսնես հայացած:

Տաս բառ որ կարդայ, հինգը սխալ է,  
Քիչ մը կզկզոց, զիրքը կը ծայէ,  
Թէ Աստուած առեց օտար մարդ չնզաւ,  
Գնա՛ ու լիւր թէ ի՞նչ խաբար է:

Մաղթանք ու փոխեր, որ միշտ կը կարդայ  
Նոյնպէս լիք ստով կամաց փնթփնթայ,  
Թէ հինգ մարդ տեսնի, փուրվառի մօյտա 3)  
Փող պէտք է ժողուի, բիճօ չքարա 4):

Գալուրթիս զմէրթման 5) այսպէսնա օրհնէ,  
Սև փող ձգողին ու երկրպագէ,  
Իսկ ով չ'սուեց, դու նրան նայէ՛,  
Խոժողէ գէմքն ու ոչինչ չասէ:

Վայ ժողովուրդին, թէ քիչ արդիւնք տայ,  
Օրհնութիւն է որ տէրտէրէն ստանայ,  
Խեղճ մարդն ի՞նչ անէ, կանչէ, որոնէ,  
Մէկի փոխարէն հնդապատիկ տայ:

Գեղերն թողունք, մաննք քաղաքներ,  
Էլման էն լեզուն ըման էն ծէսեր,  
Սուրբ աւետարան մինչև որ կարդան,  
Զգուին ամեն մարդ, անցնին սաղ ժամեր:

Ատեան կը կանգնին, գեռ զիրք չ'բացած,  
Նոր կը որոնեն, ի՞նչ աի կարդացած,  
Եօթն անգամ կրկնեն զլիսի սկսուած,  
Էլ թողուն կիսատ, զն գեռ չէ բացուած:

Ո՞ր մէկն ասեմ մեր տէրտէրների,  
Սիրաս արորի, լերգս խորովի,

(3) Բեր, 4) այ տղա, շուտ արա, 3) Աստուած օրհնեսցէ:

Ես էն խեղճերուն մեղաւօր չասեմ,  
Այնպէս ես տեսի մէջ օտարների:

Էս է մեծ կրակ որ մեր սուրբ հայրեր,  
Այս դժուար ցաւից չեն ըներ դեղեր,  
Իրենք քաջ զիտեն այս նեղութիւններ,  
Բայց երես դարձրել, թողեր են անտէր:

Քահանայք տգէտք, ժողովուրդք տխմարք,  
Ի՞նչ մեղաւօր են թէ թողուն հաւատք,  
Ա՛խ, օտարքն էլ միշտ մտած նրանց տակ,  
Իրենց քաշել հայք՝ կանեն ամեն ջանք:

Բայց քանի՛ տէրտէրք բան՝ հասկացողներ,  
Մէջերն լինելով պահեն այս կողմեր,  
Սրանք թէ չեղնին, որք են շատ սակաւ,  
Գետ ու ջուրն եկեր էր հային տարեր:

Հայոց մեծ հայրեր, ձեզի պաղատէ  
Վրաստանի հայն ՚ի խորոց սրտէ,  
Թէ քանի՞ տարի մեզ այսպէս թողնէք,  
Խեղճերնիդ կասէ, ձեզ խիստ կը դատէ:

Բայց դու անբաղդ Սօս շատ հոգս մի՛ անել,  
Վրաստան շուտով կարող է ծաղիկել,  
Սղնախ, թէլաւի նոր վարժարաններն  
Մեծ յոյս խոստանան յասպայն ցուցանել:

Դարձո՛ւր և աչքերդ դէպ խեղճ Հայաստան,  
Եւ այնտեղ տեսնես միւլնոյն խուժան,  
Ե՛րթ համբուրէ ոտք տէր վճահախափն,  
Թո՛ղ և անդ բանայ քանի մ՛ վարժարան:

11. (\*)

Նորանոր սրտեր, նոր նոր եռանդներ,  
չետ այս նոր տարւոյս ձեզ մաղթեմ, հայեր,

(\*) Այս երգը գրել է Սօսը 1865 թուի նոր տարու օրը, և տպւած է հետեւեալ տա-  
րու օրացոյցի մէջ «Վարդան» Մամիկոնեանի խրախոյսը հայերին՝ մակադրու թեմք:

Այս նոր ամանոր իւր հովիտ բացած,  
Թո՛ղ զամենդ փոխէ զինչ բուն հայ մարդեր:

Հայոց առաւօտ ծագի լուսաշաղ,  
Հայրենասէրներ, ելէ՛ք սրտաբաղիս,  
Աշխարհ արարած, տե՛ս, վաղին յառաջ,  
Զ՛նի՛, հայ մարդիկ, մնաք կաղ ՚ի կաղ:

Մենք մէջ մագդէզանց արևալաշտ պարսից,  
Արիւններս հեղինք կրօնի սէրից,  
Մի սիրտ, մի հողի երբ դարձանք բոլորս,  
Քաղցր աչքով նայեց տէրն մեզ ՚ի յերկնից:

Ամեն ժամ թէ օր նոր դայր մեզ համար,  
Հետ ակրնթարթին նոր աշխոյժ կուղայր,  
Սուրբ հարք հոգևորք թե թիկունք դարձած,  
Արիւն թափէին հետ մեզ հաւասար:

Ո՛վ հին մարդ մնաց, մէջ հնոյն կորաւ,  
Արարչին ու մեր աչքերէն ընկաւ,  
Վասակ հետ քանի սուտ երեցնեցու  
Դժոխք ժառանգեց, ազգուրաց դարձաւ:

Մէջ պայծառ դարուս, հայ մարդեր, ելէ՛ք,  
Թմրեր մնացած ի՞նչ կը յօրանջէք,  
Մեր վարդակարմիր արիւն մշտանոր  
Տեղ հին արիւննուդ երակներդ լցրէք:

Ահա՛ ՚ի յերկնիքն լոյս լոյս պսակներ,  
Զազգ կրօն սիրողքն մնան պսակել,  
Կուղեմ զեմ հայ ազգ էս սուրբ պարզեւէն  
Զ՛մնար թափուր՝ կրնար ընդունել:

Տեսնէ՛ք դուք եղբարք զմեզ ու զՎասակ,  
Նա զազգն մասնեց, ստացաւ տանջանք,  
Թո՛ղ բարձուին ձեզնէ, թէ կան, Վասակեանք,  
Կուղեմ զամենքդ կոչուիք Վարդանանք:

Հոգևոր հայրեր և աշխարհականք,  
Նշնպէս հայուհիք քնքու՛ք պատուականք,  
Մեր անցած դարը թո՛ղ ձեզ նոր դառնայ,  
Այս խնդրեն ձեզնէ Ղևոնդ, Վարդանանք,

21. (1)

Արի՛, Աստուած, մեր հայրերի,  
Յոյս աղաւէն նեղեանքների,  
Հասի՛ր, օղնի՛ր քո ծառային,  
Անօգնական հայոց ազգին:

Քո սուրբ խաչը և սուրբ ծնող,  
Քեզ բարեխօս և աղաչող,  
Յիշի՛ր կողիցդ բղխած արիւն,  
Այս փոքր հօտը դարձրո՛ւ իւր տուն:

Իմանում ենք մենք խկապէս,  
Որ մեր մեղքն էր անչափապէս,  
Սորա համար դու բարկացար,  
Եւ այս օրին հասցրիր արդար:

Հիմա ընկած քո առաջին,  
Մեղայ կանչինք պաղատազին,  
Վերցրո՛ւ մեզնից այս պատիժը,  
Տո՛ւր կրկին մեզ մեր պատիւը:

13. (2)

Թատրոնիս սիրող Թիֆլիզի հայ համբարներ,  
Հայաստան իր յոյսը ձեր վրայ է դրել .

(1) Հայոց եկեղեցական ամենեցուն յայտնի երգը Թարգմանաբար յօրինած.

(2) Դուէր Թիֆլիզու հայ համբարներին: Այս երգը տպուած է «Ազատի» ողբերգութիւն անունով գրքի վերջում:

Թե թիկունք դարձէք մեզ,  
 Մանել այս ասպարէզ.  
 Հայ անուան փառք ու պարծանք  
 Համբարներ, հաստատ մնաք:

Մեր սկսած գործը դուք շատ փառաւորեցիք,  
 Մեր սրտի եռանդը աւելի փառեցիք,  
 Այսօր դուք ցոյց տուիք  
 Թէ հայ էք ճշմարիտ.  
 Հայ անուան փառք ու պարծանք,  
 Համբարներ, հաստատ մնաք:

Թո՛ղ հասնի այս ձայնը Հայաստանի ականջը,  
 Իմանայ իւր որդւոց մէջ զարթնած եռանդը,  
 Վառի ողջ հայերին,  
 Նմանել թիֆլիզին.  
 Հայ անուան փառք ու պարծանք,  
 Համբարներ, հաստատ մնաք:

14.

Կեցցեն համբարները	Մեր ընկերութեանը,
Մեր, թատրոնիս սիրողներ,	Հաստատուել թատրոնը
Կեցցեն համբարներ,	Սրանց, սրանց էլ կեցցէ՛,
Քաջ ազգասէրներ,	Կանչենք մենք եղբարք,
Եւ ճշմարիտ հայեր,	Սրանք արժան են կեցցէ՛,
Սրանք որ սիրա տուին	Կեցցեն՝ համբարներ
	Մեր, թատրոնիս սիրողներ:

15. (\*)

Կեցցեն՝ դու Շապուհ, կեցցեն՝ մեր արքայ,  
 Քեզ փառք յաղթութեան, ամեն տեղ միշտ կայ,

(\*) Յաղթական երգ «Արշակ Բ.» ողբերգութեան առաջին գործողութեան մէջ երգելու «Արիք Հայկազունը յառաջ ընթանանք» երգի եղանակով:

Քեզնից զողումէ ողջ Յունաստանը,  
 Ոտքիդ տակ ընկաւ էս օր Բուշանը,  
 Դէ՛հ, քաջ Պարս եղբարք, կեցցէ՛, կանչեցէք,  
 Մեր վե՛հ մաղղկեղանց փառքն աւելացրէք,  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ Շապուհս և իւր զօրութիւն:

Անմահ Որմիզդը քեզ մեզ պարզեց,  
 Քո ահեղ սուրը նա ինքը սրեց,  
 Փշքել թշնամիք ջնջել օտար դեն,  
 Աշխարհս բոլոր առնել պարսկադեն,  
 Դու քո քաջութեամբ անմահ զից հաւսար  
 Տուիր մեզ խրախոյս յաղթել քաջաբար,  
 Կեցցէ՛ կեցցէ՛ կեցցէ՛ միշտ Շապուհս և իւր զօրութիւն:

Տէրն Արշակունեաց Անյուշ բերդի մէջ  
 Պէտք է փչանայ դառն վշտաց մէջ,  
 Յաղթութեան դռները անմահից շնորհօք  
 Բացվում են առջևդ վեհապանծ փառօք,  
 Դէ՛հ քաջ Պարս եղբարք, կեցցէ՛, ձայնեցէք,  
 Մեր արքայն Շապուհս զիւցազն կոչեցէք,  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ Շապուհս և իւր զօրութիւն:

16. (\*)

Ո՛վ դու անմահ Արարիչ,  
 Գերելոց յոյս և փրկիչ,  
 Զօրացրո՛ւ մեր սիրտը,  
 Տանել սիրով այս վեշտը:

Գթա՛ ցրուած հայ ազգին,  
 Որ միասին հաւաքվին,

(\*) Աղօթք գերի նախարարաց հայոց «Արշակ Բ.» ողբերգութեան երկրորդ գործողութեան մէջ երգելու: Յ. Փ.  
 Սոխակ Հայաստանի III հատոր. Ա. Գ.

Եւ 'ի սէր սուրբ Հայրենեաց,  
Զարդեն, վանեն թշնամեաց:

Առաւօտեան լուսոյն հետ,  
Մեր հին փառքը տո'ւր մեզ յետ,  
Տո'ւր զօրութիւն Արշակին,  
Տիրել կրկին իր թաղին:

Խղձա' և մեզ, որ մի օր  
Տանք Հայրենեաց ողջոյն նոր,  
Իսկ թէ մենք չենք արժանի,  
Գէ' թ ոսկերքներս անդ տարուի: \*)

(\*) Որպէս այս չորս թատրոնական երգերը, նոյնպէս և այլ շատ երգեր դրել է Սօսը (Պերճ Պաօշեանցը) երբ 1862-63 թուերին մի քանի նոյնպիսի պատուական երիտասարդ ընկերների հետ ամենաչեղմեռանդ աշխատուէր Թիֆլիզի Հայկական թատրոնի օգտին: Այդ պարոնների ինքնանուէր աշխատութիւնը այնքան մեծ էր, որ ոչ միայն եռանդ արծարծեց շրջակայ հայաբնակ քաղաքներում, այլ և նոյն իսկ Թիֆլիզի, այդ ասիական քաղաքի հայ իզական սեռի մէջ ևս, օրից մի քանի օրիորդ խրեանց ազդի օգուտը զերազանց համարելով քան ժամանակակից թաղաւորեալ նախապաշարմունքը (որ անբաժան պաշարն է եղել մեր կանանց մինչև ցայժմ իսկ) վճռեցին հանդէս դուրս գալ և հայ երիտասարդների զործակցութեամբ աւետիք տալ ժամանակին, որ հայոց զեղեցիկ սեռի մէջ բոլորովին խեղդված չէ ազգի սէրը, վկայել որ այդ յետամնաց տանուկիստ սեռի մէջ ևս գտնվում են կրթութեան և լուսաւորութեան օգուտը ճանաչող անդամուհիք: Թող վեհանձնաբար ներեն մեզ Գոլդեան ազնիւ օրիորդը Աշխէն և Աննա (վերջինս տիկին Պաօշեանց) եթէ մեր հրապարակներ որ անստորանք առաջին զործակցութիւնը դուրս եկան մեր սիրելի երիտասարդներին, բայց ափսոս որ սոցա նախանձելի օրինակին հետեւեցան միայն Թիֆլիզում, Ազուլիսում և չգիտեմ այլ ինչ տեղ ևս, միայն մեզ յայտնի է որ Աստրախանում մի քանի ուսումնական երիտասարդք արդէն 3-4 տարի է որ հաւարվում են մի հայ ներկայացումն տալու ազգային օգտի համար և մինչև ցայժմ իսկ մտում են այդ բացառք երազի մէջ այն պատճառաւ, որ ոչ մի հայ տիկին և ոչ օրիորդ յանձնառու չի լինում հայ բեմ դուրս գալ և հայերէն խօսել (եթէ առաջարկել են նոցա մէկին միւսին այս մասին, պատասխան ստացել են ծռմուկած քինթ ու պոռնկ և ՔՄ !!! . . .) միայն մեզ յայտնի է որ Պետերբուրգի (Ռուսաստանի մայրաքաղաքի) մէջ բնակող կրթեալ լուսա-

### Անյայտ երգեր.

1.

Սիրելի, քեզնից խնդիրքս էս ա,  
Տեսնելիդ պէս բարով արեւ ու այլ ու «է»,  
Բարովդ տաս մէնակ, խնդիրս էս ա,  
Սեղան կանչեմ քեզի գէ՞ ու այլ ու «է»:

Խնդրեմ, սեղանումն ինձի հետ խնդես,  
Զար մարդի ինձի մասխարայ չի շինես,  
Ինձ համար կարմիր վարդ բաղում փթթել ես,  
Խմի'ր իմ ձեռքիցն մին ըօ ու այլ ու «է»:

Ուզում ես հեռանալ, պէտք ա թողող էլ,  
Ուզում ես չարանալ, պէտք ա ներող էլ,  
Ուզում ես սպանել, պէտք ա թաղող էլ,  
Թաղելից յետոյ լի՞ն ու այլ ու «է»:

2.

Մինչդրի քսան տարին աղջիկ թէ մարդի չի զնայ,  
Մեր ցաւն ձեզ յայտնի չէ, անտանելի դժուար բան ա,  
Կիշեր ցերեկ Ֆիքրումն տանջվում ենք, դա ի՞նչ բան ա,  
Ասել եմ, դուս եմ տվել, թո'ղ ամեն մարդ էլ իմանայ,  
Աբուուս վեր կը դնեմ, թարիֆ կանեմ դանայ դանայ,  
Բէլքի քար մարդ իլնի արտասունք չի թափի զիմանայ,  
Մանաւանդ նա հասկանայ, ով իմ պէս ջահիլ ջիվան ա,  
Ինչպէս մին հոտով ծաղիկնք ծաղիլի բար տայ ու բախանայ,

Կրեալ և արիստոկրատացեալ հայ տներից ոչ մի հայուհի չի համամայնվում զեր վեր առնել, այն ինչ մի օտար, մի գերմանուհի (կարծեօք այժմ հայուհի) որ բաղաւորապէս սովորել էր հայերէն, վատահ և ուրախ դուրս է կայիս զործակցելու վիտաացած ուսանողներին. հայ պճնուհիք, լաւ նայեցիք, ապրին և շատ ապրին մեր յիշած ազնիւ օրիորդները ու կանայքը: Յ. Փ.

Մարդ ուղեղիս խորհուրդն էլ միևնոյն համեմատ բան ա,  
 Ի՛նչ միտք ա, ձեզ եմ ասում, թող էն էլ Աստուած իմանայ)  
 Ինքս ինձի ցաւի տամ, բէլքի թէ սիրտս հովանայ,  
 Յրեսուն տարիս լրվաւ, թէ ես չասեմ, ո՞վ կ'իմանայ:

Մեր ծնողքն պսակվան, ուրախութեամբ վայելեցին,  
 Երկու տղայ, մին աղջիկ բերեցին աշխարհ քցեցին,  
 Երեսներն շուռ տվան, ոչ միներիս չի տեսցին,  
 Շատ չունեն, մին դանայ եմ, ինձի մին ճար չե արեցին,  
 Աղբէրներս ի՞նչ անեն, նրանք էլ չի վայելեցին,  
 Մին քանի տարիցն ծնողքս էլ դարտակվեցին,  
 Տուներիս քօլ իլածն տարեցին բազար ծախեցին,  
 Ինձ էլ ասան եթիւմ ես, մին սև կապայով թողեցին,  
 Արտասուքով նստացրան նոր գօլապ անել տվեցին,  
 Միտք չի արած ու չ'տեսած, էդ ի՞նչ անտանելի բան ա:

Վեր առէք էս կանոնըն, կարդացէ՛ք, ով հասկանում ա,  
 Ինչպէս մին մեծ սովիւքար, ապրանքն դուքանում կապում ա,  
 Յեց չուտի չը փրթի էլ, ախար գինը պակասում ա,  
 Ամեն մարդի չե ծախում, բաղըր կապում ա մնում ա,  
 Տարիքներ շուռ են լրվում, մօղից ընկնում, հինանում ա,  
 Ինչքան կուզես, նորոգիր, հնար չկայ մալում անում ա,  
 Մարդ վերջում փոշմանի էլ սկիզբն էլ յիմարանում ա,  
 Ինչ վախտ հարուստ ա իլում, այնչափ էլ հպարտանում ա,  
 Թէ գանձն էլ պրծընում ա, Աստուած գլխին բարկանում ա,  
 Մեր նասիբն էլ կապելն իմացէ՛ք, թէ էդպէս բան ա:

Ինդրեմ Ձեզ բարեկամք, ինձի տէրութիւն արեցէք,  
 Մոլորեալ քամբաղղներին բարի խորհուրդ ցոյց տուեցէք,  
 Աստուած հրամայել ա, մեզ նամուրադ մի՛ թողեցէք,  
 Ինչպէս մին հանգած ճրագ բարի խորհուրդի վառեցէք,  
 Միշտ ողորմի կտանք ձեզ, էդ լաւութիւնը արեցէք,  
 Բարի միտքով հետևէք, լաւ կիլնենք, խաթրջամ կացէք,  
 Աղօթք կանենք ձեզ համար, մեզի տանը մի՛ թողեցէք,  
 Շատ կան յիմար քանս խելօք, նրանց էլ մին քարոզեցէ՛ք,

Վերջի քասիբ տղային, ես դաբուլ եմ, ինձ տվեցէք,  
 Խմ սրտովս վայելեմ, այլքն էլ տեսնեն, թէ լաւ բան ա:

Ո՞վ ինձի կը բամբասի, Աստուած կտայ նրան բարի,  
 Ելի նասիբ ունենանք, բան չիլեր առանց պատճառի,  
 Ել չո՛ւմէք աշխարհը մտնում, մեզ թողնում էք դարդ ու սարի  
 Եդպէս կարճ մտքով մարդն իսկի վերջն չիլեր բարի,  
 Աղջկան պառուաւցնի, վերջն էլ տայ անձար յիմարի,  
 Մնողաց իրանց պարտքն ա հետևին մինչի քսան տարի,  
 Քսանը լրվելից յետ, ո՞վ կարող ա մխիթարի,  
 Մեր ուղած տղին չեն տամ, հոգս ենք անում էդ պատճառի,  
 Փողն կայ, տղան ինքն ա, Աստուծով կը կառավարի,  
 Մոլորված մնացել ենք, մարդի չի գնալն ի՞նչ բան ա:

**3. (\*)**

Գաղեալ դարդըք արա՛ ինձ այան,  
 Ե՛կ ինձանից մի՛ թաղցրուր դու բան,  
 Ինչ ումբր ունես, արա հրաման,  
 Կատարեմ կամքըք միանգամայն,  
 Քեզնէն աեարմիշ չեմ անել ջան,  
 Հարէս տեղան մի՛ լալիր կիրեան,  
 Ել իմ դաղ սիրտս կանես բիրեան,  
 Նահախ ումբրքս մի՛ արա վերեան,  
 Ես ու առաջ քեզ ինձի կը տան,  
 Մի՛ ֆիքքը արա՛ կը բերեմ նշան:

Դուշմաններն քօռանան, մոլորվեն մեզ մոռանան,  
 Բարեկամքն զօրանան, ուրախանան մեզնով խնդան:

Ուրախ կացիր եար, Ռազուբների թար,  
 Թէպէտ քաշանք դար, Մեզ էլ նամուս առ,

(\*) Այս երգը կիսատ հասաւ մեր ձեռը, շատերը ասում են որ Չէրքէղինն է և նա ասել է իւր նշանված սիջողում մի բանի թշնամական իրողութիւնների ժամանակ: Յ. Փ.

Չենք մնալ նաչար,	Աստուած ամեղ ճար,
Կազատվենք թաքրար,	Մի՛ վախիր, Աստու փառաբան,
Կայ մեծ բարերար,	Մի՛ վախիր, Աստուած օգնական,
Բազմաց օգտակար,	Մի՛ վախիր, Տէրն է սլահապան:

Աստուած անցիկ մերնեղու թիւններն,  
 Կը հեռանան մեր չար դուշմաններն,  
 Բարեաց պատճառ կիլնի բարի բաներն,  
 Կամ թէ բարեկամ են ազգականներն,  
 Թամահ չունենք խաներն ու սուլթաններն,  
 Իլլահի քի ուռած մեծատուններն,  
 Կասեն հալա քշենք էս դովրաններն,  
 Խաբար չունեն էն կեանքի տանջանքներն,  
 Մին վարձք անեն թէ, չի դուրս կայ ջաներն,  
 Մինն նոցանից ինձի ու մուղվար էր մատաղ :

Հալայ պէտք ա կատարելն տեսներք, թէ որքան  
 Դառնն իրանց կապած իղբարէն,

Խնդրեմ անեղէն,	Մարդ մեղ հողեղէն,
Անժամ անտեղէն,	Անգուման տեղէն,
Ասաց՝ լոյս եղեն,	Անժանգ ոսկեղէն,
Կամ խաւար՝ եղեն,	Ողորմութիւնն անչափ յանկարծ,
Արար հրեղէն,	Անբաւելի անչափ յանկարծ:

Յանկարծ տեղան հալբաթ մեզ մին ճար կիլի,  
 Մի՞թէ միշտ օրերս ահուզար կիլնի,  
 Անպատճառ սե օրն լոյս պայծառ կիլնի,  
 Մարդ իւր խորհրդիցն ու միկվար կիլնի,  
 Չասես թէ իցէ իղբարդ յեա կիլնի  
 Ինչպէս մեր սիրան քաղցր յօժար կիլնի,  
 Չի կարծես ինձնէն թէ ուրիշն եար կիլնի,  
 Մին սիրտ ապառաժ մին քար կիլնի,  
 Իլլահի որ էն մարդն յիմար կիլնի,  
 Խեղբից զուրկ, մտքից սարէսար կիլնի:

Թո՛ղ ճաքվին դուշմանները, կէսատ մնայ բաներն,  
 Ինչպէս դուս դայ ջաներն, թո՛ղ փոշմանեն մինչ մահուան:

Տե՛ս ինչեր քննան,	Խորհուրդով քննան,
Ինչ բաներ շինան,	Չարհուրմամբ զարթնան,
Չար գործեր փրտրան,	Բաներ քրքրան,
Մասլահաթ բռնան,	Մեծ բանով քրտնան,

Մեծ քնով մնան, սե հորը զնան,  
 Մութ խաւար նստեն միշտ և յաւիտեան :

4.

Գնացէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչն ա կերել մուկն. եկանք տեսանք  
 կատուն ա կերել մուկն. մուկն կատուն, կատուն մուկն ձեզ  
 բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչն ա կերել կատուն, եկանք տեսանք  
 շունն ա կերել կատուն. մուկն կատուն, կատուն շունն, ձեզ  
 բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել շունն. եկանք տեսանք զայլն  
 ա կերել շունն. մուկն կատուն, կատուն շունն, շունն զայլն,  
 ձեզ բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել զայլն. եկանք տեսանք  
 արջն ա կերել զայլն. մուկն կատուն, կատուն շունն՝ շունն զայլն,  
 զայլն արջն, ձեզ բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել արջն. եկանք տեսանք Ֆիլն  
 ա կերել արջն. մուկն կատուն, կատուն շունն, շունն զայլն,  
 զայլն արջն, արջն Ֆիլն, ձեզ բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք տեսէ՛ք ի՞նչն ա կերել Ֆիլն. եկանք տեսանք թովն  
 ա կերել Ֆիլն. մուկն կատուն, կատուն շունն, շունն զայլն,  
 զայլն արջն, արջն Ֆիլն, Ֆիլն թովն, ձեզ բարեկենդան  
 մեզ բարի տարի:

Գանացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել թովին. եկանք տեսանք  
ժանգն ա կերել թովին. մուկն կատուն, կատուն շունն, շունն  
գայլն, գայլն արջն, արջն Ֆիլն, Ֆիլն թովին, թովին ժանգն,  
ձեզ բարեկենդան մեզ բարի տարի:

“ Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել ժանգն. եկանք, տեսանք  
Հողն ա կերել ժանգն. մուկն կատուն, կատուն շունն, շունն  
գայլն, գայլն արջն, արջն Ֆիլն, Ֆիլն թովին, թովին ժանգն,  
ժանգն Հողն, ձեզ բարեկենդան, մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել Հողն. եկանք, տեսանք  
Չուրն ա կերել Հողն. մուկն կատուն, կատուն շունն, շունն  
գայլն, գայլն արջն, արջն Ֆիլն, Ֆիլն թովին, թովին ժանգն,  
ժանգն Հողն, Հողն Չուրն, ձեզ բարեկենդան մեզ բարի տարի:

Գնացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչն ա կերել Չուրն. եկանք, տեսանք  
մարդն ա խմել Չուրն. մուկն, կատուն, կատուն շունն, շունն  
գայլն, գայլն արջն, արջն Ֆիլն, Ֆիլն թովին, թովին ժանգն,  
ժանգն Հողն, Հողն Չուրն, Չուրն մարդն, ձեզ բարեկենդան  
մեզ բարի տարի:



### ՅԱԻԵԼՈՒԱԾԻ.

Մայրը կամ բոլոր իւրեանց մեռքերի վրայ պարացնելով  
երեխաներին երգում են.

1.

Մանչըս կայներ է կարմընջին  
Մանկիշ օղերը անկըճին.  
Խաբար էրէք զօնքնջին  
Մեռնի ասպէս կտրիճին:

2.

Պար էրա՛, պար պար էրա՛,  
Աղջիկներուն սար սար էրա՛:

3.

Անձրե կուգայ, ձուն կուգայ  
Հաճի պապն տուն կուգայ:

երեխայք բոլորված նստում են և միմեանց մեռքից բռնած երգում են.

1.

Ճի՛ւ ճի՛ւ ճի՛ւթօնայ,  
Հարսըս տարան բաթօնայ,  
Ես բաթովի տղան եմ,  
Թագաւորի փեսան եմ,  
Թը՛ռռ Մամօյեց երգիլքը:

2.

Փիսօ՛, փիսօ՛ փիշտ ա, կորի՛  
Փիսօն եկաւ, փիշտ ա՛, կորի՛,  
Փիսօն առկան սըրեց, էկաւ,  
Փիսօ՛, փախի՛ր, փիշտ ա՛, կորի՛:

3.

Խնոցի, հարեցի,	Թանը քեզի,
Հարեցի խնոցի,	Կարագն ինձի:

4. (1)

Ծի՛ւ, ծի՛ւ ծիծեռնակ,  
 Ոսկի հալար պիպեռնակ,  
 Ընկերս ընկաւ ծովը,  
 Ծովէն ելաւ ծիրանի:

5. (2)

Կարկաչա՛, կարդա կաչա՛,  
 Սև օձին սև սև մօզին,  
 Խունկ առէք, մում առէք,  
 Տասներկու պատարագ էրէք,  
 Իմ կարմիր հաւկիթս դուս բերէք:

6.

Հէքեաթ, հէքեաթ ստապս,	Ասեղը տանեմ չօբնին տամ՝
Ղաշղա քուռակը տակս,	Չօբանը ինձի գառ տայ,
Հեծնիմ, էրթամ երևան,	Գառը տանեմ Աստրծուն տամ՝
Գինի խմեմ գէրանամ,	Աստուած ինձի աղբէր տայ,
Հաւերուս չալթիկ բերեմ,	Աղբէր, աղբէր, ջան աղբէր,
Հաւերս ինձի հաւկիթ տան,	Գուն վերի բերդի, աղբէր,
Հաւկիթը տանեմ բօշին տամ՝	Ես վարի բերդի, աղբէր,
Բօշան ինձի ասեղ տայ,	Շաքար մաղեմ կե՛ր, աղբէր:

7. (3)

Ճրագ, ճրագ ճշմարիտ,	Իմ սիրելի Քրիստոս,
Չարին խափան մարտիրոս,	Էրնա՛կ, էրնա՛կ էն տարին,

1) 2) Այս երկու երգերը գործածվում են միայն ծաղկազարդի կիւրակէին. երեխայք իւրեանց ծնունդը բռնած իւրեանց խաղաղիքները փայտից շինած «կարկաչաւ և ծիծեռնակ», շքում են դռնէ դուռն և ամելով երգում են. տանեցիք վարձատրումն նոցա ծուով կամ հատիկով:

Երուսաղէմ շինեցին,	Տունմ ունիմ երկըթէ,
Շինեցին կատարեցին	Չորս բոլորը պողպատէ,
Պողածառը անկեցին,	Սուրբ կուսը տունն է քուն,
Հեծան գոչգոչան ջրին	Սուրբ Սարգիս երգիքը վարթուն,
Արդարական ծաղիկը քաղեցին:	Երգիք գալող փէտ դաւնայ,
	Գուռը գալող երկաթ դաւնայ:

8. 1)

Դավա՛ դավա, դավա՛ դավա՛,  
 Մուկն անկամ ունի դու չունիս:

9. 2)

Ղառ ղառ գէլն էկաւ,  
 Փախի՛ր, փախի՛ր գէլն էկաւ:

10. 3)

Սատանայ, սատանայ,  
 Պոչիդ տակը բանըմ կայ,  
 Գուս հանէ, կէսն ինձի,  
 Գուս հանէ, կէսը քեզի:

11. 4)

Աղ ցանեմ, հոտիս,  
 Գալ տարի փլթիս:

12. 5)

Թո՛ւ թո՛ւ թո՛ւ,  
 Սյինը ոտացս տակը:

13. 6)

Ոջիլ, անիծ, լու կարիճ,

3) Այս երգը գործածվում է եղև իբրև զիշերվայ աղօթք:

1) Ուղտերին տնագելու կամ բարկացնելու համար: 2) Ազգաներին վախացնելու համար: 3) Մի ինչևիցէ կորցնելիս անղաղար պտրումնն և կըրկնումն կարծելով թէ սատանային կ'խարեն: 4) Եթէ մէկը երկար տանել տուել էր խաղի մէջ, ծիծաղումն նորս վրայ: 5) Եթէ որ կամենումէ շարունակ ված խաղը ընդհատել, ասումէ: 6) Երեկոյին բաժանվելիս իրարու են յանձնում, որ իւրեանք հանդիստ քնեն:

14. 1)

Ամեն իրան տունը,  
Ոսկի սնդուկ մեր տունը:

15. 2)

Պուրպատիկինն եկեր է,  
Շալէ շապիկ հագեր է,  
Կարմիր դօտի կապեր է:

16. 3)

Արեգակ, արեգակ,  
Դուս արի, դուս արի,  
Հարդ ու մարդ եկեր է,  
Թուր ու թվանք բերեր է,  
Գունին ոտքը կտտեր է,  
Ծալքին տակը պահեր է:

17. 4)

Քեռի էլի էն այրէն ա՛ռ:

18. 5)

Ուշն էլաւ ուռի ծառին,  
Ուշն իրան ուռով ուռ ոլբրեց:

Հանելուկներ.

1.

Ղարաբաղդին պեխն ոլբրեց,  
Քառսուն հազար մարդ գլորեաց:

2.

Պղտիկ կճոյճ, համով ապուր:

1) Քաժանվելով միմեանցից շտապումն ամենից առաջ լւրեանց տունն մտնել, ով որ շուտ հասնի, ոսկի սնդուկը նորանն է: 2) եթէ երկար ժամանակ անձրեւ չի գալ, մի աւել կապումն փայտի վերայ և ման ածումն տունէ տուն, տանեցիք ջուր են ածում այդ աւելի վերայ և կարծումն որ այդ միջոցով անձրեւ կգայ:

3.

Երկան աղիք, ծէրը ծաղիկ:

4.

Կեռիկ էրկաթ սրաբերան,  
Փէտի կոթով ձեռքըդ կուտան:

5.

Առակ առակ դաստառակ,  
Կէսը գործած, կէսը չ'գործած:

6.

Չին ձորը, քուռակը փորը:

7.

Սարէն գուգայ սըւլլալէն,  
Ոսկի պեխով պըսլալէն:

Աղօթք.

Քառսուն մանուկ      Քառսուն մանուկ  
Քառսուն կուս,      Բարեխօս: 1)

Անկաջքաշուկ.

Մինը միտի ականջից բռնելով տրորում: և հարցնում.

Էջը ջուրը տարե՞ր ես,

— Տարեր եմ,

Տա՞ք էր թէ պաղ,

— Տաք,

Վա՛յ ձիուս լեզուն խաշեր ես.

3) Արեգակին դուրս են կանչում եթէ ամպոտ է օրը

4) 5) Առաջարկումն միմեանց անսխալ կրկնելու մի քանի անգամ:

1) Այս աղօթքը ասումն քառսուն մանկանց տօնին. օրիորդը հաւաքումն մի տան մէջ, և 40 անգամ 40 ծունր են դնում և ամեն անգամ կրկնումն այդ աղօթքը: Յ. փ.

— Պաղ,

Վա՛յ ձիուս առկաները թափեր ես,

— Ղարար էր:

### Երգեր.

(Կարսից գաղթականների),

1.

Մէկ պագըմ՝ դուզիմ կը Գիտիս թէ պիտի պարպիր  
Խնախիս կը, չես տար, Սօ՛վ պիտի էղնիր:

2.

Էրնէկ կուտայի կը Նստենք մէկ տեղ (սօսենք)  
Ես էն օրերուն, Քեզի մայիլ եմ,  
Օր դուն մեր տունը, Ձեռքէս լամիս շարբաթ  
Գի՞մ ու այ՞ ու «է: Մէկ Թօ այ՞ ու «է:

3.

Ես վերէն կուգայի, Ես էլ քեզի չառայ,  
Գուն դուռը բացիր, Տունը մնացիր,  
Ձեռքըդ ծոցըդ տարար, Գնա՛ դալը ու խային,  
Ա՛խ էրիր լացիր, Եար չեղար ինձի:

### Երգեր.

(Կարնոյ կամ Արզրումի գաղթականներից).

1.

Արզիւրումու խորունկ խորունկ՝ ձորերը,  
Հազար տարվան վաստակս ընկեր կորեր է,  
Վա՛յ ան մարիկին ալ օր ինձի բերեր է,  
Սավղան ընկեր խելքս գլխէս տարեր է:

2. \*)

Քեզի առնեմ էլեմ բարձր լեռները,  
Մէկդին ոչխար կարծէ, մէկ դին գառները,  
Մի՛ լար, աղուոր աղջիկ, հարս էղար մեզի,  
Ձավահիր ու անդին քար էղար մեզի:

3.

Կէնա էկան դարան էրկան օրերը,  
Ալ չեմ քաշեր փուչ մանչերուն դարդերը:

4.

Էլեր ես կերթաս կը հարանցդ պողջան,  
Մէմ ճօճա, մէմ ճօճա, ճօճալուդ դուրբան:

5.

Ասօր շաբաթ ըլլեր, վաղն կիրակի,  
Եարս գար դունէն անցնէր, էրթար կրակի,  
Լիզուս բանլիք ըլլեր, ծոցս ֆուսանդի,  
Բանայի դարդերս տեսնէր ուսնդ ուսնդի:

6.

Էլայ էրդիք վեր վեր ընկայ,  
Խաչքը կտորաւ, ես վար ընկայ:

7.

Սուրբ կարապետ կայնեցուցին,  
Լուսեղէն շուքառ հագուցին,  
Քրիստոսին ձեռքը տուին,  
Յորդանան գետ մկրտեցին:

8.

Գեղեցիկ պատկեր, կարմիր ես հագեր,  
Նուռ ու խնձոր ես բերեմ՝ դուն կեր,

(\*) Արզրումում այս երգը ասում են եղել երբ որ աղջկան դուրս են բերում հօր տանից, այս հարսանեաց հանդէսը անվանվում է «հարսնառ»:

Մանորու կը քալես, աստղի պէս փայլես,  
Աչքեմ գինանար զալում քու սիրուդ համար:

9.

Այլ լի'ց ու տո'ւր, այլ լի'ց ու տո'ւր  
Անուշ գինին անապական,  
Ասօր խմենք, վաղն ալ խմենք,  
Հեա ձեզ խմենք ուրախանանք:

10.

Պետրոս ջան Ֆարֆուռու Ֆինջան,  
Քալէ մեր բաղջան, չալէ քեմանջան:

11.

Ես գնացի, զըս քնած էր իմ եարս,  
Վարդն երեսին քրտընած էր իմ եարս:

Չանազան երգեր.

1.

Աղջկի մազերդ հուսէիր, ելլէիր վարդին ծառին,  
Թուշդ երեսիս քսէիր, Բիւլբուլն պէս խօսէիր:

2.

Ես գիշեր լուսնիակ գիշեր,  
Ա'ն խնձոր, արի' զիս տես'  
Վարդ խնձոր արի' զիս տես',  
Ես վարդանն եմ, դուն վառվառն ես:

3.

Մեր դռան յետև բաղջայ է, Ռէհանին քաղող պիտի,  
Բաղջի մէջին ուհան կայ, Ինքն էլ սիրուն ջան պիտի:

4.

Էրնակ էն օրին բաղ ու բաղչումը,  
Որ քեզ հետ նստած էինք ծառի տակումը:

5.

Ուր ա, չեմ տնում իմ բարբալէն,  
Աստուած վկայ է մեռայ ման դալէն:

6.

Ե'կ նոր սիրեկան, բան եմ ասում քեզ,  
Օրն օրի վերայ ջան եմ ասում քեզ,  
Ծոցդ բաղջայ է, դրախտ ու բաղ ես,  
Համասիլու ծաղիկ վարդեր կու քաղես,  
Կու սիրեմ քեզի, քանի որ սաղ ես,  
Հերիք չէ, զլիպար, էրքան ինձ դաղես:

7.

Եար քու սիրուդ իմ եարս սև անցուցի,  
Ինձի պարտական է քու մերդ, աղջկի,  
Չաթի չեմ խնդացեր իմ հօրէս մօրէս,  
Խելքս զլիսէս տարաւ մաղերդ, աղջկի:

Խոտէջուրցիների պարերդ (1)

Աղջի վա'յ այի, վայ այի,  
Վայ այի, մեզ հետ պայ այի,  
Ծույ էյկաթին խլիճ կասեն,  
Պզտիկ խայսին նանամ կասեն,  
Տէ Թյի տղաս, տէ Թյի օյզիս: 2)

1) Խոտէջուրցի հայ կաթօղիկները ճանկաստանից են, որք միշտ օտարուծեան մէջ անցուցանում են իւրեանց կեանքը Կովկասեան քաղաքներում. սորա համարեա բորբը պարապումեն հացազործութեամբ (ֆուռնչի) և շատ պինդ համոզված են, որ Կաթօղիկական եկեղեցուց կամ Պապի օրհնութիւնից դուրս ոչ թողութիւն կայ և ոչ արքայութիւն:

2) Այս երգի մէջ ր և ո. տառերը փոխարինվում են յ տառով իսկ հ-ն իս տառով. Յ. Փ.

### Մշեցոց պարերդ. (\*)

Դէ՛՛՛՛՛ն գնա կիզեամ, դէ՛՛՛՛՛ն գնա կիզեամ շուտ կիզեամ,  
Կարմիր սուէրս խազնիմ ի դեամ շուտ կիզեամ.

„ (\*) Այս պարերդը շատ տարիք առաջ լսել եմ հանդուցեալ Սիմէօն վարդապետ Մուշեղեանցից, որ ինքն ևս մշեցի էր, յետոյ գաղթելով Ալեքսանդրապոլ, մի քանի ժամանակ պարապեցաւ ուսմամբ այն ժամանակ երեւելի հայկարան Աղէքսանդր վարդապետ Արարատեանցի մօտ, յետոյ ցանկանալով հոգևորական սրտածնի, ամուսնացաւ և ծեռնադրվեցաւ քահանայ Ալեքսանդրապոլու բնիկ ժողովրդականաց հովիւութեան. այդ ժամանակ նա ուսուցչութիւն ևս անում էր, բայց ի՞նչ էր նշանակում այդ այն ժամանակ, ոչ իւր քահանայադործութեամբ և՛ ոչ իւր ուսուցչութեամբ չէր կարող ապրել այնպէս, որպէս վայելուչ էր մի հոգևորականի. ունեցաւ մի քանի աշակերտներ, որոց մինն է հանդուցեալ Մինաս քահանայ Տէր Խաչատուրեան (կարգա Մեղու Հայաստանի համար 55, 1874 թ.): Այդ միջոցում նա զրկվեցաւ իւր կնոջից, ոչին այնքան ջերմ սիրում էր, և նա բոլորովին թողեց Ալեքսանդրապոլը և գնաց Էջմիածին, և այնտեղ վարդապետ ծեռնադրվելով, ուղարկվեցաւ փոխանորդ թեմական առաջնորդին Ղզար, և յետոյ փոխարեւրվեցաւ Աստրախան, Մատթէոս Եպիսկոպոսի մօտ, երկուքն էլ Մշեցիք, բայց շատ զանազան ու տարրեր զաղափարներով: Աստրախանից Էջմիածին վերադառնալով, Մատթէոս Կաթողիկոսը նշանակեց նորան Աթոռոյ զանձապահ, և շատ սիրեց նրան: Սիմէօն վարդապետը շուտով եպիսկոպոս կը դառնար և օգտակար մտրդ կլինէր մեր հոգևորականների մէջ, եթէ անսպասելի մահը չհրկէր նրան կեանքից նորա նորինորոյ ծաղկած հասակի մէջ: Երևանից յետ դառնալիս, ուր գնացել էր Աթոռապատկան գործերով, զիտութեամբ թէ՛ ակամայ զարկուել էր գնդակով, կարծեօք իւր շատ սիրած ծառայիցը և մինչև Էջմիածին հասած, արևն երդրից անց կացած է եղել: Հանդուցեալը շատ բարեխիտ էր, բանաստեղծական մեծ քանքար ունէր, և նորա աշխատութիւնը ցրուած են ամեն տեղ, ուր նա եղել է. առաւելապէս Ալեքսանդրապոլ, Թիֆլիզ, Աստրախան, Ղզար, Էջմիածին, և այլն: Նա լաւ տեղեկութիւն ունէր Հայոց, Տաճկաց, Մարաց և Արաբացոց և յետոյ Ռուսաց լեզուներին, նա շատ մոխամազներ և երգեր գրել է իւր աշուղի անունով «Ճիրարի»: Չնայելով որ նա միշտ գրում է եղել թէ՛ արձակ և թէ՛ չափածոյ աշխատութիւնը, բայց նոցանից համարեն թէ ոչ միւր գուրս չէ եկել մինչև ցայժմ իսկ, նորա բարեկամը, որոց մօտ գտնվում են նորա երգերից, շատ բարի կ'լինէին եթէ չպահէին այդ գործերը մոռացած մեռելութեան մէջ, և դուրս հանէին յօգուտ մեր գրականութեան:

### Երեխաների երգ

(Ասորթախանում)

1.

Արև, արև դուս արի,  
Հէրդ մէրդ եկել ա,  
Ոսկի չախլու բերել ա,  
Գուան տակին զրել ա:

2.

Էդուց կիրակի ա,  
Փիլիպոսը բանի ա,  
Չարիս ու չուանի ա,  
Կոկոմ քաղելի ա,  
Կոկոմ քաղեմ Աստծուն տամ,  
Աստուած ինձի աղբէր, տայ,  
Աղբէր, աղբէր ջան աղբէր,  
Ոտով կըսայ շուռ կտայ,  
Կատայ կարեմ, կարճ կը գայ  
Գուկմա շարեմ, խաչ կը գայ,  
Խաչաղբէրս տուն կը դայ,  
Բագերին բակայ կտայ,  
Հաւերին հալւայ կտայ,  
Թուրքի տղին ջուր կտայ,  
Ոտով կըսայ շուռ կտայ,

3.

Ճրագ, ճրագ ճշմարիտ,  
Անմահական մարգարիտ,  
Էս տանը սէրը ո՞վ ա,  
Մին ալ կապով կնիկ ա,  
Բրիտոս մէջին պաւակած ա  
Վարդ մանուշակ փուած ա:

### Աղջկանց երգեր.

(Ասորթախանից):

1.

Աղջկերբ, արիք նախշ արէք,  
Նախշը ծառից քարշ արէք,  
Գէգէն փշուէք ա հեփեկ,  
Գիպա տուն երիշ արէք:

Գուցէ հաւարվէին այդ երգերը, եթէ կենդանի մար իմ սիրելի ընկեր Յովհաննէս Մուշեղեանցը (Սիմ. վարդ. եղբորորդին) բայց նա էլ տարածամ զո՞ն գնաց մահին մինչդեռ լաւ յոյսեր էր խոստանում մեզ . . . . ափսո՛ս: Աւելորդ չենք համարում ինդրել բարեմիա ընթերցողներից և հանդուցեալի բարեկամներից նորա գործերը ուղարկել մեզ, մեր նորանց չենք սեպականում այլ կաշխատենք իրոյս ձեռն, զրականական գողութեան ժամանակն անցաւ, թող անհոգ մնան: Սա սի քանի յիմարների կարծիք է: Յ. Փ.

2. 1)

Տրուբօջիստը մարդս իւէր, Հասիլեցը կապաս իւէր,  
 Թէք տանէին, Թէք տանէին, Թէք տանէին, Թէք տանէին,  
 Հաւաքունը տունս իւէր, Սև հացը կերածս իւէր,  
 Թէք տանէին, Թէք տանէին: Թէք տանէին, Թէք տանէին:

3. 2)

Մամա ջան, մարդի եմ գընըմ,  
 Բալա ջան, հոյի՞ն ես գընըմ,  
 Մամա ջան, Թափանի տղային:  
 Բալա ջան, նա շատ փուչն ա,  
 Մամա ջան, նա շատ սիրուն ա,  
 Ինձի զարոււ ա:

Բալա ջան, ջերը դարտակ ա,  
 Մամա ջան, ինձի զարոււ ա,  
 Բալա ջան, էս էլ կիլի,  
 Մամա ջան, կիշմիրի շինել կուզեմ,  
 Բալա ջան, էս էլ կիլի:

Մամա ջան, ուզում՛ջի եայլուդ էլ կուզեմ,  
 Բալա ջան, էս էլ կիլի,  
 Մամա ջան, քուինջի մինգարն էլ կուզեմ,  
 Բալա ջան, էս էլ կիլի:

(1) (2) Այս երկու ժողովրդական երգերը առիթ տուին մեզ մի երկու խօսք ասելու Աստրախանայ երիտասարդների և աղջիկների վերաբերումեամբ: Չնայելով որ Աստրախանում հաշվում են մինչև 3300 հոգիք (ներկայումս) բացի օտարականներից, անցել 1874 թուի չափաբերական մատեաններից տեղեկանում ենք որ ամբողջ տարուայ պատկաճներն եղել են 30 ղոյգ, ուրե մըն 694 <sup>6</sup>/<sub>100</sub>իցը մինը, հանելով օտարները, այլ ևս պակաս կատանանք, ծնուածներ կղել են երկու սեռի 138. ուրեմն 40ից մինը, այն ինչ հաշուելով մեռածները, ստանում ենք մի այնպիսի զուամար, որ 39ով աւելի են քան ծնուածները. և ուղղակի կ'հասնենք այն եղրակացումեանը, որ Աստրախա-

Մամա ջան, սանդուղի գիրան էլ կուզեմ,  
 Բալա ջան, էնտուր մանուշակինն ա,  
 Մամա ջան, մանուշակինն ցաւ ու չօռ,  
 Կարէտի ձիանք էլ կուզեմ,  
 Բալա ջան, էստուր չիլիլ,  
 Մամա ջան, ինչի՞ չիլիլ,  
 Բալա ջան, շլախ կտան Թափան կը ճղեն:

4.

Աղջիկ տեսել եմ ճանանչել եմ  
 Կանչել եմ, ամանչել եմ,  
 Էդ գեղեցիկ պատկերդ  
 Տաք տաք սրտով պաչել եմ:

Այ աղջիկ, դու բաղի միջին,  
 Նստած վարդ ու համի միջին.  
 Նախշուն աչքերիդ մեռնեմ,  
 Դու ես իմ հաղի միջին:

Այ աղջիկ, գիր չեմ անիր,  
 Ճամբումդ մատաղ չեմ անիր,  
 Դու չիլես, ուրիշը կառնեմ,  
 Քաբուլս վեր չեմ անիր:

Այ աղջիկ, ես բաղ կուզեմ,  
 Բաղումս ալ վարդ կուզեմ,  
 Երբ մեր տանը հարս կըզաս,  
 Վարդիցդ հոտ քաշել կուզեմ:

Մեր բաղումը նուռի ծառ,  
 Ջուխտ նուռները վրէն Թառ,  
 Ջուխտ նուռներիդ ես մեռնեմ,  
 Մինը քաղէր ու ինձ տար:

Այ աղջիկ, կապադ Թաղայ,  
 Ես քեզ բաղումս ինչ ասայ,  
 Քու հօրն ու մօրն ես չեմ ասիլ,  
 Դու ինքդ լացով ասա:

նի ժողովուրդը հետզհետե պակասում է և նորա բոլորովին անհետանալու համար այս հաշուով հարկաւոր կլինի մի հարիւրամեակ, աչքի առաջ ունելով հետզհետե աճող ջերմացաւը, Թորախումիւնը, ջրացաւը և այն և այն: Ո՛վ է պարտական—ժողովուրդը իւր հետ Պարսկաստանից բերած աւանդական տգիտումեամբ, ու նորից նորա մէջ մտած և քնաւորումին դարձած անտարբերումեամբ, Աստրախանի ժողովուրդի զաղձականումեան օրից մինչև ներկայիս վիճակագրականը զօրեղ վկայումիւն է մեր խօսքերին: Կամենալով խօսել նոր սեռի վերայ, մեր չ'մոռանանք մեր նպատակը: Այստեղ ամուսնումիւնը շահաղիտական է դարձել և ճշմարիտ իսկ է, որովհետև որքան օրիորդներ այժմ նստած մնացել են իւրեանց հօր տանը իրրև անըսպառելի անէծք իւրեանց ծնողաց համար, մի՞թէ նորա ամենքը տղեղ են, անկիրթ են,

Ծաղիկ ունեմ, կամ քեզ,  
Ի՞նչ կիշի որ մին խօսես,  
Քու խօսուածքիդ կարօտ եմ,  
Ոսկէ մասանիս նշան քեզ:

Ա՛յ աղջիկ, ես ի՞նչ անեմ,  
Գլուխս քեզ զուրբան անեմ,  
Թէ մէրդ քեզ ինձ չե տալ,  
Տուներդ բարբադ կանեմ:

Բաղի ու բաղու հօր ա,  
Քաթան շապիկս նոր ա,  
Իմ մօրն խաբար արեք,  
Ես եարիս ծոցում կորայ:

Բաղ եմ առել իմն ա,  
Միջի բարն էլ իմն ա,  
Նոր ծլած դռնն մեռնեմ,  
Նուռն ու խնձորն էլ իմն ա:

Արևը կամար կամար,  
Մէջքիդ ա ոսկէ քամար,  
Աղջիկ, արի մին պաշեմ,  
Եսսածու խաթրի համար:

Գիլանի քամին զալիս ա,  
Գուռնին շախ շախ տալիս ա,  
Աղջիկ վեր կաց դուռնը բացիր,  
Հրէն ա եարդ զալիս ա:

Լուսինը կամար կամար,  
Մեռնեմ աչք ունքիդ համար,  
Բացի՛ր քու ծոցը մանեմ,  
Իմ սիրուն, իմ խաթրի համար:

Ա՛յ աղջիկ, ինձ խաթր արա՛,  
Գլուխս քեզ զուրբան արա՛,  
Էդ ծլած ծաղիած ծոցումդ,  
Արի՛ ինձ մին տեղ արա՛:

Լուսնիակը կէս կիշի,  
Թուշդ նրա պէս կիշի,  
Թուշիդ վրայ մի ջուլտ խալ,  
Մին պաշել տեղ կիշի:

Մին բաղ ունեմ զուշերով,  
Եարս կը զայ զիշերով,  
Սե սե աչքերիդ մեռնեմ,  
Չորս զրազը վուշերով:

Աղջիկ, կայներ, բօյդ տեսնեմ,  
Սե խաղող աչքերդ տեսնեմ,  
Ծոցդ լիբը եմիշ ա,  
Նուռն ու նողուլդ տեսնեմ:

Սպիտակ ու սե աչքերիդ,  
Կամար կապած ունքերիդ,  
Ծոցդ բաղչա ու բաղ ա,  
Մեռնեմ հասած նուռներիդ:

վատառոջ են, դատարկաբէր են, ոչ ընդհակառակն, նորա միւռնոյն արժանա-  
ւորութիւնքն ունեն, ինչ որ ունեն ամուսնացողքը, դուցէ և առաւել են որ փո-  
քըր ի շատէ հասկանում են տանախնութիւնը, չափաւորութիւնը, (ամեն օրվայ  
տեսած ու փորձած կեանքից) ինչու համար ուրեմն, սիայն մի պատճառաւ որ  
չունեն փ ո ղ, այն ինչ հարուստների երտպական յիմար քնքշութեամբ մեծա-  
ցած ֆօրտալիանոյով ցերեկը՝ իսկ բոմաններով զիշերը՝ սնուած մի կիսակիւնք,

Եարս ձին նստաւ գնաց,  
Եազուխը ըստեղ մնաց,  
Ի՛նչ անեմ ալ, կարմիրը,  
Իմ սիրան էլ հեար գնաց:

Սե բիսերը ոլորած,  
Եարս ինձ թողեց մոլորած,  
Նա զարիբ աշխարհ գնաց,  
Ինձ թողաւ վիզս ծռած:

Օվսանայի հօր քրոջ,  
Բէլգէն իլաւ էս զիշեր,  
Աչքերը խուճար խուճար,  
Վարդի պէս կարմիր թուշեր:

Մեր բաղում կայ զաֆասայ,  
Մէջին բիւրիւլ կը խօսայ,  
Թո՛ղ քու մէրն ինձ ասի  
Իմ սիրուն ազեղ վեսայ:

Անձրե ա դամ շաղերով,  
Կանաչ տերեւ դողերով,  
Հրէն ա եարս զալիս ա,  
Եօրդա ձիով հաղերով:

5.

Գղէ, զգի, բամբակի,  
Աբրէշումի զանգակի,  
Հարսը գնաց հէրանց տուն,  
Պառաւը մնաց զանգատի:

վատառոջ և նիհար աղջիկ իւր այդ բաժինքի շնորհիւ կին է դառնում ան-  
ժանօթ, անդիտակ իւր ամուսնական և ծնողական ծանր ծանր պարտականու-  
թիւններին. և երիտասարդները ամենայն չերմեռանդութեամբ որոնում են իւր-  
եանց հարսնացուրը այս վերջինների մէջ, բայց ինչու են անում այդ, որովհետեւ  
նորա մինչև 50-55 և անգամ 40 տարի իւրեանց կենսական թանկագին հիւ-  
ծերը ապօրինարար կորուսած, երիտասարդական աշխոյժ զգացմունքը աստ և  
անդ բաժանած, մի քանի ակտայից ցաւերի ենթարկված, միանգամայն կեն-  
դանի կմախք դարձած, ամեն տեսակ (Թէ ֆիզիքական և Թէ մտաւորական) աշխատու-  
թեանց անընդունակ, իւրեանց մնացեալ կեանքին մի պարտութեան ճարելու նպատակով  
դիմում են այս ինչ կամ այն ինչ աղայի մօտ նորա տանը  
մնացած աղջիկը խնդրելու, ի հարկէ և նա ուրախութեամբ խլում է իւր աչքից  
ամեն օրվայ փուշը, Թէ որքան և իցէ շնորհք մնացել էր մուշտարու վրայ. յետոյ օր-  
քեր են ծնանում այդ կիսակենդան զոյգերից. այնպիսի թոյլ ու տկար արարածներ,  
որպէս և ծնողքն իսկ, և անս գորա ամեն օր մեր աչքի առաջ կիսակենդ  
հեռանում են աշխարհից: Ահս մեր ժողովուրդի պատկերն:

Մի կողմից ևս ներքի է երիտասարդներին, պատճառ, որ իւրաքանչիւր  
կին դարձող օրիորդ իւր հօր տանը դեռ ևս յօղային պարսպաններ շինում է  
պճնութեան և նորածնութեան, այնպէս որ նոցա ամուսինները անշուշտ մոլոր-  
վելու էին իւրեանց կանանց ամեն օրվայ նորանոր պահանջներից, եթէ նոցա

### Աստորախանցուոց վեճակի երգեր.

6.

Երուսաղէմ մին ծառ կայ  
Տարէն երեք պտուղ կըտայ,  
Յոյս հաւատով խնդրողին,  
Սրտի մուրազը շուտ կըտայ:

Երկինքիցը զուշ ա գամ,  
Իրա համար տեղ ա ուզում,  
Աստուած իմ խորհուրդըս տայ  
Սուրբ Գէորգ մոմ ա ուզում:

Ոսկի խնձոր քցեցիմ,  
Գիպա հուջուր հուջեցիմ,  
Հուջուրի տղերք դէն կացէք,  
Ուզած եարիս գտեցիմ:

Սանդուղի դարանքը բացվաւ,  
Նողուլ նոբաթով Լքցվաւ,  
Գնացէք ասէք մամայիս,  
Աղջկադ բաղըը բացվաւ:

Արխալուզս կարել եմ,  
Կանաչ տափում փռել եմ,  
Ո՛վ ուզում ա ինչ ասի,  
Ես նրան հաւանել եմ:

Արևմտը արևի միջին,  
Արբէշում չարսի միջին,  
Մին եար ունեմ Աշտարխան,  
Մին հատ ա խալսի միջին:

հետ մի որքան և իցէ գումար ևս ստացած չ'լինէին, թէ իւրեանց և թէ կանանց ժամանակաւոր վայելութեան համար, իսկ յետոյ, անհրաժեշտ աղբատուծիւն, սնանկութիւն և պարտք: Ինչ որ վերաբերվում է մեր հարուստ դասակարգին, նա զխաւոր զործն է կատարում պնտութեան յառաջադիմութեան համար. ուստի առաւել ևս մեղադրելի է, որովհետև նա օրինակ է հանդիսանում իւրեանից ստորակարգ ժողովուրդին: Չնայելով որ իւրեանք հարուստ են, ապահով են նիւթապէս, դարձեալ շահադիտութեամբ է կատարում նոցա ամուսնութիւնը, հարուստն իւր աղջկը ուրախութեամբ կտայ մի տղէտ հարուստի, որի հետ ցաւ էր ապրելը, կենակցելը իւր աղջկայ համար. քան մի միջակի՝ որ զիտէր իւր զործը, և կարող էր լինել լաւ ամուսին և հայր, և այսպէս նոցա հարստութիւնքը մինի ձեռքից փոխվում են միւսի գրպանը և արկղը և այնտեղ փտում են մինչև մի այդպիսի նոր փոխաբերութիւն, այն ինչ զորա կարող էին օգտակար լինել մի քանի կարօտ զերդաստունների: Բայց տեսնեք թէ այդ շահադիտաբար ամուսնացածները բաղդաւոր են եղել ամենքն էլ, ո՛չ հարիւրաւոր վկայութիւնք կան այս մի ո՛չ ը հաստատելու համար, և քանի որ պիտի դժբաղդաբար շարունակվեն այս կորստաբեր սովորութիւնքը, մեր օրիորդըը միշտ կրկնելու են իւրեանց մայրերի ականջներին „Մամա ջան, մարդի եմ զընըմ“ կամ թէ „Տրուբօշխտը մարդս իլէր“: Գ. Փ.

Ատղայ դու շատ մելիք ես,  
Շատ ապրանքի տէրիկ ես,  
Ապրանք խաղնադ չեմ ուզիր,  
Դու էլ ինձի հերիք ես:

Ծովի երեօին նաւ պիտի,  
Իմ աղբօրս եար պիտի,  
Եաղութ զուճուրթ մատանիք  
Տէրտէրով նշան պիտի:

Չարիարը ճ'խտեմ, ջուր կիլի,  
Էն բաղում բուլբուլ կիլի,  
Նամարդ բլի էն տղան,  
Մին աղջըկայ դուլ կիլի:

Վեր կիլեմ նաւի վրէն,  
Չինարի ծառի վրէն,  
Սամուր փափախ եմ զրել  
Ոսկէ քաքուլիս վրէն:

Էս օր մեզ համբարձում ա,  
Աստուծուն փառք 'ի բարձում ա,  
Գրիստոս վերև համբարձաւ,  
Ողջերիս բաղըը բացվաւ:

Քուշա քուշա պտուտեմ,  
Յովհաննէս Մկրտումն եմ,  
Գրիստոս աւազանումն ա,  
Գնամ նրան մկրտեմ:

Թագաւորը թախտումն,  
Ալմաղ թուրը մէջբումն,  
Մտիկ տուէք շնախիս,  
Նրանի տուէք բաղդիս:

Աղջիկ անունդ Վիլա,  
Եայլուղիդ հոտը հիլ ա,  
Ուզամ ես ձեր տուն գալի,  
Ես ի՞նչ ձեր քուշան տիլ ա:

Աղջիկ անումդ թամար,  
Մէջբումդ ոսկէ քամար,  
Բացիր մին սուսան դօշդ,  
Աստուծաւ խաթրի համար:

Չեր տան տախն ա հնտրդի,  
Մեր տան տախն ա հնտրդի,  
Աղջիկ, շատ մի՛ դնալ գալ,  
Տղայ եմ, սիրտս կուզի:

Մին տուն ունեմ քարի ա,  
Բարձրութիւնը ժամի ա,  
Օր կանի, արև կանի,  
Եարս միջին խաղ կանի:

Անձրև ա գամ, ձուն ա գամ,  
Սիրուն եարս տուն ա գամ,  
Փլաւ եփենք եղ չկայ,  
Մեր Օղսեային տեղ չկայ:

Աղջիկ անունդ Խաթուն,  
Բէլուզադ տարաւ կատուն,  
Ինչ՞ լաւ մտիկ չարար,  
Եարդ ուզում էր գալ քու տուն:

Դուս կը գամ արև օրին,  
Թաս կտամ թագաւորին,  
Գլուխս զուրբան կանեմ  
Էն կանաչ կապաւորին:

Չափարի տակին չափ կը տամ  
Ոսկի քիսաս թափ կը տամ,  
Էս իմ պստիկ տեղովս,  
Ալամին խրատ կը տամ:

7.

Շիպիլի աղջիկ Մարիամը,  
Գնաց թուրքի բայրամը,  
Մին ամանով նուշ բերաւ,  
Էն էլ ջեբումը ածաւ:

Մէնակ կերաւ զող արաւ,  
Ոչ մինին էլ չն տվաւ,  
Լիզային էլ չն տվաւ,  
Լիզան նստաւ լաց իլաւ:

Մէր ու աղջիկ թակվեցին,  
Մաղը մազի եկեցին, ..  
Մէրը գնաց դանդատի,  
Հէրը գնաց սալդատի:

Քուրքճիները եկեցին,  
Նստան սովէտ արեցին,  
Լիզինկային ի՞նչ անենք,  
Քցենք դրօկ փախցնենք:

Աղջիկ անունդ ա Օգսեայ,  
Մամայիդ համար մեծ հոգս ա,  
Դու հո՞ւմն ես սիրում, ասա,  
Աբրօսը իմ հոգիս ա:

Լիզային տուան ամաններ,  
Չայի չամչակ չամաններ,  
Լիզային տարան թազցրան,  
Թուրքի շորեր հազցրան:

Մէրն եկաւ տեսաւ Լիզան չկայ  
Պտրել ընկաւ քուչայ քուչայ,  
Ասաւ Լիզան կորել ա,  
Ճար ա կերել մեռել ա:

Քուրքճիները եկեցին,  
Նստան սովէտ արեցին,  
Հաւարվենք լիզան տուն տաննեք  
Մօրը ձեռքից պրծնենք:

Օխտն օրից Լիզան բերան,  
Ու թախտի վրէն դրան,  
Հասանի շինած հարիսան,  
Ողջով նստեցին կերան:

8.

Վայ քեզ Ա . . . . քաղաք, քաղքումը զանուն չկայ,  
Չարսուիդ ասնաճներին մին դիրք ու կանոն չկայ,  
Կանոն կապող հաստատող մին բարի անուն չկայ,  
Աղքատներին հոգացող, աղղի տուն շինող չկայ,  
Ուսումնարան տղայոց, հաստատ վարժատուն չկայ:

Կարեմ՝ ասել, հաստատել, որ քաղաք ես անախտան,  
Ափսո՛ս, որ քեզանումը չունիս մին բարի իշխան,  
Քու միջև հարուստները շնում են զահվա, միլիտան,  
Թէ ի՞նչ է քասիրներին բէլքէ աւել քրէհով տան,  
Եկեղեցի անուանի ոչ մի շնութիւն չկայ:

Եկեղեցեաց փողերը քանի հոգի կեցին,  
Չափազուրի մալի պէս իրար ձեռից խլեցին,  
Իրանց համար դուքաններ ու լաւ տներ շինեցին.  
Անհոգեկալս իշխանքը խախտ թողին եկեղեցին,  
Ոչ մին քաղաքի ժամերի մէջը այդքան սիւն չկայ:

Քառասուն հազար մանէթ էր եկեղեցու ջամ փարէն,  
Տասին մէկ ու կէս շահով որքան կաւելնար տարէն,  
Երբ ներսէան հրաժարվեց Արարատեան տաճարէն,  
Տասնուհինգ հազար մնաց հին քառասուն հազարէն,  
Իրար մէջ փայ փայ արին տեսան քննութիւն չկայ:



### ԵՐԳԱՐԱՆԻՍ ՄԷՋ ՅԱՅՏՆՈՒԱԾ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐԻ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԵՔԸ<sup>\*)</sup>

Թորոս Մարթաղեանց (Թուրինջ) ծնվել է Քարքանջ գիւղում Շամախու վիճակում, յետոյ գաղթել է Ասորախան, այնտեղ ամուսնացել է) բայց նա այդ կեանքի մէջ բաղդաւոր չէ եղել, ժառանգ չունի (զոնէ այժմ չ'կան) մեռել է 85 տարեկան հասակում և թաղուած է Ասորախանի գերեզմանոցում. գերեզմանաքարը շինուած է Նախիջևանցի վաճառական Պ. Հայրապետեանցի ծախսով: Թուրինջը իւր համառօտ կեանքը գրել է ինքն (տես նորա երգերում համար 55):

\* \* \*

Մկրտիչ Կարապետեան Չէրքէզեանց (Չէրքէզ կամ Չէրքէզ-Օղլի) ծնվել է Ասորախանում 1763-64 թուին, պարսպում է եղել քնարներ շինելով ու կարկատելով. ասում են որ բացի այդ արհեստից, պարապել է և գիր անելով հիւանդների համար: Պսակվել է 1811 թուին Գայիանէ Ստեփանեանց օրիորդի հետ, և ունեցել է մի գուսար: Աշուղու թիւնը սկսել է երեսուն տարեկան ժամանակից, երևում է իւր սիրահարված միջոցում: Մեռել է 1844-45 թուին և թաղված է Ասորախանի գերեզմանոցում. տապանաքար չունի:

\* \* \*

\*) Այս համառօտ կենսագրութիւնը եւս Պ. Յակովբ Փամպուխեանցն է ուղարկել ինձ հետեւեալ մակագրով: «Մեզ չյաջողվեցաւ հարկաւոր տեղեկութիւնները հաւաքել աշուղների կենսագրութիւնը կազմելու համար երկու պատճառով. Ա. որ մեր հաւաքելի մանրամասնութիւնքը պատկանում են 40-50 տարիք յառաջ ժամանակի. եւ Բ. որ մենք պարտաւորված էինք թողնել Ասորախանը սեփական առեւտրական զործերի պահանջմամբ, ուրեմն մեր սի-

Յովհաննէս Սարգսեան Սարգսեանց (ուստա Իվան) ծնվել է Ասորախանում 1800 թուին և պարապում է եղել ներկարարութեամբ. ամուսնացել է այնտեղ և թողել է որդիք և աղջկերք: Աշուղու թիւնն սկսել է քառասուն տարեկան ժամանակից և ոչինչ ուսումն չէ ունեցել (որպէս ասում են): Շատ բարեբարոյ մարդ է եղել, նորան ճանաչողքը մեծ յարգանքով յիշում են նորան: Մեռել է Ասորախանում 64-65 տարեկան հասակում, և թաղուած է տեղական գերեզմանոցում. տապանաքար չունի:

\* \* \*

Յարութիւն Սարգսեան Պօպով, (Զահէլ-Օղլան կամ Արտեմ-կա) ծնվել է Ասորախանում 1820-23 թուին, յայտնի չէ թէ ինչ գործով է պարապել. իւր կեանքի կարճ միջոցում երկար սիրահարութիւններ է քաշել և այդ իսկ ժամանակ սկսել է աշուղութիւնը. մեռել է երեսուն տարեկան հասակում և թաղված է տեղական գերեզմանոցում. տապանաքար չունի:

\* \* \*

Աղէքսանդր Ղուկասեան Քիչիբեկեանց (Մելքիսէթ) ծնվել է Ասորախանում 1817 թու մարտի 9-ն. նորա հայրը Աղուլեցի Սառաֆ Ստեփանի որդին ունեցել է հինգ որդիք, որոնցից ամենափոքրը Մելքիսէթն է: Հանգուցեալ Ղուկասը մեծ նշուր թիւններ է տարել, բայց երբէք չէ մոռացել իւր պարօքը իւր որդւոց զատարակութեան վերաբերութեամբ. նա միշտ ասում է եղել, որդիք, դուք հոգս մի՛ արէք, ես քանի որ կենդանի եմ, ողորմութիւն կու հաւաքեմ, բայց ձեզ ուսում միցը զուրկ չեմ թողնիլ» և կատարել է իւր խօսքը, նայելով իւր կարողութեանը և ժամանակին: Մելքիսէթը ամենից առաջ կարդացել է Տէր Խաչատուր Ալամկարեանցի և

րիւի ընթերցողը թող բաւականանան այնքանով, որքան ներքց մեզ հանգամանքը» Ա. Գրիգորեանց:

յետոյ Տէր Մելքիսէդէկ Իւզբաշեանցի մօտ. սորա մահից յետոյ Տէր Գաբրիէլ Պատկանեանցի մօտ (Տերունի Պատկանեանց): Գժբաղդաբար այս վերջինը Աստրախանից հեռանալով, Մելքիսէթը չի կարողանում շարունակել իւր ուսումը. մի քանի ժամանակից յետոյ մտնում է Գիմնազիա և այնտեղ մնում է վեց տարիի չափ: Մելքիսէթը մեծ ընդունակութիւն է ունեցել Ֆարսերէն լեզուի, գուցէ և այդ իսկ զարթեցրել է նորա մէջ աշուղութեան սէրը. այս ժամանակ մեռանում է նորա հայրը և նա դուրս է գալիս զիմնազիայից առանց վերջացնելու սահմանեալ ուսումը. մտնում է Ճառայութեան վաճառականի մօտ, չորս տարիից յետոյ նա գործակատար է դառնում Ղզլարցոց համար և ամբողջ տասն տարի պարապում այդ գործով, երևում է այս ժամանակ ամուսնացել է: Այժմ պարապում է առ ձեռն առևտուրով:

\* \*

Երկու-Յղիքը երկու ընկերներ են եղել կորապետ և Մկրտիչ անունով, ինչպէս երևում է Քիշիլիզիք են եղել կամ այնտեղից եկած Աստրախան 1840 թուերին. մեռել են Աստրախանում 1847 թուին մի օր կարապետը միւս օրը Մկրտիչը և թաղված են Աստրախանի զերեզմանոցում. տապանաքար չունին:

\* \*

Քարսեղ Յովակիմեան Միրզայեանց ծնվել է Ջուզայում 1780-81 թուին. քսանևչորս տարեկան ժամանակ թողնում է իւր հայրենիքը և գալիս է Աստրախան, այնտեղ պարապում է երկաթագործութեամբ, 1807 թուին ամուսնանում է Ալասեանց թաղուհի օրիորդի հետ, ունենում է մի դուստրը և երկու որդիք Մկրտիչ և Յովհաննէս, այս երկուքն էլ մեռել են ջահէլ հասակներին մէջ և շատ առաքինի ու խելացի երիտասարդներ են եղել (առաւելապէս երկրորդը): Քարսեղի համար խիստ զգալի է եղել այդ հարուածը և այդ ժամանակից (1847թ.) սկսել է զրկել մի քանի երգեր: Ուստա Քարսեղը մեռել է 1865 թ.

և թաղված է տեղական զերեզմանոցում. ունի տապանաքար և ասում են որ դեռ ևս իւր մահից շատ առաջ պատրաստած է եղել և ինքը քանդակել է իւր հանգիստաքարը:

\* \*

Թուրինջի աշակերտը անյայտ է թէ ով է իսկապէս, սորա երգերը մէք գտանք Ստեփան Գուրկարեանցի (Գուրկարի) երգերի մէջ և մէք կարծում ենք, որ նոյն իսկ Գուրկարեանցը պէտք է լինի, որ պարապում է եղել Աստրախանում մանր առևտուրով. ամուսնացել է այնտեղ և թողել է աղջկերք և մի որդի Մարտիրոս Գուրկարեանց 23—24 տարեկան որ մի երգ ունի մեր այս երկաթիութեան մէջ: Ստեփան Գուրկարեանցը մեռել է վերջին տարիներում և թաղված է տեղական զերեզմանոցում, նորա որդի Մարտիրոսը պարապում է գլխարկներ շինելով ու ծախելով:

\* \*

Կարապետ Մինասեան Լալայեանց (Լալայ) ծնվել է Աստրախանում և այժմ պարապում է առևտուրով, հասակով կլինի 25—26 տարեկան, և ամուսնացած է: Սորան մի տղան դաւոր եղբայր է ունեցել Յովհաննէս անունով, ցաւում ենք որ չկարողացանք ձեռք ձգել նորա երգերը, այս վերջինը մեռել է 36 տարեկան հասակում, և թաղուած է տեղական զերեզմանոցում:

\* \*

Եթիմ-Յղանի, Քէշիշ-Նավասի, Խարազ-Յղանի, Գիւրջի Նաւէի (սա պէտք է որ Քիշիլիզեցի լինի) Սայեադ-Յղլի (սա Աստրախանցի Սայեադնեանցն է), բաւական երգեր ունի, բայց ժառանգը չի թողում որ լոյս տեսնեն իւր հօր աշխատութիւնքը և Բլբուլիկի վերաբերութեամբ չկարողացանք ոչինչ տեղեկութիւնք հաւաքել, որովհետև բացի Սայեադ-Յղլից

երևում է միւսները օտար քաղաքացիք են և անձանօթ Աստրախանի հասարակութիւնից մեր ծանօթներին:

\* \* \*

Պերճ Ստեփաննոսեան Պռօշեանց (Սօս) ծնվել է Աշտարակում Երևանի նահանգում 1837—38 թուին: Սորա տոհմանունը պատկանում է Աշտարակի շատ հին և անուանի բնակիչներին մէկին, իւր ուսումը աւարտել է Թիֆլիզի Ներսէսեան դպրոցում 1857 թուին և այնուհետև պարսպել է ուսուցչութեամբ Թիֆլիզում, Ղարաբաղում, Ազուլիսում և այլն և այլն, և ինչ տեղ որ եղել է, մեծ արդիւնաւորութիւն է ցոյց տուել իւր գործի մէջ. եթէ մանրամասնօրէն գրելու լինէինք, մեծ տեղ և ժամանակ կ'հարկաւորէր, միայն հարեանցի անցնելով կ'ընէինք զոնէ ինչ որ մեզ յայտնի է նոր գործունէութեան կեանքից: Նա բարկարեցել է Աշտարակի և Ազուլիաց տղայոց սնունմարանքը, հիմնել է օրիորդաց դպրոցներ Ազուլիսում և Ղարաբաղում, իսկ Թիֆլիզում նախկին Գայիանեան և ամենից անդրանիկ հայ աղջկանց ուսումնարանը: Գործակցել է Երևանու աղջկանց ուսումնարանի բացմանը և 1862 թուին Թիֆլիզում Հայոց թատրօնի կանոնաւորապէս սկսվելու պատճառ է դարձել: Եւ այս ամենը կատարել է նա երբեմն մրցելով կոյր նախապաշարմունքների և երբեմն չարամիտ հակառակորդների դէմ, բայց նորա ջերմ զգացմունքը և հոգեկան անվեհերութիւնը միշտ բարձր և յաղթող է հանդիսացել հայաժանքի, բանսարկութեան և լարած որոգայթների մէջ, նա անսայթաք յառաջ է տարել իւր գործը, որի նպատակն է եղել իւր ազգի բարոյական օգուտը և նորա յառաջադիմութիւնը միայն:

Պ. Պռօշեանցը իւր գլխաւոր վաստակներով լաւ տեղ ունի մեր գրականութեան մէջ. նա գլխաւոր գործակիցն էր պ. Մարկոս Աղաբէկեանին նորա «Կռուներկ» խմբագրութեան ընթացքում. «Մշակի» հրատարակութեան գլխաւոր գործակիցներին էր

հարձեալ պ. Պռօշեանցը և բաւական աշխատութիւններ ունի այնտեղ զանազան ժամանակներում տպագրած անյայտ ստորագրութիւններով: Պ. Պռօշեանցը բացի իւր շատ մանր աշխատութիւններից, ունի մի քանի տպագրած հեղինակութիւնք և թարգմանութիւնք, որք մեծ արժանաւորութիւններ ունեն մեր գրականութեան մէջ. զօրօրինակ նորա ազգային վկայասանութիւնը «Սօս և Վարդիթեր», որ շատերին յայտնի է արդէն «Կռուներկ» ամսագրի մէջ և առանձին զբքով հրատարակվելով:

Պ. Պռօշեանցը ունի այլ ևս շատ թարգմանութիւններ և հեղինակութիւններ առանց տպագրութեան. այս վերջինների մէջ է ազգային վկայասանութիւնը. «Վարդ և Մանուշակ» ժողովրդական կեանքից:

Այս երկասիրութեան մէջ ներս բերած երգերը բացի թատրօնականներից, միւսները պատկանում են պ. Պռօշեանցի աշակերտութեան ժամանակին, երբ նա այդպիսի հաճելի նիւթերով մարդկուներ աշխարհաբառ լեզուի մէջ, (այն ժամանակ Ներսիսեան դպրոցում աշխարհաբառ լեզուն ամենեւին անգործադրելի էր) վստահ ենք, որ պ. Պռօշեանցը կ'ներէ մեզ իւր մանկութեան աշխատանքները 'ի լոյս բերելու համար:

Պ. Պռօշեանցը ամուսնացել է Թիֆլիզում Գոյգեան Աննա օրիորդի հետ և ունի մի գուտար Պերճանոյշ անունով: Ս. յժմ Աստրախանում է պ. Պռօշեանցը և պարսպում է Ֆօտադրաֆիայով:

Ծանօթութիւն: Այստեղ տպագրվում են Առաժներ և մի Բառարան այս երկասիրութեան մէջ նկատված օտար բառերի համար, որոնց կազմած է պ. Յ. Փամպուլխեանցը: Ս. Գրիգորեանց:  
Սոխակ Հայաստանի III հատոր. Ա. Գ.

Ա Ռ Ա Ծ Ն Ե Ր .

Ագուաւի կեղտը արասանոցի տեղ վեր կ'առնես:  
 Ագամ խաբուաւ, դրախտէն ընկաւ:  
 Աղնուի որդի, տաք հացի կարօտ:  
 Ա'խ, Աստուած, որին կուտաս Նախիջևան, ինձի չես տար չար  
 լսի չվան:  
 Ա'խ, Աստուած, Աստուած, հաղիկն կուտաս սալով փոտ, ինձ  
 ձի չես տար ցախ, Աստուած:  
 Ահանջով մէկ թան չի աժեր:  
 Ա'դն է պախաս, թէ մաղը:  
 Աղէկ մանուկն օրօրոցին է մալում:  
 Աղջկը կորեր է, մէրը փուկերու համար կուլայ:  
 Աղջկը մեծանայ, մեծ փառքի տիրանայ:  
 Աղուէսի աղբերութիւն կենես:  
 Աղբատ երիցու քարոզը չի անցնիր:  
 Աղբրի գիւռ գալը կտրելու նշան է:  
 Աղ կայ, մաղ կայ յօրե՞ չիս հէբի գաղա:  
 Աճող հաւը կուգան կընի:  
 Ամանաթը տէրը կուղէ:  
 Ամեն մարդու հաւատալ չելիլ:  
 Ամեն քայլի հետ մօտենում ենք մահին:  
 Ամեն բանի զին մի զներ, տէրն է խաբար:  
 Ամեն ընչի մէրը ձագ կը բերէ, սըրա (ըմպելիքի) ձագը մէր  
 կը բերէ:  
 Ամեն խաղը խաղցար, մնաց եալալին:  
 Ամեն դանիաթքեար կապրի, դամուրչու մուրն իրան կը մնայ:  
 Ամեն անգամ գետը մալէզ չի բերեր:  
 Ամեն օր իժուեն է բաց, մէկ օր էլ ոչխարինը թող բաց ըլլի:  
 Ամալը դոռաց, մուկը ճըռաց Մարիամ խաթուն, դուրս արի:  
 Այբը տեսես մարդակ զէնդ կենես:  
 Այսչափ բա՛ւ է կրօնաւորաց:

Անգղամի երեօին թքին, ըսաւ անձրև կուգայ:  
 Անձրև եկած օրը հաւերին ջուր չեն տալ:  
 Անտէր ոչխարը գէլն է տարել:  
 Անուշ լեղուն օձը ծակէն կը հանէ:  
 Անցանք, դարձանք, մեղայ Աստծու:  
 Անցեալն էանց:  
 Անցուկ մոռցուկ:  
 Անիժեմ, անիժելու չես, օրհնեմ, օրհնելու չես:  
 Անհամ, անհոտ, անժուր կորկոտ:  
 Անտէրին տէրը Աստուած, անհէրին հէրը Աստուած, անտէրին  
 տէրը տարաւ, անհէրին գէլը տարաւ:  
 Աշխարհք խելքով են կերեր:  
 Աշխատանք մանկութեան, դաւաղան ծերութեան:  
 Աշխարհք շահով կը պտըտի:  
 Աշխարհքէն ո՞վ ի՞նչ է տարեր:  
 Աշխատողն անօթի չի մնար,  
 Աշխարհքիս չորս կողմը լուս կնողն Աստուած է, ամեն մարդ  
 մէկ բանով կէջնմիշ կըլլի:  
 Աշխարհքն օր էրվի խօրով լմ խոտ չունիս:  
 Աշխատութիւնը լեռներ կը հաւսրէ:  
 Աշուղի հաղը պրծնելից յետոյ նէյնիմ նէյնիմ ա կանչում:  
 Աչք ունի, լոյս չունի:  
 Աչքի տեսնելն հաստատ է քանս թէ անկաջի լսելը:  
 Աչքի չ'տեսութիւնը անձի կուտութիւն է:  
 Աչք է, տեսնի, սիրա է, կուղէ:  
 Առջ ասեղը քեզի կոխէ, յետոյ մախաթն ուրիշին:  
 Առանց խօրօզի էլ լուս կեննենք:  
 Առանց Աստուած բան չելլիր:  
 Ասի, որ լսես, չասի որ իմանաս:  
 Ասողին լսող պէտք է:  
 Ասան սատանան է որ սուրբ Աստուածով դաժ չելլիր:  
 Աստուած մէկ է, հազար է ստեղծեր:

Ատուած թշնամու չ'տայ:  
 Ատուած մանկութեան մէջքը երեսը չը տայ:  
 Ատուած հազար ու մէկ ողորմութեան դուռ ունի հազարը չբանայ, մէկը կը բանայ:  
 Ատուած մարդու ահը սրտէն, ամօթն երեսէն չը տանի:  
 Ատուած երկան ձեռքը չ' կարճեցնէ:  
 Ատուած մարդու տեսածէն չ'զրկէ:  
 Ատուած մէ ձեռքը մէկայլին էհլթած չէնէ:  
 Ատուած պահած գառը, գայլը չի ուտեր:  
 Ատուած էղպէսներին բոր տայ, եղունգ չտայ:  
 Ատուած չարը խախտէ, բարին առաջնորդէ:  
 Ատուած քոսն էն մարդին տայ, որ գեղն չի խմանում:  
 Ատուած տուածը բարի է:  
 Ատուած լուսը հասնի:  
 Արևն 'ի մուտ, ժամանակն 'ի կորուստ:  
 Արի' մեր մէջէն, սովորի մեր փէշէն:  
 Աւել պակաս, Ատուած հաւսրէ:  
 Աւելի մալը փոր չի ծակեր:  
 Բազնիսից անքրտնիլ դուրս չեն գալ:  
 Բարեկենդան օրեր է, խելքս միտքս կորեր է:  
 Բարեւը բարձրանայ, արևը ցածանայ:  
 Բարեկամդ շատ արա, ղոնախանէդ մէկ արա,  
 Բան ասա', բան խմանանք:  
 Բերանդ անկաջդ հասաւ:  
 Բերան չէ տաճար է:  
 Բերանդ բացիր, ջեզարդ տեսայ:  
 Բիզը կուլակի հետ դով տալ չի կարող:  
 Բողազդ քեզնէն ցած է:  
 Բուրդի հօխան փարամ է:  
 Բուրդը բարերարն էլաւ:  
 Բօստնչուն սերմը չեն ծախեր:  
 Գաղան ծոցդ պաս պահէ:

Գառից շուն, շնից գառ:  
 Գեղինն օր քաղաք էրթայ, Ֆարսէվար կը հաչէ:  
 Գեղ գեղի վրայ կըլլի, տուն տան վրայ չելլիր:  
 Գէշ զրկիցը լաւ հաճաթի տէր կէնէ:  
 Գէլերու չ'կերած հօրումօր հոգու հաց:  
 Գիժ աղջկը զիժ հարս կլլի, զիժ հարսը զիժ կնիկ:  
 Գիտնալը մարիֆաթ չէ, պահէն է մարիֆաթ:  
 Գիտուն աղուէսը երկու ոտքով տուգաղը կընկնի:  
 Գիտունին գերի, անդէտին սիրելի:  
 Գիլու բերանը ջեզար մի' քաշեր:  
 Գիտցողը զիտէ:  
 Գարի հաց թթու թան պապն ուտէ երթայ գութան:  
 Գիտնայի թէ պապս կը մեռնի, ծախէի զինը կուտէի:  
 Գիժը թարիֆ է անում, խելքն անկաջ է անում:  
 Գողս նստեր, միրօքս կը փետես:  
 Գողն որ անէն բլլի, եզն երդիքէն կ'հանեն:  
 Գլուխդ չ' հաւքած տեղը ջանդ մի' կոխեր:  
 Գրքի մէկ երեսը մի' կարդար:  
 Գղայով առայ, շերեփով տուի:  
 Գրքին 'ի փոխ առնվածը շուտ կկարդացվի քան գնվածը:  
 Դամուրջու տանը խաչերկաթ չիլիլ:  
 Դանկին մի' նայիր, կոթին նայիր:  
 Դավա է, ամեն մարդու դուռն էլ կը չքի:  
 Դամպուռի միջի թիւն է:  
 Դալլաքութիւնը իմ գլխին կատարար:  
 Դանակն ոսկոռին հասել է:  
 Դէն ձգիր, ջիբս ձգիր:  
 Դարտակ կարասը մեծ ձայն կը հանէ:  
 Դուրսը սուրբ, տունը սատանայ:  
 Դու էդ սանդրերում կտաւ չունիս:  
 Դուռը մեծ բանալը հեշտ է, պզտիկցնելը դժուար է:  
 Դու պղտիկ մեծ երազ կը տեսնիս:

Դրկցիդ համար մէկ ուզէ որ Աստուած քեզի երկուս տայ:  
 Դրկցի հաւկիթը հեռուից մեծ կերևայ:  
 Եարանը եարա կը բանայ:  
 Եայանը ձիաւորի վրայ կը խնդայ:  
 Ելած աչքը տեղը չի գար:  
 Եղիան փլաւ չի ուտեր:  
 Երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի:  
 Եթէ ընդ դալար փայտ զայդ արարիք, ապա ընդ  
 չորն զի՞ առնիցէք:  
 Եթէ մեր բանն էսպէս կըզնայ, ջուրը մեզ կըտանի:  
 Եթէ տէր 'ի մեր կոյս է, ո՞վ է մեզ հակառակ:  
 Երեխին բան խոստացար, պէտք ա կատարես:  
 Եւ որ հիւանդն է, բանջար կերիցէ:  
 Երկու ոտն մին մաշիկ ա դրել:  
 Երկու ժամին լուսարար, մէկին սևերես:  
 Ես աղա, դու աղա, մեր ջաղացը ո՞վ աղայ:  
 Երեսս այրոտ տեսար, ջաղացական կարծեցիր:  
 Ես քուն բաղդս զարթուն:  
 Ես քու կապովդ խեղդվայ:  
 Ես չի՞մ գիտեր իմ խաչիս զօրութիւնը:  
 Ես գիտեմ թէ մարդ ես դառեր, մի՛ ըսեր թէ շարթ:  
 Երես տուինք աստառ կուզէ:  
 Երկուսն էլ մի սանդրի կտան:  
 Զոնքանչի սիրած փեսան աները չի սիրեր:  
 Զուտր ոսկին քուբայի մէջ մալում կըլլի:  
 Զուր ջանք, անօգուտ վաստակ:  
 Էդ բերնովդ պիտի սուրբ կարապետ գովես:  
 Է՞՞ր կտաւին դուս:  
 Էլի ձագը պատի ծակը:  
 Էլի աչքը քեզի լոյս չի տալ:  
 Էլի հացը փոր չի կշտացներ:  
 Էշն ի փական, մարդն 'ի հալաւ:

Էշն իրա սատկելն կուզէ թէ տիրոջը վնաս ըլլի:  
 Էջը թող մնայ էն մտին, թէ տոպրակ զայ իւր ճախն:  
 Էշն որ չկերած խոտն ուտէ զլօխը կուռի:  
 Էշն ի՞նչ է որ մութը տեղը զարի ուտէ:  
 Էս էլ խառնենք փառք 'ի բարձումին չերթայ կորցուի:  
 Էս օրվան էգուցն էլ կայ:  
 Էս պատին էս ծեփն էլ է հերիք:  
 Էս քան յիմարների հետ գործ անելով, մին խելօքի չի պա-  
 տահանք:  
 Էս օրվայ խօսքը էգուցվայ կարմունջ է:  
 Էրկան քով հարսին մի՛ ըսեր, եաշմարդդ ծուռն է:  
 Էրնակ էն աղին, որ հէրը դժոխք կերթայ:  
 Էրված սրտին մանանեղ:  
 Ընդանեաց խնամք չունեցողը ոչ յարութիւն ունի ոչ թողու-  
 թիւն:  
 Ընկածին վերցնող չելիլ:  
 Թալանից մա՛լ կը փախցնես:  
 Թաղած մեռելը քեզնից առաջ տուն հասաւ:  
 Թէ որ ոտքիս տեղ կենեմ, տես թէ զլխուդ ինչ կենեմ:  
 Թէմբէլութեանդ իլուն քեռի կը կանչես:  
 Թէզէ մնի թիրիթը չի ուտվիր:  
 Թմբուլիկ իշուն բեռմ ապրէշում:  
 Թող սև ըլի բօլ ըլի:  
 Թուղթը շուռ տուր արասին կուլ տուր:  
 Թռչուն կայ որ միսն են ուտացունում, թռչուն էլ կայ որ  
 միսն են ուտում:  
 Ժեռ քարը լաւ է քանս անդութ սիրտը:  
 Ժամանակն արծաթ է:  
 Ինչ կանես արա՛ Պետրոսը Պողոս չելի:  
 Ինչ էն կապայ կը ձևես:  
 Ինչ տեսել, տեսել էինք, քօռ հրեշտակ չէինք տեսել:  
 Ինսանի աչքը հողը կը կշտացնէ:

Ի՛նչ բրդեա էն կուգայ զգալը:  
 Էջը նստեր իշուն ման կգաս:  
 Իշուն հարցուցին մարիֆաթդ ի՞նչ է. պոչը վերցրուց զուսց:  
 Ինսանը հում կաթկեր է:  
 Ինսանի մարամէն բան չի պրծնիր:  
 Ինչ որ սերմանես այն ևս կը հնձես:  
 Ի՛նչ զիյլե դաֆեր է յետ մնացեր ես:  
 Ինձնէն ելերոյ ինձի լո՞ղ խրատ կուտաս:  
 Ինձի տե՛ս, քեզի ողորմէ:  
 Ինձ համար կրակ այլոց համար ճրագ:  
 Ինձի տե՛սնէ, քեզի վերցնէ:  
 Լաւ է մորթուս, քան թէ որդուս:  
 Լալն էլ կայ, երթալն էլ:  
 Լացի վերջը ուրախութիւն է:  
 Լեզուն ոսկոր չունի:  
 Լեզուն անուշէն յառաջ է:  
 Լեռն ՚ի վար իջնելը զիւրին է:  
 Լուսդ լուսաւորի:  
 Լուծին լըծընկեր պէտք է:  
 Լուսն էլած վախտը էջը կորցուցիր:  
 Լուսնիակն երզիքից անցաւ:  
 Լօ, լօ, լօ լօ քրտին տղե՞ն էլ լօ լօ:  
 Խաւիժ խաւիժ խաւորիժ, պապն ուտէ ընկնի ոտից:  
 Խելառի հացը խելօքի փտրն է:  
 Խաղաղութիւնը գերեզմանումն է:  
 Խեղքէ թեթեւ ոտքէ չափուկ:  
 Խեղք ունես, շատ կապրես:  
 Խելառի ջաղացը Աստուած կաղայ:  
 Խնկով մոմով արքայութիւն չես երթար:  
 Խոզի գլուխը խալու վրայ դրին գլորաւ, ցեխն ընկաւ:  
 Խորդ մօր էփած կերակուր է դառել:  
 Խալլիկի տխրիկ էրէ, վերջի բանին մտիկ էրէ:

Խրատի կարօտ չէ.  
 Խորհուրդ մարդկան կամք Աստուծոյ.  
 Խոզի համար աղբանոցը.  
 Խորասանի խալի գործելն իմացեր ես, լանքսը երկանքսը չես  
 զիտեր.  
 Խալին վերցնենք, խասիրը փռենք.  
 Խունկ ու մոմով սուրբ կարապետ կը խաբես.  
 Խօսք մէկ, Աստուած մէկ.  
 Ծակ զգալի փորով մէկ ողորմի նրան.  
 Ծակ բուկ չէ՞, ինչ տաս ներս կերթայ.  
 Ծակամուտ, կտորահամ.  
 Ծանի՛ր զքեզ.  
 Ծեծը դրախտէն է զուս եկեր.  
 Ծիծը ծոցի մէջ կուլու կենէ.  
 Ծոփն է ընկել, ձեռքը փրփուրին է ձգեր.  
 Ծոփն անցանք, առուն խեղդվելո՞ւ ենք.  
 Ծործակա քերեմ, տեղը կբերեմ.  
 Կալէն ի՞նչ տեսանք որ կալատեղէն ի՞նչ տեսնէինք.  
 Կանուխ ճամբահ ելողն ու թէզ կարգվողը չեն փոշմանի.  
 Կան նստեր մուտուրկան կը հասէ.  
 Կարօն ուզեց Մարոյին, Մարօն չուզեց Կարօյին.  
 Կամ գիժի հետ խօսել ես, կամ դարի հաց կերեր ես.  
 Կալի կուտը մամի պապի հարսնիք.  
 Կամաց բանիր, կամաց մի՛ ուտեր.  
 Կանաչ ու կարմիր կենաս, օխտը պորտէս հեռու մնաս.  
 Կամրջից անցնելիս փեշ փեշի է կպել.  
 Կացինը վերցնես, դող շունը կիմանայ.  
 Կուշտն անօթուն մանտր կը բրդէ.  
 Կուտէ որդին կը վճարէ աղքատ հոգին.  
 Կուշտ ձեռով անօթի փորդ դի՛ր.  
 Կուկուն բերում ջուջուն տանում.  
 Կարգուածի աչքով աղջիկ առ, ապարի աչքով ձի.

Կայ աշխարհի չկայ անապատի, կայ անապատի չ'կայ աշխարհի՝  
 Կաշառքը դատաւորի աչքը կըքօռացնէ.  
 Կարպետդ ջուրը մի՛ տար.  
 Կաղ իշով քարվան մի՛ խառնվիր.  
 Կնկայ բերած փողն դրան զանգակ է, անց ու դարձ անելիս ճա-  
 կատիդ կըկպչի.  
 Կնիկ մարդու մազն երկան կըլի, խելքը կարճ.  
 Կնկադ բերած փողը քեզ համար մայրեայ չի դառնալ.  
 Կեղծաւորութիւնը կէս առաքինութիւն է.  
 Կուտը տունը կուտէ, հաւկիթը գօռները կածէ.  
 Կուզէ բիւթիւլի քալքը, դառղինն էլ մոռացաւ.  
 Կրակը տակը լոյս չի տալ.  
 Կծու, կծու, փառք Աստծու.  
 Կերանք կըշտացանք, բանւոր աշկերտով.  
 Կերան պասերը, հազան խասերը, դարտակ թողին ժամին  
 դասերը.  
 Կառքը կոտրելէն վերջը ճամբահ զցնելն անօգուտ է.  
 Կեցիր ատեններ ինչ կայ, տեններ ծայրը ուր կերթայ.  
 Կուզի հայանայ կուզի թուրքանայ, բուրդը բամբակը շտանայ՝  
 Կտրած մատի դեղ ես:  
 Կօտը գլուխ մի՛ չափեր.  
 Կօլօշին մէկ թշին  
 Կօլօշներդ հազնելուս կիմանաս  
 Համբերէ՛, տան տէրը բան կը բերէ.  
 Համբերու թիւնը կեանք է.  
 Համ՝ խոտու ժամէն եղանք համ Շինու հայրու.  
 Հարուստ անէ աղջիկ առնելն է դժուար, պահելը՝ հեշտ.  
 Հարամը կուգայ, հալալը կտանի.  
 Հարկս հարկաւորաց պատիւս արժանաւորաց.  
 Հարսանիքը ինձի, հոգու հացը հօրս ու մօրս.  
 Համալուծիւն անողները իրանց հօր ու մօր աղիգներն են.  
 Հարսնետունը չգիտէ, աման կը կրէ.

Հարս ու տագր սե ու դեղին, ով որ տեսնի, պատուի լեղին.  
 Հարուստ զրկիցը մարդու օգուտ է.  
 Հաւն որ զազին նայէ հաւկիթ ածէ կպատուվի.  
 Համ նալին համ մեխին.  
 Հարուստ աներ, մեծ մեծ շներ.  
 Հիւանդ ես ու լավանդ ես.  
 Հին էրդերը մի՛ էրներ.  
 Հպարտը պարկը կը մանի.  
 Հողին առաւել է քան զմարմին.  
 Հողը խաբար չ'տանի.  
 Հոր փորոզը հորը կընկնի.  
 Հօ կայ, ներս կը բերէ, հօ կայ դուքս կրտանի.  
 Չայն բազմաց ձայն Աստուծոյ.  
 Չեռս թո՛ւք, երեսիդ զարկեմ.  
 Չեզ պարս է աճիլ և ինձ մեղմանալ.  
 Չեւքի եղած մէկ թռչունը ծառի վրայի երկուսից լաւ է.  
 Չիւ բազարում էջը չի կեղտոտի.  
 Չի նստաւ, Աստուած մոռացաւ, ձիւց իջաւ ձին մոռացաւ.  
 Չիւնը ձմրան նշան է.  
 Չուկը ծովում կը մեծանայ.  
 Չուկը գլխից կը բռնեն.  
 Ղ ուրդ զուռանի մի՛ կարգար.  
 Ղ ասարխանի դուռն ա բաց, շանն էլ զարահաթ պէտք ա  
 ունենայ թէ ո՛չ.  
 Ճամբորդի երթալն իրան ձեռն է, դառնալն Աստծու.  
 Ճանճն ի՞նչ է որ, ճենճն ինչ բլի.  
 Ճղրղ եմ, չեն խաղցներ.  
 Ճնճուլիկին աղօթարան չկայ.  
 Ճան չունի ճիգ կը քաշէ.  
 Ճուտը ձուռմն ա մանշուր անում.  
 Մագմանի աշակերտի պէս յետ գնաց.  
 Մանէ՛ տօնին, մանէ՛ դատին, մի՛ մաներ բարէ բարեկենդանին.

Մահին չարայ չկայ.  
 Մարդ քանի որ մեծանայ ցաւը հեար կը մեծանայ.  
 Մահը մարդու ախջի յետեն է.  
 Մարդ մարդու երեսը կը նայէ, Աստուած սիրտը.  
 Մարդու իրան արածը իրան չի երևալ.  
 Մարդու ինչ տեղը որ ցաւի՝ հոգին էնտեղ է.  
 Մախաթ եմ ու եախազ եմ,  
 Մահն աչքովս տեսայ.  
 Մալին տէր, որդուն հէր.  
 Մատս հոտ չէի էրեր.  
 Մգրախը ջվալ չի մանի.  
 Մեր հայրերն ազոխ կերան, մեր ատամները հարկեցան.  
 Մեծ տուն, մեծ ցաւի բուն.  
 Մեծի խօսքն ականջ անողի ոտքը քարին չի դալ.  
 Մեծ մեծ խօսելով փլաւ չի եփվել, եղ ու բրինձ է պէտք.  
 Մեծի մէկ աչքը քօռ պէտք է, մէկ ականջն էլ խուլ.  
 Մեռելի ոտքը մեղրի մէջն է.  
